

Qr

295




2
295

18

ԱՐՄԵՆԻ ՏՆՆԵՍՈՒԹԻՒՆ

BIBLIOTHECA ARMENA
GARO H. KAZAZIAN
Chicago, Ill., U.S.A.

Ա Ռ Տ Ն Ի Ն
Տ Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն



Ա Ր Ա Ր

Տ Ի Կ Ի Ն Ե Ի Գ Ի Ն Է Հ Ի Փ Փ Փ

Եւ

Հ Ա Ն Ի Հ Ա Յ

Օ Ր Ի Ո Ր Գ Մ Ա Ր Ի Ս. Կ Ի Ի Լ Պ Է Ն Կ Ե Ա Ն



Կ. ՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ն. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

—
1890



ԱՌ ԳԵՐԱԶՆԻԻ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԷԾ. ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ

Ձեր մտերիմ Ազնուութիւնն խնդրեց, որ կարողամ ու գնահատեմ, սիրելի քրոջդ Մարինէի մի թարգմանեալ գործ, որոյ մակագիրն է *Առևին սևեկուրիւն* :

Դու քաջ գիտես, թէ Հայրիկ ո՞րչափ կը սիրէ ընտանեկան կենաց անտեսութիւն, թէ եւ ինքն աշխարհիս վերայ անհաշիւ կապրի. բայց իւր փափագ մտածումներ այն է որ Հայոց ընտանիք հաշուով եւ անտեսութեամբ ապրին. սորա համար նա գրեց ԴՐՈՒՍԻ ԲՏԱՆԻԷ ԵՆ ՍԻՐԷ ՍՄՈՒՆԷ : Գիրն ու գիրք բաւական չհամարելով՝ իւր վարդապետական գաւազանէն մինչեւ ցայսօր Հայոց Եկեղեցւոյ բեմերէն Սւետարանէն աւելի անտեսութիւն քա-



Ա Ն Ո Ւ Շ Ա Կ

ՄՕՐԴ ԻՄՈՅՑ ԾԻՇԱՏԱԿԻՆ

ԿՐ ԼՈՒԻՐԷ ԱՅՍ ԳՐԱԶՆԻՍ ՊՍԱԿ

ԻՐՐԵԻ ԱՆԵՂԾ ԱՐՁԱՆ ԳԵՐԵԶՄԱՆԻԴ

Ի ՏՐԻՏՈՒՐ ԾՆՈՂԱԿԱՆ ԿԱԹԻՆ

ԵՒ ՄԱՅՐԵՆԻ ԳՐԿԻՆ

ԴՈՒՍՏ ԲՈ ՄԱՐԻՆԷ

Ս. ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ



28-350

295-79

ըողեցի եւ դեռ պիտի քարոզեմ մինչեւ ի լուռութիւն գերեզմանին :

Սոսկ վարդապետին քարոզ եւ գիրք եւ այնչափ նշանաւոր հեղինակաց գիրքեր, որ գրած են կեանքի տնտեսութիւն բարւոքելու համար , ես կասեմ , որ բաւական չեն , այլ ուրիշ օժանդակ զօրութիւն մի պէտք է , որ ընտանեկան տնտեսութիւն բարւոքէ : Ես յայնժամ կը հաւատամ , երբ կենակից կին , զոր Աստուած օգնական տուաւ մարդոյն , նա եւս գործակից ու լճակից հանդիսանայ առտնին տընտեսութեան մէջ . զի առաւել իւր մասն եւ բաժին է այդ ընտանեկան ներքին պաշտօն իբրեւ տան տիկին տնաշէն եւ մատակարար :

Ազնիւ Մարինէն դեռ տիկին չեղած թեւակոխեր է տիկնութեան դասեր սորվիլ . եւ ինձ այնպէս կը թուի թէ այդ դասեր նա բնապէս սորված է իւր հանգուցեալ ժրագործ Մօր առտնին տնտեսութենէն , մայրենի դպրոցի դասարանէն . Սորա համար նա թողլով հազար հազար հրապուրիչ վիպասանական գիրքեր , զորս կարտադրէ Փրանսական մամուլն , ընտրեր է նիւթ իւր թարգմանութեան մի լաւագոյն գործ . որով Ֆրանսուհի

Հեղինակն բազմադիմի դասեր կաւանդէ աշխատութեան , ժրութեան , իմաստուն տնտեսութեան եւ մատակարարութեան : Չեմ մոռնար յիշել աստ այն համեստ մարդոյն անուն , որ դաստիարակ եւ ուսուցիչ եղած է Մարինէին , այն է Պ, Աբրահամ Մուրատեան , որ անշուշտ ինքն ընտրեր եւ թեւադրիչ է եղեր թարգմանութեան գործին : Երանի՛ թէ ամեն դաստիարակներ հոգային ընտրել այնպիսի նիւթեր , որ շինէր ու բարւոքէր Հայոց ընտանեկան քայքայեալ վիճակը : Եւ ի՞նչ ձեռք է որ կը քայքայէ զայն , այդ ձեռք շուայլութիւն է , զեղխութիւն է , նորասիրութեան հրապոյրն է . մի բանով անհաշիւ անչափաւոր կեանքն է որ թէ նիւթապէս եւ թէ բարոյապէս իւր վախճանը՝ կորստաբեր է :

Աստուած տայ որ խելաբերին Հայոց ընտանիք . նախապէս իմաստութեամբ չափաւորելով բարւոքն ընտանեկան կեանք , ապա թէ ոչ , անձկութիւն , ջքաւորութեան հզօր ձեռք մնշելով չարչարելով գիտէ չափաւորել մեր չափացանց կեանք . եւ մի՞թէ արդէն չի տիրեր այդ հզօր ձեռք , որոյ տակ կը հեծեն բազում ընտանիքներ :

Երանի՛ որ զգաստուածեամբ կապրի, վստահապէս կերաշխաւորեմ որ Նորա դռնէն չքաւորութեան ոտք չի անցնիր, զի արթուն տան տիկին պահապան է իւր դրան, պահապան մառանին եւ շտեմարանուած բարիքներին. նա ընդհանուր տընտեսութեան հրամանատար է. գիտէ, ինչայել գիտէ բարւոք տնտեսել եւ ի ժամու տալ զկերակուր: Աւասիկ այս կին է որուն համար կասէ Սողոմոն « Կին ժրագլուխ պսակ է առն իւրում: »

ԽՐԻՄԵԱՆ

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Աղջկանց երկրոկոյական հրահանգութիւն տալու նպատակաւ կազմուած ընկերութիւնն ինչորեց յինէն՝ որ յանձն առնում Առտնին Տնտեսութեան դասախօսութիւնն ընել:

Երկար ժամանակ վարանելէ յետոյ՝ զիջայ այդ բարեսէր Թախանձանաց, եւ անձս բռնադատելով որոշեցի նստիլ ի շարս երեւելի նոսուցաց, որք ուսման այլեւայլ միւղերն աւանդել յանձն առած էին:

Այս համարձակութեանս վրայ չզոջալու համար՝ բաւական էր ինձ նկատել եւեթ այն հասցութիւնն զոր ունեցայ յարաբերութեան մտնելով աշակերտութեաց հետ, որք հասցոյարար՝ ուշադիր միանգամայն եւ փութկոտ եղան ինձ մատուցանելու սիրոյ եւ երախտագիտութեան յոյժ քաղցր ապացոյցներ՝ ի փոխարէն այն խրատուց զոր իրենց պիտի տայի:

Եւ ահա ընտանեաց մայրերու հաւանութիւնն ալ, որք ներկայ գտնուեցան այս մտերմական բանակցութեանց եւ հասցութիւննին յաճախ յայտ-

նեցին, ապացոյց եղաւ թէ՛ նոքա՛ եւս կը գնահատէին բոլոր ջանքերս զոր կընէի դասերս բարոյական ուսուցման բարձրացնելու համար: Այս հաւանութիւնն զիս խրախուսեց, եւ յաջողեցայ համարձակ ընթանալ ինձ գծած սահմանիս մէջ:

Մինչդեռ իմ բարեկամուհիս, օրիորդ Մակօ տը Պոֆոր, բարեբաղդութիւն ունէր իւր Բուսաբանութեան եւ Հանաբանութեան դասուց մէջ բերել քսանամեայ ուսուցչութեամբ փորձեալ ուսուցիչներն մը, եւ ասացուածոյ դիւրութիւն որ իւր դասուց յոյժ հրապուրիչ հետեւութիւն կուտայ, ես աւելի դժուարին աշխատութիւն ունէի կատարելու, ոչ միայն ուսումնական սովորութիւններ ձեռք առնելու հարկին պատճառաւ, որոց տեղն երկար ժամանակէ ի վեր գրաւած էին զանազան զբաղմունք՝ զորս կեանքն ինձ բերած էր, այլ մանաւանդ՝ ճարտարութեանն արդագաւ:

Առտնին Տնտեսութեան ուսումը՝ բարոյական դաստիարակութեան կցելու փափաքովն զբաղած եմ միշտ:

Տան կառավարութեան կարեւոր եղած սկզբունքները դասաւորելու ատենս՝ բազմամիւ երկասիրութեանց առջեւ գտնուեցայ, որք անշուշտ ընտիր, բայց լոկ դաստիարակութեան կամ տնարարութեան տեսակետով գրուած են. ոմանք շատ բարձր՝ շատ մասնաւոր, ոմանք յոյժ անձուկ, միանգամայն եւ բաժնուած այն նիւթերէն՝ զոր

ես պատշաճ կը համարէի ի միասին քալեցնել: Ֆէնըրն, Տիկին տը Մէնթընոն, Տիկին Գանբան զանց քրած չեն, ի պատեհ ժամանակի, քանի մը գործնական խրատներ աւելցնել ընդհանուր նկատողութեանց եւ բարձրագոյն բարեկարգութեան սկզբանց վրայ: Կանանց ձեռօք գրուած գրեթէ բոլոր երկասիրութիւնք՝ որք նոյնքան պերճախօսութեամբ որքան եռանդով պահանջած են կանանց իրաւունքը լուրջ ուսումն առնելու մասին, սակայն չեն պնդած ընտանեկան խնամոց եւ ներքին աշխատութեանց նկատմամբ՝ որք բնական միաբան չեն ընդարձակագոյն դաստիարակութեան հետ:

Յայլմէ կողմանէ, *Առնիկն Տնտեսութեան* մասնաւոր անուամբ հրատարակեալ գրքերն, փոքր բացառութեամբ, ոչ այլ ինչ են, բայց եթէ կերակրոյ հանդերձանաց կամ կերպերու հաւաքածոյք, առանց ո՛ր եւ է բարոյական նպատակի, եւ որք շատ կը նմանին *Բաղասցոյ Խոհարար* անուանեալ գրքին, որու կը դիմէ ամեն տնարարուհի, նորա բոլոր խրատուց չհետեւելու հաստատ որոշմամբ:

Ըստ իս՝ Առտնին Տնտեսութեան դասագիրք մը դաստիարակութեան դասագրքի մը լրութիւնն ունենալու չէ թէ եւ, բայց տնարարութեան գրքէ մը բարձրագոյն եւ աւելի շահաւէտ լինելու է:

Երբ այս ուսումն սկսաւ նկատուիլ իբր լրացու-

ցիչ մասն այն զանազան ուսմանց զոր կը բովանդակեն մեր աշակերտութեաց սահմանեալ դասերն , իմ առաջին խնամքս պիտի լինէր ցոյց տալ թէ , իրենց հրահանգութեան տուած այս նոր ընդարձակութեան հետեւանքը պիտի լինի՝ եւս քան զեւս հանճարեղ եւ բանաւոր կատարումն իրենց կանացի պարտականութեանց :

Հայելով հետզհետէ աղջկան՝ հարսին եւ մօր այլեւայլ վիճակաց , ջանացի ցուցնել թէ , սերտ կապակցութիւն եւ տեսակ մը համերաշխութիւն կայ այն ծանօթութեանց՝ որք իրենց կը բանան գրականութեան՝ արուեստից եւ գիտութեանց ասպարէզը , եւ այս նոր գիտութեան մէջ՝ որ կուսուցանէ բոլոր միւսներն իրենց անծին երջանկութեան՝ եւ իրենց ընտանեաց բարօրութեան ծառայեցնելու միջոցը : Եթէ պիտանի բան մը ըրած եմ , մաքառելով է հասարակաց այն կանխակալ կարծեաց դէմ թէ , մտաւորական զարգացումը՝ մտքի մշակութիւնը՝ բարոյական բարձրացումը կը դարձնեն աղջիկն իւր յատուկ պարտականութիւններէն . եւ ապացուցանելով թէ՝ կարելի է դիւրաւ միացնել առանձնական առաքինութիւններն ընկերական յատկութեանց հետ :

Կուզէի որ երբէք չմոռցուէր թէ , այն սիրուն տը Սէվրնյէ մարքիզուհին , յոյժ հանճարեղ եւ ճշմարիտ գիտուն , իւր սքանչելի նամակներն ընտիր ընող աննմանելի շնորհաց կը խառնէր ուրիշ յատ-

կութիւններ նուազ ծանօթ , բայց ոչ նուազ արժանի յիշատակութեան : Նոյն ձեռքն որ կը գրէր այն նամակները ի երեւակայութեամբ եւ եռանդեամբ , գիտէր ի հարկին ամենէն լուրջ նիւթոց վրայ յիշատակարաններ խմբագրել : Քսանեւջորս տարեկան հասակին մէջ՝ թեմ եւ ու շուայլ ամուսինէ մը այրի մնալով՝ ստիպուած էր ապահովել իւր զաւակաց վիճակը , որ վտանգեալ էր խիստ յոռի մատակարարութեամբ : Կարողացաւ հաշուել , խնայել , իւր դրամը շահաւորապէս զետեղել , իւր կալուածները բարւոքել եւ անոնցմէ օգուտ քաղել . այնպէս որ եօթնեւտասներորդ դարուն ամենէն շքեղ եւ ամենէն հանճարեղ կիներ՝ եղաւ միանգամայն տիպար լինելու արժանի տիրուհի եւ ամենահարտար տնտար :

Իմ սիրելի աշակերտուհիներս այս ճշմարտութեանց համոզելու համար՝ յեցայ այն ամեն օրինակաց՝ որ ինձ երեւցան թէ զօրութիւն կուտան խօսքերուս : Անոնց նուազ ցոյց տուի ինչ որ պէտք էր իրենց պարտքն արժանապէս կատարելու՝ քան թէ ինչպէս ամեն ժամանակի մէջ հասկցուած են անոնց դժուարութիւնքն ու կարեւորութիւնը :

Գասերս հրատարակելու ատեն պարտաւորեցայ զեղջել այն բազմամիւ վկայութիւններն եւ ընծերցումներն որ անոնց ցամաքութիւնը կամոքէին : Արդարեւ՝ մեր ամենէն երեւելի բանաստեղծներէն եւ մատենագիրներէն հատուածներ մէջ կը բե-

րէի, յորս կը գտնէի այն գաղափարները կամ զգացումները զոր ես պիտի բացատրէի: Հանուածեամբ տեսայ թէ կը յաջողէի այսպէս իմ աշակերտուհեաց ուշը գրաւել եւ զանոնք սաստկապէս կցորդել իմ առարկայիս: Շատ ուրախ եղայ նաեւ այս դասին գրական ձեւ մը տալուս, որով ուսման միւս Ֆիւզերուսն հետ կը կապուի:

Մի եւ նոյն կերպը գործածել կը յանձնարարեմ այն դաստիարակուհեաց՝ որք պիտի հաւանին ինձ նման նկատել Առտնին Տնտեսութիւնը:

Եթէ տիկին տը Մէնթընոնի քանի մը նամակները, Ֆէնըլոնի Աղջկանց Դաստիարակութիւնը, Լա Ֆ նիմէնի Առակները, Մոլիէռի տեսարանները, տիկին Գանփանի եւ տիկին Նէքէր տը Սոսիւրի գործերը, Բենիամին Ֆրանքլինի յիշատակարանքն ու Թղթակցութիւնք առատօրէն հայծայծեցին ինձ խիստ յարմար հատուածներ, կը մնան տակաւին շատ գրական երեւելի գործեր՝ որ զննութեան ընդարձակ դաշտ մը կընծայեն: Եւ ուսեալ կանայք, որոց կը խօսիմ աստանօր, պիտի կարենան զանոնք քաջ գտնել:

Ինչ տարբերութիւն որ երեւի հին ժամանակաց, միջին դարու եւ այժմեան կանանց ընկերական պայմանին մէջ, կարեւոր է ցոյց տալ թէ իրենց ազդեցութիւնը միշտ իրենց դաստիարակութեան եւ բարոյական յառաջադիմութեան համեմատ եղած է: ձիշդ անոր համար մարդկային ընկերութիւնն

աւելի արդիւնաւոր ընթացակցութիւն կսպասէ իրենցմէ, վասն զի այսօր ամեն ժամանակէ աւելի ջանք կը լինի ընդարձակելու իրենց զգացմանց եւ գաղափարաց սահմանը:

Բայց ի՞նչպէս տալ այս ուսման օրինաւոր կարգ մը, առանց որոյ ամեն պատուէր անօգուտ է: Ի՞նչպէս դիւրամբունելի սկզբանց փոքր քանակութեան վերածել այն բազմամիւ եղելութիւններն որք կրնան մտնել Առտնին Տնտեսութեան շրջանակին մէջ:

Կը խոստովանիմ թէ մեծ եղաւ շփոթութիւնս՝ երբ հաշուեցի թէ պէտք էր տամներկու դաս ընել: Պարտաւոր լինելով դասերուս թէ՛ ձեւը եւ թէ՛ հիմն ստեղծել, կրնայի վախնալ թէ չպիտի տայի բոլոր փափաքելի ճշդութիւնն գաղափարաց արտայայտութեան՝ որք փորձառութեանս եւ ուսմանցս պտուղն են: Կարծեցի թէ բաժանմամբ մը՝ որոյ համեմատ հետզհետէ պիտի խօսիմ *ժարնսուկի*, *հաննարի* եւ *որաւի* լաւ գործածութեան վրայ՝ պիտի կարենամ աչքէ անցնել այն կարեւորագոյն կէտերը զոր կարծեմ պարտի պարունակել Առտնին Տնտեսութեան ուսումը:

Այս գիտութեան նկատմամբ ունեցած գաղափարիս, իւր մատուցանելու ծառայութեանց, եւ զայն գործադրելու համար բազմազան հմտութեան կարեւորութեան վրայ քանի մը նկատողութիւններէ յետոյ, ժամանակի գործածութիւնը նկատեցի բա-

րեկարգութեան՝ կանոնաւորութեան եւ նախատեսութեան տեսակէտով, որք անհրաժեշտ յատկութիւնն են ամեն տան տիկնոջ : Այնուհետեւ ցոյց տուի այն բոլոր օգուտը որ կրնայ քաղուիլ մշակեալ հանճարէ մը , պատշաճեցնելով զայն՝ տան ներքին վիճակին , ընտանիքին , գործերու եւ կենցաղավարութեան :

Վերջին մասին մէջ , որ դրամական կարեւոր խնդրոյն յատկացեալ է , ցոյց տուի թէ ի՞նչպէս իմաստուն եւ խոհեմ տիկին մը իւր ծախքը կը կարգադրէ մուտքին համեմատ : Ի՞նչպէս կահի եւ կը պահպանուի աշխատութեամբ կամ ժառանգութեամբ ստացուած դրամագլուխը : Չէի կրնար զանց ընել պերճութեան վերաբերեալ նկատողութիւնները , եւ ի վերջոյ ցոյց տուի որ , եթէ դիւրակեցութիւնը եւ հարստութիւնն անհաւասար բաշխուած պարզեւներ են , կարելի է սակայն ամեն վիճակի մէջ ողորմութիւնն տալու մասնակցիլ , եւ թէ՛ հարստութեան ամենէն պատուական եւ ամենէն ցանկալի առաւելութիւնը պիտի լինի միշտ բարիք ընել : Եւ այնքան աւելի ազդու կըլլայ այն՝ որքան խոհեմութեամբ եւ շրջահայեցութեամբ ըլլայ :

Առտնին Տնտեսութեան դասերը մի միայն նիւթական շահուց կարգին մէջ չեն պարունակիր , այլ ինչպէս որ կը տեսնուի , աւելի բարձր սահման ունին : Կրնան նկատուիլ բարոյականի ճիւղ մը :

Չափաւորութեան՝ արդարութեան եւ գթութեան դասերն որ անոնցմէ կը բղխին , կուգան կաւելնան մատաղատի աղջկան կրօնական հրահանգութենէ քաղած դասերուն :

Միացեալ նահանգաց մէջ , ուր երկար ժամանակէ հետէ աղջկանց բարձրագոյն հրահանգութիւնն տալու պիտոյքն հասարակաբար ճանչցուած է , եւ շքեղ հաստատութիւնք , ինչպէս *Վասար* ուսումնարանը Բուքքէփսի մէջ , եւ *Ռիւքթերու* ուսումնարանը Նիւ-Եորքի մէջ , հիմնուեցան յատկապէս այն պայմանաւ որ աղջկունք՝ կէտ առ կէտ հետեւին ուսման նոյն ընթացքին՝ որում կը հետեւին մանչերն լաւագոյն ուսումնարանաց մէջ , մօտ ժամանակներս խորհեցան Առտնին Տնտեսութեան դասեր կարգադրել առաջնոց համար՝ ինչպէս մեք այսօր կրնեմք ի Գաղղիա : Եւ օրիորդ Պէքէր գիրք մը յօրինած է անոնց համար՝ որ ինձ կը հասնի իմ հրատարակած միջոցիս : Բոլորովին ամերիկեան տեսակէտով գրուած այս գիրքը կրնայ ծառայել գնահատելու այն ընդհանուր կարծիքը որ կը տիրէ նոր Աշխարհի մէջ հասարակաց դաստիարակութեան նկատմամբ , բաղդատելով անոր՝ որով կը ներշնչուին մեր գաղղիական վարժարանք : Օրիորդ Պէքէր Առտնին Տնտեսութեան մէջ կը տեսնէ մանաւանդ անձնական շահերն զոր կրնայ քաղել մատաղատի աղջիկն իւր առողջութեան եւ բարօրութեան համար : Այնու սկզբամբ թէ ամերի-

կացի կանայք ընդհանրապէս ֆիզիգական կազմուածք մը ունին որ իրենց խիստ դժուարին եւ յաճախ անհնարին կընէ տան կառավարութիւնը, անդամագիտութեան դաս մը կուտայ իրենց՝ բացատրելու համար մարդկային մարմնոյ մեքենայն, այլեւայլ գարծարանաց պաշտօնները, մկանանց խաղերը եւ շարժումները. եւ այս՝ զինքը բնականաբար կը տանի առողջաբանական կարեւոր խրատներ տալու անոնց, եւ մարմնոյ կրթութեան պիտանութիւնն ու սակաւապիտութեան՝ բարեխառնութեան՝ մաքրութեան եւ բարեկարգութեան կարեւորութիւնն ապացուցանելու :

Առտնին Տնտեսութիւնն այնպիսի գիտութիւն մը կը թուի իրեն, որով կինը պիտի կարենայ կատարել բազմամիւ գործեր՝ որք դուն ուրեք կը յանձնուին իրեն : Այսու մտօք կուսուցանէ նմանարտապետութիւն, որպէս զի գիտնայ թէ որո՞նք են իւր տան այլեւայլ մասանց տրուելիք լաւագոյն յարմարութիւնները, եւ անոր աչաց առջեւ կը դնէ ամեն բան, կարասիք եւ կազմածք զոր պիտի գործածէ, եւ որոց շինութեան կամ գործածութեան բոլոր մանրամասնութիւնները կը ճանչցնէ : Միով բանիւ, օրիորդ Պէքէր կը խորհի՝ իւր կրթած աղջիկն ուժեղ՝ ճարտար եւ ամեն բան հասկցող կին ընել : Մեք ի Գաղղիա կգբաղիմք մեր աղջիկներն յօրինել նոյն իսկ իրենց համար անշուշտ, բայց մանաւանդ իրենց ընտան-

եաց եւ ընկերութեան համար : Ամերիկայի մէջ անհատականութեան առաւելութիւնը խիստ նուազ կարեւորութիւն կուտայ ընկերական նկատողութեանց : Անմիջապէս կը տեսնուի թէ մեր հետեւած գաղափարականն ո՞րքան քիչ նմանութիւն ունի ամերիկացի դասատուաց առաջադրած զուտ գործնական եւ օգտամտոյց նպատակին :

Ինձ համար արդէն շատ էր դասախօսութեան ամպիոնն ելնելու հաւանիւս, ուստի կարելի է թէ նուազ դիւրութեամբ պիտի ներուի դասերս պարունակող գրքիս հրատարակութեան հաւանելուս :


Անձնական կարողութեանս վրայ իրաւացի կասկած մը զիս ետ պիտի կեցնէր անկէ, եթէ կարենայի դիմադրել հզօր թախանձանաց : Հասցեցան ինձ ըսել թէ՝ այս հրատարակութիւնն իմ կողմանէս հասարակաց գործոյն անձնանուիրութեան նոր ապացոյց մը պիտի լինի. քանի որ կը հարցուի ամեն ուրեք թէ ի՞նչ բանի վրայ կը կայանայ Առտնին Տնտեսութեան ուսումը՝ որ դեռ մտած չէ վարժարանաց համար ընդունուած ուսման յայտագրոց մէջ. եւ օգտակար պիտի լինէր որ աղջկունք իրենց ձեռքն ունենային գիրք մը՝ որ ուստար իրենց . լաւ պիտի լինէր նաեւ ծանօթացնել իմ դրութիւնս եւ այն կերպերը զոր գործածեցի դասերուս գիտութեան ձեւ մը տալու համար :

Ուրեմն բարի դիտաւորութիւններս թող նկա-

տողը թեան առնուլին ի նպաստ սոյն երկասիրութեանս, եւ զիս արդարացնեն եւ ներողութեան արժանի ընեն :

ԵԻԳԻՆԷ ՀԻՓՓՕ

Փարիզ, 1 Յուլիս 1869



ԱՌՏՆԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Գ Ա Ս Ա .

Սահման Առնելին Տնտեսութեան : — Սկզբունք դաստիարակութեան : սան եւ ընտանեաց կառավարութեան համար : — Ֆէկըրոն : — Տիկին Գանձան : — Տիկին ս'Ակուլ : — Տիկին սր Մէնքընոն : — Ճեմարիս գիտուն եւ քերուս կամայք :

Ա .

Առանին Տնտեսութեան ուսումն ահա կը մըտնէ աղջկանց համար սահմանեալ գիտնական և գրական դասուց յայտադրին մէջ : Այս օգտակար նորութիւնը նշանաւոր համակրութեամբ ընդունուեցաւ : Բայց թէև նորա պիտանութիւնն ընդհանրապէս ճանչցուած, սակայն դեռ համաձայնութիւն գոյացած չէ իւր պարունակած նիւթոց՝

առաջադրած նպատակին և սահմաններուն վրայ՝
յորս պարտի պարագրիւ :

Այս ուսման ամենէն անձուկ սահմանն է , տու-
նը խնայողական և կանոնաւոր կերպով վարելու
արուեստ : Առևնիև Տնտեսութիւն անուամբ հրատա-
րակուած բաղմամբիւ գրքերը գրեթէ այս սահմա-
նին մէջ ամփոփեալ են :

Իսկ երբ նկատուի իբր գիտութիւն որ պարու-
նակէ կնոջ բոլոր պարտականութիւնները՝ տան՝
ընտանեաց և ընկերութեան հետ ունեցած յարա-
բերութեանց մէջ , յայնժամ կուգայ պատեհու-
թեամբ անցնիլ այն դասուց կարգը՝ որոց նպա-
տակն է կնոջ բարոյական դաստիարակութիւնը զօ-
րացնել՝ իւր հանձարոյն աստիճանը բարձրացնե-
լով :

Ահա այսպէս հասկցած եմ զայն : Առտնին Տըն-
տեսութիւնն ըստ իս , « ժամանակը՝ հանձարը՝ և
գրամն աղէկ գործածելու արուեստն է : »

Ֆէնըլոն , առանին խնամք ըսելով կիմանայ
այն ամեն ինչ՝ որ յարաբերութիւն ունի տան ներ-
քին կառավարութեան , հազուստի՝ կազմածոց՝
կարասեաց՝ սեղանի՝ մանկանց դաստիարակութեան՝
սպասաւորաց թոշակին և աննդեան ծախուց :

« Մարդ կը վարժուի , կըսէ , շուայլութեան՝
ինչպէս խնայողութեան . ուրեմն անհրաժեշտ է
քաջ ուսուցանել դրամին արժէքն ու գործածու-
թիւնը :

« Մայր մը թող չվախնայ իւր աղջիկն ազահ
ընելէ . այս մոլութիւնը չկայ մեր դարուն մէջ :
Շուայլութիւնն անոր յաջորդած է ընդհանրապէս :

« Պէտքերն ա՛յնքան բազմապատկեալ են , ճար-
տարութիւնն ա՛յնքան ճիգեր ըրած է , որ հազար
հրապուրիչ ձեւերով՝ աւելորդը պիտոյից կերպա-
րանք կառնու : »

Ինչ որ Ֆէնըլոն իւր ժամանակին կը պատշաճե-
ցընէր՝ կարծես թէ այժմեան համար գրած է :

Այս տեսակ նմանաբերութիւնք կարի հրահան-
գիչ լինելով՝ չեմ ուզեր զանց առնել . անոնք ա-
ւելի մեծ ոյժ պիտի տան այն նկատողութեանց զոր
ես յառաջադրած եմ ներկայացնել :

Մեր օրերու կիւնը միայն տունը կառավարելու
կոչուած չէ : Իւր պաշտօնն աւելի մեծ կարեւորու-
թիւն ստացած է . և որովհետեւ աճած է այն պար-
տականութեանց թիւը զոր պարտի կատարել իբր
աղջիկ՝ իբր հարսն և իբր մայր , հասկցուեցաւ թէ
պէտք է աւելի զօրաւոր և աւելի լուրջ ուսմամբք
պատրաստել զնա՝ որպէս զի ըստ արժանւոյն կա-
տարէ զայնս :

բ .

Նախօրէն Ա . կըսէր տիկին Գանիանի . « Գաս-
տիարակութեան հին դրութիւնը ոչինչ է : Ի՞նչ
կը պակսի աղջիկներն աղէկ կրթելու ի Գաղղիա :

— Մայրեր, » կը պատասխանէ տիկին Գանսիան :
 — Այս խօսքը կայսեր ուշադրութիւնը գրաւելով՝
 « Ահա, կըսէ, դաստիարակութեան կատարեալ
 դրութիւն մը . պէտք է, տիկին, որ իրենց զա-
 ւակները կրթել գիտցող մայրեր պատրաստէք : »

Մայրական դաստիարակութիւնն յայնժամ
 սկսաւ :

Յիսուն տարիէ հետէ արջկանց ուսուցման մէջ
 մեծ յառաջադիմութիւն եղած է :

Ամենէն երեւելի ուսուցիչք դասախօսութեան
 կոչուեցան ժողովրդական և կրօնական վարժարա-
 նաց մէջ :

Երկրորդական հրահանգութիւնն որ այսօր կը
 տարածի և կընդհանրանայ՝ անհրաժեշտ աճումն է
 այն ուսմանց՝ որք այլևայլ ձեւերով և տարբեր
 դրութեամբ փորձուած են :

« Այլ եւս վէճ չկայ, կըսէ էմի Մարթէն, այն
 խնդրոյն վրայ թէ հարկ է կիներն ուսեալ ընել .
 այժմ ամեն ոք կը հաւանի նոցա հանձարը զարգա-
 ցընելու . և իրաւամբ, վասն զի կանանց հմու-
 թիւնը՝ քաղաքական ժողովոց հրովարտակներէն
 շատ աւելի նպաստած է մարդկային դասուց ան-
 հաւասարութիւնները պակսեցնելու :

« Անդգոյճ դաստիարակութիւնն է որ կը բերէ
 ունայնութիւն ի զարդս, ունայնութիւն ի հաճո-
 յական գիտելիս, ունայնութիւն ի մարզս գիտու-
 թեան :

« Լուրջ դաստիարակութեան հետեւանքն է՝
 մասնաւոր երջանկութիւն և ընդհանուր բարգա-
 ւաճութիւն : »

Ճշմարտագէտ ուսեալ կիներն այլոց կընկերանայ
 հանոյական գիտելեօք, և իւր ամուսնոյն՝ զարգա-
 ցեալ հանձարով . տանը մէջ կը տիրէ՝ պահպանելով
 բարեկարգութիւնը՝ անտեսութիւնը և պատիւը :

Իմաստուն տնարարի պաշտօնները կատարելով
 հանդերձ, կրնայ յարմարիլ, ի հարկին, ընկերու-
 թեան պահանջմանց և վայելչութեանց :

Փէնըրն ըսած է . (յաճախ պիտի յիշեմ այս
 քաղցր և պատկառելի անունը) .

« Բարիքն անկարելի է առանց կնոջ . նա կը կոր-
 ծանէ կամ կը պահպանէ տունն . նա կը կարգա-
 դրէ տնական բոլոր գործերը :

« Կանանց դաստիարակութիւնը կարեւորագոյն
 է քան զարանցն, որովհետեւ կանայք պիտի դաս-
 տիարակեն զարս : »

Բոլոր մեծ հանձարք՝ որք մասնաւոր ուսումն
 ըրած են մեր ընկերական վիճակին միտմանց և ըս-
 տոյգ պիտոյից վրայ, հասկցան թէ ո՛ր և է յառա-
 ջադիմութիւն կարելի չէր, եթէ կիներն անհաղորդ
 մնար մտաւորական շարժման և գիտութեան գիւ-
 տից :

« Կը սորվուի աղէկ խորհիլ՝ ինչպէս կը սորվուի
 աղէկ կարել, ըսած է Կ. Ալիուլ Կամուհին, և կը
 մաղթեմ որ այս նորութիւնը մտնի Կանանց մէջ : »



Նորութիւնն եկաւ, և սկսուած է յաղթանակել նախապաշարեալ անձանց, որք՝ տեսնելով գիտուն համարուած կամ գէշ ուսեալ կանանց ծիծաղելի գործերը՝ վնասակար կը նկատէին մտաւորական աշխատութիւնը տան խոնարհ զբաղմանց, որոց հետ կարծեմք շատ լաւ կը միաբանի:

Գ.

« Հաստատուն և կատարեալ ուսումն տալ, — կը յաւելլու նոյն հեղինակը, — անհրաժեշտ է կանանց բարոյական զարգացման, և ընտանեաց ու ընկերութեան մէջ իրենց գործակցութեան համար:

« Միայն մարդուն յատկացեալ չէ ոյժ, արդարութիւն, չափաւորութիւն, անձնանուիրութիւն. կենջ եւս պիտոյ են անոնք:

« Նոյնքան արիւթիւն և արթնութիւն պէտք է մօրն՝ որ իւր զաւակը կը դիւցնէ և վրան կը հրսկէ, որքան զինուորի մը՝ որ կը հսկէ քաղաքին պահպանութեան:

« Առանին գործոց՝ ինչպէս հասարակաց գործոց կառավարութեան համար պէտք են նոյն յատկութիւնք արգարակորով ուղղութեան՝ աշարջութեան և դատման:

« Ստոյգ է թէ, քանի որ հանձարը բարձրանայ՝ այնքան առաւել ընդունակ կը լինի առաքինութեան: »

Ո՛րքան ճշմարտութիւն և ո՛րքան կենցաղագիտութիւն այս խորհրդածութեանց մէջ:

Ի՛նչ քաջալերութիւն անոնց՝ որ կանանց դատարակութեան կաշխատին, երբ անոր հայթայթած օգտից այսքան բարձր գնահատութիւն կը լինի:

Այս արգասեաց ամենէն փափաքելիներէն մին պիտի լինի ևս քան զեւս սեղմել ընտանիքին կապերն որ գորովաշարժ ընկերութիւն մի է, որոց անգամոց իւրաքանչիւրը կը մասնակցի իւր միջոցներուն և կարողութեան չափովը:

Եւ այս կը տեսնուի հետագայ տեսարանին մէջ՝ յորում տիկին տ'Ակուլ մարդկային ընկերութեան պատկեր մը կը նկատէ:

« Տակաւին երիտասարդ մարդ մը լուրջ բայց ոչ տխուր կերպարանօք, փոքր սայլ մը կը քաշէր, որուն վրայ կար երգեհոնիկ մը: Իւր կինը քովէն քալելով՝ բռնատեղը կը դարձնէր. մանուկ մի կարմիրայտ և կայտառ, զուարթութեամբ կը խաղար ավուռի մը վրայ նստած որ երգեհոնիկին քով զետեղուած էր: Ասոնք փողոցները կը շրջէին նախախնամութեան ապաւինած:

« Մարդը՝ զօրաւոր և լուրջ՝ կեանքը կը վարէ քիչ մը ըստ բերման բախտին:

« Կինը թեթեւագոյն աշխատութեամբ մը նորա հոգնութիւնը կը հեշտացնէ :

« Իսկ անհոգ մանուկը գիւղէ գիւղ կը շրջի իւր մօրը ժպտելով՝ և հաճոյք զգալով այն վիճակէն՝ որոյ նեղութիւնները չգիտէ տակաւին : »

Ահա ամենէն խոնարհ ընտանիքի մէջ ճիշդ օրինակ մը այն սնուցողաց՝ որք սահմանեալ են ամեն ընտանեաց համար մարդուն՝ կնոջ և մանկան, ինչ վիճակի մէջ որ բախտը դրած ըլլայ զանոնք :

Իւր ծանօթութեանց սահմանն ընդարձակելով է որ կինը բանաստեղծական կընէ իւր ամենափոքր պարտականութիւններն իսկ, զոր կը սիրէ, և լաւագոյն կը համարի խօլական մտաց հնարած բոլոր յօժարութիւններէն :

Ֆիզիքական աշխարհին ինչպէս նաև բարոյական աշխարհին անգէտ լինելն՝ օտար մնալ է այն ամեն գասերէն զոր կուտայ բովանդակ բնութիւնը, ուր ամենայն ինչ կը խօսի մեզ բարեկարգութեան՝ անտեսութեան՝ աշխատութեան և նախատեսութեան վրայ :

Կարեւոր է կնոջ պատրաստ լինել ամեն բանի, որպէս զի ամեն վիճակի մէջ կարենայ օգտակար կերպիւ գրադիլ իրեն և մանաւանդ այլոց համար :

Պէտք եղած ատեն ըլլայ « ագարակի վերակացու, տօմարակալ, յիշատակարանաց խմբագիր, լրատմիտ քննադատ, գիտնալու համար ընտրել զանազան գրուածոց մէջէն օգտակարագոյնը. բը-

ժիշկ անգամ, որ հսկէ տնեցւոց առողջութեան և առողջապահութեան : »

Կարելի չէ հասնիլ այսպիսի զարգացման՝ առանց բազմաթիւ և բարուք ուղղուած ուսմանց :

Իւր պաշտօնը լաւ ևս կատարող կինը նա է՝ որ զօրաւոր ազդեցութիւն կը բանեցնէ իւր գործողութեան շրջանակին մէջ :

Իւր աւտինն հոգաբարձութեան մէջ կը նշմարուի ամեն ուրեք իւր հանձարին հետքը : Կզգայ ամեն բան կատարելագործելու և գեղեցկացնելու պէտքը. բարեկարգութեան և շքեղութեան բոյր մը կը տարածի իւր շուրջը. իւր տան ամեն մասանց մէջ կը տեսնուի մանրամասնութեան ոգին վսեմախոհութեան միացած. արուեստք՝ դրական զրօսանք՝ գիտութեանց գիւտք՝ իրենց տեղը կը գտնեն անդ : Այսպէս է որ նիւթական խնամքները կազնուանան հոգւոյ կարողութեանց հրահանգներով :

7.

Բայց իւր գործոյն միայն մի մասն է այդ :

Չալտի ունենայ լոկ այն յատկութիւններն որ վայելչութիւն կուտան, այլ պարտի բարձրանալ ի կէտն առաքինութեանց՝ որք կինը կը զօրացնեն : Ինքը միշտ զբաղած լինելու է իւր շուրջը

պատող ամեն բան խնամօք կատարելագործելու ,
 օգուտ քաղելու ամեն մտքերէ , խմաստութեամբ
 գործածելու ամեն ժամերը , և շարունակ իւր վի-
 ճակին հաւասարութեան մէջ մնալու :

Կինն իւր ճակատագիրը չյօրինէր՝ այլ կը կրէ-
 ուրեմն հարկ է որ դաստիարակութեամբ պա-
 տրաստուի բարի կամ չար բախտի , ուսանի հարուստ
 լինել առանց ցուցամոլութեան , և աղքատ՝ առանց
 նուաստութեան : Ասոր կրնայ հասնիլ միայն իւր
 հանճարը մշակելով :

Զօրաւոր դաստիարակութիւն մը առաւել եւս
 պիտանի կըլլայ՝ քանի որ նորանոր պարտականու-
 թիւնք հնարուեցան կնոջ համար՝ ընկերական վի-
 ճակէ մը , ուր ամեն ոք առանց աստիճանի զանա-
 զանութեան կուզէ մասնակցիլ միեւնոյն բարօրու-
 թեան : Փափաքները միշտ համեմատ չեն իւրա-
 քանչիւրին հարստութեան : Եթէ փափաքները
 նոյն են , սակայն բախտն ընտանեաց մէջ շատ մեծ
 տարբերութիւններ կը գնէ : Կնոջ պահուած է
 այնչափ ճշմարիտ կամ սուտ պիտոյից գոհացումն
 տալու խնամքը , ծախքն հասութից հաւասար պա-
 հելով , ընտանեաց երևմուտքն հաւասարալուծելով ,
 և իրեն օգնութեան կոչելով այն ճարտար կար-
 գաղբութիւններն զոր կրնայ երեւակայել իւր
 գործունեայ նախատեսութիւնը :

Ե .

Հանճարի մշակութիւնը նուազ պիտանի չէ աղ-
 քատին քան մեծատան , միջին կարգի քաղաքա-
 ցւոյն քան աղնուական դասուն , և ատով էոր մեր
 ընկերութիւնը կը տարբերի անկէ՝ որու կը խօսէր
 տիկին տը Մէնթընոն , մին այն կանանց՝ որք ա-
 ւելի յաջողութեամբ զբաղեցան աղջկանց դաս-
 տիարակութեան սահմանեալ վարժարանաց :

Այս նշանաւոր կնոջ առած կանոններն ու
 պատուէրները Սէն-Սիրի գեղեցիկ հաստատու-
 թեան զոր ինքն հիմնած էր , մեր ժամանակին չեն
 յարմարիր :

Ահա , օրինակ իմն , ինչպէս կը խօսէր առ տի-
 կին տը լա Վիէօվիլ գրած նամակին մէջ :

« Հարկ է կրթել քաղաքացին իբր քաղաքացի
 և ոչ իբր աղնուական . պէտք չէ նոցա ոչ բանա-
 հիւսութիւն և ոչ խօսակցութեան մշակութիւն :
 Նոցա մտքը բանալու հարկ չկայ . բաւական է ի-
 րենց քարոզել ընտանեկան պարտքերը , ամուսնոյն
 հնազանդութիւն , աղայոց խնամք . իրենց փոքր
 ծառայն կրթել , կիրակի և տօն օրերը եկեղեցի

երթալ, իրենց խանութն եկող յաճախորդաց հետ համեստութեամբ վարուիլ, և իրենց առեւտրոյն մէջ ուղղութիւն ունենալ:

« Անոնց ըսելու է թէ բարեպաշտութիւնը բնաւ չհակառակիր ուրախութեան, և ընդհակառակն՝ պէտք է զայն անոնց սիրելի ընել, ցուցանելով թէ պարտ է հաճութեամբ ծառայել Աստուծոյ: Մեծ դժուարութիւն կը տեսնեմ տարբեր վիճակաց համեմատ իրենց ըսուելու բաներն որոշելու մէջ:

« Թէև ամեն հոգի հաւասարապէս պատուական է առաջի Աստուծոյ, պէտք է սակայն որ ազնուականի աղջկան տրուելու ուսումն աւելի ընդարձակ ըլլայ քան թէ այգեգործի մը աղջկանն:

« Վիճակաց տարբերութիւնն ազատորէն բացատրեցէք իրենց: Ըսէք թէ Աստուած ամեն վիճակաց թաղաւորն է, թէ երկնից մէջ կարգերը պիտի որոշուին միայն իւրաքանչիւրին առաքինութեանց համեմատ, և թէ իւր հպատակաց ամենէն բարեպաշտը միշտ ամենէն հաճելին է իրեն:

« Երբ մեծ օրիորդը (ազնուականը) սանտրէփոքրիկ գիւղացին, սա յօժարութեամբ պիտի ծառայէ օրիորդին (ազնուականին), և պիտի համոզուի թէ ինքը (գիւղացին) ծնած է անոր (ազնուականին) ծառայելու համար: Գաստիարակութիւնը զանազան լինելու է: Քաղաքացւոյն բաւական է գիտնալ միայն ինչ որ բացարձակապէս հարկ է

փրկուելու համար. իսկ միւսները (ազնուական) քիչ մը աւելի լուսաւորելու է:

« Պէտք է որ օրիորդը (ազնուական) աղէկ գաղղիերէն խօսին, և յանդիմանել էր որ թերանան:

« Միւսներուն կարևոր չէ հետեւիլ լեզուի կատարելութեան. բաւական է թէ պէտք եղածին չափ հասկնան իրենց հրամայուածն ընելու համար:

« Այգեգործի աղջկունք ճիծաղելի պիտի լինէին բանահիւսութիւն կարգաւով. օրիորդաց կը պատշաճի այդ: Խանութպանի աղջկանց պէտք է ուսուցանել հաւատարմութիւն իրենց առեւտրոյն՝ չափերուն՝ կշիռներուն և թոյլ տրուած շահուն մէջ: Միւսներուն (ազնուականաց) բնաւ չպատշաճիր այս: »

Գոովելի է տիկին տը Մէնթընսնի հանճարին բարձրութիւնը, փոքրիկ աշակերտուհեաց վրայ ունեցած սէրը, կրօնական խորին զգացմունքն, յորոց աւելի մասնաւորապէս քաղած է իւր ներշնչումները. բայց քաղաքացւոց համար իւր արհամարհութիւնն, այն տարբերութիւնը զոր կը դնէ կարգերու մէջ, իբր թէ նոքա դատապարտեալ լինէին մշտապէս սպրելու անհաւասար վիճակի մէջ, խիստ հակառակ են յառաջադիմութեան և հաւասարութեան այն գաղափարներուն՝ որք մեր ժամանակին մէջ երբեմն չափազանց ընդարձակութիւն առին:

2.

Այսուհետեւ գիտութիւնք և արուեստք իբր պերճութիւն չեն նկատուիր մինչեւ իսկ մեծատանց մէջ :

Այժմ մարդիկ աւելի տաղանդով քան թէ հարըստութեամբ կը հասնին պատուոց և աստիճանի :

Այլ ևս աղջիկը չեն կրթեր ճոխ և անգործ կեցութեան համար , այլ ձախորդութեանց առջև կազմ և պատրաստ լինելու նախատեսութեամբ : Այլ ևս չեն նորվիր երաժշտութիւն և գծագրութիւն՝ միայն զբօսնլու համար : Կը մշակեն այս հաճոյարար արուեստները և ասեղնագործութիւնն՝ օգուտ քաղելու նախատեսութեամբ : Գրական և գիտնական ուսումները և գեղարուեստից մշակութիւնն ապրուստի միջոց կը լինին հարուստ չեղող աղջկանց . իսկ մեծատանց՝ միջոց կը հայթայթեն կարօտելոց օգնելու :

Ուսեալ և ճարտար կանայք ուսման հայթայթած երջանկութիւնը չեն վայելեր միայն , այլ եւ գիտցածնին կը հաղորդեն այլոց . կարօտելոց սահմանեալ հանդերձատանց՝ գործարանաց և բազմաթիւ դպրոցաց մէջ բարձրագոյն դասու տիկնայք են որ իրենց հաճոյք կը համարին դասախօսել և աշխատասիրութեան օրինակ լինել :

Ողորմածութեան արձանագրութեանց մէջ երեւելի եղած են աշխարհային կիներէ շատեր՝ որք գիտեն իրենց տաղանդը նուիրել աղքատաց :

Միայն ընտանեկան կարգին մէջ չէ որ ուսումը և դաստիարակութիւնը (զոր երբէք զատելու չէ) անհրաժեշտ են ստորին դասուց՝ ինչպէս բարձրագունից : Ընկերական կարգին մէջ ուսման և դաստիարակութեան պակասութիւնն է որ կարտագրէ այն դատարկասուններու և մուրացկաններու , աշխատութեան թշնամի անձանց բազմութիւնը , որ օտար են բարոյական սովորութիւններէ , և պատուհաս ընկերութեանց :

Ուսման և դաստիարակութեան նոյն պակասութիւնը , բարձրագոյն դասուց մէջ , պերճութեան և չափազանց ծախուց կը տանի . իրեն հետեւանքն է անգործութիւն և խնդիր ունայն և սնտաի հաճոյից , որոց աղետալի արգասիքն ամենուն յայտնի են :

Խնամք տարուած կամ զանց առնուած դաստիարակութիւնը , գիտութիւնք կամ ագիտութիւն , առաքինութիւնք կամ մոլութիւնք պատճառ են ոչ միայն ընտանեաց՝ այլ և պետութեանց բարգաւաճման կամ անկման :

Աւտնին Տնտեսութիւնն ընտանեաց կառավարութեան համար նոյն բանն է , ինչ որ է քաղաքական տնտեսութիւնը ժողովրդոց կառավարութեան համար :

Է.

Կարևոր համարեցի ցուցանել թէ ընտանեկան խնամքները և տան կառավարութիւնն ամենաբարձր նկատողութեանց վրայ կը կայանան: Հիներն իսկ այս մասին նոյն գաղափարն ունեցած էին: Ընկերական ա՛յնպիսի վիճակի մը մէջ՝ ուր կանայք հեռի էին գրաւելէ այն տեղն՝ որ այսօր տրուած է իրենց, հեթանոսական սահմանադրութեանց մէջ՝ ուր կինը նուստ վիճակ մի ունէր, յաճախ կը նշմարուի բարձր կարծիք մը իւր արժանեաց նկատմամբ:

Առևնին Տնտեսութիւնը սահմանելով արուեստ խնաստութեամբ և օգտակար կերպիւ գործածելու՝ ժարեսնակը՝ որ արագապէս կը փախչի, հանճարը՝ որոյ մշակութիւնն ա՛յնքան խնամք կը պահանջէ, և դրանք՝ որ խիստ գժուար է շահիլ և մանաւանդ պահել, ցոյց տուի այն շրջանակին գլխաւոր բաժանմունքը՝ զորս պիտի ջանամ լնուլ, և ոգին որ պիտի նախագահէ այս բոլոր գասուց:

Կուզէի նախապէս հասկցնել թէ, այժմեան դասերը բազիկացնող գիտելեաց ճիւղերէն և ոչ մին աւելորդ չէ տանտիկնոջ սահմանեալ պաշտօնին

Ը.

կատարմանը, և իրեն ապահովելու համար ազդեցութեան այն մասը զոր պարտի ունենալ ընտանեաց և ընկերութեան մէջ:

Մտքին բարձրագոյն կարողութեանց մշակութիւնն ընտանեկան առաքինութեանց խոչընդոտն համարելը մեծ սխալմունք է: Ոմանք երկիւղ ունեցան թէ, հանճարը կատարելապէս մշակելէն իմաստակութիւն եւ սնտիառութիւն յառաջ կուգայ:

Չերկնչիմք հաստատել թէ, լուսաւորեալ կանայք երբէք խնաստակ եղած չեն, իրենց առտնին պարտքերն այլոց նման լաւ կը կատարեն, միշտ զուրկ չեն վայելչութենէ, ինչպէս են շատ տղէտ կանայք:

Բաց յայտմանէ, ճշմարիտ ուսեալ կանայք այսօր կարի զգաստ լինելով՝ կզգուշանան խնաստակ լինելէ և գիտուն կանանց համար Մովիէրի ըրած քննադատութիւնքն ասոնց չեն պատշաճիր ամենելին:

Պէտք չէ սխալիլ գիտուն կանայքը չեն զոր մեր մեծ կատակերգակն ուզեց ի հանդէս անել: Նա գիտէր ամենէն քաջ գնահատելերեւելի ըն-

կերութենէ մը ձեւաւորեալ գերազանց կրները , այն ընկերութենէն՝ որ գազդիական հանճարին տուաւ ընտիր ճաշակ , վայելչութիւն և շքեղութիւն :

Ոչ ազնիւ Ռամպուլիէ մարքիզուհին է և ոչ տը Սէվինյէ սիրուն մարքիզուհին՝ զոր կը պարսաւէր նա , այլ նոցա յիմար և սուտ նմանողները :

Վսեմ կերպերը , գեղեցիկ ձեւերը , զուարթ ու թեթեւաթուիչ միտքը , որք կարի քաջ կը համաձայնին ճշմարիտ հմտութեան , ծաղրալի են այն կանանց վրայ , որք Պեղիզի նման գիտութեան ծեքարանութիւնն ունին միայն , և կը կարծեն ունենալ ամեն արժանաւորութիւն՝ վասն զի աւնին ամեն յաւակնութիւն :

Արդարև այս ինքնահաւան տգիտութենէն աւելի անհաճոյ բան չկայ , և երբ պարկեշտն Գրիգալ կը տրտնջէ տեսնելով թէ ամեն ինչ տակնուվրայ է տանը մէջ , մինչդեռ իւր կիներն ու քոյրը յունարէն քերականութիւն կուսանին , կամ հետաքրքիր են գիտնալու թէ ինչ կանցնի լուսնոյ մէջ , իրաւունք ունի բարկանալու : Բայց նոքա՝ որ Գըրիգալի քիչ մը սաստիկ խտտութիւնը յանդիմանութիւն համարեցին կանանց տրուած ուսմանց ընդարձակութեան դէմ , շատ սխալած են , Մովսէսի միտքն հասկցած չեն :

Պէլիզ և Ֆիլամինտ ուսեալ լինելնուն համար չէ որ յուր տանտիկին եղած են , այլ գէշ կըրթուած լինելնուն համար :

Ոչ թէ բաւից գիտութիւնն հարկ է ստղծիլ , այլ կենաց գիտութիւնը :

Մովսէսի դատապարտածն իմաստակութիւնն է , և սիրածը՝ գիտութեան մէջ համեստութիւն : Նոյն թատրերգութեան մէջ Գլիթանտրի բերնով ըսածը կը ցուցնէ նաև թէ՛ ստուգիւ ուսեալ կին մը գիտէ ճանաչողութեամբ ընտրել զինքը չըջապատող բարեկամները , և մանաւանդ կզգուշանայ նշանաւոր հանճարի տէր մարդիկը՝ Թրիսթիէններու և վատիւսներու հետ շփոթելու յուր ճաշակն ունենալի :

Չանց չընէր նաև ցոյց տալ Հանրիէթի ողջմտութիւնը , որ չհաւանիր իւր ընտանեաց ծաղրելի գործոց , թէև ինքն քաջ ուսեալ է :

Թ .

Այն սուտ գիտուն կնոջ՝ որ ամեն բան կուսանի բաց ի կարևորէն՝ կը սիրեմ ընդգէմ հանել ի դամենեաց դուստրը , զոր Ֆէնըլոն կը նկարագրէ . այն Անտիոպէն՝ որ հանճարեղ դաստիարակութեամբ յորինուած է ընտանեաց և ընկերութեան համար միանգամայն : Ինքն հաճեր է զարդարել զնա այն ամեն յատկութեամբք՝ որ զինքը կընեն

տան պահապան հրեշտակ և բնկերութեան զարդ : Քաղցր բնաւորութեան հետ՝ որ զինքն ամենուն սիրելի կրնէ, մինչեւ իսկ անոնց որոց կը հրամայէ, ունի ծանրութիւն որով պատկառելի կը լինի իւր հրամանաց հնազանդող ծառայից առջեւ : զի գիտէ հրամայել ա՛յն բաները միայն՝ որք կրնան կատարուիլ : Եւ սակայն համեստ և զգոյշ է իւր խօսակցութեան մէջ, վասն զի բնաւ չխօսիր առանց հարկի : Թագաւորի մը աղջկան այս փայլուն և կատարեալ դաստիարակութիւնն արգելք չլինիր իրեն զբաղիլ ներքին մանրամասնութեանց, մինչդեռ Գրիգալի կինն ու քոյրը, որ յոյժ անկատար դաստիարակութիւն մը միայն ստացած են, իրենց նուաստութիւն կը համարէին առտնին իրաց մէջ քանճարկուիլ, ինչպէս կրսէ Մոլիէն :

Արդարեւ եթէ Առտնին Տնտեսութիւնն յաջողէր աղջիկներն Անտիոպէի առաքինութեանց նմանցնել և զգուշացնել Պէլիզայի ծաղրելի գործերէն, յայնժամ գիտութեանց առաջինը կը լինէր :

Այն սքանչելի շնորհը որով Ֆէնըլոն հաճած է նկարագրել կատարեալ աղջկան մը պատկերը, կրնայ միայն փափաք ներշնչել նոյն գորովաչարժ օրինակին նմանելու :

Այսպիսի կատարելութիւն կրնայ յառաջ գալ միայն բարձրագոյն դաստիարակութեամբ : Անտիոպէ շատ ուսած՝ շատ խորհած ըլլալու է, սակայն իւր գիտութիւնը՝ իւր հանճարը և իւր աստի-

ճանը ցոյց տալու փոյթ չընէր ամենեւին :

Դիւրաւ կը հասկցուի թէ անկարող պիտի լինէր իւր առոյգ հասակաւն իսկ, հօրը տունը կարգադրել և կառավարել, եթէ զանազան ծանօթութիւնք, զոր անշուշտ ստացած էր, չգային հաւաքուիլ և ձուլուիլ ի մի միայն գիտութիւն, որոյ օժանդակ են բոլոր միւսները :

Առնիկն Տնտեսութիւնն է այդ գիտութիւնը : Այս առաջին դասին մէջ բաւական համարեցի ցուցանել թէ նա իրեն նպատակ ունի մանաւանդ ամողջացնել այն զօրաւոր և լուրջ հմտութիւնը որ պիտի ստացուի այս դասերէն, որոց արդէն կը հետեւին մեր մատաղ աշակերտուհիք գովելի եռանդեամբ :

Երջանիկ պիտի լինիմ, եթէ այնքան ճարտար և սուցչաց խնամաց յանձնուած գործոյն իմ խոնարհ բաժինս մատուցանելով՝ յաջողիմ ցոյց տալ, համեստ դասերուս մէջ, բարեկարգութեան և տնտեսութեան սկզբունքները զոր կառաջադրեմ բացատրել :

Գ Ա Ս Բ .

Սամանակի գործածութիւն եւ բաժանումն : — Կանոնաւորութիւն : — Բարոյական կասարելութիւն : — Կեանաց ծրագիր Ֆրանկիցի : — Սոկրատ եւ Քսենոփոն :

Ա .

Առաջին դասիս մէջ ցոյց տուի թէ՛ ընդարձակ հրահանգութիւնը՝ տան վարչութեան համար կնոջ վրայ դրուած պարտականութեանց կատարման արգելք չըլլալէ զատ՝ իւր գործն աւելի գիւրիսն եւ աւելի հրապուրիչ կընէ : Իւր դատումը ձեւակերպելով, զինքը վարժեցնելով դիտելու՝ խորհրդածելու՝ կարեօրութիւն տալու այն կեցութեան զոր պարտի նուիրել այլոց բարօրութեան, այս հրահանգութիւնն իւր գործառնութեանց բարոյական յատկութիւն մը կուտայ, որ զինքը զօրաւոր կընէ եւ իւր իշխանութիւնը կապահովէ : Ինքն անձամբ միւսներուն օրինակ լինելով է որ իրաւունք կտանայ անոնց առաջնորդելու եւ կառավարելու :

Աշխատութիւնը, որ ընտանեաց հարստութեան եւ բարօրութեան գլխաւոր պայմանն է, ա՛յնքան առաւել արդիւնաւոր կը լինի, որքան աւելի ի-

մաստութեամբ կարգադրուի, եւ օրուան ժամերն աւելի հանձարեղ եւ աւելի կանոնաւոր կերպիւ բաժնուին : Բայց արդարացի է որ ժամանակի գործածութեան կանոնաւորութիւնն ստորագասեալներէ պահանջելէ առաջ՝ հրամայողն ինք պահէ :

Շարժումն մէջ օր մը կայ զոր կրօնքը մասնաւորապէս կը նուիրէ լուրջ մտածութեան, այն է կիւրակէն : Այս օրուան մէկ մասը չկրնար աւելի լաւ գործածուիլ քան թէ կարգադրելով անցած շարժումն զանց առնուած գործերն՝ որք պիտի շարունակուին եւ վերջանան յաջորդ շարժումն մէջ : Ոչ ոք պիտի անգիտանայ թէ ո՛րքան օգտակար է այսպիսի վերագարծ մը իւր անձին վրայ, եւ որչափ պիտանի է այս մտախոհ ուսումն իւր կեցութիւնն ըստ կարի լաւ եւս գործածելու, ոչ միայն իւր ժամանակին հանձարեղ բաժանման, այլ մանաւանդ իւր անձին բարոյական կատարելագործութեան համար :

Բ .

Այսպիսի քննութենէ մը յառաջ եկած օգուտներուն վրայ ճիշդ գաղափար մը տալու համար՝ պիտի յիշեմ աստանօր կենաց եւ աշխատութեան այն պատկերը զոր իրեն գծեց վերջին դարուս իմաստնագոյն մարդոց մին, Բենիամին Ֆրանքլին :

Իւր բարոյական կատարելութեանն աշխատելու
փութաբով տասներկու վերնագրի տակ կը դա-
նանորէ այլեւայլ առաքինութիւններն որք իրեն
ամենակարեւոր կը թուին, և հետեւեալ կերպիւ
կը ձեւափերպէ այն պարտականութիւնները զոր
հարկ կը համարի իւր վրայ դնել՝ նոյն առաքի-
նութիւններն ստանալու համար:

1. Բարխառնութիւն: — Ծանրանալու հափ մի՛
ուտէք ամենեւին, և թմբելու հափ մի՛ խմէք:

2. Էսութիւն: — Ըսէք միայն այն բանն՝ որ
այլոց և ձեզ կրնայ օգտակար լինել:

3. Բարեկարգութիւն: — Ձեր տան մէջ ամեն
բան իւր տեղն ունենայ, և ամեն գործ իւր ժա-
մանակը:

4. Գրոշումն: — Որոշեցէք ընել ինչ որ պար-
տիք, և առանց զանցառութեան ըրէք ինչ որ կո-
րուէք:

5. Խնայութիւն: — Միայն այլոց և ձեր պիտո-
յից համար ծախք ըրէք, այսինքն ամենեւին բան
մի՛ վատնէք:

6. Աշխատութիւն: — Ժամանակ մի՛ կորուսա-
նէք, միշտ օգտակար բանի մը աշխատեցէք, ամեն
անպէտ գործէ ետ կեցէք:

7. Անկեղծութիւն: — Սարէութիւն մի՛ գործ-
ածէք ամենեւին: Անմեղութեամբ և արդարու-
թեամբ խորհեցէք: Սօսեցէք ինչպէս որ կը խորհիք:

8. Արդարութիւն: — Մի՛ վրասէք և ոչ ումք,

թէ՛ իրեն զրկումն ընելով, և թէ զանց յանկալ
ընել այն բարիքն՝ որում կը հարկադրէ զձեզ ձեր
պարտականութիւնը:

9. Զափառորութիւն: — Զափառացալ թեկնէ
զգուշացէք. այնքան սաստիկ մի՛ զգայք ձեզի եղած
զրկումն որքան և ծանր թուի:

10. Մահբարութիւն: — Մի՛ հանդուրժէք և ոչ մի
ամենափոքր անմաքրութեան ոչ ձեր վարմանը,
ոչ ձեր հանդերձից վրայ, և ոչ ձեր տան մէջ:

11. Հանգարտութիւն: — Չնչին բաներու հրով
սովորական և անխուսելի դիպուածոց մէջ ամե-
նեւին մի խռովիք:

12. Խանարութիւն: — Յիսուսի և Սպիրտոյ
նմանեցէք:

Գ.

Որովհետեւ Ֆրանքլին միայն գործադրելու հա-
մար կը վարդապետէր, ուստի գործին կը ձեռն-
արկէ այսպէս:

Տասներկու երեսէ բաղկացեալ տեղորակ մը
չինելով՝ շարթուան ամեն օրուան երեսին վրայ
կարմիր կէտով կը նշանակէր ըրած թերութիւն-
ները:

Բարեկարգութեան սկզբունքը պահանջներն էր

օրրուան իւրաքանչիւր ժամն իւր որոշեալ կիրա-
տութիւնն ունենայ, տետրակին մէկ երեսը կը
պարունակէր ամեն օրրուան քսանհարս ժամուց
բաժանումն:

Ժամն հինգին անկողնէն ելնել և աղօթել:

Ժամը վեցին՝ օրրուան գործերը կարգադրել:

Ժամը եօթնին՝ ներկայ գործերով զբաղել և
նախաձայնել:

Ժամն ութէն մինչեւ տասնևմէկ՝ աշխատու-
թիւն:

Կէսօրին՝ հաշիւները կարգալ և քննել:

Ժամը մէկին ձաշել:

Ժամն երկուքէն մինչեւ հինգ՝ աշխատութիւն:

Ժամը վեցին՝ ամեն բան իր տեղը դնելով՝
ընթրել:

Ժամը եօթնէն մինչեւ ութ՝ երաժշտութիւն,
զբօսանք և խօսակցութիւն:

Ժամն իննէն մինչեւ տասն՝ օրրուան քննութիւն,
աղօթք և սպա երթալ պառկիլ:

« Բարեկարգութեան խնդիրը, կրսէ մըրանքին,
ամենէն աւելի շիտութիւն պատճառեց ինձ:

« Տեսայ որ օրական բաժանման յատակադիծս
գործադրութեան շատ դժուարութիւններ կը ներ-
կայացնէր ինձ, որ ստիպեալ էի յարաբերութիւն
ունենալ բազմաց հետ, և ընդունիլ մարդիկ՝ որոց
հետ գործ ունէի անոնց յարմար ժամերու մէջ:
Կանխաձ վարժուած չէի ըստ կարգի գործելու, և

լաւ յիշողութիւն ունենալով՝ չէի զգար անկանո-
նութեան անպատեհութիւնը:

« Այս մասին անուղղայ մտայի:

« Կրնայ օգտակար լինել գիտնալը թէ՛ Աստու-
ծոյ շնորհիւն՝ այս հնարքին պարտական եմ բոլոր
կենացս անընդհատ երջանկութիւնը՝ հասակիս մին-
չեւ եօթանասուն եւ իններորդ տարին, յորում
այս տողերը կը գրեմ:

« Նախախնամութեան ձեռքն են այն ձախոր-
դութիւնք որք կրնան պատահիլ մեր կենաց մտ-
ցորդին մէջ. բայց եթէ պատահին, անցելոյն վրայ
խորհրդածելը զօրութիւն կուտայ զանոնք ան-
տրտունջ կրելու:

« Բարեխառնութեան կը վերագրեմ իմ երկա-
րատեւ առողջութիւնս:

« Կանուխ ստացած դիւրակեցութիւնս՝ ար-
դիւնք է աշխատութեան և խնայողութեան՝ որոյ
հետեւեցաւ հարստութիւն, և բոլոր ծանօթու-
թիւնք որ զիս օգտակար քաղաքացի ըրին և զի-
տնոց մէջ համբաւի աստիճան մը ստատուցին ինձ.
անկեղծութեամբ և արդարութեամբ շահեցայ հայ-
րենեացս վստահութիւնն և այն պաշտօնները զոր
ինձ յանձնեցին:

« Վերջապէս այս բոլոր առաքինութեանց միա-
հաղոյն ազդեցութեանը կը վերագրեմ բնաւորու-
թեան այն հաւասարութիւնը, խօսակցութեան
մէջ այն զուարթութիւնը՝ որոց աղագաւ ընկե-

րակցութիւնս կը փնտռուի և մինչեւ խակ երթտա-
սարդաց հաճելի կը լինի :

« Ուրեմն կը յուսամ թէ իմ օրինակիս նմանող-
ներ պիտի գտնուին : Նպատակս էր բացատրել թէ
ո՛վ որ կը ցանկայ երջանիկ լինել, պէտք ունի
առաքինի լինելու : »

Դ.

Չուզեցի բան մը զանց առնել՝ ապագայ սերն-
դեան թողուած այս կտակէն, կենաց այս սքան-
չելի յատկագծէն, ժամանակի այս խորհրդաւոր
բաժանմանէն զոր գծեց այն փրկիստիայն, և ժողո-
վըրդական ըրաւ իւր հայրենակցաց մէջ այնքան
տարածուած սա առածը թէ . « ժամանակն ստակ
է : » Այսպէս կըցայ ցոյց տալ թէ՛ բարեկարգու-
թիւնը և կանոնաւորութիւնը որ պարտին նախա-
գահել տան կարգադրութեան՝ կապուած են բա-
րոյական բարձր նկատողութեանց :

Մարդ իւր կեանքը կանոնաւորելով կը հասնի
նիւթական գործոց կանոնաւորութեան . իւր հո-
գւոյն մէջ բարեկարգութիւն դնելով կրնայ իրաց
մէջ ալ դնել :

Ժամանակի գործածութիւնը, ժամուց իմաս-
տուն կարգադրութիւնը և աշխատութեան ճար-

տար բաժանումը՝ ընտպէս կառաջնորդեն հնար
եղածին չափ շատ բան կատարելու կարճ ժամա-
նակի մէջ :

Ուրեմն ժամանակին վրայ ազահ ըլլամք . « Մեծ
խնայութեամբ, արդիւնաւոր ընելով, և ա՛յնչափ
ցաւելով թողումք որ ժամերը մեր ձեռքէն ելլեն՝
որպէս թէ մեր ոսկին կուտամք : » Չհանդուրժեմք
որ մեր օրերէն մին անցնի առանց մեզի թողելու
ծանօթութիւն կամ առաքինութիւն մը :

Ե.

Ամեն ժամանակ, ամեն հեղինակի քով նոյն
գաղափարք կը տեսնուին այն խնամաց վրայ զոր
հարկ է ունենալ ժամանակը խնայելու և լաւ բա-
ժանելու համար : Կնոջ պարտականութեանց շա-
հագրգիւ և գորովաշարժ օրինակներէն մին կը
գտնուի Սոկրատայ աշակերտ Քսենոփոնի մէկ
դրքին մէջ :

Քսենոփոն, դիւցազն և հաւատարիմ պատմիչ
տասն հազար Յունաց նահանջին, որք երիտասարդ
Կիւրոսի օգնութեան կոչուելով, պարտաւորեցան
դառնալ իրենց հայրենիքը՝ մեծամեծ վտանգներէ
անցնելէ յետոյ, միանգամայն խորհող մ'էր : Սի-
րօյիւտի, այսինքն դաստիարակութիւն Կիւրոսի

կոչուած գրքին մէջ՝ Պարսից թագաւորին զօրաւոր և արուակաճ դաստիարակութեան վրայ խօսելով՝ ուզեց անուղղակի խրատներ տալ ուսուցչաց :

Իւր վարպետին՝ Սոկրատայ՝ ամեն նիւթի և մասնաւորապէս ընտանեաց կառավարութեան տարուելու խնամոց վրայ ճառած նշանաւոր խօսակցութիւններն յիշած է ուրիշ գրքի մը մէջ :

Գալով Սոկրատայ, ոչ ոք կանգիտանայ թէ բոլոր հնութեան մէջ մարդոց խնաստնագոյնը նկատուած է, և իրաւամբ :

Բոլոր կեանքը նուիրեց իւր ժամանակակցաց կրթութեանը : Գասարանի մէջ խօսող դասատու չէր : Իւր դասերն ամենուն կուտար, հասարակաց տեղերը, ամեն ուր որ խօսակցի մը հանդիպէր՝ որ կրնար իրեն առիթ տալ բացատրելու իւր փիլիսոփայական սկզբունքը, բոլորովին գործնական փիլիսոփայութեան, որովհետեւ իւր աշակերտաց կուսուցանէր ոչ աղէկ խօսել, այլ բարւոք խորհել և լաւ ասլրիլ :

Իւր դրութիւնն ընտիր էր : Հետեւելով սա սկզբան թէ, ամեն մարդ բազմաթիւ գաղափարներ ունի զոր կարող չէ բացատրել եթէ չգրգուռի, կը յաջողէր ինքնին գտնել տալ ճշմարտութիւնը, ճարտարապէս հարցումներ ընելով՝ և անդադար բերելով զնա ողջմտութեան կանոնաց :

2.

Քսենոփոնի գործն որոյ վրայ պիտի զբաղիմ՝ և որոյ անունն է Տիսկասկսև, մեծ խնամօք թարգմանած է Պ. Թալպօ :

Պ. Լըկուէ՝ քանի մը յօդուածով ամփոփած է անոր գլխաւոր մասերը Մակիազէն Փիքորեւս ամսաթերթին մէջ. և նուրբ տեսութեամբ քննադատած է, որով կը յայտնուի ընտանեկան կենաց վրայ բրած իւր հանճարեղ ուսումները :

Պ. Էլէէր հրապուրիչ ատենախօսութեան մը նիւթ ըրաւ զայն Վէնսէնի ապաստանարանին մէջ : Ընտանիքը նախնի ընկերականութեան հիմը կը կազմէր. և ահա անոր վարչութիւնն իր լուծելու խնդրոց ամենէն յանկուցիչն էր :

Սոկրատ աղէկ գիտէր զայն, և ընտանեկան կառավարութեան օրինակն անդադար կառաջարկէր անոնց որ Պետութիւնը կառավարել կուզէին. և անարարութեան մէջ՝ հասարակաց գործոց վարչութեան համար դասեր և բազդատութիւններ կը փնտռէր միշտ :

« Օր մը, կրտէ Քսենոփոն, առաւօտուն կանուխ, ըստ իւր սովորութեան, Աթենասայ տաճարին կամարակապ սրահը գնաց՝ իւր Իսոմաքոս բարեկամէն

տեղեկանալու համար թէ ի՞նչպէս իւր տունն ուրիշներէն լաւ կը կառավարէր :

— Ես դուրսը կը հսկեմ, կըսէ նա, և կինս ներսը :

— Ո՞վ ձեր կինը կարող ըրաւ հսկողութեան : Միթէ ծնողքն զնա բոլորովին կրթեալ տունն ձեզ :

— Տասնևհինգ տարեկան էր երբ հետն ամուսնացայ : Այնպէս կրթուած էր որ հնար եղածին չափ քիչ կը դիտէր՝ քիչ կը հասկնար և քիչ կը պահանջէր : Գիտէր բուրդէն հագուստ շինել եւ սպասուհեաց մանելի բաժնել :

— Ուրեմն ի՞նչպէս հրահանգեցիք զնա :

— Նախ աղօթք և զո՛հ մատուցի աստուածոց, անոնցմէ խնդրելով որ թեւադրեն ինձ ինչ որ բարի է մեզ. յետոյ իրեն ըսի. Առն և կնոջ կարևոր է միմեանց օգնել ամեն առթի մէջ, և այնպիսի բարեկարգութեամբ վարել իրենց գործերն որ պարկեշտ կերպով աւելնան :

— Իսոյց ի՞նչ կերպով կրնամ այդ յաւելման նպատակ, ըսաւ կինը :

— Շատ լաւ կրնաք, ապա թէ ոչ՝ կը հարկադրիմք ըսել թէ՛ քիչ կարեւորութիւն ունի մեզուաց թագուհին՝ որ փեթակը կը կառավարէ :

« Կինս, մտիկ ըրէք ինձ. բոլոր ունեցածս ձեզ տուի : Դուք ալ ձեր բոլոր ունեցածն ինձ տուիք : Շատ բերողը փնտուելու հարկ չկայ : Ով որ ամենէն ճարտարն ու լաւագոյնն է՝ նա է շատ բերող : Սա-

կայն այս հարատուութիւններն աւելցնելու համար՝ մեր պարտականութիւնք և կարողութիւնք թէ եւ տարբեր՝ բայց հաւասար են :

« Երկու տեսակ աշխատութիւն կայ. արտաքին և ներքին :

« Արտաքինքն են՝ արօրադրութիւն, հսկողութիւն աշխատութեանց, դարման ծառայ, հունձք պտղոց :

« Ներքինքն են՝ ընդունելութիւն և պահպանութիւն ցորենոյ և գեղման, գործաւոր կանանց գործոյ բաժանումն :

« Մարդն ուժեղագոյն լինելուն համար՝ դուրսը կը կառավարէ : Իսկ կինը ներսը կը հսկէ, այս մասին մեզուաց թագուհւոյն նմանելով որ փեթակէն դուրս չելնէր և մեզր շինողներն անգործ չթողուր երբէք : Գործի կը խրկէ զանոնք որ դուրսը պիտի աշխատին, իւրաքանչիւրոյն բերածին կը տեղեկանայ, կը պահէ, կը բաժնէ, մտաշինութեան կը հսկէ և նորածին ձագերուն խնամք կը տանի : Գեղեցիկ՝ քաղցր՝ հաճելի զբաղմունք և որ զինքը թագուհի անուանել կուտայ : Ահա, կինս, դուք ալ նոյնպէս էք ձեր տան մէջ : »

է .

Ապա Իսովանքոս կը բացատրէ թէ ի՞նչպէս նախ իւր կնոջ առաջնորդեց բոլոր տանը մէջ, ցոյց տա-

լով նմա այլևայլ սրահներն, անոնց գործածութիւնը, և ամառուան ու ձմերուան սենեակները, արանց կողմը, կանանց կողմը, քրտնարանովք կամ բաղանեօք բաժանեալ, ամեն բան յանձնելով նմա պղնձէ անօթները, ցորենի պաշարը և դրամը ապա կը բացատրէ նմա իւր կատարելու գեղեցիկ պաշտօնն այս փոքր Պետութեան մէջ, որոյ թագուհին է ինքն:

Մասաները կառավարել, բոլոր ստացուածքը մատակարարել, ամեն գիտցածը գործաւորուհեաց սորվեցնել, չգիտցածն անոնցմէ սորվել, մանուկները կրթել, վարձատրել, գերիները բարւոքել, գեղեցկացնող բարեկարգութեամբ հրամայել ամեն բան անձամբ ևս աշխատիլ խմոր թրեւով կամ ալիւր մաղէլով. վասն զի աշխատութիւնը սնդոյրէն աւելի գեղեցիկ դոյն մը կուտայ երեսաց, կըսէ իրեն և կը յաւելու. « Ահա ձեր ընելիքը՝ մինչ ես դուրսը կաշխատիմ »:

« Սակայն բան մը կայ որուն պարտիմք ի միասին աշխատիլ, և զոր Աստուած մեր մէջ դրած է իբր վարձք, որուն պիտի ցանկամք երկուքնիս ալ այս է, մեր կրից իշխել, չլինել բարկասիրտ, ոչ յեղյեղուկ, ոչ անձնասէր, ոչ թեթեամիտ, և ոչ մեր պարտականութեանց միոյն մտացող: Քանզի ամեն պարտականութիւն նուիրական է »:

« Լաւագոյն եղողն այս գեղեցիկ մրցանակը պիտի առնու »:

« Ուրե՛ն, կինս, իւրաքանչիւրս իւր կողմանէ փորձեմք մեր պարտականութիւնը լաւ կատարել »:

« Ամենամեծ հաճոյքս այն է որ դուք կարենայիք լաւ քան զիս լինել »:

Ը .

Տան պահպանութեան պահանջած բազմապատիկ զբաղմանց այդ գեղեցիկ տեսարանն՝ սկզբանց և հրահանգութեանց այդ շարքը կապացուցանեն թէ՛ ընտանեկան կենաց ուսումը սովորաբար կարծուածէն լուրջ և աւելի ընդարձակ աշխատութիւն մի է: Անդ կը տեսնեմք թէ յոյն աղջիկն շատ պարզ և շատ չափաւոր նախնական դաստիարակութիւն մը կընդունի իւր ծնողքէն, յետոյ իւր այրն երկրորդական դաստիարակութիւնը կըստանձնէ, յորում կրօնական ոգւով կը ներշնչուի կնոջն հրամայելու համար նորա բոլոր պարտականութիւններն, և գթութիւն՝ բարի և անձնանուէր ընելու գնա իւր ամուսնոյն՝ գաւակաց և գերեաց: Վերջապէս նորա հոգւոյն կը դիմէ՝ վրան պարտք գնելով որ անդադար ցանկայ կատարելութեան, որոյ փառքն անոր կուզէ թողուլ:

Թ .

Այսօր այդ երկու դաստիարակութիւնները մարք և վարժուհիք կուտան :

Աղջիկն՝ ինքզինքը և զայլս կառավարելու բուրոյիին պատրաստ՝ կը մտնէ այն սունն որ իրենը պիտի լինի : Ուրե՛ն պարտաւոր է վաղագոյն ստանալ ունակութիւն բարեկարգութեան և հանձարեղ գործունէութեան :

Կինը պարտի իւր բաւականութեան ապացոյցներ տալ, և այդ արժանեօք է՝ որ ընտանեաց եւ ընկերութեան մէջ ատտիճան մը կառնու : Իրեն մեծօգուտ կը բերէ խորհելու՝ ժամերն հաշուելու եւ զայնս լաւ գործածելու ունակութիւնը, որոշելու համար իւր ընթացից յատակագիծն որ պիտո՞ր առաջնորդէ իւր ամենօրեայ պարտականութեանց կատարման : Այսու զերծ կը մնայ ձանձրութենէ պատճառեալ յուզմունքներէն :

Գործունեայ կնոջ երիտասարդութիւնն երկարատեւ կը լինի : Իւր դէմքն աշխարհի ամեն ուրախութենէն աւելի նշուլազարդ ուրախութեան մը նշանը կը պահէ : Ուրե՛ն տեսակ մը պչրանք է լուսաւորուիլ այն ամեն բաներուն վրայ որ կեանքը խաղաղ կընեն և աւելի պայծառութիւն կուտան հոգւոյն :

Ժ .

Այս գաղափարք այսօր սաստիկ կը բազմանան երեւելի արանց և նշանաւոր կանանց մտքերը : Այլ և այլ մակագրութեամբ, ինչպէս՝ Առնիկե Տիստուրիւն, Տակ կառավարութիւն, Ներքին կեանք, Ընտանեաց մեջ կնոջ պարտականութիւնք, Քրիստոնէական ամուսնութիւն, Տակ իրաւունքի և այլն, բազմութիւ գրքեր կը հրատարակուին, որոց նպատակն է աղջկան ուսուցանել այն պարտականութիւնները զոր նա պիտի կատարէ ապագային մէջ :

Այս պարտականութիւնք բազմութիւ են . եւ ցայս վայր մեր տուած օրինակներն անոնց մէկ մասը միայն կը ներկայացնեն :

Ոչ ոք պիտի ժխտէ լաւ կարգադրութեան մը պիտանութիւնը, ժամանակն իմաստուն և շահաւոր կերպիւ գործածելու համար կանոնաւոր յատակագծի մը հարկը : Բայց պէտք չէ որ կարելի լինի ըսել, ինչպէս սիրուն Անտրիէօ բանաստեղծին քաջածանօթ նկարագրութեան մէջ, թէ՛


« Յոյժ գեղեցիկ յատակագծեր շինած էին թղթի վրայ : »

Խիտ և անաչառ կանոնադրութիւն մը շինել շատ դիւրին է, բայց դժուար է զայն գործադրել կամ գործադրելի ընել :

Խոհեմութիւն է նաև իւրաքանչիւրին ընտրելու յատակագիծը պատշաճեցնել իւր հասակին՝ վիճակին և կենակցելու անձանց ճաշակին և յարմարութեանցը :

Օրուան ժամուց բաժանումը և կենաց յատակագիծը յանհունս փոփոխելի լինելով՝ բաւական համարեցի ընդհանուր սկզբունքներ միայն դնել, առանց մտնելու մանրամասնութեանց, որոց գործադրութիւնը կրնայ առաւել կամ նուազ կատարեալ լինել :

Հարկ է միշտ աշակերտին ձեռքէն բռնելով առաջնորդել. շատ անգամ բաւական է միայն ճանբան ցոյց տալ իրեն :



Գ Ա Ս Գ .

Պայմանք բարեկարգութան եւ կանոնաւորութեան : — Ժամանակին իմասուն գործածութեան անհրաժեշտ հետեւանքներ : — Աւստիոյ Մարի Թեքեզ կայսրուհոյն մէկ նամակը : — Արեւական սնարարութիւն : — Ամեն բան իւր տեղը դնել : — Ամեն բան ժամանակին ընել :

Ա .

Սմերիկացի Սոկրատին իւր կեանքը կանոնաւորելու և հոգին կատարելագործելու համար այնքան հաստատամտութեամբ հետեւած յատակագիծը մեզի մատոյց մին այն եզական օրինակներէն՝ զորս սէտք է երբեմն աչքի առջեւ ունենալ, որք խնայութեամբ և իմաստութեամբ գործածուած ժամանակին արժէքը կը ճանչցնեն : Ո՛րքան մեծ բաներ կատարուած են այդ մարդուն ձեռամբ, որ իւր կենաց յաջողութիւնը, անդորրութիւնը եւ երջանկութիւնը սլարտական է իւր գործնական ուղղախոհութեան, գործունէութեան, աշխատասիրութեան, կարգասիրութեան և ճշդութեան : Վասն զի բոլոր այս առաքինութիւններն ունէր կատարելապէս : Իւր չհնարածը կը կատարելագոր-

ծէր: Ոչ ոք կարողացաւ աւելի սաստիկ և աւելի հանճարեղ ոյժ մը տալ վարուց այն առածներուն որ իբր կանոն կը ծառայէին իրեն, և զոր շատ լաւ համաւատած է իւր Բարի Ռիխարտսի գիտութեան մէջ, նշանաւոր գործ գիտողութեան և իմաստութեան, որոյ վրայ մտադիր եմ գարձեալ խօսիլ:

Բարւոք ուզողած մատակարարութեան մը գլխաւոր պայմանը կը կայանայ ժամանակին բաժանման և կիրառութեան՝ և ամեն բանի կարգ և կանոն ղնելու արուեստին մէջ: Ով որ գիտէ իւր բոլոր վայրկեաններն իմաստութեամբ գործածել և նուիրել միանգամայն իւր գործոց ուղղութեան և բարոյական կատարելութեան, կրնայ հարստանալ և պատահարներէն ու բախտին բերմունքներէն անկախ գիրք մը սպահովել իրեն: Ճշմարիտ գիտութիւն մի է այս, որ սարտ է միւսոց նման ստացուիլ յարածից ուսմամբ:

Առանց նպատակի չէ որ մի և նոյն մտածութեանց վրայ կը պնդեմ և կը կրկնեմ այն խօսքերը՝ որք աւելի բացայայտ պիտի ընեն զայնս:

Մեծ բնագատունն Պիւֆոն, այլոց հետ տեսակցելու պարտաւորեալ, որոշած էր ելնելուն պէս հազուիլ բոլոր օրուան համար, որպէս զի վայրկեան մը չկորսնցնէր մտածութեան՝ գիտողութեան՝ և աշխատութեան սահմանած ժամանակէն: Հաշիւ ըրած է թէ՛ ամեն օր ըրած այս մանր խնայութեամբ կարող եղեր է ուսման նուիրած վաթսուն

տարուան մէջ իւր անոնհ գործէն երկու հատոր աւելի յօրինել: Որով թէ գիտութիւնը ճոխացուցած է՝ և թէ իւր փառքն աւելցուցած:

Բ.

Պատմութենէ քաղուած եղելութիւնքն ինձ հզորագոյն սպացոյցներ կը թուին հաստատելու թէ՛ ամեն վիճակի, մինչեւ իսկ ամենէն բարձրագունին մէջ, ոչինչ կարելի է առանց խնամք տանելու ամեն օրուան ժամուց բաժանման:

Աւստրիոյ Մարի Թէրէզ կայսրուհին, անբախտ Մարի Անթուանէթի և Յովսէփ երկրորդի մայրը, այս պիտանութեան ա՛յնպէս քաջ խելամուտ եղած էր որ կուզէր իւր համանուն Մարի Թէրէզ թուր՝ վեց տարեկան հասակին մէջ ամենամանր կանոնաւորութեան երթարկել: Գիտէր թէ կարելոր է շատ կանուխ ստանալ բարեկարգութեան և կանոնաւորութեան վարժութիւնը. և թէ այդ աւելի պիտանի է իշխանաց՝ որք ստիպեալ են մարտնչիլ ընդդէմ հրապուրանաց մեծութեան: Իմաստութեամբ կը խորհէր թէ կարելի չէ անոնցմէ խոյս տալ՝ բայց եթէ ի մանկութենէ յանձն առնելով աշխատութեան պարտաւորութիւններ՝ ժամանակին արժէքը չմոռնալու համար:

Ահա այն նամակը զոր գրած է իւր թուռան դաստիարակուհւոյն .

Սիրելիդ իմ տէրծէլ,

Սիրասուն թուռանս դաստիարակութեան այժմեան վիճակին վրայ տուած տեղեկութենէդ գոհ եմ :

Առաւօտուն արթնցած ժամանակը սիրան առ Աստուած բարձրացնելով սկսի իւր օրը : Ապա անկողնէն ելնէ , և իւր աղօթքն ընէ :

Հազուիլը և նախաձառը տեւէ մինչև ժամն ինը :

Հետեւեալ կէս ժամուն մէջ սպասուհին սարտի նմա կրկնել և գոց սորվեցնել գերմաներէն քրիստոնէականը , և Ռուսոյննէն գլուխ մը կարդացնել :

Ապա մինչև ժամը տասն՝ իրեն թոյլ պիտի տաք խաղալ , և յետոյ կէս ժամ անցնել գրի դասատուին հետ :

Յետ այնորիկ կրնաք դարձեալ գրօցնել զնա ժամը տասնուկէսէն մինչև տասնևմէկ՝ ինչ բանով որ ուզէ :

Հետեւեալ կէս ժամը կիւթլէր կանոնիկոսին հետ պիտի անցնէ : Ապա արշիդքսուհին սզատ պիտի թողուի մինչև կէսօր :

Իւր ճաշն իբր մէկ ժամ պիտի տեւէ , որմէ յետոյ պիտի խաղայ մինչև ի ժամ երկու : Հետեւալ կէս ժամը կամ երեք քառօրդն , ըստ իւր տրա-

մագրութեան , գաղղիերէն սորվեցնելու պիտի գործածուի : Յետոյ դարձեալ թոյլ տալու է խաղալ մինչև ի ժամ չորս , որ նախընթրեաց ժամն է :

Չորսէն մինչև հինգ պիտի գրօցնէք ըստ ձեր առաջարկութեան , թուղթի , դրքի , գաղղիերէն բառեր սորվեցնելու յարմար պատկերաց խաղերով :

Ժամն հինգին պիտի պարէ այնքան ժամանակ որ իրեն հաճոյ ըլլայ : Յետոյ գոց ըսէ քանի մը Հայր մեր , Աստուծոյ ներկայութիւնն յիշել վարժելու համար :

Դարձեալ պիտի խաղայ մինչև ժամը եօթնուկէս՝ որ ընթրեաց ժամն է :

Ժամն ութուկէսին երեկոյեան զգեստաւորութիւնը պիտի սկսի , որ աղօթքին հետ կէս ժամ պիտի տեւէ , և յետոյ անկողին պիտի մտնէ :

Երբ օգը ներէ , արշիդքսուհւոյն ժամերն այնպէս պիտի կարգադրէք , որ կարենայ ձմեռը կտուքով դուրս ելնել , և ամառն ալ սրարտէզը չըջագայիլ :

Որովհետեւ իւր վրայ կը տեսնէք գործունեաց միտք , ինքամտութիւն և ուսանելու մեծ փափաք , կուզեմ որ զինքը չնեղէք եւ ոչ մէկ դասատուի նկատմամբ՝ որ չզղուի , միտքը բռնադատելու չստիպուի , և մանաւանդ առողջութիւնը պահպանուի մինչև որ ինք զօրանայ : Ասոր վրայ ձեր ինձ յիշեցուցած սկզբունքներն անշուշտ լաւագոյնքն լինելով՝ կը հաւանիմ այնչափ յօժարու-

Թեամբ որ զայնս պատշաճեցնէք բարեպաշտական հրահանգաց, որքան որ մեր սուրբ կրօնից պարտականութիւնքը թոյլ կուտան:

Վերջապէս կը հաւանիմ որ թուս ճաչէն յետոյ ձեր քովն ըլլայ և վարժուի լաւ կենցաղավարութեան:

Ձեր բացակայութեան ժամանակ, բաց ի սպասուհիէն և Տիւրիեօյէն՝ ուրիշի թոյլ չպիտի տաք մատաղատի իշխանուհին կրթել, վասն զի չեմ ուզէր որ միւս օրիորդք խառնուին որ եւ է ուղղութիւն տալու նմա:

Բայց ամենքն ալ, առանց բացառութեան, պարտաւոր պիտի լինին հաւատարմարար ըսել ձեզ ամեն ինչ որ պատահի ձեր բացակայութեան ժամանակ:

Ահա այսպէս է այն ուղղութիւնը զոր կարեւոր կը համարիմ, սիրելիդ իմ տ'երծէլ, զձեզ դնելու համար այնպիսի վիճակի մէջ՝ որ ձեր գործն ամեն փափաքելի յաջողութեամբ կատարէք: Գիտէք թէ որքան կը ցանկամ այդ բանին զանազան նկատումներով. և ձեր եռանդը ճանաչելով՝ չեմ տարակուսիր թէ անդադար կը հսկէք արդիւնաւոր կերպիւ օգնելու իմ դիտաւորութեանցս՝ ճշդութեամբ կատարելով զայնս:

ՍԱՐԻ ԹԵՐԷԶ

Թերևս փոքր մի խիստ երեւի կենաց այսպիսի ծրագիր մը վեց տարեկան տղու համար. ուստի պիտի զգուշանամ առաջարկել զայն այժմեան մարց՝ այնքան փափուկ հասակի նկատմամբ: Բայց բարեկարգութեան և կանոնաւորութեան այս վարժութիւնը զոր յաջողութեան տարր կը համարիմ, յոյժ նշանաւոր օրինակ մի է խստութեան՝ որով մեծ վիճակի սահմանեալ արիասիրտ կին մը կուզէր տալ այն մանկան՝ զոր կարծէր բարձր ճակատագրի պատրաստել: Նա գիտէր թէ իւր կենաց կանոն դնելն սղատորէն հպատակիլ է իւր բոլոր պարտականութեանց, և ճանաչել թէ մարդ կարող է կատարելութեան հասնիլ, և այդ կարողութիւնը մի պարզեւ է զոր Աստուած չորհեց մարդկան՝ առնելով զնա ի պատկեր իւր: Կատարեալն Աստուած կատարելութեան ընդունակ ստեղծեց զմարդն:

Գ

Ժամանակին գործածութիւնը կարգադրելու համար, խօսելէ կամ գործելէ յառաջ՝ լաւ է ինքնիրեն հարցնել թէ « Աս ի՞նչ օգտակար է այս: » Բազում սխալմանց՝ անընարողութեանց և անխորհուրդ ընթացից առաջն աննելու միջոցն է այս: Սոյն քննութիւնն ամենապարզ կերպիւ ընել կա-

րելի է : Կը բաւէ ամեն օր մի քանի վայրկեան դո-
հել՝ որոշելու համար թէ ի՛նչ բան պիտի ընեմք ,
և խորհելու թէ ինչ բան ընելու էր : Այսպէս
կապահովուի փոփոխամտութեան դէմ՝ գրելով
մեր ըրած որոշումները և կատարած գործոց ար-
դիւնքը :

Պիւթագորասի Ոսկեղիկիկ բանահիշատարեանց
մէջ արուած պատուէրներուն մին է .

« Երբ քնոյ ժամը կուգայ արտեւանունքդ գո-
ցելու , անցած օրուան վրայ անաշառ քննութիւն
ըրէ : Սիրտդ հարցաքննէ ըրած բարութեանդ եւ
չարութեանդ վրայ : Անձամբ եղիր քու դատաւորդ
և դատախազդ : Չարիքին վրայ ըրած գղջումը զքեզ
անմեղ պիտի ընէ , և բարեացդ յիշատակը վարձքդ
պիտի լինի : »

Այս ամենօրեայ օրագրութիւնն ևս ընտիր մի-
ջոց մի է՝ զոր ցոյց տուած են գիտունք և իմաս-
տասէրք : Արդարեւ կրնայ շահաւոր լինել ամեն
առաւօտ ինքն իրեն հաշիւ տալ նախորդ աւուր
գործածութեան վրայ , որով մարդ կը պարտաւորի
իւր վիճակին և վարմունքին վրայ օգտակար վե-
րադարձ ընելու : Այս գրութիւնն առաջին հա-
յեցուածով թէեւ պատաղիչ և մանրակրտիտ է ,
բայց հաստատուն կամօք շարունակուելով կը դիւ-
րանայ : Կամքն ինչպէս հաւատքը՝ լեռները կը
տեղափոխէ : Ամեն օր քանի մը տող գիր կը բաւէ
ինքզինքն այս օգտակար հսկողութեան վարժեցնե-

լու : Պէտք է այս պարտաւորութիւնը յանձն առ-
նուլ և երբէք զանց չընել որ և է պատճառանօք :
Ասով է որ կապրուի աւելի շատ և լաւ ևս քան զնո-
սա՝ որք ձանձրանալով կը կորսնցունեն ամեն օր
բազմաթիւ ժամեր և իրենց կենաց տեւողութեան
մէջ բազմաթիւ տարիներ :

Դ .

Կեցութիւնն երկու մասի կը բաժնուի . մին
տրուած է՝ մարդուն գործած արուեստին կամ վա-
րած պաշտօնին պիտոյից կամ ընկերութեան պա-
հանջած սարտականութեանց , և յորմէ զեղջելու
բան չկայ . միւսը որ կարելի է շահեցնել՝ բայց
չատ անգամ անպէտ կամ ունայն գործածութեամբ
կը կորսուի : Ուրեմն անհրաժեշտ է զայն օգտա-
կար ընել ճիշդ չափով և իմաստուն համեմատու-
թեամբ :

Աշխատութեան լաւ բաժանումն աւելի կը դիւ-
րացնէ և նուազ տաժանելի կընէ ուսումներն : Գոր-
ծոյն տեսակը փոխելն և զբազման ու հանգստեան
ժամանակն ընտրողաբար ճշդելը՝ մտքին հանգստու-
թիւն կը պատճառեն :

Ժամանակը լաւ գործածելու համար պէտք է
բարեկարգութիւն և կանոնաւորութիւն պահել

ամեն գործի մէջ, և ամեն բան ըստ պատշաճի ընել: Դիտելու՝ քննելու՝ նախատեսելու և հասկնալու վարժութիւնն ուսման պատուականագոյն արդեանց մին է. բոլոր այս կարողութեանց վարժութեամբն է որ խորհել կը սորվուի:

Ե.

Այն գրքէն, ուր Քսենոփոն ակթենական տան մը նկարագրութիւնը կընէ, որոյ պատկերն եթէ մեր ժամանակի տանց մէջ գտնէինք՝ երջանիկ պիտի լինէինք, կառնում դարձեալ ուրիշ հատուած մը՝ որ կը ցուցանէ թէ ի՞նչպէս կարելի է ժամանակն ու տեղոյ տարածութիւնը խնայողութեամբ գործածել:

Բաղդատութեան համար կառնու երգակցաց խումբ մը, որոյ նուագածութիւնն հեշտութիւն կը պատճառէ շարժմանց և երգոց միաբանութիւն կենալուն պատճառաւ: Կարգով շարուած բանակ մը կընարէ և կըսէ. « Բարեկամաց համար գեղեցկագոյն տեսարանն է, իսկ թշնամեաց համար՝ ամենէն ահարկուն: »

Եւ բարեկարգութեան այս վաւեր նկարագրութեանէն յետոյ, անկարգութեան գաղափար մը կուտայ, ներկայացնելով երկրագործ մը որ խառն

իխուռն կը ցանէ գարի՝ ցորեան՝ բանջարեղէն, զորս ընտրել կը պարտաւորի երբ կարկանդակ հաց՝ կերակուր չինել ուղէ. մինչդեռ պատրաստ պիտի գտնէր եթէ ցանքը կանոնաւոր ըրած ըլլար:

« Ուստի, կըսէ Իսոմաքոս իւր կնոջ, եթէ կուզես այսպիսի խառնակութենէ զերծ մնալ՝ մեր տունն աղէկ վարել՝ առանց դժուարութեան գրանել ինչ որ պէտք է՝ և քենէ խնդրածս վայելչութեամբ ինձ մատուցանել, յարմար տեղ ընտրեմք իւրաքանչիւր իրի, և ամեն բան իւր տեղը դնելով՝ ցոյց տամք սպասուհւոյն թէ ուրկէ առնուլ և ուր դնել պարտի: Այսու կը գիտնամք թէ ինչ բան կորսուած է և ո՞րը կորսուած չէ: Կորսուած բանին վրայ տեղն ինքնին ցաւելու կերպ մը պիտի ունենայ: »

Ինչպէս կը տեսնուի, վաղուց ճանչցուած է լաւ վարուած տան մը բարեկարգութեան առաջին պայմանն եղող այն կանոնին կարեւորութիւնը թէ. Ամեն բան իւր տեղը, և ամեն բանի համար տեղ մը:

Զ.

Զնոգնելով բաղդատութիւն ընելէ՝ որ միտքն աւելի արթնցնելու և իւր խրատուց աւելի արժանիք տալու կը նպաստէ, Իսոմաքոս կը յաւելու թէ

իւր տեսածներուն մէջ ամենէն գեղեցիկ և ամենէն կանոնաւոր յարգարուածն էր փիւնիկեցի նաւու մը մէջ սքանչացմամբ տեսածը :

Բազմաթիւ առարկայք փոքր միջոցի մը մէջ ամփոփեալ ներկայացան իւր աչաց : Փայտի կտորներ և չուաններ՝ որք կը ծառայէին նաւը նաւահանգիստ մուծանելու կամ դուրս հանելու : Պիտոյ էին շատ դէնք՝ թշնամի նաւուց դէմ պաշտպանութեան համար : Բաց ի զօրաց՝ գունդերուն սահմանեալ գէնքերէն, կը պարունակէր բազմականաց իւրաքանչիւր խմբին համար այն կարասիքն որ մարդոց պիտոյ են տան մէջ, և բեռնաւորեալ էր այն ամեն վաճառօք զոր նաւուղիք կը տանէր վաճառելու համար :

Այս ամենը՝ տասնանկողին պարունակելու բաւական եզրղ սրահի մը չափ տեղ կը գրաւէին, և առարկայքն ա՛յնպիսի լաւ զետեղեալ էին՝ որ մին միւսին չէր խառնուէր :

Տեսաւ որ հրամանատարը նաւուն մէջ պարունակեալ ամեն բան աչքէ կանցնէր :

Այս չափազանց խնամոց վրայ զարմանալով՝ Իստմաքոս հարցուց թէ ի՛նչ կընէր, և նա պատասխանեց. « Կը քննեմ նաւուն վիճակը թէ ի՛նչպէս պիտի լինի արկածից ժամանակ, թէ անկարգ կամ գործածութիւնը դժուար բան մը կա՞յ : Վասն զի եթէ աստուածութիւնը ծովու վրայ փոթորիկ յարուցանէ, նոյն միջոցին պէտք եղածը փնտռելու

կամ անպատրաստ գտնուելու ժամանակը չէ : Աստուածութիւնն յայնժամ կապառնայ և կը պատժէ վատերը . եթէ բաւական բարի է չկորսնցունելու համար այն մարդիկն որ իսկապէս յանցաւոր չեն, պարտիմք իւր բարութիւնը ճանաչել . և եթէ կը պահպանէ և կը փրկէ զանցառութիւն չընողները, պէտք է խորին երախտագիտութիւն ունենալ իրեն : »

է .

Այնքան կանոնաւոր վիճակի մը վրայ հիանալով՝ Իստմաքոս կըսէ իւր կնոջ թէ, չափազանց անհոգ պիտի համարուէին՝ եթէ չկարենային իրենց տան մէջ ամեն բանի յարմար տեղ մը յատկացնել՝ երբ նաւու մը մէջ, որ այնչափ նեղ է, տեղ կը գրտնուի, և սաստիկ փոթորիկներու ժամանակ իսկ բարեկարգութիւն կը պահուի և ամեն պէտք եղածը ձեռք կը բերուի :

Բայց եթէ հրահանգիչ է գիտնալ թէ ինչպէս Իստմաքոս, իբր ներկայացուցիչ վաղեմի ընտանեաց, կուզէ կինն իւր տան բարեկարգութեան հոգածու ընել, ոչ սակաւ հրահանգիչ է տեսնել թէ՛ ի՛նչպէս կը յայտնէ իւր հիացումն այն ամեն բանի համար՝ որ բարեկարգութիւն կը ներկայացնէ իրեն :

« Ի՛նչ գեղեցիկ բան է , կըսէ . կարգաւ և իրենց տեսակին համեմատ շարուած կօշիկներ տեսնել :

« Ի՛նչ գեղեցիկ բան է տեսնել՝ իրենց գործածութեան համեմատ շարուած հանդերձներ՝ վերմակներ՝ պղնձեղէններ՝ սեղանի վերաբերեալ անօթներ :

« Ի՛նչ գեղեցիկ բան է վերջապէս (թէև անխելքը ծիծաղելի համարի) մտադրութեամբ և մեծութեան կարգաւ շարուած կաթսաներ տեսնել : Այո՛ , ամեն առարկայք , առանց բացառութեան , գեղեցիկ կերելին՝ կարգաւ և չափակցութեամբ շարուելով : »

Եւ յայնժամ վախնալով թէ այս բոլոր մանրամասնութիւնք շատ դժուարին կերելին , իւր խրատուց աւելի պարզ և բոլորովին հայրական կերպ մը կուտայ :

« Մի վհատիր , կինս , կարծելով թէ անկարելի է մէկը գտնել որ կարենայ իւրաքանչիւր կարասեաց տեղը սորվիլ ու չմռնալ :

« Գիտեմք թէ բոլոր քաղաքին մէջ տասն հազար անգամ աւելի առարկայ կայ քան թէ մեր տունը . սակայն եթէ ծառայի մը ըսես որ երթայ չուկայէն այս ինչ բանը գնէ ու բերէ , ամենեւին չչփոթիր . ամեն ոք գիտէ թէ ուր պէտք է երթալ և առնուլ որ և իցէ առարկայ : Պատճառն այն է թէ ամեն բան իւր տեղն ունի : »

Այս տունը բարեզարդութեամբ չփայլիր , բայց

այլևայլ մասերն ա՛յնպէս նախատեսութեամբ բաժնուած են , որ հոն գտնուած մէն մի առարկայ իրեն յարմարագոյն տեղն ունի :

Ը.

Կարելի չէ տան տիկնոջ պարտականութեանց և տան նիւթական մասին վերաբերեալ ամեն բանի նկատմամբ՝ քան զայս ուղղագոյն և ճշգրագոյն գաղափար մը տալ :

Յոյն կինը կը պարտէր իւր հանճարն այս տեսակ խնամոց գործածել : Նա տնարար էր և միայն տնարար կրնար լինել , չունենալով ուրիշ պարտականութիւն՝ բայց միայն ներքին աշխատութեանց հսկել , մինչդեռ իւր այրը դուրսն զբաղեալ՝ միայն իւր անձին կը վերապահէր գիտութեանց՝ արուեստից և քաղաքականութեան ուսումը՝ որուն չէր մասնակցէր կինը :

Ուրեմն կենաց գաղափարականը ներկայացնելու համար չէ որ Քսենոփոնէն կառնում այս մանրամասնութիւնները՝ որք աթենական տան մը ներքին կողմը կը ներկայացնեն մեզ : Բարեկարգութեան և կանոնաւորութեան օգտակար արդիւնքներն յայտնապէս կերելին անդ՝ հիանալի կերպիւ :

Այս բոլորովին գործնական և յոյժ պարզմտութեամբ յայտնուած խորհրդածութեանց միջոցին անհնար է չյուզուիլ այն բարձր զգացմանց վրայ որք կը նշմարուին ամենափափուկ մանրամասնութեանց մէջ:

Սոկրատոսյ աշակերտին վրայ կը գտնուի այդ ընտիր նրբութիւնը՝ պարտականութեան յարգանքը և Նախախնամութեան վրայ վստահութիւն որ կենաց ամեն գործողութեանց արժանիք և կարեւոր նշանակութիւն մը կուտան: Սիրելի է տեսնել թէ քաղաքակրթութեան ծոցն, ուր կինը միայն երկրորդական պաշտօն մը կրնայ վարել, կրօնքը և փիլիսոփայութիւնը միաբանած են ընդարձակելու իւր հանձարոյն սահմանը, և զօրացնելու իւր բարոյական զգացումը:

Թ.

Բաւական չէ շահել ամեն բան այնպիսի կատարեալ կարգաւ որ հնար ըլլայ շուտով և առանց դժուարութեան գտնել աղէկ կարգադրուած և իրենց տեղը դրուած իրերը: պէտք է գիտնալ նաև ի գէպ ժամու գործել:

Երբ մէկը կը պատրաստուի հանգիսի մը ներ-

կայ լինելու, հրաւերի մը պատասխանելու, գործի կամ զբօսանքի մը ժամադրութեան, հարկ է որ կանխաւ ընէ ամեն պատրաստութիւն, որպէս զի ժամանակին նեղութիւն չկրէ:

Մարդիկ կան որ միշտ անպատրաստ կը լինին. միշտ որոշեալ ժամէն յետոյ կը հասնին եկեղեցին՝ թատրոնը կամ խնջոյքի մը:

Լուսեովիկոս ԺԳ. օր մը ամենէն առաջ հասնելով սրահ մը ուր իւր պալատականք իրեն պիտի սպասէին, սա հռչակաւոր խօսքն ըսաւ. «Քիչ մնաց որ սպասէի:» Հպարտութեան խօսքն է այս: Այսպիսի պարագայից մէջ ըսեմք. «Քիչ մնաց որ սպասել պիտի տայի,» և քաղաքավարութեան ձեւը կը լինի այս:

Երբ բարի Լաֆոնթէն հետեւեալ բարոյականը կը գնէր իւր առական միոյն թէ.

«Անօգուտ է վազել. պէտք է ժամանակին մեկնիլ,» նպատակն էր անշուշտ՝ առտնին տնտեսութեան դաս մը տալ: Յանդիման կը բերէ իւր կայտառ ճագարին յիմարութիւնը տիկին կրիայի ծանր և հաստատուն քայլերուն՝ որ անկէ առաջ կը հասնի ծանրութեամբ աճապարեւով. մինչ նա հազարումէկ ոչինչ բաներով խաղալու համար ձանրէն կը խոտորէր և շատ ուշ կը հասնէր նպատակին, սա կը խորհէր կարեւորագոյն գործոյն, որ է փաստը չկորսնցնել:

Կուզէր անշուշտ ուղղել նաև այն անկարգու-

Թիւնն որ յառաջ կուգայ մեծ անապարանքէ՛ երբ
կը նշմարուի ժամանակին անցնիլը : Տունը՝ հա-
գուստը՝ վերջապէս ամեն բան գէշ կըլլայ անա-
պարանօք եղած պատրաստութեամբ :

Ժամանակին հասնել չգիտցող մարդիկ օրինակ
առնելու են երկաթուղիներէն՝ որք կարի մեծ
ճշգրութիւն կը պահանջեն :

Նիւթական բարեկարգութիւնն և առարկայից
կանոնաւոր խնամքն՝ անդորր և խաղաղ կը պահեն
հոգին : Պարտականութեանց ճշդիւ կատարման
արգասեաց մին է՝ բնաւորութիւնն հաստատուն և
անմեղկելի ընել, որ կարեւոր է կենաց փորձու-
թեանց տոկալու :

Դ Ա Ս Դ .

Նախատեսութիւն : — Դաստիարակութիւնն սպագայի նախա-
տեսութեամբ ուղղելու պէտք : — Բնական եւ բարոյական
զարգացումն : — Դիտողութեան եւ խորհրդածութեան վարժու-
թիւն : — Բնութեան մէջ նախատեսութիւն :

Ա .

Ամեն գործողութեանց բարեկարգութիւն և
կանոնաւորութիւն տալու համար բաւական չէ
հասկնալ ժամանակին արժէքը և զայն ըստ պատ-
շաճի գործածելու պէտքը : Հարկ է նաեւ սովորիլ
ներկայ ժամանակն սպագային նախատեսութեամբ
միայն գործածել : Փորձառութեան ամենէն թան-
կագին արդեանց մին և ծերութեան գլխաւոր նշա-
նակն է՝ չընելու վարժուիլ այն բանն որոյ վրայ
յետոյ պիտի գըջամք : Որատիոսի և Պուալոյի ծե-
րունին, զգուշանալով ընել այն բանը զոր պիտի
ստիպուի փոխել, « Կը խորհի պատրաստ կենալ
բաղդին հարուածոց դէմ, և ներկային մէջ սպա-
գային կը նայի ի հեռուստ : »

Մանաւանդ յայսմ կը կայանայ նախատեսութիւնը : Նախախնամութիւնը որ համայն բնութիւնն անյեղլի օրինօք կը կառավարէ , աստուածային իմաստութիւնն է : Աստուած մարդը տիեզերաց միջավայրը դնելով , և տալով նմա ինքզինքը կառավարելու՝ ընտանիքը վարելու՝ իւր նմանեաց առաջնորդելու պաշտօնը և իշխանութիւնը , տուած է նաեւ նախատեսութիւն , որ մարդկային իմաստութիւնն է :

Կուզէի որ չսպասուէր հասակին և փորձառութեան դասերուն , որք միշտ շատ սուղի կը նստին , այս խոհեմութիւնն ու նախատեսութիւնն ստանալու համար զոր կրնայ տալ՝ նպատակը և սահմանը կանխաւ որոշուած դաստիարակութիւնը :

Ընտանեկան երջանկութեան նկատմամբ՝ պէտք է այնպէս ընել որ ազդկունք կարենան արժանի լինել բանաստեղծին առ Լուդովիկոս ԺԳ . տուած գովեստին , որոյ համար կըսէ .

« Թէ իւր բարձր իմաստութիւնն յամր ծերութեան յետամնաց պտուղը չէ : »

Աղջկանց համար լուրջ և կատարեալ ուսմանց պէտքը ճանաչելէ յետոյ , երեւելի կանայք , որոց վկայութիւնը քանիցս մէջ բերի , իմաստուն նախատեսութեան ոգւով ճշգրտապէս նշանակեցին այն նպատակը զոր պարտին ունենալ ուսուցիչք :

Նոցա տրուած գիտութեանց՝ հրահանգաց և ընթերցուածոց նպատակն՝ իրենց մանկութեան

առաջին տարիները պատշաճապէս վարել տալ չէ միայն . այլ մանաւանդ երջանիկ կեցութիւն մը ապահովելու համար է որ հոգ կը տարուի իրենց մարմինը մարմնավարժութեամբ կամ շրջագայութեամբ կազդուրելու , որ իրենց հաղորդելու գիտելեաց մէջէն կընտրուին անոնք՝ յորոց օգուտ պիտի քաղեն յետոյ , որ վերջապէս խնամք կը տարուի իրենց միտքը գիտողութեան՝ խորհրդածութեան և տրամախոհութեան վարժեցնելու :

Շատ բան ուսած լինելով չէ որ իրենց դաստիարակութիւնը նախատեսութեամբ ուղղուած կըլլայ , այլ այս ամեն բաներն աղէկ ուսած լինելով , և մանաւանդ զանոնք լաւ գործածելու արուեստն ուսանելով միանգամայն : Գիտութիւնք՝ դպրութիւնք և արուեստք կրնան երբեմն փաստակար լինել՝ եթէ անոնց գոնէ մէկ ճիւղը չկատարելագործուի , եթէ իրական քանքար մը չստացուի օգտակարապէս գործածելու համար :

Կարգադրելու՝ հրամայելու և ձեռնարկուած ամեն բան կանոնով ընելու վարժութիւնը բնաւ չմոռցուիր՝ երբ փոքր հասակէն ստացուի , և խիտ կանուխ հարկ է սկսիլ այդ վարժութեան : Այն ժամանակն իսկ՝ ուր մանկունք տակաւին կարող չեն գիրենք շրջապատող առարկայից արժէքը ճանաչել , ուր զանցառութիւնը և անհոգութիւնն իրենց հասակին հրապոյրքն ու վայելչութիւնքն են , մարց և դաստիարակուհեաց խրատները բոլորովին չեն կորսուիր :

Բ.

Տիկին տը Մենթընոնի յոյժ նշանաւոր կատարելութեանց մին էր այդ նախատեսութիւնը՝ որ ամեն բան կը կարգադրէ՝ որպէս զի մատաղ հասակին մէջ գործածուած ժամանակը շահաւորապէս պատրաստէ զապագայն։ Նա կը դէժըր առ տիկին տը Սէն-Փարս՝ աշխատաւոր ֆերը նկատմամբ՝ որք սովորաբար նոյն հաստատութեան այլևայլ ծառայութեանց սահմանեալ էին, թէ անհրաժեշտ է աշակերտները վարժեցնել մանրամասն խնամք տանելու բարեկարգութեան և մաքրութեան որ հարկ են ամեն կանոնաւոր տանց։ «Շատ լաւ կընէք, կըսէր, օրիորդները ծառայեցնել և ամեն բանի վարժեցնել։ Բայց կարեւոր գործոց համար լինելու է այդ, և ճշմարիտ պիտոյք համարելու չէ չնչին խնայութիւններ ընելու փոփաքը։

«Բնաւ չեմ հաւանիր որ խնայութեան համար կէս կէս տանձ տրուի իրենց. պէտք է պատուով վարուիլ մեր օրիորդաց հետ։»

Տիկին տը Մենթընոն կուզէր որ կարգերուն մէջ փոքր աղջկունք առնուին՝ զանոնք փոփոխակի գործածելու համար ճերմակեղէնի և կարասեաց պահպանութեան՝ ճաշատան՝ սրբատունն աւելուր և այլն։

Փոքրագոյն կարգերու աղջկունք ծառայութիւն մատուցանելու սովորած լինելու են։ Կրնան օջառակի համար ծաղիկ մաքրել, պտուղ ժողվել, բանջարեղէն պատրաստել։

Այն կանոնադրութեան մէջ որ կը պատուիրէ այս մասին, ծոյլի պատիժ դրած է աւել տալ, մսկոտին արգիլել որ տաքնայ, հպարտն սպասուելոյն հետ խրկել հիւանդաց կոնքերը թափելու։

Այս պատիժը խիստ է. բայց տիկին տը Մենթընոն զայն դրած ատեն գիտէր թէ աշխարհս աւելի սաստիկութեամբ կը պատժէ հպարտութիւնը։

Նոյն նամակին մէջ դիտել կուտամ իբր յատկութիւն այն ժամանակին յորում կը գրէր տիկին տը Մենթընոն, այն տարբերութիւնը զոր կը դնէ դպրոցին աղջկանց մէջ իրենց աստիճանին համեմատ։ «Կարեւոր չէ, կըսէ, որ ստորին ծնունդ ունեցող աղջկունք օրիորդաց նման քաջ ընթեանուն բաւական է իրենց լաւ արտասանել և գիտնալ թէ ինչ է պարբերութիւնը, և կարենալ գրել իրենց յուշատետրը և հաշիւնին ընել։ Պէտք չէ անոնց ուսուցանել նամակագրութիւն, ոչ ալ ոճի վրայ խօսիլ իրենց։ Սակաւ ինչ ուղղագրութիւն կը բաւէ։ Բայց այնպէս չէ թուաբանութեան համար որ իրենց պիտանի է։»

Կուզէ որ մեծ օրիորդք պզտիկներն հագուեցնելու օգնեն, անոնց անկողինն յարդարեն և ուսուցանեն ինչ որ պէտք է իրենց գիտնալ, և

բոլոր այս պաշտօններն յանձնուելու են իբր վարձատրութիւն :

Մեր այս աւուր տուած դաստիարակութիւնը շատ հետի է պարունակելէ այն սեղմումներն որ այնչափ բնական կը թուէին Սէն-Սիրի հիմնադրուհւոյն : Նախատեսութեան ամենապարզ կանոնք զմեզ կատիպեն ընդհակառակն աւելի ընդհանրացնել այն ծանօթութիւններն զոր յետոյ պիտի կարենան գործածել, և թէ, ընկերական այն վիճակին մէջ՝ ուր այս աւուր աղքատք կրնան վաղուան հարուստները լինել, մինչդեռ ամենէն լաւ հաստատուած հարստութիւնք կրնան կործանիլ, մտաւորական դրամագլուխ մի են որ երբէք չկորսուիր և որոյ գործածութեան առիթը միշտ կը ներկայանայ : »

9.

Տիկին Գանդիան մանրախուզիւ կը հաշուէր Սէնթ-Ուանի մէջ աշակերտուհեաց ուսման նուիրեալ ժամերն, այնպէս որ ընդարձակ ժամանակ մնար տան խնամոց : Նոքա, վարժ ամեն տեսակ կարի, իրենք կը շինէին հագուստնին և շապիկնին, դասարաննին կաւլին, կարգաւ կը ծառայէին, կուտային և կընդունէին իրենց ճերմակեղէնները,

տան բոլոր ծախքերն ամենափոքր մանրամասնութեամբ կը գրէին : Տնարարի պարտականութեանց այս վարժութիւնը բազմազան ուսմանց հետ ամբիարան չէ երբէք. պէտք է զանոնք զուգընթաց յառաջացնել բարեկարգութեան և մտքրութեան հրահանգաց հետ :

« Ծանեայ, կըսէ տիկին Գանդիան, տասնութ տարեկան աղջիկ մը որ գերմաներէն ու անգլիերէն կը խօսէր իւր մայրական լեզուին նման, քաջ դաշնակահար էր և ունէր մանաւանդ երաժշտութեան մէջ այն ճշմարիտ տաղանդը՝ որ է նուագել որ և իցէ ձայնագրութիւն . զիտէր իւզանկարել գլուխներ և դաշտային տեսարաններ բնականին վրայ . ձեռագործի մէջ ամենամեծ ճարտարութիւն ունենալով՝ պարզ կարէն սկսեալ մինչև արուեստական ծաղիկներ կը շինէր . նոյն ճաշակն ունէր նաև տան համեստ զբաղմանց համար . ամառը գիւղը պանիր՝ անուշներ՝ խմորեղէններ կը շինէր, հաւնոցի մանրամասնութեանց կղբաղէր, ազարակները կը շրջէր, հողագործութեան կը տեղեկանար, գիւղին աղքատաց կայցելէր, անոնց կօզնէր եւ կը խնամէր երբ հիւանդ անային . երեկոյին ճրագի լուսով կը պարսպէր օգտակար ընթերցման, ճաշակով կերգէր և պարել կուտար : »

Տիկին տը Մենթընոնի նման՝ տիկին Գանդիան ալ կուզէ ամենէն առաջ գործնական դաստիարակութիւն մը : Կուսուցանէր իւր աշակերտուհեաց

ճանաչել կերպասուց և կտաւոց՝ ճերմակեղէնի և անօթոց գլխերը . որոշել այն ժամանակն ուր պէտք է ընել իւրաքանչիւր պաշար , ճաշ հրամայել , ճանաչել ամեն ինչ որ վայելուչ է դղեակ՝ տուն եւ սենեակ կահաւորելու :

Տան ներքին մանրամասնութեանց ծանօթութիւնը միջակային կարգի աղջկանց միայն անհրաժեշտ չէ . այլ ամեն աստիճանի մէջ , ստորնագոյնին ինչպէս բարձրագոյնին , այսպիսի խնամքներ կարեւոր են :

Մաքրութիւնը , ներքին կենաց այս պիտոյքը՝ այս վայելչութիւնը , նշմարելի է խրճիթի մը մէջ՝ ինչպէս ամենաչքեղ պալատի մէջ : Աղջիկ մը որ կանխաւ սովորած է տան պահպանութեան խնամք տանելու՝ նոյն սովորութիւնն հետը կը տանի ամեն տեղ : Պիտի սիրէ գիւղային աշխատութիւնները , պիտի զգայ առանին կենաց քաղցրութիւնները , և ազատ պիտի մնայ այն թերութեանէն որ յաճախ կը գտնուի հարուստ կանանց վրայ , որ է դիտել միայն դղեակի մը սրահին գեղեցկութիւնը , իւր ներքին սենեկին վայելչութիւնը , և պարտիզաց մէջ թփոց թաւուտներուն ընտիր ճաշակը և ուղիներուն չափակցութիւնն՝ ուր ձանձրութիւնն իրենց ետեւէն կը քալէ յաճախ :

Դ .

Իսոյ դաստիարակութեան ուրիշ մաս մը կայ , ուր մարց և դաստիարակուհեաց նախատեսութիւնն օգտակար ազդեցութիւն կը ներգործէ կենաց ամեն հասակին վրայ : Տիկին նէքէր տը Սոսիւր , որ իւր նախորդաց նման բոլորովին յօժար էր պատրաստելու զօրաւոր և քաջաւոյգ կազմութեամբ կիներ , ճարտար և խոհեմ տնտարներ , կը խորհի մանաւանդ բարոյական մասին՝ որ շատ անգամ զանց առնուած է : Կուզէ որ ըստ կարելւոյն ընդարձակուին աղջկանց գաղափարք :

« Աչքերնին դէպ ի երկինք դարձունել տուէք , կըսէ , ցոյց տուէք փայլուն աստեղաց մէջ բարեկարգութեան բոլոր շքեղութիւնները , թող դիտեն արեգական վերադարձը և աներեւութանալն որոշեալ ժամանակի մէջ . եղանակաց և հնձոց յաջորդութիւնն իրենց կապացուցանէ թէ բոլոր շնչաւորաց գոյութիւնը բարեկարգութեան կապուած է , թէ դաշտային աշխատութիւնք բարեկարգութիւն կը պահանջեն , որ պէտք է նաև ժամուց և աւուրց գործածութեան մէջ : Կենաց այնքան պիտանի եղող այս նիւթական բարեկարգութիւնը կարելի չէ ձեռք բերել առանց բարոյական բարեկարգութեան :

« Ամեն ուր որ անժողովաբանները կը մերժեն բարեկարգութեան կանոնին հնազանդիլ, թշուառութիւնն արագ արագ կը հասնի հոն: Ազգաց մէջ կը հասնի սպտերազմաւ կամ՝ ապստամբութեամբ, խրճիթներու մէջ՝ անժուժկալութեամբ, ընտանեաց մէջ շուայլութեամբ: »

« Մանկութեան ժամանակ մտաւորական աշխատութեան չվարժողն՝ իւր բոլոր կենաց մէջ կունենայ շատ ձանձրոյթ և շատ անհոգութիւն: Այնուհետեւ կը սիրէ միայն վիպասանութիւն կարդալ և պարահանդէս երթալ: »

« Դատողութեան կրթութեամբն է որ կուղղուն չափազանց յողբողութիւնը և մեծ զգայնութիւնն որ կանանց կազմակերպութեան վրայ կը տիրապետեն: »

« Իրենց տխրութեան միջոցին, կըսէ դարձեալ տիկին Նէքէր, չկայ բան մը որ հանդարտեցուցիչ արդիւնք յառաջ բերէ անոնց վրայ: Արք ունին գործոց խնամքը, և աղքատ կանայք ստիպողական անհրաժեշտ աշխատութիւն, որ երբեմն իրենց մտատանջութիւնները կը դադրեցնէ: Բայց անգործ կանայք ջերմնական ջղային կեցութիւն մը կունենան, որ կընայ բերել խիստ աղետալի հետեւութիւններ, և ասոնք կենաց մէջ շատ ուշ կը նշմարուին: Ուստի հարկ է այս օրինակ չարեաց առաջն առնուլ խոհեմ դաստիարակութեամբ: »

Ե.

Բնութեան զանազան երեւոյթները դիտելէն ներշնչեալ քաղցր հետաքրքրութիւնն է միայն՝ որ կարէ սիրիլիլ զզգացումն մեծ վշտաց՝ յուսախաբութեանց և զրկանաց՝ որովք լի է մարդկային կեանքը:

Դիտողութեան այս ոգին միշտ կը հետեւի մեզ և կը գործէ առանց մեր կամաց: Նոր ծաղիկ մը որ կը բացուի, ծիծեռնակին դարուստն ի դարնան, կենդանեաց վրայ խմայողութեան գործ մը, հանդարտ ջրոց մէջ ցոլացող առարկայք, կրակարանին մէջ փայլատակող բոցը, հովն, ամպը, ամեն ինչ որ մեր շուրջը կը փոխուի, ուշադրութիւն կը գրաւէ և միտքը կըրպակցնէ: Դիտողութիւնն եղբւրութիւնները կը հաւաքէ, և այս եղբւրութիւններէն պէտք է ճիշդ եզրակացութիւններ հանել:

Բնական ստոմբութեան նկատմամբ կարեւոր է շրջագայելու ժամանակ նշանագրել երկրագործական աշխատութեանց վրայ, այսինքն սարտիգին փոփոխական վիճակին, այս ինչ սերմը ցանկու ժամանակին, ուր տունկը կածի՝ կը ծաղկի և ստուղ կուտայ. ուր այս ինչ թռչունը՝ այն ինչ թիթեռնիկը կերելի դաշտին մէջ: Օգտակար և հաճոյական է կանոնաւոր օրագրութիւն բռնել,

նշանակել երկնից վիճակը, ջերմաչափին աստիճանը : Այս աշխատութիւնը եթէ գիտութեան օգուտ չբերէ, գոնէ օգտակար է գիտողին :

Այսպէս կը հասնուի պատճառաց խուզարկութեան . բնութեան զանազան գործակալք, ջերմութիւն՝ լոյս՝ խոնաւութիւն և այլն, հետաքրքրութիւնը կը զարթուցանեն :

Դատողութիւնը զարգացնելու յարմարագոյն բանն է՝ բնական երեւոյթները բացատրելու փորձեր ընելն այն օրինաց համեմատ՝ որոց ծանօթութիւնն հետզհետէ կատացուի : Այս ուսմունք գոնէ գործնական օգտակարութիւն ունին . վասն զի բնագիտութեան և տարրալուծութեան օրինաց ենթակայ են այն զանազան առարկայք՝ որոց կը դարձի առտնին տնտեսութիւնը, այսինքն մեր պարենից պահպանութիւնը, կերակրոց պատրաստութիւնը, բնակարանաց լուսաւորութիւնը և ջերմացումը, և առողջութեան պահանջած խնամքները :

Գծագրութեան ուսումը չկայանար միայն գծագրելու կամ դիմաց և գիւղանկարուց շուք տալու վրայ . այլ կուսուցանէ աղջկանց թէ ո՞չք են օրինակելու արժանի գեղեցիկ ձեւերը :

Վիպասանութեանց մէջ դուլեստ չտեսնուիր երիտասարդական թարմութեան՝ շնորհալի եռանդեան եւ կայտառութեան վրայ : — Ոչ, այլ օղային նուրբ ձեւեր՝ ցանկալից տժգունութիւն և մեկամաղձոտ նայուածք : — Յորոց բազումք

տկարութեան և հիւանդութեան նշանք են : Չափազանց բարակութիւնը և նայուածքին նուազումն աղէկ նշանակութիւն չունին ապագայ մօր համար, այն հարսին համար որ գուցէ կոչուած է իւր ամուսնոյն ճախորդութեանց մասնակցելու : Բայց աղջկունք կերպիչին վնասել այնքան հրապուրիչ վայելչութեանց . չեն ուզեր ուտել՝ վախնալով որ շատ կը գիրնան, չեն ուզեր քալել՝ որ մի՛ գուցէ ոտքերնին մեծնան : Մանաւանդ քաղաքաց մէջ անգործութիւնն ու մարմնական անշարժութիւնը շատ աղէտալի հետեւանք ունին : Վասն որոյ հարկ են մարմնամարզութիւն՝ մեծ շարժումնք մկանանց և բացօթեայ խաղք :

Երեք պատճառք կը վնասեն առողջութեան լաւ վիճակին . ջերմ ըմպելեաց և թէի չափազանց գործածութիւն, շատ սեղմուած կամ շատ կանուխ գործածուած գօրսկներու մէջ ստացմիքսի և կողից ձնչումն, և պակասութիւն մարմնակրթութեան : Կենաց բարուք կանոնի մը հետեւիլն՝ երիտասարդութեանց կուտայ ձգականութիւն, եռանդ՝ որ կը ծաւալի ուսմանց՝ յօժարութեանց և բարոյական ամբողջ էութեան վրայ . իսկ մարմնական էութիւնը կը շահի աւելի հաստատուն առողջութիւն, և ձեւոյ՝ համեմատութեան և գունաւորութեան գեղեցկութիւն մը, յորմէ մեր թշուառ բարակութիւնք կը զրկեն գերիտասարդս, հակառակ բնութեան՝ որ քան զմեզ ճարտար է գեղեցկութեան խնամք տանելու :

Ասեղնագործութեան աշխատութիւնք կրնան արուեստից կարգը դասուիլ։ Աթենաս աստուածուհին էր անոնց խնամակալը։ Այս աշխատութիւնը նուիրական պարտականութիւն է աղքատ դասուն, և բարերարութեան գործ՝ հարուստ դասուն։ Կերեցնէ մանրամասնութեան խնամք ունենալ և այլոց պիտոյքն հասկնալ՝ որ երջանկութիւն և արժանիք կուտան կանանց։ Կտաւ մը աղէկ ձեւել զիտնալ, կտորներն իրար բերել, զանազան ձեւերով հագուստներ շինել, ահա պատուական ճարտարութիւն մը ամեն վիճակի երիտասարդուհեաց համար։

Օտար երեւցած գիտութիւններն ուսանելու համար մտքին ընդհանուր մշակութեան որքան կարևոր լինելը կրնամք հասկնալ՝ եթէ բազդատեմք այն քիչ ժամանակը զոր քաջակիրթ աղջկունք կսպառեն ամեն բանի մէջ ճարտար լինելու համար, և անգրաս գործաւորուհեաց աշակերտութեան ողորմելի դանդաղութիւնն, որք մեծ պէտք ունին իրենց հացը շահելու։

Ուսուցչութեան արուեստին մէջ ճարտարութիւնն ոչ այնչափ ծանօթութիւններն հաղորդելն է, որչափ աշակերտաց զանոնք ստանալու փափաքն ու տաղանդն ընդարձակելը։ Պէտք է մտաց գործունէութիւնը գրգռել, և գիտակցութիւնն յորդորել ժամանակի խնայութեան։

Յոյժ ցաւալի է թէ արուեստք, աղբիւրք բազ-

մագան զուարճութեանց որ կարի քաջ կը պատշաճին պատանեկութեան պիտանի եղող կրկին շարժման, իրենց ետեւէն բերեն այնքան անախուսութիւն, զեղխութիւն և ունայնութիւն, վասն զի բաւական լրջօրէն չեն մշակուիր։

2.

Առտնին տնտեսութեան իմաստնագոյն նկարագրութիւնքն և լաւագոյն դասերն երբէք չեն արգիլեր որ մատաղ հասակն անմտածութեան և անզգուշութեան ժամանակը չլինի։

Ի՞նչ պիտի լինէր ուրեմն եթէ կանխաւ ցոյց չտրուէր երիտասարդութեան՝ ինչ որ կեանքը կը պարունակէ հոգ և գործ. եթէ իրեն կարծել տրուէր թէ աշխարհի մէջ ամեն բան առանց դժուարութեան և առանց հոգածութեան կտացուի։ Որովհետեւ մեր մանկունքը կը տեսնեն իրենց հօրն երկար և յարստեւ աշխատութեամբ կազմակերպեալ տունը, թողելու է որ ենթադրեն թէ այս կարասիք բարւոք վիճակի մէջ մնացած են առանց փոխելու և նորոգելու։ Թէ այս ձերմակեղէնն՝ այս զգեստն՝ այն գոհարեղէնք պահուած են առանց մայրական ճարտարութեան և հսկողու-

թեան : թէ այս հազար չնչին իրերն որ տունն օրհնեալ և սիրելի բնակարան մը կընեն , ժողովուած են առանց ծնողաց խնամոց՝ որ գանոնք մեծ ծախիւք հաւաքելու հոգ տարած են :

Թէ այս մատենադարանը զոր հոյրն իւր աշխատութեանց համար կազմած է , յորմէ տղայք գիտութեան գանձեր կը քաղեն , թէ այս զարդերն որոց վրայ աղջկունք կսքանչանան վասն զի իւրեանց մօրը զարդարանքն եղած են , միթէ առանց զհոգութեան գոյացան : Թէ այս սրահն , ուր բարեկամք կը գումարուին , բաց կը մնայ առանց ծախելու վայելչութիւն՝ հանձար՝ քաղցրութիւն՝ մարդասիրութիւն , որպէս զի պահուին այն հին բարեկամք զոր ժամանակը մեզ կը թողու , և որոց հետ Աստուած թոյլ կուտայ մեզ ծերանալ և նորեր շահիլ՝ որպէս զի կապակցութիւնք չընդհատին :

Թէ այս ծերունի ծառայք հաւատարիմ մնացած են առանց տիրուհւոյն արդարութեան՝ խոհեմութեան՝ վեհանձնութեան և երկայնմտութեան որպէս զի համբերէ այն քմահաճութեանց և պահանջողութեանց զոր սպասաւորք կը նկատեն իբր մեր ժամանակին յառաջադիմութեանց մին :

Արժան է թողուլ անհոգութեան հասակին՝ որ անդիտանայ թէ հարստութիւնը չգիմանար շայտութեան՝ անկարգութեան և աննախատեսութեան . թէ ուսման և աշխատութեան բացակայութիւնը չարեաց մեծագոյնն է . թէ հարկ է կենաց կէսը

զոհել՝ ճշմարտութիւնը փնտռելու համար . թէ պէտք է խորհիլ և խորհրդածել այլոց և իւրեան պիտոյից վրայ :

Աւելի ծանրագոյնն այն է թէ , մանկունք , չխորհելով իրենց վայելուչ եղած առաքինութիւններն ստանալ , կը բառնան իրենց ծնողաց առողջութիւնը և հոգեկան ուրախութիւնը՝ որք լաւ կը պահպանուին իրենց բարի վարուքը : Հարէ է ուսուցանել նոցա որ՝ եթէ հարստութիւնը կստացուի կամ ժառանգութեամբ կաճի ընտանեաց մէջ , պարտականութիւն է այդ փոխանցեալ հարստութիւնն յարգել՝ խոհեմութեամբ դործածել և մանաւանդ չմոռանալ աղքատաց բաժինն անկէ հանելու : Եթէ այս հարստութիւնը ծնողաց տքնութեանց և յամառ աշխատութեանց պտուղն է՝ ևս առաւել պէտք է յարգել զայն և գիտնալ թէ իրաւունք ունին միայն շատ մեծ զգուշութեամբ դպչիլ անոր :

Այս խորհրդածութիւնք , զոր խտտիւ կը պահանջէ առտնին տնտեսութիւնն այնպէս՝ ինչպէս որ ես կը հասկնամ , աղջիկը պիտի ընեն ուսման մտադիր , իրեն տրուած ամեն բանի խնամածու , տենչանաց մէջ չափաւոր , և աւելորդութեանց ատեցող : Սրտին մէջ պիտի ունենայ մեծարանաց այն զգացումն որ իրեն սիրելի և պատուակառն պիտի ընէ այս բոլոր ստացուած բարիքը . պիտի զգայ թէ պարտի ուրիշ ընտանիքի մէջ փոխադրել այն առաքինութիւններն որ իւր ծնողքն հարստա-

ցուցին, և այն ստացուածքը զոր կարող եղան պահել: Միթէ դժբաղդութիւն չէ՞ նմանիլ ճգրան, որ կտտիպուի յիմար և աննախատես երևիլ առաջի սակաւապետ և աշխատասէր մըջման՝ որ իւր բոլոր կեանքն անցուցած էր ձմեռուան համար առատ պաշար պատրաստելու:

Տան մէջ թշուառութիւնն ի հեռուստ կը նախատեսուի, ինչպէս նաեւ ի հեռուստ է որ կը պատրաստուի կործանումը:

Է.

Միայն գրքերն և ուսուցչաց դասերը չեն ուսուցաներ նախատեսութիւն: այլ և համայն բնութիւնն, ուր ամենայն ինչ կարգադրեալ է մտաց անհասանելի իմաստու թեամբ, հիանալի մատեան մի է բաց՝ ամեն աչաց և ամեն հոգւոց առջեւ, և զնոյն կուսուցանէ:

Ահա իւր ամենէն բանաստեղծական թարգմանչաց մին, Պ: տը Շաթոպրիան, սիրուն օրինակ մի կը ներկայացնէ մեզ անտի.

« Հիանալի նախախնամութիւն մի կը նշմարուի թռչնոց բոյներուն մէջ: Անհնարին է առանց խանդաղատելու նկատել այդ աստուածային բարոն-

թիւնն՝ որ ճարտարութիւն կուտայ տկարին, և նախատեսութիւն անհոգին:

« Իսկոյն երբ ծառք իրենց տերեւները կը բանան, հազարաւոր գործաւորք կսկսին իւրեանց աշխատութեան: Ոմանք երկայն շիւղեր կը տանին պատի մը խորշը, ոմանք շէնքեր կը շինեն եկեղեցւոյ պատուհանաց մէջ, այլք մազ մի կը յափշտակեն ձիէն, կամ բուրդի թել մը զոր ոչխարը թողած էր մորենւոյն վրայ:

« Փայտահարներ կան որք ծառոց գազաթը ճիւղեր կը դիզեն: Մանողներ՝ որք ուղտափշոյն վրայի մետաքսը կը քաղեն: Հազար շէնք կը շինուին և իւրաքանչիւր շէնք բոյն մի է, և իւրաքանչիւր բոյն հիանալի փոխակերպութիւններ կը տեսնէ՝ փայլուն հաւկիթ մը, յետոյ նուրբ մազերով ծածկուած ձագ մը: Այդ ձագը փետուր կզգենու մայրն անոր կը սորվեցնէ ոտք ելնել: Քիչ ժամանակէ յետոյ պիտի սկսի մինչև իւր օրօրոցին եզերքէն կախուիլ, և առաջին նայուածք մի արձակել բնութեան վրայ:

« Ահաբեկ և հիացեալ, աճապարանօք կը դառնայ իւր եղբարց մէջ որք տակաւին չեն տեսած այն տեսարանը. բայց ծնողաց ձայնէն խրախուսեալ՝ երկրորդ անգամ իւր օրօրոցէն դուրս կելնէ և օդոյ այս դեռաբողբոջ թագաւորը, որ դեռ իւր գլխոյն վրայ կը կրէ մանկութեան սրտին՝ արդէն կը համարձակի նկատել լայնածաւալ երկինքը,

չոճեաց ծածանող գագաթը և հայրական կազնւոյն ստորոտն եղած դալարեաց անդունդները : »

Ը .

Միթէ կա՞յ ընտանիք մը որ քան զայս սքանչելի տեսարան ներկայացնէ : Միթէ նախախնամութիւնն ինքնին հոգ չտա՞նիր մեր աչաց առջեւ գնելու՝ ինչ որ լաւ ևս կարէ գգացնել աշխատութեան և իմաստուն ու նախատես գործունէութեան հրապոյրքը :

Մայր մը ասոնցմէ աւելի հոգածութեամբ չպատրաստեր իւր մանկան որրանը , և աւելի իմաստութեամբ չուսուցաներ իւր առաջին քայլերն ընել և հնազանդիլ : Ինչպէս կը տեսնուի , մինչեւ իսկ թռչնոց մէջ կայ մեծատուն և աղքատ : Ոմանք մետաքսեայ փափուկ բոյն ունին , ոմանք պարզ և գեղջկական :

Կը յուսամ թէ ամեն ոք զիւրաւ պիտի խոստովանի թէ աւտնին տնտեսութեան այս դասուց պարունակած մասնաւոր ուսմանց պիտանի ներածութիւնն է՝ ժամանակին պատուականութիւնը ճանաչելով բանաւորապէս գործածելը , մանաւանդ

այն հասակին մէջ՝ ուր դաստիարակութիւնն երկայն և կշռադատեալ պատրաստութիւնն է զբաղմանց՝ պիտոյից և կենաց փորձութեանց : Դրութիւն մի , որ ուսման հիմն կը դնէ աշխատութիւնը բարեկարգութիւնը՝ կանոնաւորութիւնը և նախատեսութիւնը որ գլխաւոր յատկութիւնք են ամեն բանաւոր էակի , պիտի գտնէ բոլորովին ընական գործադրութիւն հետեւեալ գլխոց մէջ , ուր ես հետզհետէ պիտի քննեմ թէ որո՞նք են այն ծառայութիւնք զոր կը մատուցանէ մշակեալ հանճարը սակ՝ ընկանեաց՝ գործոց և ընկերորպեան մէջ :

Դ Ա Ս Ե .

Հանար սան մէջ : — Բնակարանի ընտրութիւն եւ յօրինուածութիւն : — Առողջապահութիւն : — Կարասիք : — Պոռտաբ : — Ծառաներն ընտրել եւ վարել :

Ա .

Տունն այն կարուածն է՝ ուր սնդագար կը գործեն կնոջ մտաւորական բոլոր կարողութիւնք , անդ է ուր անասնման կը տարածի իւր իշխանութիւնը :

Քաջ տնտեսութիւնն է՝ ունեցած առատ կամ չափաւոր հասոյթը ճարտարութեամբ գործածել , խոհեմ եւ նախատես լինել բնակարանն ընտրելու՝ կարասին գնելու եւ կարգադրելու՝ պաշարը գործածելու եւ բարեկեցութիւնը պահպանելու մասին , վերջապէս եւ մանաւանդ սպասուորները վարել :

Շատ խորհրդածութիւն հարկ է նախաձեռն լինելու եւ քաջ հասկնալու ու որոշելու համար իւր վիճակը՝ բնակելու երկիրը՝ միջավայրն ուր պարտի

ապրիլ , եւ կառավարելու տունը կազմող անձանց թիւը՝ յատկութիւնը եւ բնաւորութիւնը :

Տիրուհին պարտի խնամք տանիլ՝ առողջապահութեան , որով կարգիլուին բազմաթիւ հիւանդութիւնք որք յառաջ կուգան տեղւոյն խոնաւութենէն՝ լաւ չպատրաստուած կերակուրներէ՝ օդոյ պակասութենէ եւ երբեմն չափազանց զգուշութենէ :

Առողջապահութեան առաջին օրինաց մին է՝ նայիլ որ՝ բնակարանն , մեծ թէ փոքր , ձմեռուան համար պատուհան ունենայ հարաւային կողմը , եւ ամառուան համար հիւսիսային կողմը : Այս օրէնքն որ ամեն տեղ գրուած եւ կրկնուած է , ամենուն համար դործադրելի չէ . քանզի միշտ չգտնուիր այսպիսի դիրք . ուստի եւ բնակարանի ընտրութիւնը մեծ գոնարութիւն ունի : Դիւրագոյն եւս է ուսումնասիրել ճարտար եւ պարզ միջոցներ՝ որով զովութիւն պահուի տաք եղանակին մէջ , եւ քաղցր բարեխառնութիւն՝ ձմեռուան սաստիկութեան թամանակ :

Մեծատունք , որ արեգակն ու լոյսը կը գնեն հիւսիսէն հարաւ փոխադրուելով , հարկ եղած դրամն իրենց սեղանաւորէն կառնուն՝ սառուցեալ երկիրները թողելու եւ երթալ յարատեւ գարուն տիրող տեղեր բնակելու , եւ իրենց պիտոյք դարձած փափաքները գոհացնելու համար : Այսպէս կարող չէ ընել պաշտօնաւորաց՝ ամեն կարգի վաճառականաց եւ պաշտօնէից բազմութիւնը , որ որոշեալ

Թողակ ունին և ազատ չեն իրենց ուզած Թաղը կամ փողոցն ընտրելու :

Գատողութեան և հանձարի գերազանցութեամբ կարէ ոք առանց ծախուց ձեռք բերել հանգստութիւնը՝ զոր սակաւաթիւ մեծատունք ոսկւով կը գնեն և չեն գիտեր վայելել :

Յուրաքանչէր և չափազանց ջերմութենէ պատասպարուելու միջոցներ կան՝ գրեթէ առանց ծախուց, այն է՝ ճարտար և խոհական կարգադրութեամբ՝ եղանակաց և օրուան ժամերուն համեմատ գործածել հովանին և լոյսը, որոց համար հարկ չկայ մեծ ծախս ընելու :

Բնակարանի լաւ ընտրութիւնն անբաւ կարելորութիւն ունի, վասն զի շատ նկատողութիւնք կան ճաշակը և խնայողութիւնը գոհացնելու համար. այսինքն թէ՛ քաղաքին ո՛ր կողմն հարկ է բնակիլ, քանի՛ սենեակ պիտոյ է ունենալ, և մանաւանդ ո՛րքան լինելու է վարձքը, որ այժմ այնքան բարձրացած է որ անհնար կերեւի պարտակիլ այն սահմանաց մէջ՝ ուրկէ դուրս ելնելու չէ իմաստուն տնտեսագէտն :

Բ.

Նպաստաւոր պայմանօք բնակարան գտնելու համար շատ հաշիւ և խուզարկութիւն հարկ եղաւ :

Գրեթէ նոյնը պիտի լինի կարասեաց համար եւս : Բնակարանին կցորդութիւն ունի այս. բայց անոր նման ենթակայ չէ շատ անխոփման. վասն զի հարկ է որ իւրաքանչիւր ոք գտնէ անդ ինչ որ կը յարմարի իւր զբաղմանց և սովորութեանց :

Կարասիքն ամեն օր չնորոգուելուն աղաքաւքաջ խորհրդածութիւն կը պահանջէ. վասն զի եթէ անյարմարութիւն մը պատահի՛ դիւրաւ չդարմանուիր : Քանի՛ երկմտութեան մէջ կը մնայ մարդ՝ ստուգիւ պիտանի առարկաներ գնելու և ճարտարութեան հնարած բազմաթիւ տեսակաց մէջէն հաստատագոյնը՝ տոկունը և յարմարագոյնը գտնելու համար, որպէս զի, օրինակ ինչ, հաճութիւն ունենայ ամեն օր յարմար գրասեղանի մը վրայ գրելու կամ այնպիսի սեղանի վրայ աշխատելու՝ ուր գործն աղէկ դուրսի և շարուի :

Հաճելի է պատշաճ ընդարձակութեամբ և բաժանմամբ պահարաններ ունենալ, սեղանատուն ուր կարելոր բան չպակսի, սրահ մը՝ ուր կարելի լինի բարեկամներն հանգիստ ընդունիլ :

Մեծ զգուշութիւն հարկ է բոլոր այս իրաց, որպէս զի պակասաւոր կարասի գնուելով չզղջացուի, և մնայ միայն զայնս լաւ գործածելու և պահպանելու խնամքը, որոց վրայ միշտ բան կաւելնայ ամեն տարի :

Նորասիրութիւնը, որոյ մասին յետոյ մի քանի ըսելիք ունիմ, մի մեծ հրապուրիչ է որ անդադար

կը հրաւիրէ զմեզ փոփոխելու և նորոգելու : Բայց բանավարութիւնը և զգացումն անոր կը յաղթեն և սիրելի կընեն մեզ այն առարկաներն՝ որք կենաց ամենէն յանկուցիչ գործառնութեանց անմուռնչ վկայ և հլու սպասաւոր եղած են : Կաղամար մը՝ գրիչ մը՝ գործի տուփ մը և այլն , երբեմն կը ներշնչեն մեզ ա՛յնքան քաղցր մտածութիւններ , մտքերնիս կը բերեն ա՛յնքան յիշատակներ , որով միշտ նորածեւ կը գտնեմք զայնս՝ եթէ սիրած եմք :

Մեր ստոյգ պիտոյից և մեր ասահով միջոցներուն գոհացումն տուող բոլոր պատշաճութեանց վրայ խորհրդակցելէ յետոյ , իմաստութիւն է շանաւ յօժարութեանց ձայնին՝ որ միշտ ազդուութեամբ կը հնչէ :

Գ.

Գծագրութեան և նկարչութեան ուսումն աչքը կը վարժեցնէ գծերու և գոյներու չափակցութիւնն որոշելու և կարասեաց ու առարկայից կարգադրութեան բոլոր փափաքելի յարմարութիւնը տալու :

Ուշադրութիւն հրաւիրելով բոլոր այս իրաց համար որ ի սկզբան յոյժ անկարեւոր կը թուին , աղջկանց միտքն օգտակար կերպիւ զբաղեցուցած կը համարիմ . վասն զի բան մը գնելու ժամանակ

պէտք չէ հարեւանցի զննութեամբ գոհ լինել . շահաւորապէս գնելու համար՝ հարկ է խոհեմութեամբ և շրջահայեցութեամբ գնել :

Կարասեաց բաղկացումն ըստ իս կարելի չէ կանխաւ ճշդել . իւրաքանչիւր ոք անձամբ որոշող լինելու է այս յարգարման : Պարտիմ իսկ նշանակել աստանօր թէ՛ վաճառատունք այս մասին միայն ընտրութեան վարանումն կը ներկայացնեն : Անդ կը տեսնուին այսօր ամեն աստիճանի համար սենեակներ՝ սրահներ և սեղանատներ , որոց առարկայք կուելնան կամ կը պակսին գնողին ընել որոշած ծախուց համեմատ :

Բոլորովին պիտի հեռանայի իմ յատակագծէս , եթէ յաւելուի ամեն ինչ որ ընել հարկ է բնակարանի պահպանութեան , ճերմակեղէնի ընտրութեան , լուացման , լապտերաց՝ պղնձեղինաց՝ արծաթեղինաց՝ պատկերաց և գոհարեղինաց մաքրութեան , յատակաց խնամոց , միջատաց ջնջման , ջերմացման , լուսաւորութեան . վառելու նիւթոց ընտրութեան , վառարանաց , հրարանաց , հնոցաց և ջերմարաշխից շինութեան համար : Բոլոր ասոնք անտեսական խնդիրք են , որոց վրայ մասնաւորապէս պիտի զբաղիմ առողջապահութեան դասուն մէջ , և յայնժամ նկատողութեան պիտի առնում զայնս՝ առողջութեան տեսակէտով :

Դ.

Պաշարն ևս կը պահանջէ հաշիւ և նախատեսութիւն : Իմաստութիւն է մեծ քանակութեամբ չզնեւ այն պարէններն որք կարեն սպականիլ նգոտելով կամ խմորմամբ , քաջ տեղեկանալ թէ պահեստի դրուած պարէնին տեսակը և քանակութիւնն համեմատ են տան բոլոր անձանց ճաշակին : Պէտք է զգուշանալ ստամոքան հոգնեցնելէ այն կերակրոց կրկնութեամբ որ հաճութեամբ չեն ուտուիր :

Պահպանելու միջոցները և նպատաւոր տեղերը կը տարբերին երկրին համեմատ , վասն զի կլիման և բարեխառնութիւնը մեծ ազդեցութիւն ունին ուտելի բերոց վրայ :

Բնութիւնն ա՛յնքան հարուստ և Նախախնամութիւնն ա՛յնքան իմաստուն և ճարտար է , որ սովորական սեղանի համար յարմարագոյն կը համարիմ սպասել եւ հետեւիլ ամեն եղանակաց բերքերուն : Երախայրիք և պահածոյ ուտելիք չափազանց կաւեցնեն տնարարուհւոյն զբազումը : Մանր խնամքներն են որ շատ ժամանակ կոպտեն , չափազանց կարեւորութիւն կուտան սեղանին ծառայութեան՝ հնարելով այնպիսի պիտոյքներ որ սպրուստը դժուարին և մեծածախ կընեն :

Ելեւմտից հաւասարակշռութեան համար , խոհանոցին՝ սեղանատան՝ սրահին և հագուստին մէջ

ծախուց բաժանումն չափազիտօրէն չընելով՝ պէտք է հսկել որ աւելորդը սրահի կամ գրատան կողմը լինի մանաւանդ : Բայց պէտք չէ անգիտանալ թէ՛ անհրաժեշտ է ամուսնոյն և մանկանց առատ և հաճոյական սնունդ մատակարարել :

Բազմանդամ ընտանիք մը բազմապատիկ խնամք կը պահանջէ : Հասակի և զբաղմանց տարբերութիւնը պահանջողութիւններ ունի , որոց ամեն լուրջ կին պարտի ուշադիր լինել : Երբ մէկն իւր շուրջը քանի մը սերունդ ժողովելու բարեբախտութիւնն ունի , ո՛րքան ուրախութիւն կը պարունակէ տունը , բայց և ո՛րքան իմաստութիւն հարկ է անոր կառավարութեան : Հանձարեղ՝ և սիրով ու պարտաճանաչութեամբ իւրայնոց անձնանուէր կինը դիւրաւ կը յաղթէ ամեն դժուարութեանց :

Ե.

Բնագիտութիւնը և տարրաբանութիւնը մեծ ծառայութիւն կը մատուցանեն երբ զինի կամ այլ ըմպելիք և կամ պտուղ ու բանջարեղէն պահել ուզուի : Գիւղը դիւրաւ կստացուի թեթեւ՝ դիւրագին և հաճելի ըմպելիք շինելու վարժութիւնը : Բուսաբանութիւնը բազմաթիւ ծանօթութիւններ կը հայթայթէ ոչ միայն բուսոց յատկութեանց և

օգտակարութեանց նկատմամբ, այլ և իբր կերակուր կամ դեղ գործածելու մասին:

Գիտնական ուսմունք ամենագոր են զգուշաւոր ընելու ուտեստի խարդախութեան դէմ ընդհանրապէս, և ըմպելեաց դէմ մասնաւորապէս:

Երբ մտածուի թէ մինչեւ իսկ խարդախեալ կենդանիք կան, այլ ևս պէտք չէ բանի մը զարմանալ: Զի սիրողները գիտեն թէ ի՞նչ ընել հարկ է ձիավաճառաց նենգութեանց դէմ զոր կընեն աչք պատրելու համար:

Գինուոյ և կաթի յատկութիւնը կրնայ ճանչցուիլ իրենց գոյնէն կամ տեսակարար ծանրութենէն:

Մեծաքանակ պարէնի համար այժմ արդարասէր վաճառականք կան՝ որոց կարելի է բոլորովին վստահիլ: Սակայն երբ կարող լինի ոք հմտութեամբ քննել սննդական նիւթ մը, յայնժամ զերծ կը մնայ առողջութիւնը խանգարելու վտանգներէն՝ որք յաճախ կը պատահին խարդախեալ կամ ապականեալ ուտեստէ:

Իսկ համի և փափկութեան համար կարևոր է որոշել լաւ շինուած կողին և պողոց ու բանջարեղինաց պատշաճ հասունութեան հասած լինելն՝ յորում կունենան իրենց բոլոր համեղութիւնը: Այս ծանօթութիւնք վաճառողաց նենգութիւններէն չխաբուելու միջոց կուտան պաշար գնող կամ վրան հսկող անձին:

Աշխարհագրութիւնն ևս մեծ օգուտներ ունի.

քանզի կուսուցանէ թէ ո՞ր երկրէն կելնեն լաւագոյն բերքերը, թէ՛ բնական և թէ՛ արհեստական: Անօգուտ չէ կանխաւ գիտնալ թէ ուստի՞ կելնեն լաւագոյն գինիք, ո՞ր կը գտնուին համեղագոյն ըմպելիք և լաւագոյն կտաւք: Այս ուսումները պիտանի են թէ՛ տնտեսութեան և թէ՛ առողջութեան:

Զ.

Նոյն փորձառութիւնը կստացուի հագուստի մասին: Կարի մեքենայք գործաւորին ձեռաց տեղն անցան: Սուղ և երկայն կը լինէր այնքան հագուստներն ասեղով կարել: Սպառողք աւելի բազմացան, վասն զի ժողովրդեան ամեն կարգին մէջ հագուստը մի և նոյն նիւթերէ կը շինուի: Հարկ է ծանօթութիւն ստանալ թէ գործածուած մեքենայն հաստատուն կերպով կը կարէ՞: Իւր յորինուածութիւնը և գործածութիւնը ճշմարիտ գիտութիւն մի է, և իւր արդիւնքն այսպիսի աշխատութիւն մի կարծէ, վասն զի իւր զաւակաց և աղքատաց համար միանգամայն աշխատելէ աւելի պատուական բան չկայ:

Պէտք չէ կարծել թէ առանց ճարտարութեան և փորձոյ կը յաջողուի ապահովապէս գործածել այս գեղեցիկ և ճարտարաչէն մեքենայն: Այնքան

կատարեալ է այն՝ որ սակաւ ժամանակի մէջ կը կատարէ կարի աշխատութեանց նրբագոյնը և մանրագոյնը, գեղեցկագոյնն ու պարզագոյնը, թեթեւ բանուածքէն մինչեւ ճերմակեղէնի և թանձր կտաւոց ամենէն կանոնաւոր կարերը: Այսպիսի բազմամասն մեքենայ մը լաւ վիճակի մէջ պահելու համար արուեստ և զգուշութիւն պէտք է:

Իմ մանկամարդ աշակերտուհիք տան տիրուհի եղած ժամանակնին պիտի գիտնան թէ բոլոր այս կէտերուն վրայ ընելու ուսումներ և հարցնելու խորհուրդներ կան: Բաւական է ինձ այսօր սեչագրութիւննին զարթուցանել՝ իրենց ցոյց տալով նրուեստին՝ բարեկարգութեան և խնայութեան օգուաները: Լաւ պատրաստուած իմացողութեամբ կատարելապէս պիտի յաջողին ամեն կերպերու մէջէն լաւագոյններն ընտրել՝ և գործածել մանուաւոր վայնա՝ որք աւելի դիւրութեամբ և ապահովապէս կը հասցնեն իրենց նպատակին:

է.

Անգամ մը տունն ընտրելէ, կարասին տեղաւորելէ և պաշարը պատրաստելէ յետոյ՝ աւելի մեծ կարեւորութիւն ունեցող խնդիր մը կայ, որ կը պահանջէ խելամտութիւն և փորձառութիւն, եւ որք ի դերն կեննեն յաճախ: Սպասաւորաց ընտրու-

թեան վրայ կուգեմ խօսիլ, որ յոյժ ծանր խնդիր է, ուր պարտի յայտնուիլ նրբատեսութիւն՝ կորովամտութիւն եւ ամենամեծ շրջահայեցութիւն: Վասն զի ընտրուած կամ արհամարհուած առարկայի մը վրայ չէ խնդիրը, որոյ համար դրամական զոհողութիւն մը տհաճութեանց փոքրագոյնն է: Խնդիրն է՝ ընտանեաց մէջ ընդունիլ օտարներ՝ որք մեծաւ մասամբ ատեցող են իրենց ծառայած տերանց:

Այսօր, ուր ծառայ փոխելն արտասովոր դէպք մը չէ, և համեմատական հաւասարութիւն մը հաստատուած է ամեն կարգաց մէջ, և ծառայք այն սկզբունքն ունին թէ զիրենք պատասպարող՝ սնուցանող և պահպանող տունն իրենց կալուած կը լինի, այն օրն ուր խոհանոցին եւ մառանին գլուխը կանցնին, յայտարարելով թէ ամեն տեսակ ճարտարութիւն ունին զոր շատ սուղ վճարել կուտան և զոր շատ անգամ խիստ նուազ կուենան, ապահով չէ մեր շահերն յանձնել նոցա առանց մեծ հսկողութեան:

Ուստի լաւ է հետեւիլ Իստմաքուսի խրատուն զոր կուտայ իւր կնոջ, բոլոր տան զննութիւնն ընել հասարակ աւուրց անդորրութեան ժամանակ: Պէտք չէ սպասաւորաց դժնեայ դէմքէն վախնալ, որ ատելութեամբ կը նային տիկնոջ՝ երբ դարանները՝ ձգոցները՝ տուփերը կը բանայ, արտաքուստ փայլուն և ի ներքուստ անմաքուր սաները կը դարձնէ:

այս միջոցն անհրաժեշտ է . քանզի ինչպէս Իստամ-
բուս կրսէ պերճութեամբ , ամբողջ ընտանեաց առող-
ջութիւնը՝ կեանքը պղնձեղինաց մաքրութենէն և
անագած լինելէն կախումն ունի :

Ը .

Ո՛րքան և իրաւացի լինին այսօր մեր արտունջքն
ծառայից նկատմամբ , չեմ կարծեր թէ անսոգիւտ
ծառայից թիւն երբէք մեծ եղած լինի :

Նախնեաց մէջ գերիք ընտանեաց խկապէս մէկ
մասը կը համարուէին . բայց այս չէր խափաներ
ծառայութեան յարակից թերութիւններն ու մո-
լութիւնները եւ այն անողորմ ճնշումները զոր
տեսարք կը գործածէին նոցա նկատմամբ :

Շատ կը գովուին նախնի ժամանակաց ծառայք ,
և կը փնտռուին այն օրերն ուր փոքր հասակէն
մտնելով ընտանեաց մէջ , կը կապուէին իրենց
տիրոջ անձին՝ մինչեւ պաշտպանել նորա շահերը ,
և զնա կը թողուին այն ժամանակ միայն՝ երբ կը
ձերանային : Փոխադարձ սիրոյ այս կապերը , որ
կըսուի թէ կային տերանց և ծառայից մէջ , բացա-
ռութիւն էին . վասն զի նոյն ժամանակին մէջ
ուր ցոյց կը արուին զիրենք սիրելի ընող ընտիր
յատկութիւնք , մեծագոյն մասը շատ կը նմանէին

այս աւուր ծառայից . կատակերգութեան նաժիշտք
և ծառայք՝ նոցա լրբութեան և ստախօսութեան
բազմաթիւ օրինակներ կընծայեն մեզ :

Եթէ Մովսէսի քով կը գտնեմք ընտիր Լաֆորէն ,
որում կը կարգար բանաստեղծն իւր գրուածները ,
և եթէ Պուալօ կը գովէ մեզ իւր Անտոն պարտիզ-
պանը , « Յարմարագոյն տիրոջ աշխատասէր ծա-
ռայն » , ըսելով , սակայն կը գտնեմք ամեն տեղ
նուազ յարգելի բնութիւններ , անհաւատարիմ
ծառաներ , նման կապօճիկի ծառային , զորմէ Գլէ-
ման Մարօ կը գանգատէր Ֆրանչիսկոս առաջնոյն
ուղղած նամակին մէջ՝ ըսելով . « Ստախօս՝ որկրա-
մոլ՝ գող՝ հայհոյիչ , թէև աշխարհիս լաւագոյն
մանուկը : »

Սակայն առանց շատ կարեւորութիւն ընծայելու
այն գաղափարին զոր կարելի է գոյացնել նախնի
ծառայից վրայ , բաւական ընելիք ունիմք մերայ-
նոց վերաբերութեամբ և իրենց հետ մեր ունե-
նալիք պատշաճ վարմունքին նկատմամբ : Լաւ է որ
ազջկունք տեղեկանան այն անպատեհութեանց որ
իրենց մարց մտքերը սաստիկ կըբազեցնեն և օր մը
իրենցն ևս պիտի զբաղեցնեն :

Մարդ գոհ կը լինի նուազ գործունեայ ծառա-
ներէ , եթէ գոնէ բարոյական յատկութիւններ
ունենան : Սակայն այս յատկութիւնք ցանցառ են ,
և բոլոր տեսական վարդապետութիւնք , աւա՛ղ ,
անկան այն դժուարութեանց առջեւ որ կը պա-

ասանին այսպիսի ընտրութեան ատեն: Երբեմն ցաւ
 էր յայտնուի ծառայից վիճակին վրայ, ըսելով թէ
 « թշուառ գերիներ են, » ասանց տեսներու թէ
 դերերը փոխուած են, և թէ բնակարանին գերի-
 ները ծառայք չեն, այլ տիրուհիք՝ որ կը չարչա-
 րուին նոցա կամակորութենէն:

թ.

Կարծես թէ մէջերնին դաշնակցութիւն մի կայ
 ևս քան զևս պահանջող լինելու համար: Չեն քա-
 շուիր խիստ տարօրինակ պահանջումներ ընել և
 կարծել թէ իրաւունք ունին ամենէն անկանոն
 վարքն ունենալու:

Իրենց մտած յոսի ճանբուն մէջ կերեւակայեն
 թէ ոչ մէկ տիրոջ կապուելով՝ լաւագոյն վիճակ
 կունենան: Բայց կը սխալին: այս ստէպ փոփոխու-
 թիւնք բնաւ չահաւոր չեն ոչ ումեք: Յաճախ կը
 պատժուին անգթաբար այն նենգութեանց համար
 զոր ի գործ կը դնեն իրենց տերանց հսկողութե-
 նէն խուսափելու համար: նման այն երկու հէք
 սպասուհեաց՝ որ շատ կանուխ արթննալով ազա-
 զաղին ձայնէն՝ խեղճ անասնոյն գլուխը կտրեցին,
 չնախատեսելով թէ իրենց պառաւ տիրուհին աւելի

կանուխ պիտի ելնէր և զիրենք ֆարիբդիսէն Սկիւ-
 րա պիտի նետէր:

Այս վատթար վիճակը կը ծանրանայ վկայագրոց
 դուն ուրեք ճամբարութեան յայտարար լինելէն:
 Գթութեան զգացմամբ յոյժ պատուաւոր ծանո-
 թութիւնք կը արուին երբեմն անշահ անձանց հա-
 մար ի վնաս տերանց: Այս ներողամտութեան կամ
 անհոգութեան պատճառաւ է որ տեարք ենթակայ
 կը լինին խիստ աղետալի սխալմանց: Ծառայից
 ստէպ փոփոխութիւնք վնասակար կը լինին տե-
 րանց. և առաջինք չեն պարտաւոր, այլ վեր-
 ջինքն են որ կը քննադատուին:

ժ.

Բնաւորութեան զօրեղութիւնը՝ հրամայելու
 կորովը համարձակութիւններ են որ միշտ չունե-
 ցուիր. քաջութիւնը կը պակսի պետական հարուա-
 ծի մտածութեան առջեւ. որովհետեւ ծառայ մը
 ճանբելը պետական հարուած մի է: Ապստամբ
 հպատակին իւր բրտութեամբն հանդերձ՝ բաւա-
 կան նրբամտութիւն ունի նշարելու թէ իւր յան-
 դբզնութիւնը զօրութիւն մը կը լինի: Այն միջոցին
 է որ կը շատնան տրտունջք և տհաճութիւնք, որք
 չպիտի երեւէին եթէ տիրուհին անյողգողք կամք

ունենար: Մատակարարք և ծառայք կը զինուին տերանց դէմ, և լաւագոյն վարմունք գտնողները շատ անգամ դարչեի սպերախտութեամբ կը փոխարինեն այն փափուկ ընթացից որոց ենթակայ եղած են:

Ծառայք, սկանատես մեր ներքին կենաց, տերանց կերակրոյն մասնակից՝ ո՛րքան և լինի ուտեստին գինը, վարձք կընդունին որ շարունակ կաւելնայ, տերանց տունը կը բնակին առանց իմանալու թէ տան վարձքը կը բարձրանայ իրենց թոշակին նման, ճերմակեղէններն կը լուացուի՝ և սակայն իրենք կը հրաժարին սակաւ մի աշխատութենէ լուացման ծանր ծախքը նուազցնելու: Մեր տուները կը մտնեն կենն առանց ի նկատ առնելու դրած դաշինքնին: Կը պահանջեն օրինաց պաշտպանութիւնը միմիայն ի նպատտ իրենց, և հագիւ կը ճանաչեն թէ տեսարք ևս իրաւունք ունին իրենց փոխադարձ շահերն օրինաց պաշտպանութեան ներքեւ դնելու:

ԺԱ.

Քանի որ դեռ յատուկ դպրոց չկայ ծառաները կրթելու, իրաց այս վիճակին միայն մէկ դարման կը տեսնեմ. այն է թէ, տիրուհին պարտի միշտ կազմ և պատրաստ գտնուիլ, ամեն բան ընելու

կարող, նախևի կանակն նման քաջութիւն ունենալ տան աշխատութեանց մասնակցելու, չամաչել ասեղ՝ մկրատ՝ արդուկ գործածելու, կերակուր եփելու, և այսպէս ցուցանել վատ և ըմբոստ ծառայից թէ ի հարկին կարող է իրենց չկարօտիլ: Յայնժամ նոքա աւելի զգոյշ պիտի լինին իրենց պարտականութեան մէջ՝ երբ զիմանան թէ տիրուհին կընայ անարժան ծառայ մը ճանրել առանց անպատեհութեան: Նոքա միշտ նեղ ժամանակներ կընտրեն իրենց պահանջողութիւններն առաջարկելու: Այս անամօթութիւնը պէտք է պատժուի: Երբ սպասուհւոյ մը վկայագրին մէջ գրուի թէ իւր տերանց հետ ունեցած դաշինքը կատարած չէ, ոչ ոք պիտի փութայ ընդունիլ զնա, և ինքն անձամբ պիտի գտնուի այն շիտթութեան մէջ՝ ուր դրած էր իւր տէրերը: Նախատես դատարարութիւնը զոր բացատրեցի ժամանակի կիրաւութեան վրայ խօսած միջոցիս, կարող է մեծ ծառայութիւն մատուցանել այն հանդիսական աւուրց մէջ՝ ուր ծառայի մը մեկնիլը տան բոլոր տնտեսութիւնը և ընտանեաց բարեկարգութիւնը կը խանգարէ:

Ծանրաբարոյ և մտացի կինն երբէք անխորհուրդ չհամարուիր այսպիսի դիպաց մէջ: Ամեն ոք վստահ է նմա՝ որոյ ամեն ուրեք ներկայութիւնն ա՛յն ժամերուն ուր պարտի հրամայել և հսկել, կը ցուցանէ իւր իշխանութիւնը և կը յայտնէ իւր ջանքը:

Պնուակթոնի տիկնայքը բարեբախտաբար սակա-
 ւակթիւ են : բացառուութիւն են նոքա որոց վրայ կը
 խնդամք հասարակութիւնն զբօսեցնելու համար
 յօրինուած կատակերգութեանց մէջ, առանց սա-
 կայն պարծելու թէ պիտի ուղղեմք այն ծու-
 թիւններն՝ որոց այլանդակագոյն օրինակները կը
 ներկայացնեն :

Տիրուհւոյն բացակայութիւնն այժմ ամեն ժա-
 մանակէ աւելի վնասակար է : Վասն զի ինչպէս որ
 բարի Լաֆոնթէն ըսած է, « Տիրոջ աչքն ամեն
 աչքէ լաւ կը տեսնէ : »

ԺԲ.

Լաֆոնթէնի տուած Արտուէի եւ իւր ձագուց
 սիրուն առակին մանրամասնութիւնքն ու կտա-
 րեալ բանաստեղծութեամբ աւելցուցած բարոյա-
 կանք՝ պատուական խրատներ են առտնին տնտե-
 սութեան :

Երեքին ազգարարութիւնք մեծ խոհեմութեամբ
 կուղղուին մօրմէն իւր ձագուց . նա ա՛յնքան քաղցր
 և հանճարեղ խանդաղատանօք կը հսկէ մտաւրուտ
 վտանգին վրայ մինչեւ որ ուշ հասուցած ձագերը
 քիչ մը մեծնան, որ ակամայ հաղորդ կը լինիմք իւր
 երկիւղին և տագնապներուն : Բաց յայտմանէ՝ վկա-

յութիւն մի է այն բարութեան որով Աստուած կը
 հսկէ իւր արարածոց վրայ : Տկար կենդանիք բարե-
 բախտաբար զանազան միջոցներ ունին հզօրաց
 դէմ ինքզինքնին պաշտպանելու :

Արտին տէրն ևս կառնու լուրջ դաս մը . կու-
 սանի ոչ բարեկամաց՝ և ոչ ազգականաց վտանջիլ
 այն գործոց մէջ զոր կարէ անձամբ կատարել : Իւր
 որդւոյն և ծառայից հետ հունձքը կընէ, ճանա-
 չելով թէ ուրիշի վտանջելու չէ իւր գործոց համար :

ԺԳ.

Դեռ մի քանի տարի յառաջ՝ փոքր վաճառա-
 կանն իւր գործերն ու տունը միանգամայն կը կա-
 ռավարէր . այսօր ծառաներ ունի որոց շահն ամեն
 վայրկեան յաճախորդաց վնասովը կը լինի : Գնողը
 կը զրկեն տուած վաճառքնուն տեսակին և քանա-
 կին կողմանէ՝ որպէս զի իւրեանց հասոյթն աւել-
 նայ :

Մեջակային ըսուած ընտանեաց մէջ զգեստի մեծ
 պերճութիւն մտած է . կուզուի որ ծառայք մա-
 քուր ու լաւ հագուին : Հագուստի խնամոց այս
 չափազանցութիւնը պատճառ կը լինի ծառայու-
 թեան թերի կատարման և տիրոջ վնասուն : Իրաց
 այս վիճակն ո՛րքան աղէտաբեր է ընտանեաց : Ո՛ր-

քան աշխատութիւն պէտք է իւր արուեստով
 դրամ շահելու, որպէս զի դէմ դրուի տան ծախուց,
 ուր կազմակերպեալ վատնումը միակ միջոցն է ծա-
 ուաները կեցնելու:

Սոքա փոյթ չեն ըներ ոչ ուտեստի գնոյն սղու-
 թեան, ոչ առեւտրոց նուազութեան և ոչ տան
 վարձուց բարձրանալուն: Ածուխն ու փայտը ո՛ր-
 քան շուտ սպառին, պաշարն ա՛յնքան առատ է
 իրենց համար, վասն զի իրենք աւելի ևս կը շահին.
 իրենց շահերն տերանց շահերուն հակառակն են:
 Կը շահին՝ երբ ծախքը մեծ լինի, կը կորուսանեն՝
 երբ սակաւ ու չափով լինի: Խնայութիւնք իրենց
 համար յայտնի կորուստ են. այսպիսի պարագայից
 մէջ ինքզինքնին վնասուած կը համարին:

Բոլոր այս խնդիրք իրաւամբ կը բաղեցնեն տնտե-
 սագէտները: Քաջալերութեամբ և առատ պար-
 դեւօք կը փորձեն վեհանձնական և առաքինական
 զգացումներ գարթուցանել հոգւոց մէջ: Գաղղիա-
 կան ձեմարանն ամեն տարի առաքինութեան մրցա-
 նակներ կը բաժնէ՝ շնորհիւ յարգելի Մոնթիոնի
 առատաձեռնութեան: Բերկրութեամբ կը շնորհէ
 մրցանակ այն ծառայից՝ որ իրեն կը ծանուցուին
 թէ բացառիկ կերպիւ կատարած են իրենց պարտա-
 կանութիւնները: Որոց մէջ կան ոմանք որ իրենց
 տերանց բարերարքն եղած են: Չափազանց գոհ
 պիտի լինէի՝ եթէ կարենայի աւելի մխիթարական
 պատկեր մը յառաջ բերել այն ցաւալի տեսարանին

դէմ զոր ստիպուեցայ նկարագրել մատաղերամ
 աշակերտուհեաց:

ԺԴ.

Իրեն պատահած դժուարութեանց մէջ օգնա-
 կան չունեցող տիրուհին ի՞նչ միջոց կարէ գործա-
 ծել իւր շահերը պաշտպանելու և բարեկարգու-
 թիւն ու տնտեսութիւն պահելու համար՝ որոց
 դէմ կը դաւադրեն իւր ծառայք:

Ընտրողութիւն՝ արդարութիւն՝ խոհեմութիւն՝
 հանդարտութիւն՝ ազդուութիւն՝ անընդհատ գոր-
 ծունէութիւն, ահա այսոքիկ են այն յատկութիւնք
 զոր պարտի ունենալ՝ ընելու համար այս ներքին
 կառավարութիւնն՝ որ բոլորովին իւր հսկողութեան
 ներքեւ է: Գիտեմ որ յաճախ կը յեղյեղուի այն
 առածը թէ բարի տեսքք ծառաները բարի կընեն,
 — ինչպէս տէր, այնպէս ծառայ: Կրնայ մինչեւ
 մէկ աստիճան ճշմարիտ լինել այս՝ երբ ծառայն
 լինի լաւ ընտրուած՝ տակաւին երիտասարդ՝ ծա-
 նօթ և պարկեշտ ընտանիքէ, որոց սիրտը կարելի
 է շահիլ այնպիսի խնամօք և նկատողութեամբ որ
 հարկաւ երախտագէտ կընեն զնա: Բայց ի՞նչպէս
 հնար է հաստատել այս դրութիւնն այն բազմա-
 թիւ ծառայից մէջ, որք արդէն առաւել կամ

նուազ ժամանակ անցուցած են քան տան մէջ՝ առանց տեղ մը հաստատ մնալու, և ապականեալ են հաղորդակցութեամբ մտի և յուր անձանց, որովք լի են մեծ քաղաքք:

Վերջին դարուս հռչակաւոր փիլիսոփայ մը հրապուրիչ նկարագրութիւնը կընէ բաղդաւոր ընտանիքի մը; որ շրջապատեալ է խնամօք ընտրուած և ընդունուած ծառայիւք, որք միշտ նոյն տերանց ծառայած էին:

Ներկայ կենաց իրականութիւնք քիչ նմանութիւն ունին այս պատկերաց՝ զոր կը գծէ պատրեալ երեւակայութիւն մը:

ԺԵ.

Ի՛նչ որ ալ լինին ծառայութեան վիճակին անբաժան թերութիւնք, մինչեւ իսկ այն մարդոց որ ի հարկէ դատապարտեալ են իրենց նմանեաց ծառայելու, ի՛նչ զգուշութիւն ալ ընելու իրաւունք ունենան ինքզինքնին ապահովելու համար դժկամակութեան և անկախութեան ոգւոյն անպատեհութեանց դէմ՝ որ ևս քան զևս ընդհանրացած է, նկատողութիւն մը կայ որ պարտի վերադասիլ բոլոր միւսներէն և կանոն լինել տիրոջ վարմունքին:

Այն ժամանակին մէջ ուր անգութ տեարք իրենց անձնահաճութեան համեմատ կամայական վայրագութեամբ կը վարուէին այն դժբաղդներուն հետ զոր պատերազմին բաղդը գերի ըրած էր, հռովմայեցի փիլիսոփայ մը կը գոչէր մարդասիրական ձայնով մը. « Այս դժբախտները, այս գերիները, մա՛րդ են, եղբայր են: »

Մարդկային խղճին աղաղակն էր այս՝ որ վերջապէս կը զարթնուր այն աւուր նախորդ օրն՝ ուր Աւետարանը պիտի հռչակէր բոլոր մարդկան հաւասարութիւնն առաջի Աստուծոյ:

Այս ճշմարտութիւնը քրիստոնեայ հոգւոց մէջ միշտ ներկայ լինելէ չկրնար դադրիլ:

Հրամայել միայն ինչ որ արդար է, ծառայից կարողութենէն վեր բան չպահանջել, հետերէին քաղցրութեամբ վարուիլ, թերութիւննին ուղղել առանց բարկութեան, հրամայել առանց խստութեան. ահա այսպէս են տերանց գլխաւոր և անհրաժեշտ պարտականութիւնքք: Կարելի է նաև նոցա վստահութիւնը գրաւել խնամք ցուցանելով, ներկայ վիճակնուն վրայ հոգ տանելով, և, ի հարկին, նոցա ապագային համար խրատներ տալով, նուազ բարկութիւն ցուցանելով նոցա թերութեանց վրայ՝ քան փափաք՝ զիրենք ուղղելու:

Քաղցրութեամբ վարուիմք անոնց հետ առանց ընտանութեան, հաճոյակատար լինիմք առանց թուրութեան, հաստատամիտ՝ առանց հպարտու-

թեան: Թող միշտ առաջնորդէ մեզ բանավարու-
 թիւնը, և ոչ երբէք քմահաճութիւնը: Արդարեւ
 դիւրին չէ այս. կը պահանջէ մեծ հանճար և հզօր
 անձնիշխանութիւն. սակայն կուզէի որ հրամայողք
 կարենային աչքերնին միշտ սեւեռեալ ունենալ
 տերանց այս գաղափարականին վրայ, մինչեւ խի
 եթէ միայն անոր մի փոքր մասը կարենային իրա-
 գործել:

Բաց յայտմանէ՝ գիտնալու է թէ թուած բոլոր
 յատկութիւններս միահաղոյն ունենալով հանդերձ,
 յաճախ պիտի տեսնեն թէ՛ իրենց ձգունք ընդ-
 ունայն պիտի լինին բնաւորութեանց ոմանց առջև,
 զոր լուսագոյն վարմունք կարող չեն ամօքել: Սա-
 կայն ձեռք բերուած արդեանց վրայ չէ որ մարդ-
 կային առաքինութիւնք պարտին գնահատիլ, այլ
 « Բարիք գործէ, ինչ կուզէ թող լինի, » պա-
 տուէրը կարէ քաջ պատշաճիլ աստանոր:



Գ Ա Ս Զ.

Հաննար ընտանեաց մէջ: — Հարբ եւ նրդիբ: — Մասաղափ
 աղջիկն ընտանեաց այլեւայլ անդամոց յարաբերութեան մէջ:
 — Կիճն ամուսնութեան մէջ: — Դասխարակունի մայր:

Ա.

Ընտանիք անունն արտասանուած ժամանակ՝
 կը զարթնուն երջանկութեան և ուրախութեան
 ամենէն անխառն զգացմունք զոր կարելի է զգալ
 մարդկան: Այդ անունը կը յիշեցնէ հայրական
 իշխանութեան զուգընթաց պարտականութիւն-
 ները, գորով և երախտագիտութիւն առ հեղինակս
 կենաց իւրեանց. երբեմն կուտայ նաև այն ծեր
 ծառայից գաղափարը որ ներկայ եղած են մի քանի
 սերնդոց կենաց կամ մահու սրտայոյզ տեսարանին:

Ուր որ ընտանիք չկայ կամ թերակատար ձեւ
 մը միայն ունի, ճնշման՝ գերութեան և վայրենի
 ու կոշտ բարուց տխուր տեսարան մը կը ներկա-
 յանայ աչաց: Անդ՝ տկարագոյն սեուր ծանր վաս-

տակոց դատապարտեալ է: Բայց երբ ընտանիքն իւր բնական հիմանց վրայ կը հաստատուի, իրեն հետ կը բերէ զգացումներն ու բարքերը, և աստնին կենաց օրինակին վրայ ընդ հուպ կը ձեւանան իրեն նման ընկերութիւնք:

Եթէ ընտանիքը բարօրութեան աղբիւրն է, ունի նաև իւր նեղութիւններն ու վիշտերը. իրմէ ծնած առաքինութիւնք փորձութենէ ազատ չեն, և ընտանիքը կազմող զանազան անդամք իրարու դէմ պարտքեր ու պարտաւորութիւններ ունին, որոց կատարումն երջանկութեան և բարօրութեան էական պայմանն է: Բնութիւնը ճշգրտօրէն չափն և կնոջ՝ ծնողաց և զաւակաց առնչութիւնները, ուստի և միշտ վնասակար է դերերը փոխել, պատշաճութիւնը մոռանալ կամ պարտաւորութիւնները զանց առնել:

Բ.

Պ. է. Լըկուվէ՝ իւր Հայր եւ որդիք անուանեալ գրքին առաջին գլխոյն մէջ ըսած է. « Այս դարուս՝ ուր ամեն բան կը նորոգի, նոր ընկերութեան մէջ չեմ տեսած աւելի կարեւոր փոխակերպութիւնք քան զայն՝ որ կը վերաբերի հարց և որդւոց ստրնչութեանց: Տղայք այսօր ընտանեաց մէջ շատ աւե-

լի տեղ կը բռնեն. ծնողք աւելի անոնց հետ կապրին, աւելի կըրազին նոցա դաստիարակութեան, աւելի կը խորհին նոցա բարօրութեան վրայ. աւելի ուշադրութիւն կընեն նոցա կարծեաց: Մանկունք տան գլխաւոր անձինքն եղած են, որ հանձարեղ մարդու մը « Պարոն մանկուսի » ըսել տուած է: Ես կարծեմ թէ ընտանիքը, ինչպէս նաև մարդկային ընկերութիւնը, միտում ունի այսօր բարձր՝ բարոյական և մարդուն արժանեացն ու Աստուծոյ կամաց համաձայն նպատակի մը: Բայց ամեն յառաջադիմութիւն խառնակութեամբ և զեղծմամբ կնկսի:

« Ընտանեկան վեհաց այս փոփոխութենէն յառաջ եկած են երկու նոր սովորութիւնք. մին այն է՝ որ տղայք իւրեանց ծնողաց հետ ընկերաբար կը խօսակցին, միւսն է՝ որ ծնողք սգոյ զգեստ կը հագնին իւրեանց որդւոց մահուան ժամանակ: Սերնդական ոգւոյն յաջորդած է ընտանեկան ոգին: Սերնդական ոգին ընտանեկան կապ՝ քաղաքական զգացում մի է. ընտանեկան ոգին արեան կապ՝ բնական զգացում մի է: Սերնդեան ոգին անդրանկութեան իրաւունքն հիմնեց, մինչդեռ ընտանեկան ոգին զայն ջնջեց՝ ժառանգութեան բաժանումն հաւասար ընկելով բոլոր զաւակաց մէջ: »

Գ.

Այս գաղափարաց արտայայտութիւնն ոմանց սոսկումս պատճառեց: Կարծեցին թէ հայրական իշխանութեան սկզբանց ծանր հարուած մը կը արուի, ընտանեաց մէջ անիշխանութիւն կը ծնանի, տան մէջ ապստամբութիւն կը ծագի, կը կործանին ընտանի դէք, վաղեմի տան այն նուիրական հիւրք, որ արգոյ ներկայացուցիչք էին անդորրութեան և գլխաւորին կամաց հնազանդութեան:

Առանց զարհուրելու այս կէտին վրայ, պէտք չէ սակայն ի քուն լինել խաբուսիկ ապահովութեան մէջ: Այսու ամենայնիւ, եթէ չարիքը կայ, բաւական չէ անոր վրայ ցաւիլ. կարեւոր է դարմանը փնտռել. և նախ ներելի է քննել թէ իրաց եպերեալ վիճակը չունի՞ նաև աղէկութիւն. և թէ, ինչպէս ստէպ կը պատահի, Նախախնամութիւնն ախտին քով դրած չէ՞ նաև դարմանը:

Ինչ որ կը սիրեմ տեսնել անդ, այն է թէ՛ ներողամտութեան և գորովոյ չափազանցութիւնը, որ մեր Ժամանակի ընտանեաց ամենէն սովորական բնաւորութիւնը լինել կը թուի, ծնողաց նոր իրաւունքներ կուտայ որդւոց յարգանաց և երախտագիտութեան:

Արդարեւ՝ որդիք այսօր ականատես են այն բոլոր նեղութեանց՝ անձկութեանց և զոհողութեանց զոր ծնողք կը կրեն նոցա դաստիարակութեան համար: Չափահասք ներկայ կը գտնուին ներքին անցից՝ որոց ստէպ կը մասնակցին, և այլ ևս անգէտ չեն իրենց արուած հրահանգութեան արժէքին: Երիտասարդը կը լսէ խօսուիլն այն զոհողութեանց վրայ զոր ծնողք կընեն զինքը բարձրագոյն վարժարաններ դնելու համար: Գիտէ թէ բարձր ուսումներն իրեն փայլուն ապագայ պիտի պատրաստեն: Իւր ընտանեաց մէջ իրեն համար ամբարշտաճութիւն և փառք չէ որ կերածքեն, այլ իմաստուն և գորովալից նախատեսութեամբ կուզեն իրեն ապահովել հարստութիւն և անդորրութիւն:

Գալով աղջկան, որոյ իմացականութիւնը մշակեցին, ինքը գիտէ թէ ինչպէս հաւաքուեցաւ այն օժիտը՝ որ յոյժ պիտանի կը կարծուի և որ շատ անգամ դառն զգջման կամ ցաւալի բաժանմանց առիթ կը լինի:

Գ.

Գորովալիւր անձնանուիրութեամբ կատարուած այնքան զոհողութիւնք անհուն շնորհապարտութիւն կը դնեն որդւոց վրայ, որոց պարտականու-

Թիւնք մեծցան ճիշդ անոր համար որ ծնողք ինք-
զինքնին դատապարտեցին մեծամեծ զրկանաց՝
որպէս զի նոցա սպագայն ապահովեն :

Առաջ, երբ ընտանեաց վրայ խօսուէր, հասա-
րակօրէն կենթադրուէր դժբախտ մը՝ ուր ժողովեալ
կը գտնուէին մի քանի սերունդ և տանը մէջ ծե-
րացած բազմաթիւ ծառայք : Ամեն իշխանութիւն
ընտանեաց մեծին ձեռքն էր, ինչ որ ալ լինէր
միւս տղայոց հասակն ու թիւը : Կարողութիւնը
կալուածին կապուած էր : Հարց իշխանութիւնն
ամբողջապէս չէր հանգչէր որդւոց սիրոյն և երախ-
տապարտութեան վրայ . քանզի որդիք հեռի կը
պահուէին շատ անգամ . և նոցա առաջին տարի-
ները մարց աչացն առջեւ չէին անցնէր :

Գայեակը կը սնուցանէին և կը խնամէին նորա-
ծինները, դաստիարակք և դաստիարակուհիք կը
կառավարէին տղայքն իրենց պատանեկութեան
ժամանակ, և աղջկունք վանքերու մէջ կը պա-
տապարուէին, ուրիշ կը հանուէին միայն ամուս-
նութեան համար և ուրիշ ընտանիքի մէջ տանելու
այն գորովանաց գանձերը՝ զոր իրենց ծնողաց
նուիրելու ժամանակ չէին ունեցեր : Այս պայմանաց
մէջ՝ յարգանաց նշաններ կը պահանջէին անոնցմէ
ծնողք, որք աւելի կարեւորութիւն կուտային ար-
տաքին ցոյցերու քան խորարմատ սիրոյ :

Ե .

Այժմեան ընտանեաց թոյլտուութիւնը նախ-
նեաց խիստ վարուց հետ բազդատելով՝ ներկայ
ընկերութիւնը դատապարտողներ եղան . կարծե-
ցին թէ այժմ մեծ ստորնութիւն կայ նախնեաց
համեմատութեամբ : Այս ստորնութիւնը կարէ միայն
առերեւոյթ լինել : Եթէ արտաքին ձեւը բան մը
կորուսած է, սակայն իրօք մեծ բարւոքումն կայ
այն ընտանեաց համար՝ ուր աւելի մտերմութիւն
և վստահութիւն կը տիրէ : Որդւոց և ծնողաց մէջ՝
յարգանաց կամ մանաւանդ երկիւղին կանգնած
պատնէչներուն անկումն ոչ միայն յառաջ բերաւ
այն ընտանութիւնն որ կարէ ի սկզբան անպատեհ
թուիլ, այլ և նոր առաքինութիւններ աճեցուց .
ճշմարիտ սէր և աւելի մեծ համերաշխութիւն բոլոր
անդամոց մէջ :

Պէտք է խոստովանիլ թէ հայրը և մայրն ան-
դադար մերձ գտնուելով իւրեանց զաւակաց, զիրար
լաւ և ս նկատելու ստիպուած են : Եւ այս վիճակէն
կը ծնանին ընտանեկան առաքինութիւնք որ ան-
ծանօթ էին ութ-ևտասներորդ դարու ընտանեաց
մեծագոյն մասին :

Առանց սքանչացման չէ որ կը նշմարեմք թէ
կը պահուին վայելչութիւնք, արժանապատուու-

Թիւն, յարգանք անձին, ամեն ինչ իրաւանց են-
 Թարկելու հարկ, մեծ և սէր պարտականութեան,
 որ կերպով մը անհրաժեշտ եղած է հօր եւ մօր
 համար՝ որդւոց ամենօրեայ խելամուտութեամբը՝
 որոց համար այլ ևս ծածուկ բան չկայ:

Ծնողք նոցա բարեկամքն եղած են: Եւ սակայն
 այս ամենախորին փոփոխութեամբ իւրեանց պար-
 տականութիւնքը նուազած չեն. այլ՝ կը կրկնեմ
 Թէ, աւելի սերա՝ աւելի անաչառ՝ և ըսենք՝ ա-
 ւելի նուիրական եղած են: Իւրեանց կեանքն աչ-
 խատութեամբ անցուցած լինելով, գործոց հոգեւոր
 կրելով, և վատակնին իւրեանց զաւակաց կրթու-
 Թեանը նուիրելով, ի հարկէ արդար փոխարինու-
 Թիւն կսպասեն անոնցմէ:

2.

Իրաւունքներ ունին իւրեանց խնամօք կատա-
 րելագործեալ այս հանձարին վրայ: Աղջիկը, որոց
 դատտխարակութիւնն աւարտած է, տան նեցուկն
 և ուրախութիւնը կը լինի: Ամեն ինչ կողեւորի
 իւր ներկայութեամբ: Բոլորովին մասնաւոր հո-
 գատարութեան առարկայ է մեծ մայրը զոր ժա-
 մանակը ծերացուցած է, և որ սորա վրայ կը գտնէ
 իւր անցեալ գեղեցկութեան յատկութիւնները:

Իւր տկարութիւնքն ո՛րքան աւելնան, ա՛յնքան
 աւելի պէտք կունենայ գորովական խնամոց: Եթէ
 իւր աչքերը տկարացած են՝ լաւ ընթերցուած մը
 զինքը կը հրճուեցնէ: Եթէ ուժեղ և գործունեայ
 մնացած է, արուեստք կը զուարթացնեն զնա.
 Եթէ կը սիրէ պատմել, ինչպէս ամեն ծերք որ ճոխ
 են անցեալ իրաց տեղեկութեամբ, իւր թուանց
 ուշադրութիւնը եւ յարգանքը հաճութեամբ կը
 ժպտեցնեն զնա: Մեծ մօրն զգեստաւորութեան
 խնամք տանելով՝ աղջիկ թուին ճաշակն ու ճար-
 տարութիւնն ալ կը կրթուին՝ եթէ ինքն յօժա-
 րամիտ է նմա օգտակար և հաճոյ լինելու:

Կան նաև հօրեղբարք և մօրաքորք՝ որոց համար
 այս բոլոր ուշադրութիւնք անտարբեր չեն: Միայն
 տան մէջ պէտք չէ ցոյց տալ այս ամեն բանի ու-
 շաղիր խելամուտութիւնը: Ընտանիքները միշտ մէկ
 տան մէջ ամիոփեալ չեն լինիր: Բարեկիրթ աղ-
 ջիկն, իւր նախահարց և նախամարց հաճոյանալու
 փափաքով լինելով, սրտին մէջ ուրախութիւն
 կզգայ նոցա ցոյց տալով իւր բոլոր շնորհքներն
 զորս երիտասարդութիւնը պարտի շոայլել չափա-
 հասից և ծերոց համար:

Արդէն ուրիշ շատ առաքիներութիւններ ևս պիտի
 ունենայ գործադրելու: Եթէ մատաղատի՝ գեղեցիկ
 և հարուստ ազգականաց պատահի, նոցա հարստու-
 Թեան և գեղեցկութեան չպիտի զջարի. պիտի սքան-
 չանայ առանց նախանձելու այն հարստութեանց

վրայ զոր ինք չունի, և իւր վիճակէն դո՛ւ պիտի լինի: Չպիտի ջանայ խոյս տալ այն շքեղ խնջոյքներէն ուր կրնայ ինքն հրաւիրուիլ, և պիտի գիտնայ իւր աստիճանին մէջ կենալ անդ: Իսկ ընդ հակառակն, եթէ ինքն ընտանեաց միւս անդամներէն հարուստ է, պարտի միշտ այնպիսի պարզութեամբ փայլիլ՝ որ ոչ ոք վերաւորի. շքեղադարդ պճնումներէ պիտի զգուշանայ: Պանծանօք չպիտի արտասանէ այն բարձրաստիճան անձանց անունները զորս իւր տունը կընդունի կամ ինքն նոցա տուները կընդունուի: Պիտի գիտնայ իւր մտերմական յարաբերութեանց մէջ դատողութիւն՝ խոհեմութիւն և զգուշութիւն երեւցնել:

Շատ խնաստութիւն և հանճար պէտք է ընտանեբար խօսակցութիւնն արձակ համարձակութենէ որոշելու: Մինչեւ իսկ արենակցաց մէջ հարկ է չսխալիլ այս փափուկ և նուրբ զանազանութեանց մասին. անհամաձայնութիւնն ամենաթեթեւ երեւցած պատճառներէ կը ծագի բազում անգամ:

է.

Աղջիկը չէ կարող տեսնել իւր մօրն աշխատակց և դժուարին կեանքն առանց անոր մասնակցելու: Եթէ վատասիրտ չէ, չկարէ բոլորովին նմա

թողուլ տան և ընտանեաց խնամքը, այլ կը մասնակցի ըստ իւր կարեաց: Կանխաւ կը կատարէ նորա փափաքներն ու պէտքերը: Եթէ առողջութիւնն անհաստատ է՝ կօզնէ նմա տան հրամատարութեան մասին:

Միայն միջակային տանց մէջ չէ որ իւր ծառայութիւնքն անհրաժեշտ են: Հարուստ և ճոխ վիճակի մէջ եւս նոյն պարտականութիւնք կան աղջկան վրայ: Ծառայք այսօր զաւակաց և ծնողաց մէջ միջնորդ չեն այլևս: Ինքն է տան վերակացուն և եղբարց ու քերց դաստիարակուհին: Ընթերցման առաջին դասերը կուտայ նոցա, կուսուցանէ հնագանդութիւն և քաղաքավարութիւն. արդէն մայրութեան վարժութիւն կընէ: Պաճուճապատանքն իւր առաջին աշակերտն եղած էր, այժմ առաւել յանկուցիչներ կը գտնէ: Ուրեմն բնականաբար կառաջնորդուի ընտանեկան կենաց այն գիտութեան, որ իրեն համար դաստիարակութեան բարձրագոյն նպատակ պէտք է լինի: Իւր բոլոր հմտութիւնքն այսպէս փորձած կըլլայ փոքրագունից վրայ՝ իւր մօրը զօրութեանը նպաստելով և զայն պահպանելով:

Մայրական օրինակը պատրաստած պիտի լինի զնա այն պաշտաման զոր ինքն յետոյ պիտի կատարէ իւր տան մէջ: Այն անձնանուէր մօր քով ուսած պիտի լինի իւր գիտութեան մէջ համեստ լինել, և հլու իւր ամուսնոյն:

Այն ժամանակ է որ մայրն ունեցած կը լինի հեզ և հնազանդ աղջիկ մը որ մեղմութեամբ կը խօսի ծառայից հետ, զգուշութեամբ կը կենցաղավարի ծնողաց և բարեկամաց հետ, իւր ճաշակաց մէջ սարգ կը լինի, և առանց սարժանաց՝ եթէ պիտի հարստանայ, և աշխատութեան վարժ՝ եթէ միջակային վիճակ ունենայ:

Ճարտար եղած է արդէն փոքր եղբօրն ուսուցանելու իւր շեղուին առաջին պարբերը, վարժեցնելով զնա գործածած բառերն որոչ և ուղիղ արտասանելու, խոհեմութեամբ զգուշացնելով այն կրճատումներէն զոր յետոյ պէտք է ուղղել: Ինքն է որ կրկնել կուտայ մօրն ուսուցած աղօթքները: Կը հասկնայ մատաղ հասակին պահանջած խնամքը և զգուշութիւնները: Կը տեսնէ որ իւր մայրը տղուն կուտայ թեթեւ կերակուրներ՝ հետեւելով բնութեան ազդարարութեանց. քանզի մանկան ակուաները կը բուսնին ա՛յն ժամանակ միայն՝ երբ պարտի գործածել: Կը գիտէ այն զգուշութիւնները զոր հարկ է բնել՝ զնա միշտ հաւասար ջերմութեան մէջ պահելու համար, առանց բեռնաւորելու խեղճ արարածը թանձր զգեստներով՝ որք մտելու պատճառ կուտան երբ հարկ լինի հանել ազատ շարժելու համար: Կօզնէ նորա առաջին քայլափոխներուն՝ որ այնքան խանդաղատանք կը պատճառեն մարց: Յոյժ սխրալի է փոքր մանկան ձեմելն շարուած անթուոց շուրջը: Ո՛րպիսի գոռո-

զութեամբ՝ ժպտելով՝ հնար եղածին չափ աւելի տեղ երթալու համար ինքզինքը բռնելով կը նայի իւր մօրն ու քրոջը՝ որ հանդիսատես են իւր յաղթանակին:

Գիտէ նաև թէ՛ երբ տղուն չորուիր լալով ուզածը՝ կուտանի հնազանդիւ առանց բարկանալու, և թէ բարկութիւն համարելու չէ այն արտասուքը որ ցաւէ յառաջ կուգայ: Կը տեսնէ թէ՛ փոքր տղայք և աղջկունք միեւնոյն կերպով կը հագուին և կը կրթուին մինչև եօթն տարեկան հասակին: Ասպ կը մտնէ իրենց մէջ մեծ տարբերութիւն մը: Մանչն ու աղջիկն այլ ևս ի միասին չեն աղօթեր. եղբայրը լատիններէն կուտանի. իրեն համար կարեւոր ուսումները պիտի սկսին. խիստ կանոնապահութիւն պիտի ունենայ իւր աշխատութեան մէջ: Իսկ փոքր աղջիկն, ընդհակառակն, կը շարունակէ իւր մօր թեւին տակ ապրիլ ու աշխատիլ:

Պէտք է որ մեծնայ և կաղուրի: Արդէն գիտէ կարգալ, երաժշտութեան կսկսի, քիչ մը կարել կը սորվի, ձեռքը տան իրաց կը գործածէ ամեն բանի դպչելով առանց կտորելու, ծանօթանալով սեղանը ձեւաւոր. յարդարելու և ձերմակեղէնի ու հողուտտի վերաբերեալ իրերը կարգադրելու:

Գիտէ թէ՛ փոքր աղջիկ մը մեծաքսեաց համոտկաւոր շրջազգեստ չզգենուր տիկնանց նման, և ոչ ծաղկազարդ ու փետրազարդ գլխարկ կը դնէ:

սրահի մէջ չխօսիր հիւրոց առջեւ, ժամն ու թիւն կը պառկի և նուազահանդէսի՝ նա մանաւանդ պարահանդէսի չերթար: Քաղաքավար լինելու համար կը սորվի խոնարհութիւն ընել, իւր պաճուճապատանքին և իւր բարեկամուհեաց հետ խօսիլ, խեղօք և հանդարտ կենալ, և չլալ երբ մայրն առանց իրեն դուրս ելնել ուզէ:

Իւր եղբայրն անշուշտ ձեմարան պիտի մտնէ տասն և մէկ տարեկան եղած ժամանակ, եթէ աւելի կանուխ մտնէ՝ խեղճ կը լինի, և եթէ ուշ մնայ՝ այնպիսի բարի քոյրերէ և պատուական ծնողներէ բաժնուելու դժուարութիւն կը կրէ:

Այն ժամանակ է որ քոյրը խնամք կը տանի իւր գրին՝ ուղղագրութեան և շարագրութեան, որպէս զի նամակ գրէ սիրելի փոքր տարագրելոյն՝ իմացնելու համար թէ հայրական տան մէջ մուցած չեն զնա, և իրեն վրայ յաճախ կը խօսին, մինչդեռ ինքը բոլոր սրտով կաշխատի նշանաւոր մարդ լինելու:

Ը.

Փոքրիկ աղջկան ուսումն յուշիկ կը յառաջանայ. վասն զի շատ բան ունի ուսանելու: Գիտէ թէ ճանրորդութիւն կընեն զբօսելու և հարստանալու

համար: Բաւական պատմութիւններ կարդացած լինելով՝ տեղեկացած է թէ երկրիս վրայ շատ ժողովուրդք և բազմաթիւ լեզուք կան, որովհետեւ իւր մեծ քոյրն անգղիերէն ու գերմաներէն կուսուցանէ իրեն: Աշխարհագրութեան մէջ տեսած է թէ ամեն երկիր ջերմ չլինիր և ամենքը միևնոյն պտուղներն ու ծաղիկները չեն հասցներ, մեծամեծ գետեր և ձիւնապատ բարձր լեռինք կան, ուրիշներ՝ որ աղամանդ ու նաև ոսկի կը պարունակեն. և թէ ամեն երկրի մէջ միևնոյն զգեստը չեն զգենուր. ժողովուրդներ կան որ գրեթէ մերկ են. անասուններ կան որ կուտուն, այլք՝ որ վանդակի մէջ կը դրուին, վասն զի կերգեն և կը խօսին, կամ հազուադիւրս ու գեղեցիկ են:

Բոլոր այս ուսմունք մի քանի տարի կը տևեն: Մարմնամարդութեան կրթութիւնք իւր մարմնաւոր զարգացման կը նպաստեն, և տասնևչորս կամ տասնևհինգ տարեկան հասակին մէջ, արդէն վարժ լինելով կարդալու՝ ամեն բանի վրայ խորհելու՝ իւր ընթերցմանց մէջ հետաքրքրութիւնը գոհացնող և իւր մանկական կենաց յարմարող ամեն ինչ իրեն սեպհականելու, հասած է ժամանակն ուր կատարեալ՝ յօրինաւոր և ընդարձակ ուսում մը՝ այս առաջին դաստիարակութիւնը պիտի լրացնէ:

Այսպէս կը տեսնեմք հաստատուն յատկութեանց, իմաստութեան՝ չափաւորութեան և կանոնաւորութեան այս փոխանցման կատարուիլը,

որք կը կազմակերպեն այժմեան ընտանիքն՝ որ հիմնեալ է ճշմարիտ երջանկութիւն յառաջ բերող առտնին առաքինութեանց վրայ :

Չե՞մ ճանաչեր աւելի գորովաշարժ տեսարան քան զայն՝ որ մայր և դուստր միւսնոյն կերպիւ կապրին, կարծես թէ մէկ սիրտ և մէկ հոգի կը կրեն, և մին միւսին համար գաղտնիք չունի :

Եթէ մայրն երջանիկ լինի, իւր ուրախութիւնները կը կրկնապատկէ՝ աղջիկն ևս հաղորդ ընելով այնոցիկ : Եթէ վիշտ ունենայ, յարտաքուստ կաժի ներքուստ, կը մխիթարուի աղջկանէն որ կը հասկընայ և կը մնասնակցի : Իւր սրտին բոլոր գաղտնիքն՝ իբր բարեկամուհւոյ՝ մօրն յայտնելու կանխաւ վարժուիլը՝ դաստիարակութեան գործն աւելի պարզ և գիւրադոյն կընէ : Այդ վստահութիւնը մատաղ երեւակայութեան սխալմանց առաջը կառնու :

Աղջկան իւր հօրը հետ ունեցած սիրալիր յարաբերութիւնք ոչ նուազ սրտաշարժ և ոչ նուազ ուշադրութեան արժանի են : Յանիրաւի չէ որ շատ հայրեր մասնաւոր սէր կունենան իւրեանց աղջկանց վրայ . փափուկ խնամք՝ մանկական սիրուն և անձնանուէր կանխայօժարութիւնք միշտ երջանկութիւն՝ մխիթարութիւն են յուզեալ կենաց և յամառ աշխատութեանց մէջ : Օրուան մէկ մասն իւր տանէն հեռի մնալով, երբէք աւելի ուրախ չգառնար ի տուն՝ քան երբ գիտէ թէ իւր աղջկան շնոր-

հալի գգուանքները պիտի գտնէ անդ : Նորա գուարթութիւնը և թարմ ու մատաղ հանճարը կը ցրուեն դործունեայ կենաց կցորդ հոգերն ու մտածութիւնները : Նորա նուագածութիւնը և երկինազան խօսակցութիւնքը՝ որ բարձրագոյն դաստիարակութեան ճարտար արդիւնքն են՝ իւր հանգստեան ժամուց վրայ անհուն հաճոյք կը սփռեն :

Սոնարհագոյն վիճակի մէջ մխիթարութիւնք նոյն են . անդանօր եւս նուազ կարեւորութիւն չունի աղջկան դերը :

Գիտունք ոմանք խանդաղատական վաստակակցութիւն գտան իւրեանց աղջիկներէն, և վաճառականք՝ հանճարեղ գործակցութիւն : Հուշակաւորն Գիւլիէի դուստրը մեծ հրապոյրք և մեծ յօժարութիւն ծաւալեց անխոնջ աշխատաւորին կեցութեան վրայ, որ ինքզինքն անդադար տուած էր հաշուոց և մտածմանց՝ որք իւր ընդարձակ հանճարը բոլորովին կը գրաւէին : Իւր աղջկան գուարթ և մտացի խօսակցութիւնը միայն կարող էր կորզել զինքն այն գննութենէն յորում պէտք ունէր զբօսանաց և հանգստեան :

Այս մտերիմ յարաբերութիւնքն են որ ուրախութիւնն ու երջանկութիւնը կարծարձեն ընտանիքի մը անդամոց մէջ : Մտաց ձիւրքերով և սրտի զգայնութեամբ ճոխացեալ աղջկան մը ներկայութիւնն յոյժ նպաստաւոր է նոցա :

Եթէ ինքը մօրը պարծանքն է, և իւր որդիա-

կան հեղութիւնն հօրը սիրտը կը զուարթացնէ , կարող է նաև իւր եղբօրը բարեկամուհի և օգտակար խորհրդական լինել : Տղայք ո՛րքան առաւել կապուին իւրեանց ծնողաց , ա՛յնքան առաւել կը սիրեն զիրեարս : Յարգանաց և սիրոյ զգացմամբ միաբանելով նոցա համար որ իւրեանց մանկութեան խնամք տարած են , տարուէ տարի եղբայրական մտերմութեան կապերն աւելի կը սեղմուին իրենց մէջ , որ ընտանիքի մը համար ամենամեծ երանութեանց մին է : Երկու քոյր իրարու միացնող խանդակաթ սիրոյ տեսարանին մէջ չզիտեմ ո՛րպիսի ինչ կայ մասնաւորապէս սրտաշարժ :

Եղբարց մէջ բարեկամութիւնք աւելի ազմկալից են և երբեմն նուազ հաղորդական , և նուազ վայելուչ ձեւեր կառնուն . բայց երբ հիմնուին միևնոյն պարտականութեանց անընդհատ կատարման վրայ , անայլայլակ և խորին կը լինին :

Թ .

Ընտանիքն յաճախ նմանցուցած են սրբարանի , և իրաւամբ : Ընտանիքն Աստուած սահմանեց : Անդ սիւնեց առատօրէն իւր շնորհաց պատուական պարգեւները : Ամուսնութիւնն աստուածային կարգադրութեանց առաջինն է :

Աստուած՝ նահապետաց հանդարտ և խաղաղ կենաց մէջ ընտանեկան առաջին առաքինութիւններն յարոյց : Հուրթին առ նոյեմի ունեցած անձնանուիրութիւնն իւր հատուցումը գտաւ բազմազանձ և վեհանձն Բոսսի անկեղծ և խորին համակրութեան մէջ : Հրեշտակ մը երիտասարդ Տուբիան առաջնորդեց ի գետն՝ ուր իւր որդիական սէրը պիտի գտնէր հօրն աչաց առողջութեան դարմանը :

Արտաքին պատմութիւնն , ինչպէս սրբազան պատմութիւնը , ակներեւ ըրած է կնոջ սիրուն առաքինութիւնները , զոր կը կատարէ իբր մայր՝ հարսն՝ դուստր կամ քոյր : Այս է մասնաւորապէս որ զմեզ կսքանչացնէ յունական ողբերգութեան մէջ :

Իգիպոս , անողոք չարարախորութեան մը զոհ և ակամայ ոճրագործ լինելով , ինքզինքը լոյսէն զրկեց իւր ակամայ ոճիրը քաւելու համար : Հալածեալ և թափառական , տակաւին կը յուսայ երջանիկ օրեր տեսնել . հետն ունի իւր Անդիկոն դուստրն որ իւր վիշտը կը դիւրէ : Նա յօժարեցաւ իրմէ չբաժնուիլ և իւր վրայ հսկել յոյժ սրտաշարժ գորովանօք :

Միայն ազճկանց տիպար չպիտի լինի ինքն , այլ և քերց ամենէն անձնանուէրը պիտի երեւի : Պիտի արհամարհէ բռնաւորին ցասումը որ գերեզման կը զլանայ իւր երկու եղբարց էթէօկլի և Բոլինիկի , հայրական դժբախտութեանց նիսուր ժառանգաց :

Հաւատարիմ մնալով բնութեան օրինաց որ հզօրագոյն են քան զմարդկայինսն, այս երկու դժբախտներուն պիտի հատուցանէ իւր վերջին պարտքը, և իւր բարեպաշտ ձեռօք գերեզման պիտի տայ նոցա, յորմէ զրկուիլն ամենամեծ անբախտութիւն կը համարէին նախնիք:

Նկարչաց և բանաստեղծից ներկայացուցած ամենէն սրտագրաւ պատկերք այնոքիկ են՝ որ այս բարեպաշտական անձնուրացութեանց՝ այս սուրբ անձնանուիրութեանց յիշատակը կը զարթուցանեն մեր մտաց մէջ:

Հին թատրերգութեանց սրտայոյզ տեսարանաց մին է այն՝ ուր ամուսնոյ մը կեանքն ազատելու համար, առաքինուհին Աղկէսթ, տակաւին դեռահաս, շնորհօք և գեղեցկութեամբ պերճացեալ, կը հաւանի մեռնիլ և աղջամղջին դժոխքն իջնել փոխանակ իւր ամուսնոյն:

Այս զոհողութեան մէջ ամուսնական սիրոյ գեղեցկագոյն օրինակ մը կայ, այն է՝ վսեմ տարփանք: Բանաստեղծը նկարագրած է այս մանկամարդն իւր բոլոր տկարութեան մէջ, որ կը ցանկայ ապրիլ, կը սոսկայ Ստիւքսի մթապատ ափունքն իջնելու գաղափարէն, և սակայն անձը կը նուիրէ իւր արիւթիւնը կը յաղթէ ապրելու բաղձանաց:

Կը զարմանամք տեսնելով թէ այրն այսօրինակ զոհողութիւն մը քիչ մ'աւելի անտարբերութեամբ կընդունի: Բայց Եւրիպիթէս որ իւր անագորոյն

երգիծանաց նետերն յաճախ ուղղած է կանացն, կը հաճի այն օրը փառաւոր հատուցումն ընել նոցա: Աղկէսթի վեհանձնութիւնն յայտնի ընդդիմապատկեր մը կը ներկայացնէ իւր ամուսնոյն ինքնասիրութեան, և դիւրին է տեսնել որ՝ երբ ինքն իւր կեանքն անոր զոհելու մեծանձնութիւնն ունի, սակայն չպիտի հանդուրժէր որ այրն իրեն համար մեռնէր:

Այժ դիւցազնական կրկին զգացումն է որ նոյն թատրերգութիւնն այնքան սրտագրաւ կընէ:

ժ .

Հին ժամանակը բազմաթիւ օրինակներ կընծայէ նաև մանկանց հնազանդութեան: առ հայրական իշխանութիւնն:

Երբ Աբրահամ իւր որդւոյն կը ծանուցանէ թէ Աստուծոյ հրամանաւ գինքը պիտի զոհէ քառութեան սեղանին վրայ, Իսահակ կը հնազանդի անմուռնչ, ուսին վրայ կառնու փայտը որ պիտի ծառայէ իւր զոհուելու խարուկին:

Իսաիին ոտանաւորաց գեղեցկագոյնք թերևս այնոքիկ են զոր կը դնէ Իբիզինէի բերանն, որ իւր հօրմէն դատապարտեալ է զոհուիլ դից բագնին վրայ: Բանաստեղծը զոհելոյն հեզ ու երկիւղած հնազանդութիւնը կընդդիմադրէ Ագամեմնոնի

կնոջ յոյժ բնական սրտմտութեան ու կտտաղութեան :

Հայրական կամաց այս հիանալի համակերպութիւնը, այս յարգանքը որ դիտողութիւն կամ տրտունջ ընելու չհամարձակիր, ա՛յնքան մեծ և ա՛յնքան վսեմ թուեցաւ՝ որ Ռասինը մեղադրեցին թէ իւր մատաղատի հեթանոսահայն ա՛յնպիսի առաքինութիւններ տուած է զոր միայն քրիստոնէութիւնը կարող է ներշնչել :

Քննադատք իրաւունք ունին անշուշտ, բայց ես չեմ կարող կասիլ դիպելէ թէ՛ ո՛րքան ետ երթուի պատմութեան մէջ, որդւոց առ հարս կատարեալ հնազանդութեան այս օրինակները կը գտնուին դարձեալ :

Միայն թատերարեմի վրայ չէ որ հին ժամանակաց հոգւոյ մեծութեան և անձնանուիրութեան օրինակներ կը ներկայացուին մեզ : Բազմաբուրեցութեան ընկերութեան մէկ անդամը բաւական ժամանակ յառաջ վէնսէնի ապաստանին մէջ տուած մէկ դասին առթիւ՝ կը յիշեցնէր Սպարտացւոց Լէոնիտաս թագաւորին աղջկան յոյժ ծանօթ դէպքը : Այս իշխանը գահընկէց եղած և իւր փեսայն Գլէոմպրոթ իւր տեղը դրուած էր : Իւր դուստրը Քիլոնիս՝ թողուց իւր սյրը՝ որպէս զի ինքն իւր թշուառ հօրը հետ աքսոր երթայ : Բախտը կը փոխուի . Լէոնիտաս միւսանգամ կառնու իշխանութիւնը, և Գլէոմպրոթի մահ կսպառնայ : Քիլոնիս

սաստիկ թախանձանօք ներողութիւն կստանայ իւր ամուսնոյն համար : Եւ իւր սիրոյն երկուց առարկայից մէջ ընտրութիւն ընել պարտաւորելով՝ նախամեծար կը համարի կապուիլ անոր՝ որ իւր սիրտինաց պէտք պիտի ունենար, և իւր փախտեայ ամուսնոյն կընկերանայ :

ԺԱ.

Ընտանեաց վրայ խօսելու միջոցիս՝ ուզեցի նախ բացատրել այն պաշտօնը զոր անդ կատարելու կոչուած է աղջիկն, որոյ համար յատկապէս յօրինուած է այս երկասիրութիւնը : Բայց եթէ նա՝ հանձարեղ գործունէութիւն և միաբանութեան ու հեզութեան ոգին ներկայացնելով՝ մեծաւ մասամբ կը նպաստէ տան ներքին երջանկութեան, սակայն նոյն իսկ ընտանեաց կազմակերպութեան համար էական պայմաններ կան, զոր անհնար է ինձ բոլրովին լուրստալ անցնիլ :

Կը մասնակցիմ այժմեան ճգանց որ իրաւամբ ի գործ կը դրուին մեր տխուր և սաստիկ խանգարեալ ընկերութիւնն ընտանեաց բարեկարգութեամբ ամրապնդելու համար : Այս մասին ամեն բան կախուածն ունի այն դիրքէն զոր կինը պիտի կարենայ բռնել անդ՝ իբր ամուսին և իբր մայր :

Աւելորդ է պնդել թէ որքան սրտաշարժ են այն քաջայարմար ամուսնութիւնք, ուր սրտի՝ հանճարոյ և բնաւորութեան համեմատութիւնք գոհացուցիչ լինելով, այր և կին ուրիշ հոգ չունին՝ բայց եթէ միմեանց երջանկութեան համար աշխատիլ:

Յայնժամ երկիւղ չկայ թէ այս օրհնեալ սրբաբանը կը մտնեն այն աղէտալի սովորութիւնք որ, բազմաթիւ ընտանեաց մէջ, գրեթէ միշտ այրն ու կինն իրարմէ բաժանեալ կը պահեն: Երկուքն ալ չպիտի դժգոհին, երբ կեֆաց գործերն ու հարկն այրը դուրս տանին և ստիպեն օրուան մի մասն իւր տանէն հեռանալու, քանի որ վստահութեան արժանի և իւր մայրական պարտականութիւններն հասկցող կին մը կը թողու անդ: Բայց եթէ այրն հեռանայ՝ իւր տան մէջ չգտած զուարճութիւններն այլուր փնտուելու համար, յայնժամ քանի՛ տխրութիւնք, քանի՛ հակառակութիւնք և ո՞րքան կռիւներ կը ծագին այսօրինակ կեցութեանէ, և յայնժամ ի՞նչ կը լինի մանկանց վիճակն՝ երբ կը տեսնեն ծնողաց գժտութիւնը որ չկարէ ծածկուիլ իւրեանց յստակատես աչքերէն:

Աւելի կը սիրեմ նայուածքս կեցնել այն տիպար լինելու արժանի տանց վրայ, ուր կրօնիւք սրբագործեալ, օրինօք նուիրագործեալ և համակրութեան վրայ հիմնեալ ամուսնութիւնն երկու հոգւոց ընկերութիւն մի է գիրար սիրելու՝ հասկնալու և միմեանց օգնելու համար: Ամուսնութիւնը լուրջ

գործ է: չպիտի ուզէի որ աղջիկը մատչէր անոր վաղագոյն և առանց հասկնալու յարակից պարտաւորութիւններն ու պարտականութիւնները: Չպիտի ուզէի որ, ինչպէս ստէպ կը պատահի, ամուսնանար միայն այն պատճառաւ որ՝ սոյն միացման նկատմամբ պահանջուած պատշաճութիւնները գտնելով՝ որոշած են իրեն համար, առանց ինքն ժամանակ ունենալու ճանաչել զնա՝ որոյ հետ պիտի կապէ իւր կեանքը:

ԺԲ.

Այրն ու կինը միացնող կապերն աւելի ևս սեղմելու հզօրագոյն միջոցներէն մին համարեցի կնոջ մասնակցութիւնը բարձրագոյն հրահանգութեան բարեաց: Այս պիտոյք հետզհետէ աւելի ակներև կը լինին: Բաւական չէ միայն որ այրն իւր կնոջ սիրոյն վստահի, պէտք է նաև որ վստահութիւն ունենայ նորա կարծեաց, քաջ գիտնայ թէ նա կարող է իւր բոլոր գործառնութեանց մասնակցիլ և հասու լինել իւր մտքին բոլոր կարգադրութեանց. թէ նորա հանճարն իրենը կամբողջացնէ տարբեր կարողութեամբք. թէ ամեն դիպաց մէջ ուր խրատի պէտք ունենայ՝ իւր կնոջ խրատքն են ամենէն լուսաւոր և ամենէն անկեղծները: Այսպէս՝

մտաց միաբանութեամբ կը լրանայ սրտից միաբանութիւնը և իրենց մէջ կը հաստատուի այն համակամութիւնը և այն միաբանութիւնը որք չեն կարող գոյանալ երկու անձանց մէջ՝ երբ մին ինքզինքը սահմանեալ համարի միւսոյն իշխելու, այլ երբ հիմնեալ կը լինին փոխադարձ յարգանաց և մեծարանաց վրայ:

Այս վստահութիւնն ամենեւին չփոխեր այն դերերը զոր նոյն իսկ բնութիւնը սահմանած է երկաքանչիւրում: Նոցա մտաւորական կարողութեանց հաւասարութիւնը կարէ կատարելագոյն միաբանիլ պաշտաման տարբերութեանց հետ և այս կէտին վրայ չեմ վարանիր բոլոր զօրութեամբ հերքելու այն չափազանց պահանջումները զոր հասարակաց ողջմտութիւնն երկար ժամանակէ ի վեր դատապարտած է:

ԺԳ.

Սոյն պաշտամանց մէջ հատ մը կայ որ այսօր ամենէն աւելի կնոջ բաժինը լինել կը թուի: Այժմ ևս այրն ընտանեաց գլխաւորն է. բայց ամեն կարգաց մէջ մուտ գտած նորանոր պիտոյք՝ նիւթական կենաց ստիպողական պիտոյք՝ յաճախ զինքը կը հարկադրեն նուիրելու իւր բոլոր ժամանակը և

բոլոր հանճարը հարստութիւն ձեռք բերելու կամ իւր պաշտաման պարտականութիւնները կատարելու: Ուրեմն կինն է՝ մայրն է որ նորա տեղը բռնելու ստիպեալ՝ կանու որդւոց վրայ այն իշխանութիւնը զոր հայրն այլ ևս գործադրելու ժամանակ չունի: Չգանգատիմք իւր վերայ դրուած պարտականութեան համար թէ ընտանեաց առաջին վարիչը և բնական փարժուհին եղած է. ճիշդ այդ կէտին վրայ կը կայանայ բուն լուծումն ընկերական այն խնդրոյն որ մեր օրերու այնքան վեհ հանճարներն զբաղեցուցած է: « Իւրեանց զաւակները կրթել գիտցող մայրեր պէտք են. » կարևոր է այս պարտականութեան կատարումն իրենց դիւրացնել բոլորովին մասնաւոր դատախարակութեամբ:

Մայրական հրահանգութիւնը, որ ազդուագոյն է քան զհասարակացն, որո՛ւ ձեռօք որ լինի, պարտի ծառայել նմա իբր նախապատրաստութիւն և ուղղութիւն: Մանկտին ամենափոքր հասակէն կրթելու սուրբ պաշտօնն աւնլով՝ կինը ճշմարիտ զօրութիւնն է որ զապագայն կը տնօրինէ: « Անձնանուիրութիւնը՝ համբերութիւնը՝ անձնուրացութիւնը՝ տեսութեանց անդրդուութիւնը՝ արժանաւորութիւնը՝ քաջութիւնը և զօրութիւնը, բոլորն ալ մայրութեան պիտանի յատկութիւնք են, կըսէ Պ. Նատոլ տը Պիւֆոն, որ ընտիր գիրք մը յօրինած է փոքր մանկանց դատախարակութեան վրայ: Ընտանեաց մայրը մեծ ազդեցութիւն ունի.

իւր իշխանութիւնը բացարձակ է . ուստի պարտի
ունենալ կառավարչաց բոլոր առաքինութիւնները : »

Բաց ի մօրէ , ո՞վ կարէ հաստատել ընտանեաց
մէջ այն բարեկարգութիւնը՝ աշխատութեան բաժա-
նումը՝ ժամանակի գործածութիւնը զոր Առտնին
Տնտեսութեան իբր մեկնակէտ նշանակեցի : Եթէ
մայրը չլինի , ո՞վ պիտի ցոյց տայ աղջկան , որոյ
հայրական տան մէջ ունեցած պաշտօնը նշանակեցի ,
այն պարտաւորութիւնները զոր պիտի կատարէ
ընտանեաց այլ և այլ անդամոց նկատմամբ : Ո՞վ
պիտի ուզող անկախութեան ոգին՝ խստութիւնը և
զայրուցքը որ երիտասարդաց յատկութիւնքն են
տունէն դուրս , եթէ ոչ՝ դարձեալ մայրն իւր
քաղցր ազդեցութեամբ :

ԺԴ .

Զպիտի նկարագրեմ այն դիւցազնական անձնա-
նուիրութեան ամեն զանազան կերպարանքները
որով կինը մայր եղած վայրկենին կը մատակարարէ
որդւոյն իւր գորովանաց բոլոր գանձերը . նոյնպէս
չպիտի նկարագրեմ իւր վարժուհւոյ պաշտօնը
կատարելն՝ որ մանկան ծնած ժամանակէն կսկսի և
փափաքելի է որ շարունակէր կարելի եղածին չափ
ընդ երկար : Կը զեղջեմ այն մանրամասնութիւն-

ները որ կը փոփոխին հասակին՝ սեռին՝ բնաւորու-
թեան և պարագայից համեմատ , նկատելու համար
միայն ընտանեաց դաստիարակութեան դերը , որոյ
հանձարեղ կատարումը ժամանակիս կարեւորագոյն
պաշտամանց մին եղած է :

Մայրն այս վսեմ պաշտաման համար մասնաւոր
չնորհներ ընդունած է : Նորա ողջմտութենէն
լուսաւորեալ գորովէն՝ ճարտարութենէն՝ երազա-
մտութենէն պարտին ներչնչուիլ բոլոր դաստիա-
րակք որ այսօր իրաւամբ կը գանգատին մանկտին
կրթելու դժուարութեան վրայ : Զգիտեմ ո՞րպիսի
անտարբերութիւն առ ուսումն թուի թէ պաշա-
րած է երիտասարդաց միտքը : Բոլոր մտքերը
գրաւող անկախութեան գաղափարներէն գրգռեալ՝
դժուարաւ կը հնազանդին կարգապահութեան
կանոնաց . շատ անգամ վարժարաններէն և ձեմա-
րաններէն հետերնին կը բերեն ամեն իշխանու-
թենէ ազատ լինելու անկարգ փափաք մը , և զիրենք
կառավարելու և հրահանգելու սահմանեալ անձանց
համար յարգանաց և ակնածութեան անփութու-
թիւն : Այս զգացմունք բարեբախտաբար կը չափա-
ւորուի . նախնական դաստիարակութեամբ՝ երբ
հանձարեղ մայր մը գիտէ իւր իշխանութիւնը յար-
գել տալ խստութեան ու դորովոյ և պատուոյ ու
լքման խառնուրդով մը :

Ընտանեաց մէջ կը կազմակերպին բնաւորու-
թիւնք՝ և մտքերը կը ձեւաւորին : Երբէք բաւական

կրկնուած չըլլար թէ ամեն պատուաւոր մարդիկ ճանչցած են թէ իրենց մօրէն ընդունած առաջին դասուց կը պարտին մանաւանդ այն բարձր յատկութիւնները որոց վերայ հիմնուած է իրենց համբաւը: Եթէ անհոգութիւնը և ներողամտութիւնը՝ որ յոյժ խանդարած են հարց և որդւոց մէջ ժամանակաւ գտնուած յարաբերութիւնները՝ կարեն փրկաւէտ ուղղութիւն մը առնուլ, մարդկային ընկերութիւնը մարց ազդեցութենէն կակնկալէ այդմ:

Գ Ա Ս Է.

Համար գործոց մէջ. — Երկրագործական շահագործութեանց, գործարանաց, վաճառականութեան, գեղարուեստից եւ ուսուցչութեան մէջ կնոջ դերն ի գիւղօրէս:

Ա.

Կինը շատ երջանիկ պիտի լինէր եթէ, գործունէութեան՝ հանճարոյ կամ գործվանաց գանձերը որ վինքն ընտանեաց հրեշտակը կընեն՝ տան մէջ ամփոփելով, կարենար ինքզինքը նուիրել միայն իւր ծնողաց՝ ամուսնոյն կամ զաւակաց բարօրութեան: Սակայն ընկերական կենաց պիտոյքները՝ շահուց համերաշխութիւնը որ ամեն ամուսնական ընկերակցութեան հետեւանքն եղած են, պարտականութիւն կը դնեն իւր վրայ իւր ուշադրութիւնն ու խնամքները դուրս տանելու: Ուրեմն տունէն դուրս կելնէ, իւր ներքին սիրելի և խաղաղ պարտականութիւնները կը թողու՝ արտաքին կենաց շարժման և զբաղմանց մասնակցելու համար:

Նախնի կինն այս արտաքին կենաց օտար կը մնար բոլորովին . այրը միմիայն իրեն կը պահէր անոր աշխատութիւնները՝ զուարճութիւնները կամ հոգերը : Այժմեան կեանքը կնոջ տուած է այնպիսի պարտականութիւններ՝ որոց համար երեւան ելած են յարմարութիւնք և մտաց դիւրաթեքութիւն մը՝ յորոց զուրկ համարուած էր նա ի սկզբանէ անտի : Բախտին բերմունքն ի՛նչ որ պահանջեց իրմէ ընել՝ բոլորին ալ յարմարութիւն ցոյց տուաւ ինքն . իւր ոյժն ու արիութիւնն այնքան մեծցան՝ որքան աւելցան նոյն պահանջողութիւնք , և իւր հանճարեղ գործակցութիւնը զարմանալի և անակնկալ արդիւնք յառաջ բերաւ ամեն տեղ : Նայիմք անոր ազնիւ առաքինութեանց գործադրելուն՝ որոց տիպարը կընծայէ՝ երբ ինքզինքը կը պահէ իւր նոր պարտականութեանց բարձրութեան մէջ :

Բ .

Աղջիկը ծնողքէն բաժնուելու ժամանակ՝ միշտ չգիտէ թէ ի՛նչ վիճակ պիտի ունենայ ամուսնութեամբ : Կրնայ կոչուիլ իւր ամուսնոյն արուեստին պահանջած աշխատութեանց գործակցելու՝ ինչ որ ալ լինի այն , կամ իւր զաւակաց պահելու համար իւրեանց հօր գործը նորա մահուանէն յետոյ , և

կամ վերջապէս իւր հաշուոյն արուեստ մը գործելու : Խօսքս այն կանանց համար չէ որ բարձր վիճակի մէջ գտնուելով՝ բոլորովին պատրաստ հարստութիւն մը միայն կառավարելու և պահպանելու գործն ունին . անոնց պիտի խօսիմ երբ կարգը գայ այն խնդրոց որ կը վերաբերին դրամի գործածութեան՝ խնայողութեան պայմանաց և այն կիրառութեան զոր մեծատունք պարտին ընել իրենց ստացուածոց մասին՝ յանուն կրօնից և մարդասիրութեան : Այժմ խօսքս կանանց այն դասուն վրայ է՝ որ շատ աւելի թուաւոր են և պէտք ունին գործունեայ կենաց աշխատութեան և զբաղմանց մէջ փնտուել իւրեանց ընտանեաց բարգաւաճման նպաստելու կամ իրենց անձին պատուաւոր կեցութիւն մը ապահովելու միջոցները : Զանոնք կենթադրեմ այնպիսի դաստիարակութեամբ պատրաստեալ , ինչպէս որ այսօր կը խորհիմք տալ այն զանազան ասպարէզներուն նկատմամբ որ կը բացուին իւրեանց առջև : Արդէն սովորած լինելով խորհրդածութեան և աշխատութեան՝ ձանձրոյթն անձանօթ է իրենց . ժամանակին արժէքը կը ճանաչեն . լուրջ և ուշադիր են . իւրեանց մատաղ մանկութենէն յաղթած են այն խօլկան մտածմանց հակամիտութեան և մտաց ծուլութեան , որոց հետեւանքն են անհոգութիւն և յուլութիւն : Աշխատութիւնն իրենց համար նեղութիւն չէ , այլ տարր երջանկութեան :

Գ.

Չախտի թուեմ այն ամեն արուեստներն որոց մէջ կինը կարող է իւր հանճարը գործածել:

Հատ մը կայ որ բոլոր միւսներէն նախագասելի է ըստ իս: Գիւղական կեանքն ա՛յնքան ազդու հրապոյրք ունի, մարդ ա՛յնքան երջանիկ կը լինի խոյս տալով մեծ քաղաքաց ձանձրութիւններէն և աղմուկներէն և յաճախ նաեւ փոքր քաղաքաց գձձութիւններէն, որ ազարակի վարջութեան կամ երկրագործական աշխատութեանց հսկելու համար՝ դաշտաց և անտառաց միջավայրն սսկրելու հարկն ըստ իս կնոջ համար ամենէն ցանկալի և քաղցրագոյն վիճակն է: Անդ կը գտնէ հաճոյական կեանք մը՝ օդտակարապէս գործակցելով ամուսնոյն աշխատութեանց:

Երկրագործութիւնն արուեստից առաջինը նկատուած է միշտ և մեծ իրաւամբ: Այն է որ մշտապէս բարդաւաճութիւն մը կապահովէ ազգին: Անով ա՛յնպիսի ներդաշնակութիւն մը կը հաստատուի ընտանեաց զանազան անդամոց՝ անասնոց՝ ծառոց՝ երկրին արտադրած հազարումէկ արդեանց մէջ, որ անհամար վայելքներ կընծայէ առտնին կենաց: Մարդն երկրագործութեան միջոցաւ կը գտնէ այն ամեն բան որ կը նպաստէ իւր բարօրու-

թեան և ճշմարիտ անկախութիւն մը կապահովէ իրեն:

Թէև գիւղական սովորութիւնք պարզ են քան զքաղաքայինս, սակայն կնոջ դերը կարեւորագոյն ևս է անդ քան այլուր: Անդ կը գործածէ իւր իշխանութիւնը թէ ներսը և թէ դուրսը: Իւր խնամքն ամեն բանի վրայ կը տարածի. անասնոց՝ որպէս զի մաքուր և օգուէտ գոմեր բնակին և պատասխարուին ընդարձակօրէն, անոնց ձագուց հսկողութեան և սննդեան՝ որպէս զի ըստ կարելոյն մեծ օգուտ քաղուի: Հաւնոցն ևս ունի շահ և զուարճութիւն. փոքր ժողովուրդ մը կը բաղկացնեն նոքա՝ որոց անհատք այնքան տարբեր են իւրեանց ձեւերով՝ որքան բնաւորութեամբ և սովորութեամբ: Իրենց մէջ, ինչպէս մարդոց մէջ, կան թշնամութիւնք՝ անձնահաճութիւնք՝ նախանձ՝ մինչև իսկ յափշտակութիւն և բարձրնտիր լինելու և հպարտութեան խնդիրներ:

Դ.

Մրգատանը, որ համեղագոյն և առողջարար սնունդը կը մատակարարէ, սովորաբար բնակարանին շուրջը կը լինի: Լաւ է թէ պարտիզպանն իբր տէր չվարուի անդ. և տիրուհին կարենայ ի հարկին

նորա եռանդը չափաւորել կամ արծարծել :

Պտղոյ կութքը զուարթ գումարմանց առիթ է : Խնձղանքն աւելի մեծ կը լինի երբ ծիծաղկոտ մանկութիւնը կը վազէ պարտիզաց մէջ՝ քաղելու այն պտուղներն ու ծաղիկները՝ որովք սեղանը կը զարդարուի և անուշահոտութեամբ կը բուրէ :

Առատութիւնը կը տիրէ այն բնակարանաց մէջ՝ ուր մշակութիւնն ու երկրագործական խնամքները պատուելի են : Աշխատողաց համար լաւագոյն հատուցումն չէ՞ այս :

Ամեն ինչ կը գործածուի և պիտանի կը լինի : ամեն եղանակ իւր աշխատութիւնն ու բերքն ունի : Ծառերն յօտելով կամ կտրելով՝ փայտի շտեմարանը կը շարունակ վառելու համար : Կանեփը և ոչխարաց գեղմը կտաւ և գուլպայ գործելու թելը կարտագրեն : Փեթակները մեղր կուտան ուտելու , և մոմ՝ եկեղեցւոյ լուսաւորութեան համար : Զիթեանոյ՝ կանճրակի և ընկուզենոյ պտուղքն իւրեանց բաժը կը հատուցանեն սննդեան և լուսաւորութեան :

Բնական գիտութիւնք իրենց գործադրութիւնը կը գտնեն դաշտային կենաց մէջ . վայրի կամ մշակեալ տունիկերը կը հաւաքուին և կը դասաւորուին դեղի և առողջական ծառայութեանց համար :

Մեր օրով աւելի հոգ կը տարուի պահպանելու և բազմացնելու քան թէ ջնջելու : Թուչնոց՝ ինչպէս նաև գազանաց խժդժական որսորդութիւնը խո-

հուն անձերէ դատապարտուած է . սոքա հասկցան թէ աննախատես և անգութ որսորդներն են բուն գազանք՝ որ բնաջինջ կընեն մեզ անհամար ծառայութիւն մատուցանող անմեղ կենդանիները :

Ե.

Արտաքին գործերն անգամ մը աւարտելէ յետոյ՝ կինն ուրիշ գործեր ունի ներսը՝ որ նոյնպէս իւր ուշադրութիւնը կը պահանջեն . ճերմակեղինաց լուսացումն՝ հանդերձից շինութիւնն ու պահպանութիւնը և գործեաց ու շինուածոց նորոգութիւնը :

Այս մեծ արուեստանոցին մէջ բոլոր ընտանիքը գործի հետ կը լինի . ամեն հասակի և ամեն աստիճանի անձանց համար աշխատութիւնք կան :

Չմեռուան գիշերներն ընտանեկան երեկոյթք տան բոլոր անձինքը կը գումարեն , և տան տիկնոջ բարերար ազդեցութեամբ ներդաշնակութիւն կը տիրէ խօսելու և աշխատելու համար ձեւացած խումբերուն մէջ :

Երկրագործական փոքր ի շատէ կարեւոր հաստատութեան մը գլխաւորը սովորաբար իւր բնակարանը կեդրոն մը կընէ , և այնու մեծ ազդեցութիւն կունենայ զինքը շրջապատողներուն վրայ :

Գալատացիին կենաց մէջ՝ իրարմէ քանի մը մղոն հե-
ռաւորութեամբ բնակողներն ալ դրացի կը համա-
րուին: Իւր ընտանիքին և դրացի ընտանեաց մէջ
անընդհատ յարաբերութիւն կը հաստատուի բնա-
կանաբար, և կնոջ ընթացակցութեան շնորհիւ
ամուսնոյն վարկը կը հաստատուի և իւր ազարակին
հորիզոնէն անդին կը տարածուի: Իւր քաղաքա-
կցաց յարգանքը կը շահի, և այնպիսի դիրք մը
Քառնու՝ որով նոքա յաճախ իրեն կը յանձնեն
իւրեանց ամենէն թանկագին շահերը:

Աղքատն իւր տնակին մէջ, փայտահարն իւր
խրճութին մէջ, պարզ գիւղացի կիներն, ամենեքին
միևնոյն խնամքներն ունին ընելու՝ նոյն աշխատու-
թիւնները՝ կատարելու, որպէս զի մշակեն իւրեանց
միակ արտը, և բուծեն իւրեանց ոչխարը՝ այծը՝
կովը՝ խոզը՝ էջը՝ հաւն ու ձագերը: Պիտոյ է նոյն-
քան գործունէութիւն ունենալ այս փոքր հաս-
տատութեան մաքրութիւնը և առողջութիւնը
պահպանելու համար՝ որպէս թէ հօտ մը՝ մեծ գոմ
մը՝ ընդարձակ հաւնոց մը և ամբողջ լի ախոռ մը
եղած լինէր:

Երկրագործական արուեստը չպահանջեր միայն
անընդհատ աշխատութիւն. խորհրդածութիւնն
ու դատողութիւնը պարտին խափանել վարժու-
թեամբ գործելու սխալմունքը կամ նորասիրու-
թեան և յանդուգն փորձերու վտանգները: Այս
երկու խտրութիւն յաճախ վտանգած են ամենէն բար-

գաւաճ շահագործութեանց յաջողութիւնը: Նա-
խատեսութեան ոգին՝ որ կնոջ բնական մէկ ձիրքն
է, կղզուշացնէ նոր դրութեանց հոսանքին դէմ
զորս փորձը տակաւին չէ՝ նուիրագործած: Եթէ
ինքն ամեն բանի հոգ տանի՝ իւր իշխանութիւնը
լաւ ևս կը ճանչցուի, և իւր խրատները պատկա-
ռանօք կը լսուին:

Ընդարձակութիւն պահանջող այս նիւթին
միայն տարբեր կէտերը կարող եմ ցոյց տալ: Եւ
սակայն բաւական ըսի խմայնելու համար թէ՛ հրա-
հանգեալ կիներ հազարումէկ կերպիւ կարէ գործ-
ածել իւր ստացած ծանօթութիւնները և խորհրդ-
դածութեան վարժութիւնը զոր կանխաւ ունա-
կութիւն ըրած է իրեն:

Եթէ բարգաւաճութիւնն ունի իւր առաւելու-
թիւններն, ունի նաև իւր անպատեհութիւնները:
Դրացիք բարեկամ չեն լինիր միշտ. նոցա հեռ-
եղած ամեն յարաբերութիւնք հաճոյական չեն.
Ոմանց ազահութենէն և ոմանց անհաւատարմու-
թենէն պահանջողութիւններ կը ծագին, որոց դէմ
պէտք է գիտնալ ինքզինքը պաշտպանել: Օրինաց
փոքր ինչ ծանօթութիւնն անօգուտ չէ յայնժամ:
Գաւառաց մէջ օրինաց տեղեակ գիւղացիներ կը
գտնուին, որ ըստ այնմ կը պահանջեն դրացիէն
խրամ մը՝ ցանկ մը՝ ճանրայ մը՝ առու մը, և եր-
կայնմտութեամբ ընդերկար մաքառելու ճարտա-
րութիւնն ունին: Կարի քաջ գիտեն թէ « Ստա-

ցուածքը տիտղոս է. » և եթէ բուն տէրն անհոգութեամբ կամ տգիտաբար թողու որ պահանջողը զայն գրաւէ, այնուհետեւ անհնար կը լինի քաշուելու ստիպել զնա : « Եթէ թոյլ տաք նմա քայլ մը առնուլ ձեր հողին վրայ, փոքր մի յետոյ կառնուչորս քայլ : »

2.

Գիւղը բնակելու, ագարակի խնամք տանելու, գործաւորներ ու ծառաներ կառավարելու գործը մատաղատի կնոջ հաճոյական չթուիր, ի սկզբան : Բայց մասնակցելով իւր ամուսնոյն գործոց՝ ընդ հուպ կը գտնէ անակնկալ հրապոյրք և իւր հանձարը գործածելու յարմարագոյն առիթն : Շուտ կը տեղեկանայ իրեն պէտք եղած գործնական ծանօթութեանց : Երկրագործական հրահանգք դիւրաւ կատարելին՝ երբ Ֆիզիքական և բնական գիտութեանց տարերց ծանօթ լինի ոք : Եւ այսու միջոցաւ կինն իրապէս կընկերանայ իւր ամուսնոյն գաղափարաց, և օգտակարապէս կօզնէ նմա : Այսպէս է որ զինքը չըջապատող ամեն բանի վրայ իշխանութիւն մը կառնուլ՝ որ հրամանատարութիւնը կը դիւրացնէ և իւր խրատուց ծանրակշուութիւն կուտայ :

Ագարակի ամեն աւուր՝ ամեն եղանակի՝ ներքին և արտաքին զբաղմանց մանրամասնութեան մէջ մտնելն աստանօր բոլորովին անօգուտ կը թուի ինձ : Կը հասկցուի թէ կինը որ կուզէ այս վիճակին մէջ իւր ամուսնոյն իրական և ազդունիթացակցութիւն ունենալ, կարող է ինքնին յօրինել բոլորովին մասնաւոր ընթացք մը կենաց : Առաւօտները կանուխ ելնելով կարէ ամեն ինչ պատրաստել օրն աղէկ գործածելու համար : Բնականաբար ինքն է որ հասութից և ծախուց հաշիւը կը տեսնէ, աշխատողաց օրականները կը նշանակէ, իւրաքանչիւրին գործը կը բաշխէ, մատակարարաց և ճառայից հաշիւները կը կարգադրէ : Տեղեակ է երկրագործութեան հարկաւոր զանազան աշխատութեանց, այսինքն ցանելու, հնձելու և հունձքը ներս առնելու ժամանակին : Անանոց զնման և աննդեան, հաւերու պարարման, փեթակաց պահպանութեան վերաբերեալ և ոչ մէկ բանին կանգիտանայ : Այս զանազան իրաց տուած բոլոր խնամքըն շահ արտադրելով՝ ինքն ևս կը կապուի այն զբաղմանց՝ որոց պիտանութիւնը կը հասկնայ և որոց ամենքն արդէն իրենց մասնաւոր հրապոյրքն ունին :

Յայնժամ հմուտ և արթուն կնոջ վիճակը կարի հաճոյական կը լինի : Իւր ազդեցութիւնն ընտանեաց սահմանէն անդին կը տարածուի, և իւր խրատք կարող են իւր դաշտային գրացեաց անդին

ծառայութիւններ մատուցանել: Նախնական դրու-
թեամբ գործելու կերպին դէմ կը մարտնչի, և
այն անձանց, որոց կասկածելի է երկրագործական
ամեն նորութիւն, գիտէ ցոյց տալ նորահնար մե-
քենայի մը կամ նոր կերպի մը առաւելագոյն
օգուտները:

Է.

Տան կառավարութեան պահանջած առողջապա-
հիկ խնամոց վրայ խօսած միջոցիս՝ ըսի թէ որքան
կարեւոր է որ կինը տեղեակ լինի գիտութեան
ուսուցած առողջարանական ծանօթութեանց: Ամե-
նապարհ զգուշութիւնք առաջը կառնուն այն ար-
կածից և հիւանդութեանց, որոց ամենէն սովորա-
կան պատճառքն են գուեհիկ ժողովրդեան ագիտու-
թիւնը՝ անզգուշութիւնը և անմաքրութիւնը:
Ճարտար կին մը զանց չընէր ժողովել և իւր դրա-
ցեաց տրամադրութեան ներքեւ դնել ինչ ինչ
դարմաններ և դեղեր որք ստուգիւ առտնին դե-
ղարան մը կը կազմեն: Բժշկական օգտակար բու-
սոց ընտրութիւնն ընել դիւրին է: Նաեւ դիւրաւ
կը սորվուի պատրաստել բժշկական ըմպելիներ և
բուսածրեր՝ օժանելիներ՝ բալասաններ, որք յաճախ
կը գործածուին: Դիպուածներ կան՝ ուր, առանց

սպասելու բժշկին՝ գալստեան, խիստ կարեւոր է
արագ դարման տանիլ, ինչպէս օրինակ իմն վիրա-
ւորիլ՝ այրումն՝ խածուածք և խայթուածք: Առա-
ւել ևս վտանգաւոր են շնչհեղձութիւնը և թու-
նաւորութիւնը, որ արագ դարման կը պահանջեն,
և եթէ ժամանակին ի գործ դրուի՝ կը յաջողուի
հիւանդութեանց և յաճախ իսկ մահուան առաջն
առնուլ: Պատրաստել ամեն ինչ որ պիտոյ է մա-
հուան վտանգի մէջ գտնուող թշուառաց օգնելու
համար, գործ է խոհեմութեան, որոյ կարեւորու-
թիւնը կը հասկնայ ամեն քաջ տնարարուհի և ամեն
իմաստուն մայր ընտանեաց:

Ը.

Բարոյական մասին ևս իւր բարերար ազդեցու-
թիւնն զգալի կը լինի: Թշնամութիւնները կը
դադրեցնէ, շահու պատճառաւ գթտեաները կը
հաշտեցնէ, անկարգ կեանք վարողներն ուղղու-
թեան կը բերէ, գիւղացւոց մէջ դեռ ևս Թիրող
նախապաշարմանց եւ անհեթեթ սխալմանց դէմ
կը մարտնչի, գիտութիւն տարածելու կամ թը-
շուառաց օգնելու նպատակաւ կարգադրեալ ամեն
գործոց կընկերանայ. և տառապելոց ու կարօտե-
լոց համար ունեցած գորովալից հոգատարութեամբ
իւր իշխանութիւնը կապահովէ:

Մշտապէս կամ առժամանակեայ կերպիւ գիւղն սպրող կիւնն, ամուսնոյն և զաւակաց նկատմամբ կնոջ և մօր պարտաւորութիւնները կատարելով հանդերձ, մերձակայ բնակչաց և ոչ միոյն օտար կը մնայ: Սոքա ապահով են իրմէ յօժարակամ ընդունելութիւն գտնելու և խմաստուն խրատներ ընդունելու:

Թ.

Այս գլուխը չափազանց պիտի ընդարձակէր եթէ դաշտային կենաց վերաբերեալ աշխատութեանց և զբաղմանց քով նշանակէի նորա հայթայթած հաճութիւնները եւ առողջութեան ու բարօրութեան ամեն օգուտները: Կալուածատեարց ռամիկ ժողովրդեան մէջ բնակիլը միայն նոյն ժողովրդեան բարիք չէ՝ անկարօտ և հարուստ մարդիկ ևս որ քաղաքաց աղմուկներէն ու ձանձրոյթներէն ըստ կարելոյն երկար ժամանակ հեռի մնալու խմաստութիւնն ունին, անդ կը գտնեն անխառն զուարճութիւններ՝ որ աշխարհի կեանք կոչուած զեղխութիւններէն և ժխորէն լաւ են: Գեղեցիկ եղանակը սովորաբար գիւղը կանցնեն, ուր իրենց աշխատանքէն հանգիստ կառնուն որսորդութեամբ՝ ձկնորսութեամբ և հետիոտս կամ ձիով բաց օգոյ

մէջ կազդուրիչ արեգական քաղցր ազդեցութեան ներքեւ երկար պոռոյտներ ընելով:

Չմեռը զիրենք քաղաք կը հրաւիրէ վերստին: Բայց պէտք չէ կարծել թէ ցուրտ և անձրևոտ եղանակն արգահատելի կընէ այն անձինքը որք իւրեանց ընտրութեամբ կամ վիճակնուն պահանջմամբ դաշտը մնալ կտրիպուին: Աշխատասէր անձանց գործ չպակսիր, և տան տիրուհին առիթ կը գտնէ, ինչպէս գարնան և աշնան մէջ, իւր գործունէութիւնը տարածելու եւ հսկողութիւնն ի գործ դնելու: Դաշտային կենաց մէջ աշխատութիւնք աշխատութեանց կը յաջորդեն. հազու հունձքը կաւարտի և աշնան պտուղը կը հաւաքուին ու կը պահուին, և ահա պէտք է սկսիլ արտն աղբել՝ հերկել՝ ցանել յաջորդ տարւոյն համար: Ժամանակ է նաև որ բերքը վաճառելու համար քաղաք տարուի: Վերջապէս եթէ օրերը կարճցած եւ արտաքին աշխատութիւնք քիչցած ու նուազ ստիպողական են, սակայն ներքին աշխատութիւնք կը բազմապատկին, և կանթեղն ու խարոյկը կը վառին երեկոյին գործելու համար: Մինչդեռ երկրագործք և իւրեանց կանայք ու աղջկունք իւրեանց նստողական աշխատութեանց կզբաղին զուարթ խօսակցութեամբ, տեարք եւս ունին իւրեանց զբաղումն ու հաշիւները: Տիրուհւոյն կարգադրութեան շնորհիւ երեկոյեան գումարմունք իւրեանց օգուտն ու հրապոյրքն ունին:

Այս է նաև գրքերը ձեռք առնելու յարմար ժամանակ, որոց խմատուն դասերն առիթ կը լինին խորհրդածելու արդի պատմութեան վրայ, և հին ու նոր ընկերութեանց մէջ բաղդատութիւն ընելու: Ընթերցման նպատակը միայն զբօսեցնել և մտքերն հրահանգել չէ. այլ և կը դադրեցնէ սնտախ խօսքերը, և կը խափանէ բացակայ բարեկամաց վրայ եղած բամբասանքը՝ որ յաճախ տեղի կունենայ մտերմական ու երկար խօսակցութեանց մէջ:

Ժ.

Ձեռագործական և արուեստական մեծ շահագործութեան մէջ՝ շահերն աւելի կնճռոտ՝ գործիչք աւելի բազմաթիւ, և յարաբերութիւնք աւելի դժուարին են: Գիտութեան շնորհիւ եղած նորանոր գիւտք ճարտարութեան սահմանն ընդարձակեցին, բայց մեքենայից կիրառութիւնը գործաւորին աշխատութիւնը չխափանեց. շահագործութիւնք կան որ աշխատողաց ամբողջ խումբերու գործ կը բանան: Եւ իւր ամուսնոյն գործոց ընկերացող կնոջ համար պարտականութեանց երկու որոշ կարգ կը ներկայանայ աստանօր:

Սորհուրդք՝ հնարագիտութիւնք՝ հաշիւք և ընդհանուր վարչութիւն բնականաբար գլխաւորին

կը վերաբերին. բայց նուրբ և բազմապատիկ մանրամասնութիւնք կնոջ գործակցութիւնն անհրաժեշտ կընեն. և կարելի է հաստատել թէ բարգաւաճութիւն չլինիր եթէ նորա հսկողութիւնն ամեն կէտի վրայ չտարածի: Սխալ շահադիտութիւնք նոյնքան ազէտալի հետեւութիւններ կունենան որքան երկրագործութեան մէջ: Ուրեմն կարեւոր է որ ի դէպ ժամու տրուած խրաքը չափաւորեն երազազեղծ երեւակայութեան թռիչքը:

Կնոջ օտար մնալու չեն այն խնդիրք զոր այսօր կը յարուցանեն ի մէջ գործաւորաց և տերանց եղած առնչութիւնք. նորա խաղաղասէր ոգին վէճերը կը դադրեցնէ և երկու կողմանց մէջ ծագած թերխմացութիւնները կը բառնայ:

Գործաւորաց դասուն գործարանաց շուրջը խոնելէն յառաջ եկած անպատեհութիւնք իրաւամբ զբաղեցուցին տնտեսագէտներն. ու խորհողները: Բարեկեցութեան և բարոյականութեան պայմանք ըստ բաւականի չտարահովեցան միշտ: Արդարեւ կանանց ջանիւք ի գործ դրուեցան միջոցք՝ որ գործարանաց մէջ աշխատող փոքր տղայոց վիճակը բարւոքեցին. նոքա հսկեցին որ մարք բարեկարգութիւն և վայելչութիւն պահեն տան մէջ, մինչդեռ արք իւրեանց պարտականութիւնը կը կատարեն դուրսը:

Գործաւորաց վիճակը բարւոքեցաւ այն տեղերն, ինչպէս Միւլհուզ, ուր մարդասիրական և

նախահոգ կարգադրութեանց՝ շնորհիւ՝ գործաւորը կարող է իւր բնական տանը տէր լինել իւր աշխատութեան արդեամբը: Այս ստացումն որ ընտանեաց ներկայ եւ ապագայ բարօրութիւնը կերաշխաւորէ, գործաւորին ինչպէս նաեւ երկրագործին երջանկութեան և բարգաւաճման աղբիւր է:

Այս վիճակին մէջ կինն իւր հանճարոյն և սըրտին գորութեամբը կը նպաստէ պահպանելու աշխատութեան և բարի վարուց սոյն յաղթանակին իբր պատուական ժառանգութիւն:

Հայր և որդիք բարեկարգութիւն և հանգըստութիւն գտնելով այն բնակարանին մէջ որ իրենցն է, պարունակած բոլոր իրերուն կը կապուին՝ զգեստք՝ ճերմակեղէնք և կարասիք սակաւ առ սակաւ կը լրացնեն փոքր կալուածք: Գործաւորն այս տեսարանէն գոհ և ուրախ լինելով՝ տնակեր զօտանք չփնտուեր այլուր: Եւ որդւոց ստացած մայրական բարւոք դաստիարակութիւնը կը պատրաստէ զանոնք ճարտար գործաւոր լինելու՝ թէ՛ հայրական ասպարէզը շարունակեն և թէ՛ իւրեանց մտաւոր զարգացմամբ բարձր վիճակի հասնին:

ԺԱ.

Ուրեմն մեծ արհեստագէտի մը կինը բազմաթիւ ժողովրդեան նախախնամողն է: Նա ոչ միայն

իւր տան բարգաւաճման կաշխատի, այլ և հասարակաց գործոյն ծուռայող անձանց հարստութիւնը և բարոյականը կաւելցնէ:

ՅԱնգլիա, ուր բարեվիճակ անձանց և գործաւորաց դասուն միջեւ յարաբերութիւնք կարծուածէն աւելի մտերմական են, քանիցս տեսնուած է որ մատաղատի աղջկունք և իւրեանց մարք դըպրոցներ կը հաստատեն, ուր մանկանց և չափահասից կուսուցանեն կրօնից՝ ընթերցման՝ գրութեան և գիտութեանց տարերքը: Այս սովորութիւնը կը մտնէ ի Փաղղիա հասարակ ժողովրդեան մէջ և գործաւորաց բազմութիւն գտնուած տեղերը որով կը յաջողուի գործաւորաց դասուն մէջ սիրոյ՝ վստահութեան եւ համակրութեան զգացումներ ծնուցանել՝ և մարել նախանձու ոգին՝ որ ազէտալի թշնամութեանց պատճառ կը լինի:

Աստանոր կը խօսիմ միայն այն զգացմանց վրայ՝ որ գլխաւորին ու գործաւորին ընտանեաց մտերմական յարաբերութեանց արդիւնքն են. իսկ իւրեանց շահերն ու պարտականութիւնները, որ տերանց բարգաւաճութեան սերտիւ կապուած են, ուրիշ գիտութեան մը կը վերաբերի նշանակել. նա գլխաւոր առարկայն է քաղաքական տնտեսութեան, որ շատ մասամբ առնչութիւն ունի տնտեսութեան ուսման հետ:

ԺԲ.

Բաւական չէ բերք հասցնել, հարկ է ուրիշ տեղ տանիլ զայնս և վաճառել. այսու կը հաստատուի փոքր կամ մեծ վաճառականութիւն:

Եթէ երկրագործական և ձեռագործական շահագործութեանց նման չարհանջեր մեքենայ և ընդարձակ արուեստանոց, սակայն բարձր վաճառականութեան մէջ զբաղմունք կան որ կը պահանջեն նոյնքան վարժութիւն դատողութեան՝ խորհրդածութեան և հանձարոյ:

Այն կիներն որ գործակցութեան բաժին ունի, մասնակցած կը լինի հաստատութեանց հարստութեան. իւր բոլոր կարողութիւնք արդիւնաւոր կը լինին շատ պարագայից մէջ՝ որքան և նուազ ընդարձակ սահմանի մէջ գործադրուին:

Ընտանեաց կառավարութեան համար պահանջուած բարեկարգութիւնը՝ կանոնաւորութիւնը և նախատեսութիւնը կրկնապէս պիտանի կը լինին՝ երբ ինքն իւր արթնութեամբն անդադար յարաբերութեան մէջ գտնուի իւր տան պաշտօնէից հետ:

Եթէ սպասաւորաց կառավարութեան և հրակողութեան համար արգարութիւն՝ կորովամտութիւն և չափաւորութիւն հարկ է միշտ, աւելի

անհրաժեշտ է երիտասարդուհեաց և երիտասարդաց նկատմամբ, որոց գործոյն վերակացուք նոցա պաշտպանն ու բարեկամը կը համարուին:

Բաւական չէ հաստատամտութիւն, որ կը ներչնչէ յարգանք և երկիւղ՝ առանց որոց իշխանութիւնը կը տկարանայ. հարկ է նաեւ գիտնալ քաղցր համակրութիւն ներչնչել, մարդասիրութեամբ և գորովանօք շահիլ նոցա վստահութիւնն ու յարգանքը: Ամեն վիճակի մէջ՝ ուր կինը կօչուած է իւր իշխանութիւնը գործադրել՝ հրամանատարութիւն մը ունենալ, աւելի իւր բնական վայելչութեամբը՝ վսեմական կերպերովը և մարդասիրական խօսքերովը կը տիրէ՝ քան թէ ամբարտաւան և բացարձակ եղանակաւ՝ որ հրամանատարութիւնն ատելի կընէ:

ԺԳ.

Տրտունջ կը լսուի յաճախ թէ փոքր բաժին մը թողուած է կանանց՝ այն բազմութիւ պաշտօններէն զոր նոքա կարող են կատարել: Պէտք էր աւելի աւիթ տալ նոցա, որ իւրեանց գործունէութիւնը և հանձարն ի գործ դնէին: Արդէն պաշտօն առած են տպագրութեան՝ ժամագործութեան և փորագրութեան գործարանաց

մէջ: Ուրիշ ասպարէզք եւս բացուած են նոցա՝ որք ուսեալ են և բաւականութիւննին փորձուած է: Երկար ժամանակէ հետէ թղթատարութեանց վարչութիւն յանձնուած է իրենց, և այս վիճակին մէջ կարող են յայտ առնել այն բաւականութիւնը և խելամտութիւնը զոր ստացած են քաջ դաստիարակութեամբ: Փոքր գիւղեր կը բնակին յաճախ, և իւրեանց հրամանին ներքեւ պաշտօնեայներ ունին՝ որոց պարտին օրինակ տալ խոհականութեան՝ հաւատարմութեան և փափկութեան՝ որք կարեւոր են իւրեանց յանձնուած շահուց պաշտպանութեան:

Նամակները չեն պարունակեր միայն դրամոյ կամ գործոյ թղթեր՝ որք ճշդութիւն կը պահանջեն և յապաղում մը կարէ փնասակար լինել, այլ և մտերմական բանից և ընտանեկան գաղտնեաց աւանդապահ են: Նամակատան վերակացուհին պատասխանատուութիւն ունի, և այս կուտայ նմա իրական կարեւորութիւն, և կը պահանջէ բարոյական յատկութիւններ՝ որք կստացունին լուրջ դաստիարակութեամբ:

Հեռագրատանց վարչութիւնը մօտերս յատկացուցած է նոցա պաշտօններ՝ զոր նշանաւոր կերպիւ կը կատարեն: Արդէն սովորած եմք տեսնել զնոսա երկաթուղւոյ կայարանաց մէջ տոմսակ տալու պաշտաման վրայ, ուր ցոյց կուտան ճշդութիւն՝ խոհեմութիւն և հաստատութիւն՝ մշտա-

պահանջ հասարակութեան հետ ունեցած յարաբերութեանց մէջ:

Կինն ոչ միայն այս զանազան գործոց կարէ նուիրել իւր գործունեայ կեցութիւնը. գեղարուեստական աշխատութիւնք ևս, ինչպէս նկարչութիւն՝ երաժշտութիւն և քանդակագործութիւն, յոյժ յանկուցիչ են իրեն: Իւր հանձարը ոչ միայն արուեստին կատարելութեամբ կը յայտնուի, այլ և այն ճարտարութեամբ և խոհեմութեամբ որովք յարաբերութիւն կը հաստատուի և կը պահպանուի դաս ուզող կամ գործ հրամայող անձանց հետ: Ազնուութիւն և մարդավարութիւն պիտոյ են միշտ իւր շահերը վարելու և պաշտպանելու համար:

Փորագրութիւնը՝ վիմագրութիւնը՝ արհեստական ծաղկանց շինութիւնը կը ծառայեն ձեռագործական արուեստից, և ստացած հմտութեամբն ապրելու ստիպեալ կինն օգուտ կը քաղէ յայնցանէ: Յաջողութիւնն առաւել եւս ապահով կը լինի՝ երբ բնութեան ճրից վրայ կը յաւելու բարձր դաստիարակութեան և բազմազան ուսմանց արդիւնքը, որ կը կանոնաւորեն երեւակայութիւնը, գլխաւոր կարողութիւն կանանց, և մասնաւորապէս նոցա՝ որ գեղարուեստից կը հետեւին:

Ճարտարական և առեւտրական գործք, որոց վրայ արդէն խօսեր եմ և որք աւելի կարեւորքն են մեծ շահագործութեանց կարգին մէջ, վարչա-

էյան և միանգամայն մանրակրկիտ հսկողութեան յարմարութիւն կը պահանջեն: Միւսոց մէջ հարկ է մանաւանդ իւր անձին իշխել. սրտի և մտայ յատկութիւնք և ստոյգ հմտութիւնը միջոց կը գտնեն անդ շահաւորապէս ի հանդէս գալու:

ԺԴ.

Արուեստ մը կայ որ կարծես թէ ամենայն կատարելութիւն և ամենայն առաքինութեանց դործադրութիւն կը պահանջէ: Երբ ըսեմ թէ վարժութիւններէն կը պահանջուի մտածութեան մեծութիւն և բարձրութիւն, կերպերու ազնուութիւն և վայելչութիւն, բնաւորութեան վեհութիւն, սիրով և յարգանք հրամայելու և կառավարելու արուեստ. երբ յաւելում թէ հարկ է այս յատկութեանց կցել բարձր հանձար, փոյթ ամենափոքր մանրամասնութեանց՝ ամենախոնարհ զբաղմանց՝ բարեկարգութեան և մաքրութեան խնամոց՝ զգեստաւորութեան՝ ննջարանաց՝ դասարանաց՝ ճաշատանց՝ վերջապէս խոհանոցի հսկողութեան, (վասն զի լաւ կառավարուած տան մը մէջ ամենքը պէտք են), չափազանցած չպիտի լինիմ այն ամեն բարոյական և մտաւորական յատկութիւնները զոր վարժուհի մը պարտի ունենալ. զգուշաւորութեան

ողի, նրբամտութիւն, արդարութիւն, խոհեմութիւն և չափաւորութիւն ամեն վայրկեան դործադրութեան մէջ լինելու են:

Եթէ վարժուհին առանձին տան համար լինի, առանց խօսելու այն հմտութեանց վրայ զոր պարտի ունենալ, օտար լեզու գիտնալու և վերջապէս ամեն բանի վրայ որ կը սորվուի և կուսուցուի, կը պահանջուի լաւ հագուած լինել՝ թէ և առանց պէրանայ, ընտիր բնաւորութեամբ՝ սրահի մէջ վայելչապէս երեւելու համար, ուր թէպէտ խիստ աննշան դեր մը պիտի կատարէ: Այս փափուկ վիճակին մէջ ողջամիտ վարժուհին աւելի հանգիստ կը լինի իւր աշակերտուհեաց հետ քան թէ այն գումարմանց մէջ՝ ուր տաղանդին խելամուտութեան և հանձարոյ առաջնութիւն չկրնար տրուիլ միշտ:

Երբ կը խօսիմ այն արուեստից վրայ որոց կուշուած են այժմեան կանայք, այնպիսի խնդիր մը կը ներկայանայ՝ որ ի Գաղլիա՝ բայց մանաւանդ յԱնգղիա և յԱմերիկա, եռանդուն վիճարանութեանց առարկայ եղած է: Իբր կին և իբր քրիստոնեայ՝ բոլորով սրտիւ կը հաւանիմ ոչ միայն կանանց աշխատութեան գոհացուցիչ փոխարինութիւն ընելու ճգանց, այլ և մարդկութեան և արդարութեան յոյժ պատշաճ կը համարիմ նոցա դործունեութեան բացուած ասպարէզներուն թիւն աւելցնել: Չերկնչիմք բարձրաձայն հռչակել թէ՛ վարժուց և աշխատութեան միջոցներուն անբաւակա-

նութիւնը բարուց խանգարման գլխաւոր պատճառներէն մին է, որոյ դէմ յոյժ իրաւացի գանգատներ կը բարձրանան:

Գաղափարաց ուրիշ կարգի մը մէջ, այսինքն նիւթական շահուց և գործոց մատակարարութեան և ընտանեաց բարոյական ուղղութեան մէջ, միթէ օրինական արգելքներ չկա՞ն, մնացորդք ա՛յնպիսի իրաւագլխութեան որ հակառակ է մարդկային մտաց իմաստասիրական յառաջադիմութեան, այն է՝ կինը տակաւին իբր անչափահաս համարելով՝ նախատական խնամակալութեան մը տակ պահել: Այն մնացորդք պարտին անհետ լինել և ժամանակիս ոգւոյն աւելի համաձայն օրէնադրութեան մը տեղի տալ: Այս է արդար և պարկեշտ մտածութիւն մը՝ որում նոյնպէս կը հաւանիմ, և յոյս մը՝ զոր ներելի է տածել:

Բայց հարկ է աւելի հեռուն երթալ և երկու սեռից մէջ նոյն իսկ բնութեան դրած պատնէշները կործանել, ըսելով թէ՛ երկուքն եւս հաւասարապէս հանձարեղ լինելով՝ ընկերական և քաղաքական մի և նոյն պաշտամանց իրաւունք ունին: Պէ՞տք է դատարանները բանալ կանանց՝ որպէս զի կարենան արանց նման դատել՝ ամբաստանել կամ ջատագովել. վիրաբուժութեան սրահները, բժշկական դպրոցները և հիւանդանոցները, ընտրական ժողովները՝ որպէս զի իրենց քուէները տան, օրէնսդրական ժողովները՝ որ օրինաց խմբագրութեան

մասնակցին, քաղաքական կամ ելմտական զանազան վարչութիւններն՝ ուր այնպիսի գործոց զբաղին որ մինչեւ ցարդ արգիլեալ էր իրենց: Ըստ իս. ասոնք ա՛յնպիսի ցնորամիտ յաւակնութիւններ և մտացածին յիմար խորհուրդներ են՝ որոց դէմ ողջամիտ կանայք բարձրաձայն կը բողոքեն: Իսկ այնպիսիք որ, իբր բնութեան և արդարութեան իրաւունք, կը պահանջեն յանձն առնուլ հասարակային կենաց կցորդ եղող հոգերն ու աշխատութիւնները, որոց համար ծնած չեն, շատ պիտի շփոթին եթէ իրենց կամքը կատարի: Շուտ պիտի տեսնեն թէ՛ իւրեանց կանացի և մայրական պարտականութիւններէն հրաժարելով՝ ամենախիստ գերութեան հետ պիտի փոխանակեն ընտանեաց խանդաղատական թագաւորութիւնը, տան կառավարութիւնն ուր բնաւ արգելք մը չունին ի գործ դնելու իրենց մտաց ամենէն ճոխ կարողութիւնները և իրենց սրտին բոլոր զօրութիւնը: Ճշմարիտ ազատութիւնը հոգւոյն ազատութիւնն է. և կինը միշտ կին մնալով՝ կարող է՝ որքան լրջութեամբ որ ուզէ՝ իւր հայրենեաց բարձրագոյն շահուց մասնակցիլ:

Մայրական յատկութիւնն ամենեւին անմիաբան չէ քաղաքացուհւոյ յատկութեան. առանց ուղալի մասնակցելու հասարակաց գործոց՝ կինը կարող է հետաքրքրիլ և խելամուտութեամբ հետեւիլ եղելութեանց ընթացից, գլուխ եղող անձանց իմաստութիւնը և գործերը գնահատել, վերջապէս իւր

լուտոյն և անձնանուիրութեան բաժինը մատու-
ցանել հասարակաց գործոյն, և ժողովրդեան կրից
և ընդունայն յուզմանց խառնուել՝ առանց իւր
սրահը կամ տունը թողելու :

Այս նկատողութեամբք կաւարտեմ ինչ որ կա-
ռաջագրէի ըսել աղջկան հանձարոյն գործածու-
թեան վրայ որ կոչուած է ներքին աշխատութեանց
մասնակցելու և այսօր իւր առջեւ բացուած գոր-
ծոց զբաղելու : Այժմ իրեն սլտի հեաեւիմ ընկե-
րութեան մէջ, ուր ուրիշ տեսակ պարտականու-
թիւնք կսպասեն իրեն : Ուրեմն գործոյ աշխարհը
կը թողում՝ ընկերական գործոց զբաղելու համար :

Գ Ա Ս Ը .

Հաննար ընկերութեան մէջ : — Ընկերական պարսականու-
թիւնք : — Սրահ : — Խօսակցութիւն : — Երաժշտութիւն եւ
արուեստ զուարմութեան : — Խնջոյք : — Պարահանդէպ : —
Բուն ընկերական կից :

Ա .

Հանձար՝ շնորհք՝ տաղանդք՝ որ արգասիք են
ընտիր դաստիարակութեան, և ընտանեկան կենաց
վրայ այնքան յանկուցիչ գեղեցկութիւն կը ծաւա-
լեն, գլխաւոր հրապոյրքն են մտերմական ընկե-
րութեանց կամ մեծ խնջոյից : Ընկերականութեան
ընազդում մը ամեն աստիճանի և ամեն կարգի
մարդոց կը ներշնչէ ընկերութեամբ զբօնելու պի-
տոյքը : Իրենց զուարճութեանց տեսակը միշտ հա-
մեմատ է իրենց կրթութեան աստիճանին : Գործա-
ւորին խանութը, հողագործին խրճիթը, մինչեւ
խոկ գունապանին խցիկը, երբեմն խնամօք զարդա-
րեալ սրահներ կը դառնան՝ անդ գումարուելու

հրաւիրեալ ազգականաց և բարեկամաց համար : Ընտանեկան այս խնջոյք կը նպաստեն բարուց : և յոյժ փափաքելի է որ նոյն խաղաղ գումարմունք կիրակի օրը , ինչպէս երեկոյեան դպրոցք շարթուան միւս օրերը , զօրաւոր մրցում մի ընեն այն տեղեաց հետ՝ որ ունանց մուցնել կուտան իւրեանց սուենն ու ընտանիքը :

Այս գումարմունք երկար ժամանակէ հետէ սովորութիւն եղած են մեծատանց , որք իրաւամբ կարեւորութիւն կուտան անոնց . վասն զի գիտեն թէ մարդ ընկերութեան մէջ կուսանի թէ ինչ կարժէ , և ստոյգ գաղափար կստանայ առ ինքն և առ այլս ունեցած պարտականութեանց վրայ :

Այս խօսքիս նպատակը չէ արտաքին քաղաքավարութիւնը , վայելուչ կերպերը , այն սովորութիւնները զոր նորաձեւութիւնը կարէ փոխել , վերջապէս այն ամեն պատշաճութիւնք զոր կարեւոր է ճանաչել և իմաստուն դաստիարակութեամբ կը սորվուի : Եւ ոչ իսկ հրաւէրի կամ ծանուցման նամակաց զանազան ձեւերը , այցելութեանց պատշաճութիւնքը , հանդիսաւոր ընդունելութեանց մէջ պահելու սովորութիւնքն , այս ինչ կամ այն ինչ պարագայի մէջ հագուստի համար հետեւելու կանոնք , և վերջապէս այն ամեն տեսակ կանոնները , որոց ամբողջութիւնը կը կազմէ զայն՝ զոր երկար ժամանակ ֆաղափարուրդն անուանեցին : Արտաքին քաղաքավարութեան այս օրէնքները քիչ

ժամանակի մէջ կը սորվուին : Բայց մէկ աւուր մէջ չսորվուիր մտաց և սրտի յատկութեամբք ընկերութեան և աշխարհի մէջ պատուաւոր տեղ մը պատրաստելու արուեստը , որ կը յօրինէ զայն՝ զոր եօթնևտասներորդ դարուն մէջ պարկեշտ մարդ կանուանէին :

Բ.

Կանայք ոչ միայն ընկերութեան եղանակ կուտան , այլ և նորա գլխաւոր տարրն են . իւրեանց դաստիարակութիւնը թերի կը համարուի եթէ անդ կատարելու պարտականութիւններն ուսած չլինին : « Առանց նոցա , կրէ Տիկին տը Սթաէլ , ընկերութիւնը ոչ հաճոյական և ոչ կայտաւ կարէ լինել : Եթէ ընտիր դաստիարակութեամբ ստացած չլինին հանճար և խօսակցութեան վայելչութիւն , ընկերութիւնը գեղեցկացնելու տեղ կապականեն : » Եթէ սրահից մէջ տիրած ժամանակնին՝ յանձն առնուին ունայն նպատակ մը միայն , կամ սնտոի պարծանաց յաղթանակ մը . եթէ գոհ լինէին միայն իւրեանց զգեստուց պերճութեամբք և յաճախ այլանդակութեամբք վայլիլ , եթէ , միով բանիւ , պչրանքն իւրեանց միակ շարժառիթը լինէր , իւրեանց ազգեցութիւնն աղէտալի արդիւնք կուեն-

նար: Ընկերութեան մէջ, ինչպէս ընտանեաց մէջ, ազնուագոյն և բարձրագոյն պաշտօն մը ունին իրենք. այն է՝ պահել ազգի մը բոլոր աստիճանաց մէջ ընկերականութեան այն ոգին՝ որ ոչ այլ ինչ է՝ բայց եթէ մարդոց միջեւ յարգանաց՝ բարեյօ-
 ժարութեան և համակրութեան յարարերութեանց փոխանակութիւն: Պարտին հայթայթել այն ամեն ինչ որ զանոնք միմեանց կը մերձեցնէ, և անհետ ընել այն ամեն ինչ որ մէջերնին բաժանում կը ձգէ: Իրենք կը ներշնչեն վեհ և փափուկ զգացումներ. նուստ գործերը կարհամարհեն, ապե-
 րախտութիւնը կը պարսաւեն և արխարար կը պատուեն յանիրաւի տարաբախտ եղողները: Ուրեմն ընկերութիւնն առիթ կուտայ կանանց յայտնել իւրեանց բարոյական յատկութիւններն ինչպէս իւրեանց ոգին ու հանձարը. եթէ կարեւոր և արդար է որ ընկերութեան սէրը զանոնք չտոխպէ իւրեանց առտնին զբաղումները զանց առնել, ցաւալի պիտի լինէր եթէ հրաժարէին անդ օգտա-
 կար ներգործութիւն ընելէ:

Գ.

Սրահի մը յարգարումն ու կառավարութիւնը տան տիրուհւոյն կողմանէ կը սրահանջեն այնպիսի

յատկութիւններ՝ որ դուռն ուրեք ի միասին կը գտնուին. կարծես թէ այդ յատկութիւնք մասնա-
 ւորապէս շնորհուած են գաղղիացի կանանց, որք նպաստեցին կատարելագործել մեր ազգին մէջ ըն-
 կերականութեան այն ոգին զոր օտար ժողովուրդք հաճեցան խոստովանիլ ամեն ժամանակ:

Վերջին դարու փիլիսոփայ մը, որ անտարբեր էր ի մասին ընկերութեան, ձգբտապէս նկարագրեց այն հրապոյրքը զոր կը ներկայացնէր իւր ժամանակի սրահից խօսակցութիւնը, որոյ աւանդութիւնն այժմ սակաւաթիւ տանց մէջ միայն պահուած է:

« խօսակցութեան ոճը սահուն է անդ և բնական, կըսէր, ոչ տաղտկալի՝ ոչ ունայն, գիտնական է առանց խմաստակութեան, զուարթ՝ առանց աղմկի, քաղաքավար՝ առանց պաճուճանաց, չքաղեր՝ առանց անհամութեան, ծաղրածու՝ առանց երկդիմութեան: Ասոնք ոչ ճառ են, ոչ սրբանութիւն. առանց պատճառաբանութեան կը արամբանեն, և առանց բառախաղութեան կը զուարճաբանեն, ճարտարապէս կը միացնեն հանձարը և դատողութիւնը, առածներն ու խմաստալից խօսքերը՝ սուր երգիծաբանութիւնը՝ ճարտար փաղաքչանքը և անաչառ բարոյականը: Ամեն նիւթոյ վրայ կը խօսին՝ որպէս զի իւրաքանչիւր ոք կարենայ բան մը խօսիլ. խնդիրները շատ չեն խորազններ՝ որպէս զի ճանճրութիւն չպատճառի:

հարեւանցի կառաջարկեն և արագապէս կանցնին . ճշգրութիւնը կը տանի առ ազնուութիւն . ամեն ոք իւր կարծիքը կը յայտնէ և սակաւ բանիւք կը հաստատէ , ոչ ոք եռանդեամբ կը մերժէ ուրիշինը , և ոչ ոք յամուտութեամբ կը պաշտպանէ իրենը . կը վիճեն լուսաւորուելու համար , կանգ կառնուն երբ տեսնեն թէ վէճը պիտի սաստկանայ . իւրաքանչիւր ոք կուսանի՝ միանգամայն և կղբօսնու . ամենեքին զուարթ կը մեկնին , և խնայտունն իսկ կարէ այն խօսակցութիւններէն առանձինն խոկալու արժանի նիւթ տանիլ իրեն հետ : »

Դ .

Պօսելու արուեստը բոլորովին գաղղիացւոց յատուկ ձիրք է . ուրիշ ազգաց մէջ գումարմունք կը լինին , ուր կը ճառեն , կը վիճեն , կը ճառատեն . ի Գաղղիա միայն կը խօսակցին :

Սրահի մը մէջ գումարել հանճարեղ և բարեկիրթ ընկերութիւն մը , տաղանդաւոր և երբեմն գերահանճար մարդիկ , և կանայք՝ որ իւրեանց գեղեցկութեան՝ մատաղութեան և աստիճանի փայլին հետ ունին այն անյաղթ հրապոյրքը զոր կը յաւելլու մշակեալ բանավարութեան ազգեցու-

թիւնը . վայելչութեամբ հրահանգեալ բոլոր այս ազնիւ ոգիներն ընդդիմախօսելու բերել , որք դիմադարձութենէ գրգռեալ կամ համակրութենէ ոգեւորեալ հանճարոյ խաղաղ մաքառմանց տեսարանը կընծայեն միմեանց փոխադարձաբար , ազնիւ գործ մը կատարելէ , որոյ գիտութիւնը թուի թէ գաղղիացի կանանց կը վերաբերի յատկապէս :

Ճշմարտութեան խոստովանութիւնն է այս՝ զոր առանց վարանման ըրին այն օտարք որ եօթնեւտասներորդ և ութեւտասներորդ դարուց մէջ Գաղղիա եկան՝ ի մօտոյ տեսնելու փափաքով այն ազգը՝ որոյ վրայ իւր մատենագրաց մեծ հանճարն այնքան սաստիկ փայլ կը տարածէր :

Անտի իրենց տարած յիշատակաց քաղցրագոյնն համարեցին նոյն գումարմանց մէջ ընդունուած լինելուն բարեբախտութիւնը , որք բաց էին ամեն հիացում պատճառող կամ յարգանք ազգող իրաց :

Եւրոպայի երիտասարդաց դաստիարակութենէն բան մը պակասած պիտի լինէր եթէ չգային գաղղիական սրահից մէջ ուսանելու այն ընտիր քաղաքավարութիւնն , այն բարձր վայելչութիւնն որում կարէին հաղորդ լինել միայն անդր յաճախելով :

Սրահ մը վարելու արուեստը՝ խօսելու և խօսել տալու տաղանդը բոլորովին գաղղիական մենաշնորհ մը նկատուած էր : Ընկերականութեան բնաւորութիւնը որ յատուկ է Գաղղիոյ բնակչաց , և

իրեանց սիրելութիւնն ու մտաւորական զուար-
ձութեան սուր ճաշակը՝ կանանց իրաւացի ազդե-
ցութիւնն հիմնեցին :

Երբ Հենրիկոս չորրորդի հայրական իշխանու-
թեան ներքեւ խաղաղացեալ Գաղղիան՝ քաղաքա-
յին և կրօնային պատերազմներէն պատճառեալ
աղէտները դարմանելու կղբաղէր, բարուց քաղ-
ցութեան և քաղաքավարութեան ու ընկերական
համախոհութեան վերադարձի առաջին նշաններն
յայտնուեցան սրահի մը մէջ՝ զոր կազմած էր
սրտով և հանձարով նշանաւոր կին մը, տիկին
տը Ռանպուրիէ :

Մեծ իշխանք իրենց քով հրաւիրեցին գրագէտ-
ները, զանոնք պատուեցին, և անոնցմէ ստացան
մտային վսեմ զուարճութեանց ճաշակը :

Այս մտաւորական փոխանակութեան առաջին-
երեւութին մէջ, սրահից խօսակցութենէ ծագած
այս իմացական զարգացման սկսած միջոցին՝ չա-
փազանցութիւնը և զեղծումը չկասեցան մուտ
գտնել սրահի խոհական և չափաւոր սովորութեան
մէջ :

Հանձարն ամեն ժամանակէ աւելի պատիւ ստա-
ցաւ բայց, ամեն շողքորթեալ իշխանութեանց
նման, բանավարութեան և ընտիր ճաշակին գծած
սահմաններէն անդին սրացաւ : Մտացի կանանց
քով գտնուեցան նաև մորոսարար փքացեալ կա-
նայք՝ որ պատուական ծիծաղելիք կանուանին :

Ե.

Լուդովիկոս երեքտասաներորդի թագաւորու-
թեան և Աւստրիոյ Աննայի խնամապետութեան
ժամանակ աւելի վեհանձնութիւն կը տեսնուէր
քան թէ հանձար :

Կային ազնիւ գործք՝ բայց և ունայն խօսա-
կցութիւնք : Լուդովիկոս չորեքտասաներորդի հետ
և ընդ ազգեցութեամբ կանոնաւոր կառավարու-
թեան մը որոյ կը նախագահէն վեհութիւն և ուղջ-
մտութիւն, ընկերութիւնը մեծութեան մէջ բա-
րեկարգութեան տեսարանը կը ներկայացնէ :

Սրահից ոգին կը մասնակցի այդ բարեյաջող այ-
լակերպութեան, և Մոլիէրի ծաղրած ընտիր ոճն
այնուհետեւ կը մնայ միայն մի քանի միջակային
քաղաքացւոց ակումբներու և մի քանի բարձրաս-
տիճան գերդաստանաց գումարմանց մէջ, որոց
ճաշակն յառաջացած չէր :

Մեր սրահից պատմութեան մէջ յոյժ նշանաւոր
է այդ ժամանակն ուր գաղղիական հանձարն հա-
սաւ այն սիրուն ճշդութեան՝ այն վսեմ անկեղ-
ծութեան՝ այն շնորհալի պարզութեան և այն գի-
տնական փափկութեան զոր իրենց կը հաղորդէ
տիկին տը Սէվինյէի՝ տիկին տը Լաֆայէթի և տի-
կին տը Մենթընոնի ազգեցութիւնը :

Այսու ամենայնիւ Ռանպուլիէի ապարանաց ընկերութեան մեղադրելի թերութիւնք բոլորովին անհետացած չէին: Լա Պրիւէյէր իւր խօսակցութեան գլխոյն մէջ սաստիկ գոյներով կը նկարագրէ սրահի խօսակցաց ոմանց ծիծաղելի կողմերը, որ տաղտկալի են հանձարի շուայլութեամբ՝ ունայնութեամբ՝ թեթեւութեամբ՝ ընտանութեամբ՝ համարձակութեամբ, որք ընկերութեան մէջ միշտ խօսողքն են և հարկ է որ միւսներն իրենց մտիկ ընեն, նաև այն անհանձարք՝ որոց համար խօսել և թշնամանել մի և նոյն բանն է, և այն տաղտկալի գիտունք որ երբէք չեն խօսիր Գաղղիոյ կամ Վերսայլի վրայ, այլ հաճոյք կղզան խօսել Բարբընի աշտարակին կամ մուցուած ժամանակի բարձր եղելութեանց վրայ:

Լա Պրիւէյէր չէր ուզեր որ խօսելու համար խօսուէր, ինչպէս յաճախ կը պատահի և իրաւունք ունի: Ճարտար մարդը, կըսէ նա, պէտք է լռել գիտնայ ճիշդ այն պահուն՝ ուր աւելորդ բան մը պիտի ըսէր: Բայց հանձարեղ կիներէ և ճաշակաւոր մարդերէ բազկացեալ ակումբի մը ուշը գրաւել յաջողելու համար, այսինքն ամենապիտքը նիւթոց վրայ վայելչութեամբ ճառելու համար շատ քաղաքավարութիւն և բեղմնաւոր միտք պէտք է:

Տիկին տը Մենթնոն բոլորովին օտար մնացած չէր Ռանպուլիէի ապարանաց խօսակցութեան սեթեւեթեալ և արուեստակեալ կերպին:

« Ձեր գեղեցիկ հանձարը չեմ սիրեր, » կըսէր Լուգուլիկոս ԺԳ. տիկին տը Մոնթեպիանի:

Սակայն չափազանց սիրեց երբ գնա ծանեաւ:

Այն մեծ արքայն կը պերճանար գեղեցիկ հաւնձարոյն տեղ բարի հաւնձարը դնելուն վրայ: Այսու կիմանար ամեն սեթեւեթի՝ արուեստական ամեն հանդերձանաց՝ ամեն ճուռմութեան՝ ամեն յաւակնութեան բացակայութիւն. և անոնց տեղ ասացուածոյ այն պատշաճութիւնը՝ պարզութիւնը՝ յստակութիւնը՝ գիւրութիւնը և ընտանութիւնը, որք գաղղիական լեզուին բարձրագոյն աստիճանի կատարելութիւնն են:

2.

Իբր միջին աստիճան եօթնեւտասներորդ դարու ակմբոց չափաւորութեան և ութեւտասներորդին աճեցուն ազատութեան, 1710ին տը Լանպէր մարքիզուհւոյն բացած սրահն ուշադրութիւն կը գրաւէ նախ: Եւ որ քսաներեք տարի շարունակ երեւելի արանց ժամադրութեան տեղի եղաւ: Ճարտար զուարճախօսութիւնը և ծանր վիճարանութիւնք հակապատկեր մը կը ներկայացնէին խնամապետութեան ժամանակի տեսակին՝ որ ըն-

տիր ճաշակը և պատշաճութիւնը վտանգած էր :

Այս փափուկ և քաղաքավար ակումբին նախագահն էր Ֆոնթընէլ : Դիտելու արժանի է թէ՛ միայն սա էր որ խաղամուրթեան համաճարակ ախտէն զերծ մնաց : Սրահք մենաշնորհ կստանային գրական փառք մատակարարելու և մինչև իսկ ճեմական ընտրութիւններ ընելու . և այդ մենաշնորհը պահեցին :

Լուդովիկոս Ժ. Դ. ի վերջին տարիներուն մէջ՝ Մէնի դուքան ու դքսուհին ուզեցին որ Սոյի գլեակը մրցի Շանթիլիի և Վէրսայի գլեակներուն հետ : Ի սկզբան տարբերեցան միայն իւրեանց չափութեան՝ զուարճութեան՝ յիմար ուրախութեանց և շքեղ խնջոյից ճաշակաւ : Բայց մեծին Գոնտէի դստեր և նորա ամուսնոյն դժբաղդութենէն յետոյ , սիրուն ընկերութիւն մը գումարեցաւ անդ , որ իրեն ձգեց ժամանակակից բոլոր երեւելի մարդիկին : Տիկին տը Մէն անչափ զուարթութեամբ կընէր իւր պատմութիւնները : Զուարճութեանց այս սաստիկ սէրը , որոց մէջ հանճարը մեծաւ մասամբ կը տիրէր , դքսուհւոյն ըսել կուտար թէ , « Կուզէի որ ուրախութիւնն հանճար ունենար : »

Տիկին տը Թանտէն , Կարտինալին քոյրը , ընդունելութիւն ըրաւ բազմաթիւ նշանաւոր անձանց : Զանի ճանչցողները կը գովեն նորա հանճարոյն նրբութիւնը և բնաւորութեան զօրութիւնը : Միամտութեան և պարզութեան արտաքին երեւութով՝

աւելի տնարարի կերպարանք ունէր քան տիրուհւոյ : Իւր յիշատակութիւնն ընող գրիչք կըսեն թէ՛ ոչ ոք ունեցած է աւելի խորատեսութիւն այնքան պարզութեան երեւութով , և ոչ աւելի ճարտար կենցաղավարութիւն՝ այնքան բնական կերպերով : Բայց հանճարեղ մարդիկ , զոր իւր անասունիք կանուանէր , մեծ պատրաստութեամբ կուգային՝ ընդ ներշնչութեամբ տիրուհւոյն դեր մը խաղալու կամ ճոխանալու , ինչպէս կըսուի այսօր :

Տիկին ալ Տէֆան բացաւ իւր սրահներն 1740ին : Իւր ակումբին աւելի հրապոյրք և կարեւորութիւն տուողն էր՝ գաղղիական ազնուապետութեան վեհադոյն մասին , իմաստասիրաց , գրագիտաց և մեծ իշխանաց ի միասին գումարուիլը : Ուր իմաստասէրք և գրագէտք միւսները վարժեցուցին տիպարաց՝ բարձր աստիճանաց՝ նախապաշարմանց՝ և իրենց կեցութեան մեծ մասը կազմել զեղծմանց պարսաւը լսելու և անձամբ ևս պարսաւելու , և իւրեանց կատակներովն ու կծու վերտառութեամբքն Յեղափոխութիւնը պատրաստելու՝ որոց զոհերը պիտի լինէին իրենք :

է .

Բայց ութեւտաներորդ դարուն բուն սրահ տիկին ժոֆրէնինն եղաւ , իմաստասէրք՝ արուեստ-

տագէտք՝ գիտունք և մեծամեծք՝ բոլորն անդ
գումարեցան :

Տիկին ժողովուն նշանաւոր էր իւր գործունեայ
մտքն՝ որ ամենախորք մանրամասնութեանց կը
հասնէր, և մեծ ճարտարութեամբը՝ զոր ցոյց կու-
տար իւր փոքր պետութեան կարգադրութեան և
անտեսութեան մէջ :

Իւր գիտուն ճարտարութիւնը քաղաքավարու-
թեան և պարզութեան վարագործով կը ծածկէր՝
ի հարկին միայն խօսելով . խօսելու կարգը կառ-
նուր և անմիջապէս ուրիշի կուտար : Յաճախ կը
միջամտէր՝ միայն ներկայացեալ խնդրոյն լուսաւո-
րութեան նպատակն առակներ կամ պատմու-
թիւն մը ըսելու համար : Կը պատմէր աննմանելի
վայելչութեամբ, և իրազեկ էր այդմ՝ ուստի կըսէր .
« Ձեմ սիրեր որ իմ քարոզներս քարոզուին, պատ-
մութիւններս պատմուին, և ոչ ոք դպչի իմ կայ-
ծառներուս : » Առաւել ևս կը փայլէր իւր սրա-
մտութեամբը քան հաստատուն հմտութեամբը :
Իւր նպատակն էր մանաւանդ՝ ճերմութեան ժամա-
նակ զուարթարար ընկերութիւն մի ունենալ :

Երկուշաբթի օրերն արուեստագէտները կը
հրաւիրէր ընթրեաց, չորեքշաբթի օրերը՝ գրա-
գէտները : Իւր բարեկամք կըսեն թէ բարի էր նա՝
բայց քիչ զգայուն . բարեգործ՝ բայց ոչ մարդա-
սէր . տառապելոց օգնելու անհամբեր՝ բայց զա-
նոնք տեսնել չէր ուզէր՝ որպէս զի չյուզուէր .

սպահով և հաւատարիմ բարեկամուհի և մինչև
իսկ հաճոյակատար, բայց երկչոտ՝ վրդովալից, իւր
բարեկամաց վրայ ուշադիր՝ երկնչելով որ իւր վար-
կը կամ հանգստութիւնը կը վտանգի :

Իւր ճաշակաց՝ հանդերձից և կարասեաց մասին
պարզ էր, բայց իւր պարզութեան մէջ սեթեւե-
թեալ . ունենալով պերճութեան փափկութիւնները
մինչև ի նրբութիւն, բայց ոչ փայլ և ունայնա-
մտութիւն . համեստ էր վարուք՝ գնացիւք և կեր-
պերով, բայց ի ներքուստ ունէր փոքր ինչ հպար-
տութիւն և սնափառութիւն :

Մեծաց հետ ունեցած առնչութիւնն ամենէն
աւելի հաճոյական էր իրեն . գիտէր առ ինքն բե-
րել զնոսա անզգալի շողմական պչրողութեամբ,
և հաճոյական՝ բնական՝ կէս մեծարիչ և կէս ըն-
տանի կերպերովն :

Տիկին ժողովունի սրահն հռչակաւոր եղած էր
բոլոր Եւրոպայի մէջ :

Փորձն իրեն ուսուցած էր թէ՛ ունայնութիւնը
սրահի խօսակցաց մեծագոյն մասին շարժառիթն է :

Շատախօսները չէր սիրեր : « Շատախօսից հետ
կրնամ յարմարիլ, կըսէր, եթէ կարճ կապող լի-
նին, միայն խօսիլ ուզեն և պատասխանի չսպասեն : »

Իւր խոհեմութիւնը կը հաւասարէր հանճարոյն :
Չէր ուզէր որ կառավարութիւնն իւր առջեւ պար-
սուէին, մանաւանդ կրօնից վրայ թեթևութեամբ
խօսէին :

Սա մէկ խօսքով թէ « Լաւ է , » կը դադրեցնէր այն խօսակցութիւններն որ պիտի խտորէին յանդուգն նիւթերու վրայ :

Ը .

Այս հաճոյական սրահք անյայտ եղան . կորսուեցաւ նաև խօսելու ձեւական արուեստը որ կը պարունակէր նուրբ մտածութիւն յատակ և ճիշդ դարձուածով , ինչպէս և խօսակցութիւնն սկսելու համար նուազ կարեւոր նիւթոց վրայ ազնուական կերպով ձառելու արուեստը :

Ի վերջն ութեւտաներորդ դարուն՝ խօսակցութիւնք փոխուեցան ատենաբանութեանց՝ դատաստանական բանակցութեանց , և թիկնաթուղ կրցաւ բեմի նմանիլ :

Կին մը , որոյ միայն անունը կը ծանուցանէ մեզ թէ՛ ուրիշ աշխարհի մը սեմոց վրայ հասած եմք և կզգացնէ նոր ընկերութեան մը յաջորդելը , տիկին Նէքէր , Լուդովիկոս ԺՁ . ի մեծ պաշտօնէին կինը , կը բանար յայնժամ իւր սրահը գրադիտաց՝ իմաստասիրաց և ատենաբանից :

Ըստ արժանւոյն պատիւ կընէր՝ բայց ցուրտ կերպիւ . յատկութիւն մը կը պակսէր իրեն , այն է

դիւրութիւն մը որ խօսակցին մտաց եռանդ կուտայ : Միայն զբօնելու դիտմամբ չբացաւ իւր սրահը , այլ իւր այրը ծանօթացնելու և փայլեցնելու համար . փառասիրութիւնն էր իւր նպատակը :

Օր մը Գասթէլիւքսի ասպետը ճաշի համար այնչափ կանուխ հասաւ որ տան տիրուհին սրահը չէր տակաւին , և անդ գտաւ գրքոյկ մը՝ որոյ վրայ տիկին Նէքէր կանխաւ գրած էր ինչ որ պիտի ըսէր իւր պատուաւոր հրաւիրելոց :

Տիկին Նէքէրի սրահին , ինչպէս նոյն ժամանակի միւս սրահից մէջ , խօսակցութիւնք յաճախ տեղի տուին առանձնախօսութեան և ատենախօսութեան :

Ընկերութիւնն ընդհանուր ձանձրութեամբ կը նեղուէր , որոյ թեթեւութիւնն ու անկարգ ազատութիւնն անբերելի հետեւութիւն ունեցան :

Տիկին տը Սթաէլ , դուստր Նէքէրի , տակաւին իւր մատաղագոյն հասակէն այս վառվառն՝ հանձարեղ՝ եռանդոտ և ազնուական ընկերութեան վերջին գեղեցիկ աւուրց ներկայ կը գանուէր :

Սրահը կը փակուին ընդ հուպ , խօսակցութիւնը կը դադարի , խօսողք տեղի կուտան լրագրաց խմբագիրներու , և խօսքն Յեղափոխութեան կը տրուի : (1)

(1) Փարիզու սրահից վրայ այս պատմական պարագայք բաղուած են Պ . Հիփոյի անտիպ երկասիրութենէն : Ծ . Հ .

թ .

Յեղափոխութեանց ժամանակ չինտուուիր ան-
շուշտ այնպիսի քաղցր և խաղաղ գումարումներ ,
հաճոյական ժողովներ որոց խօսակցութիւնքը
զուարթարար լինին :

Այն կանայք որ ընկերական և քաղաքական
ամեն խնդրոց վրայ լրջութեամբ վիճաբանող մար-
դիկ գումարած էին , ուրիշ կարգի առաքինութիւն-
ներ արտայայտել սկսան : Նոքա որ իւրեանց հան-
ճարոյն վայելչութեամբքն ամենէն նշանաւոր էին՝
վեհանձնական արիութեան և մեծագոյն անձնա-
նուիրութեան տեսարանը տուին աշխարհի : Յեղա-
փոխութեան յուր աւուրց մէջ իւրեանց վարմունքն
հիանալի եղաւ , և այն թագուհւոյն յիշատակները ,
որ կաշխատէր՝ կաղօթէր և մատաղատի իշխանները
կը կրթէր մութ բանտի մը մէջ , այնպիսի պատկեր-
ներ են՝ յորս միշտ յուզմամբ կը տեսնուի ինչ որ
կայ ամենապսեմ՝ Աստուծոյ սիրած և մխիթարած
հոգւոյն մէջ . այն է՝ համակերպութիւն և դիւցազ-
նութիւն :

Երբ այնքան փոթորիկներէ յետոյ հանդարտու-
թիւնը տիրեց , և վերանորոգեալ ընկերութիւնն
իւր հիմանց վրայ հաստատուեցաւ , մի քանի կա-

նանց ազգեցութեամբը դարձեալ երեւցան կիրթ
ճաշակի և պերճութեան այն աւանդութիւնք որ
այնքան բուռն կերպիւ խորտակուած էին :

Վստահ լինիմք թէ՛ իննեւտասներորդ դարուն
պատմութիւնը գեղեցիկ էջեր պիտի ունենայ ապա-
դային մէջ , երբ սրահից պատմութիւնն ևս գրել
ուզուի : Իմաստասէրք՝ պատմիչք՝ արուեստագէտք
բժիշկք՝ տտենարանք՝ հրատարակիչք՝ ատենակալք՝
պատերազմիկք՝ ամենեքին հետզհետէ փայլեցան
տիկին տը Սթայէլի՝ տիկին տը Տիւրասի՝ տիկին
Ռէգամիէի՝ տիկին Կիզոյի՝ տիկին տը Ժիրարտէնի՝
տիկին Սվէշինի և տիկին Անաըլոյի սրահից մէջ :
Այս վերջինը սոյն ընտիր ընկերութեան սիրուն
վերջամասցն եղաւ :

Ժ .

Մի քանի հոշակաւոր սրահից այս յետահայե-
ցիկ ակնարկը պէտք չէ որ ինձ մոռցնէ թէ՛ խօսե-
լով այն յատկութեանց վրայ զոր աղջիկ մը պար-
տի բերել ընկերութեան և բազմութեան մէջ , կը
խորհիմ մանաւանդ սովորական գումարմանց վրայ՝
ուր պարզ լինելու պատճառանօք չմերժուիր կիրթ

ճաշակը և հանձարը : Վայելչութիւնը և քաղաքա-
վարութիւնը կարող են և պարտին տեղի ունենալ
ամենապարզ ակփրոց մէջ իսկ :

Ազգականաց՝ բարեկամաց և սովորական ծանօ-
թից մտերմական գումարմունք սահմանաւոր շրջա-
նակի մէջ լինելով նուազ հաճոյական չեն : Պա-
տուադիր սովորութեան և ճահաւորութեան վե-
րաբերեալ ամեն ինչ արտաքսեալ է անտի . նախա-
պատրաստութեան հարկ չկայ բնաւ . և անակնկա-
լութիւնը զուարճութեան հրապոյրքը կաւելցնէ :
Զգեստուց պերճութիւն չպահանջուիր , և սնտիա-
ռութիւնը կամ անձնասիրութիւնը գոհացնելու
տեղի չկայ : Զուարթութիւնն ամենուն դիմաց
վրայ կը փայլի , վտահութիւնը սրտերը միմեանց
կը մօտեցնէ , և զգացուած հաճոյք յանպատրաստից
լինելով՝ քաղցրագոյն են :

Մատաղատի աղջկունք զուարթութեամբ կօ-
քեն են տան տիրուհւոյն : Ամենէն եռանդունք կըստ-
անձնեն թէի պաշտօնը . սիրելագոյնք և հաճոյա-
կատարք կը ճանչցուին իրենց շնորհքէն որով ամեն
բանի կը պատշաճին :

Այն տանց մէջ ուր գեղարուեստք յարգի են ,
և այսօր սակաւաթիւ չեն այդպիսի տունք , հաճո-
յարար և դիւրամատոյց ճարտարք ի հանդէս կու-
գան առանց մեծամտութեան : Թախանձանք հարկ
չէ քաջահմուտ անձանց , և կարելի է առանց ան-
պատեհութեան մուանալ այն աղջիկն որ պա-

տրաստ է դիտմամբ մերժել կամ չատ թախանձա-
նաց սպասել :

Տան տիրուհւոյ պարտականութիւնք բազմաթիւ
փափուկ պարագաներ կը պարունակեն՝ որոց կա-
տարումն ապացոյց է հանձարի և կենցաղագիտու-
թեան : Ի հարկին լուրջ կերեւի առանց բռնադա-
տման , և ուրախ՝ առանց թեթեւութեան . իւր
եռանդը կը չափաւորէ շնորհօք և քաղցրութեամբ .
իւր խօսքերը բնական բարութեան մը հրապուրիչ
թարգմանութիւնքն են . չափազանց խտտակրօնու-
թիւն չկեղծեր անմեղագոյն կատակներէ գայթա-
կղելով , երկչոտները կը քաջալերէ բարեսրտու-
թեամբ , և մեծամիտն ամթախար կընէ ծանրու-
թեամբ : Այս ամենը գրքէ չսորվուիր , այլ ընկե-
րութեան մէջ մտնելով , և որով միայն կը հասնուի
ճանաչել զնա և յարմարիլ նորա պահանջմանցն ու
սովորութեանց :

ԺԱ .

Եթէ ընտրողութիւնն ու ճարտարութիւնը պի-
տանի են սրահի մը կառավարութեան , հրաւիրելոց
և ս նուազ կարեւոր չեն : Երաժշտական տաղանդ
ունեցող աղջիկը միայն այնու հաճելի չլինիր ընկե-
րութեան , այլ և հարկ է որ գիտնայ ի հարկին

գործածեւ զայն . պարու միջոցին անյարմար եղա-
նակ մը չափտի նուագէ . պիտի հասկնայ թէ ինք-
զինքը մտիկ ընել տալու է յայնժամ միայն՝ երբ
ապահով է թէ ունկնդիրք չափտի ձանձրանան :

Գուժարման ամեն տեսակաց մէջ՝ երիտասարդ
գութեան զօրաւորագոյն հրապոյրք տուողն են
անոնք՝ որոց հրաւերի տոմսակաց մէջ կերելին պիտի
պարտի բաւերն , որք միշտ հաճութեամբ կընդու-
նուին : Առանց յուզման չէ որ կը յիշուին այն
զուարթ և փայլուն խնջոյքներն ուր պարողք և
պարուհիք հասակին բոլոր փայլման և թարմու-
թեան մէջ , ամենայն վայելչութեամբ զարդար-
եալ , սիրուն եռանդեամբ ինքզինքնին կուտան
իրենց յարմար ամենէն յանկուցիչ զուարճութեանց
միոյն : Մեծ պարահանդիսից վրայ չէ խօսքս , և
ոչ պաշտօնական պարահանդիսից , ուր ներկայ կը
գտնուին ունայնամտութեամբ , և ուր կերթան
հանդիսական կերպիւ յօրանջելու , մինչ քանի մը
երիտասարդք տխրութեամբ և իբր թէ դատա-
պարտութիւն մը կրելու դիմօք կերեւին չքեղա-
գարդ աղջկանց առջեւ , որք յատակին վրայ կը
սահին ծանրութեամբ՝ իբր թէ հրամանաւ շար-
ժէին : Այդպիսի պարագայից մէջ մարց կիրթ
ճաշակը կարէ միայն սա պատուէրը տալ թէ՛
առաջին գուժարմանց մէջէն ելնելու ջանան առանց
չատ ճնշուելու և վաշխի կամ փօղխայի մէջ տեղ
իւրեանց զգեստէն մաս մը ձգելու , կամ երկրորդ

գուժարմանց մէջ տհաճութիւննին չյայտնելու
համար անձերնին զսպեն զգուշութեամբ : Պարելն
յայնժամ ճշմարիտ հաճոյք կարէ լինել աղջկան ,
երբ իւր իմացականութիւնը գոհացումն գտնէ
անդ , երբ բարեկամուհեաց պատահի՝ որոց հետ
սիրալիք խօսքեր փոխանակէ . երբ ճաշակաւ ըն-
տրուած հագուստին վրայ պարզութիւնը միացնէ
վայելչութեան . ընութեէն ընդունած ձիրքերէն
և ոչ մին կորուսանելով՝ կարէ սիրուն և քաղա-
քավար լինել առանց լ'տութեան , հանձարեղ՝
առանց չարութեան , և չնորհալից՝ առանց պչրա-
նաց :

ԺԲ .

Մասնաւոր երեկոյթներու մէջ պարելը շատ
անգամ տան ափրուհւոյն համար միջոց մի է , որով
կարէ իւր հրաւիրեալները զերծուցանել տաղտ-
կալի բազմախօսներէ կամ երիտասարդներն ազատ
պահել խաղամոլութեան փորձութենէ : Ժամա-
նակի տխուր նշան մի է կանխահաս խորշումն որ
մեր երիտասարդաց շատերն իրենց հասակին
զուարճութեանց անտարբեր կընէ : Ընկերական
պարտքերէ և պարտականութիւններէ ազատ կե-
նալն իրենց համար պիտոյք և փառք կը թուի :

Տասնևհինգ տարեկան հասակնուն մէջ այլ ևս չեն պարեր: Իւրեանց լրջութիւնը չկրնար հաւանիլ այսպիսի չնչին գրօսանաց. և նոյնչափ դժուարութիւն կայ գիրենք հաւանեցնելու որ երկտասարդ մնան, որչափ ծերոց ոմանց հասկցնելու թէ՛ ժամանակ է երկտասարդ լինելէ դադարելու: Ուրեմն իրենց դաստիարակութիւնն այս կէտին վրայ հարկ է բոլորովին փոխել, և եթէ մեր առտնին տնտեսութեան այս գլուխն ընկերութեան մէջ վարուելու կերպին վրայ օգտակար խրատներ կը պարունակէ, այդ խրատները կրնան իրենց և իւրեանց քերց ուղղուիլ:

Հարեանցի ինն ցոյց կուտամ միայն գումարմանց կարևորագոյն արդիւնքներէն մին՝ որոց մէջ խմաստութեամբ ընտրուած հրաւիրեալք կուսանին ինքզինքնին ճանաչել՝ յարգել և հաճոյական կամ օգտակար յարաբերութիւններ հաստատել: Մտերմական ընկերութեանց մէջ է որ երկտասարդք և երկտասարդուհիք առիթ կը գտնեն փոխադարձաբար գնահատելու իւրեանց կատարելութիւնները կամ թերութիւնները, և արթուն մարք որ իրենց դասերաց համար երազած ամուսնութեան մէջ շատ կարեւորութիւն կուտան պատշաճութեանց և սրտի համակրութեանց, զանց չեն ընէր այն առիթներն ուր իւրեանց ուշադիր միաբը կարէ ներգործել:

ԺԳ.

Դաստիարակութեան նուազ կարեւոր մասը չէ այն հսկողութիւնը զոր մայր մը լուսաւորեալ խանդաղատանօք կընէ իւր դստեր վրայ երբ ընկերութեան մէջ կը տանի զնա: Մաղթեմք որ մեր երկրին մէջ միշտ պահուին այս աւանդական իմաստուն սովորութիւնք որ ճարտար խոհեմութեամբ կը զուգախառնեն իշխանութիւնը, առանց որոյ բախտը կամ քմահաճութիւնը կը տիրէ, և ազատութիւնը՝ առանց որոյ չկայ բարոյական պատասխանատուութիւն: Կան ուրիշ ազգեր որ տարբեր սկզբունք ընդունած են և ստէպ կը գովեն լի և կատարեալ ազատութիւնը, առանց քննութեան և հակահշուտութեան անկախութիւնը, զոր աղջկունք կը վայելեն Անգլիոյ կամ Ամերիկայի Միացեալ-Նահանգաց մէջ:

Անձնիշխանութեան՝ յանձնապատանութեան ու դաստիարակութիւննին և ուսումնին իրեց կամաց համեմատ ուղղելու վաղ սովորած լինելով՝ իրենց մատաղագոյն հտասկէն գերծ են ամեն տեսակ խնամակալութենէ: Բարեկամին կընտրեն, յաճախելու ընկերութիւննին կորոչեն, և կարեն նուազահանդէս՝ ժողով՝ պարահանդէս և թատրոն երթալ միայնակ: Այս ընդհանուր ձերբազատու-

Թեան ծանրագոյն հետեանքն է իրենց անձնիշխանութիւնը, և իրենց ամուսին ընտրելու գործոյն մէջ՝ միայն իրենց սրտին կամ խելքին ներշնչութեանն հետեւելու իրաւունքը:

Ազգին բնաւորութիւնը՝ սովորութիւնները՝ օրէնքները՝ ընկերական դրութիւնները և երիտասարդաց սովորութիւնները կը թեթեցնեն կամ կը հակակշռեն այն վտանգները և անպատեհութիւնները որ կարեն ծագիլ աղջկանց արուած արտասովոր ազատութենէն: Մերիններուն համար ոչ կը ցանկամք և ոչ կը փափաքիմք այդմ, և բարձր իրաւունք մը կը դանեմք ընկերական սովորութեանց մէջ որ, մեր ազգին աւանդութեանց և բնաւորութեան համաձայն, իմաստութեամբ տրուած դաստիարակութեան մը մէջ մեծ բաժին մը կը պարգևեն ազատութեան, առանց զանց առնելու այն զգուշութիւնները զոր կը պատուիրէ մայրական իշխանութեան գործադրութիւնը:

ԺԴ.

Ընկերութիւնք չեն դումարուիր միայն խօսելու և պարելու համար:

Հին Գաղղիացիք, արդէն ունէին երկու առանձին յատկութիւններ զոր ժառանգած են իւրեանց

զուակուռք, այն է « աղէկ խօսիլ և քաջ պատերազմիլ. » կը սիրէին նաև եղբայրական խնջոյքներ ընել: Ուրեմն խնջոյից սովորութիւնը պատկառելի ծագում ունի:

Քաղաքաց և գիւղից մէջ արուեստական՝ երկրագործական և պաշտօնական տօներն ընդունելութեան առիթներ են, ուր արարողութեանց կարգը և պատուադրութիւնը կանանց յանձնուած են. անոնց թողուած է նախաթուութեան խընդիրները լուծել: Չմոռնամք թէ ծանր կէտ մ'է բազմականաց տեղն որոշել: Սրահ մը կառավարել և պահպանելը բան մը չէ բազդատմամբ այն հանձարոյն զոր հարկ է երեցնել յաղթականները պատուելու՝ իւրաքանչիւրը մեծարելու՝ և այնպէս վարուելու մէջ՝ որպէս զի, եթէ հնար է, ոչ ոք դժգոհ լինի:

Ընտանեկան հանդիսից, ինչպէս մկրտութեան՝ ամուսնութեան կամ անուան տօնախմբութեան մէջ, կերակրոց ճոխութիւնը՝ սեղանին շքեղութիւնը՝ բազմականաց կարգն արժանապէս որոշելն ոչ լիկ և ոչ լաւագոյն պայմանքն են կիրթ ճաշակի և վայելչութեան պահանջումները գոհացնելու:

Բարեկիրթ կինը, երբ բնական ճրից հետ ունի նաև մշակեալ հանձարի մը շնորհներն, ինչ որ ընէ լաւ կընէ: Ճաշի մը պատրաստութիւնը և կարգադրութիւնը փոքր գործ չէ:

Եթէ ընդունելութեան սրահի մը մէջ տան տի-

բուհւոյն հանձարը նշմարելի է, անոր կարգա-
դրութեան եղանակը ոչ նուազ գնահատել կուտայ
զնա:

Ընտանեկան կամ բարեկամական հացկերոյթ-
ներէ աւելի հաճոյական և հրապուրիչ բան չկայ.
Քանզի այդ միջոցաւ կը գումարուին այնպիսի ան-
ձինք որ երկար սովորութեամբ յոյժ մտերմացած
են միմեանց:

Գնուելու իրաց և խոհակերութեան արուես-
տին պահանջմանց կարգադրութեան վրայ խնամք
տանելէ յետոյ՝ հարկ է հրաւիրելի անձանց զբաղիլ:

Եթէ սրահից խօսակցութիւնը վայելուչ և
զուարթ լինելու համար խնաստուն ուղղութեան
կը կարօտի, գործն աւելի կը փափկանայ երբ
խնդիր է այն գումարմանց՝ ուր միտքը պարտի
չափաւորութեան սահմանին մէջ ամփոփիլ, և ուր
բերկրութիւնն, աղանդերի խնծիղքն եղող փըր-
փրալից գինւոյ փայլուն նշուլին հետ, պարտի ու-
նենալ նաև անոր թեթեւութիւնն ու շնորհքը:

Ձանց կընեմ ընթերցաց կարգադրութեան մա-
նրամասնութիւնները, թէ՛ ծառայութիւնը գաղ-
ղիական լինի՝ որ է հետզհետէ սեղան բերել կե-
րակուրները, թէ՛ ըստ Ռուսաց լինի՝ որ սեղանը
կանխաւ կը զարդարեն աղանդերի ամեն մասերով՝
մինչդեռ իւրաքանչիւր կերակուր զատ զատ կը
մատուցուի հրաւիրելոց: Կերակրոց տեսակին ըն-
տրութիւնը բազմաթիւ պարագայից ենթակայ լի-

նելով՝ անհնարին է այս կէտին վրայ բան մը որո-
շել: Այդ մասին գոհացուցիչ տեղեկութիւնք կը
գտնուին մասնաւոր գրքերու մէջ:

ԺԵ.

Մեծ կամ մասնաւոր գումարմանց ընծայած
հաճութեանց մէջ՝ բնականաբար լաւագոյն կը հա-
մարիմ զայնս որք մտաւորական կարողութիւններն
հրահանգելու և ընդարձակելու մասնաւոր յատ-
կութիւնն ունին:

Ընտանեաց մէջ ընթերցանութեան սովորու-
թիւնն երթալով կանհետանայ դժբաղդաբար: Ըն-
տիր գրուածոց ընթերցումն երիտասարդներն ու
ծերերը սեղանին շուրջը բոլորելով՝ երեկոյեան ժա-
մերն հաճոյապէս անցնել կուտայ: Նախնի հողա-
տեարց բնակարանին աւանդական լապտերն ունի՝
նոյնքան բանաստեղծութիւն որքան սրահի մը ձե-
ղունէն կախուած բլբլեղեայ ջահը, երբ կը լու-
սաւորէ աղքատաց համար եղած աշխատութիւն
մը, և արագ մատունք կը սահին զանազան ձե-
ռագործի վրայ, մինչդեռ վարժ ընթերցող աղջկան
մը ձայնը մտքերը կըբօսեցնէ ողբերգութեան կամ
կատակերգութեան գեղեցիկ տեսարաններով, կամ
իմաստալից նկարագրութեամբ և կամ մի քանի

երես կարեւոր պատմութեամբ: Տան տիրուհւոյն կը վերաբերի քաջ դատողութեամբ ընարեւ ինչ որ կարէ զուարճացնել առանց մտրոյցներու երեւակայութիւնը կամ սիրտը:

Ժամանակաւ չափազանց կախորժէին ընկերակաւ քսարուն կոչուածէն: Բայց նորա պատրաստութեան խնամքը կարեւոր ժամանակ մը կապառէր, և շատ ճիգ ու երբեմն մեծ ծախք պահանջելով՝ կը դադրէր հաճոյք լինելէ: Նուազ ծախիւք կարելի է ընել այդ զուարթ զբօսանքն, որ առանց սնտախառութեան կարգադրուելուն համար նուազ յանկուցիչ է:

Սրահից մէջ փոխադրեալ կատակերգութիւնք և առակախաղք լուսաւորեալ ընկերութեանց արժանի զբօսանքներէն մին եղած են: Հարկ չկայ երկար խօսիլ այս զբօսանաց օգուտներուն վրայ: Անոնք միաքը կը կրթեն և սիրտը կը բարձրացընեն: Որոց մասնակցիլ ուզող աղջկան պիտոյ է քաջ հմտութիւն՝ ողջմտութիւն՝ շնորհք՝ բոյս բարուց, և մանաւանդ զգուշութիւն՝ համեստութիւն և պատշաճութեան յօժարութիւն, որք ամեն վտանգէ զերծ կը պահեն: Տգիտութիւնը վտանգները կաւելցնէ. ուսումը և խորհրդածութիւնն անոնց կը յաղթեն:

ԺԳ.

Չկարծեմք թէ նա է բուն ընկերական կինն, ոչ գործատեաց՝ պչրող և ունայնասէր է, անդործութեան պատճառաւ խանութէ խանութ կը շրջի, ինքն զբաղում չունենալով՝ ունեցողներն անհանգիստ կընէ, չձանձրանալու համար ամեն միջոց կը փնտռէ, հագուելու այլանդակ կերպեր ունի՝ որպէս զի հնար եղածին չափ շատ ժամանակ կորսուի, սրահի մէջ տարօրինակ վարմունք ունի, իւր ձայնը միւսները կը խօսիանէ, կամ շնչոյ նման նուազեալ կը հնչէ, գլխոյն ցաւը կը բռնէ ամեն անգամ որ կուզէ մերժել ձանձրացուցիչ կարծած հրաւէր մը, գիրկը շնիկ մը կը շրջեցնէ՝ որ իւր կուռքն ու տանը շփոթութիւնն է:

Նա որ արժանի է այս անուան, գիտէ ճարտարութեամբ յարմարիլ սովորութեանց և պատշաճութեանց՝ առանց ձեւացնելու թէ չգիտցողներուն կուսուցանէ զայնս:

Իւր բոլոր պարտականութիւնները ճշգրութեամբ կը կատարէ, գաւակաց դաստիարակութեանը կը հսկէ, կրօնական բոլոր պաշտամանց ներկայ կը գտնուի, բարեգործական ընկերութեանց կը մասնակցի:

Ձեռքն ունի միշտ կամ աղքատաց համար հան-

գանակութեան քսակ, կամ վրձին, կամ ասեղ և կամ գրիչ: Մատուցեն վարժ են որքան դաշնակի նոյնքան և ձեռագործական արուեստից: Ապաստանները՝ անտերունջ մանկանց պատասխարանները՝ հանդերձատները և գործարաններն այցելելով հանդերձ՝ զանց չըներ նաև բարեկամուհիները:

Եթէ այցելութիւն մը չկարենայ առաւօտուն կատարել, երեկոյեան կը թողու՝ հետեւելով նոր սովորութեան: Բարեկամուհեաց և ծանօթից այցելութեան սահմանեալ աւուրց մէջ չնեղուիր, վասն զի իւր ժամանակը լաւ հաշուած լինելով՝ կարէ պատշաճութեան սահմանած ժամերուն հասնիլ:

Գործունէութեան վարժութեամբն իւր թըլ-թակցութիւնն ևս միւս գործոց նման ժամանակին կը հասցնէ: Սրահի մէջ բնաւ աղմկարար չէ ոչ ինքը և ոչ իւր զգեստը: Իրեն պարտականութիւն չհամարիր կանուխ երթալ գիւղ կամ ջուրերը և երկար մնալ անդ՝ եթէ պիտի սոխպուր բաժնուիլ իւր ասնէն ու զաւակներէն: Գիտէ համաձայնեցնել ընտանեկան պարտքերն ընկերական պարտուց հետ, մինչ այս վերջինք զբօսանք են մանաւանդ: Իւր բանավարութեամբը կը հասկնայ թէ պարտի ընկերութեան ձեռնտու լինել, այլ ընտանեաց բոլորանուէր: Ի գործ կը դնէ բարեկարգութեան՝ կանոնաւորութեան և նախատեսութեան պատուէրներն որք ամեն տեսակ կա-

ռավարութեան կը նախագահեն: Այն կանայք, որոց պատիւ ընել կը սիրեմ, կարծուածին չափ հազուադիւր չեն, և մեր օրերու կատակերգութեանց ու վիպասանութեանց մէջ ծագրուածներն անոնք չեն:

Ընկերական կիներն ամեն յարգանաց արժանի է: Իւր ամուսնոյն աշխատութեանց և ճաշակաց ընկերանալէ, տան մէջ վարժուհւոյ և մօր պարտականութիւնը կատարելէ և ընկերութեան մէջ սիրուն յատկութիւններով՝ տաղանդներով և հանձարով փայլելէ յետոյ, հիւանդին անկողնոյն մօտ և կարօտելոյն սենեկին մէջ՝ բարի՝ կարեկից և գթած կերևի:

Գ. Ա. Ս թ .

Գրամական խնդիր : — Շահասիրական դաստիարակութիւն : — Աշխատութիւն եւ հարստութիւն : — Տան կառավարութիւն խնայութեան տեսակէտով : — Գրիքովի սնարարութիւն : — Հասարակ եւ ծախուց հաշուեցոյց : — Հաշուակալութիւն :

Ա .

Գրամական խնդիրն այսօր ա՛յնքան կարեւորութիւն առած է որ՝ կարելի է զարմանք պիտի պատճառի թէ առտնին տնտեսութեան սոյն դասագրքին մէջ առաջին տեղը չէ գրաւած : Եթէ անոր վրայ միւսներէն յետոյ կը խօսիմ, պատճառն այն չէ թէ չեմ ճանաչեր աշխատութեան զօրութիւնը որ հարստութեան ստեղծիչն է , եւ խնայութեանը՝ որ զայն կը պահպանէ . բայց տեսնուեցաւ թէ այս դասերուս նպատակն է մանաւանդ ցուցանել թէ ժամանակի իմաստուն բաժանումը , տան մէջ բարեկարգութիւնը եւ կանոնաւորութիւ-

նը , ընտանեաց եւ ընկերութեան մէջ հանձարոյ գործածութիւնն ինչպէս կապահովեն կենաց անդորրութիւնը՝ արժանապատուութիւնը եւ երջանկութիւնը : Աղջկան համար , որում կարեւոր է պատրաստուած լինել իւր կանացի պարտականութիւնները կատարելու , դրամի ստացումը՝ դիւրակեցութիւնը՝ հարստութիւնը պարտին նկատուիլ իբր միջոց դաստիարակութեան բարձր նպատակին հասնելու , որոյ մէկ ճիւղն է առտնին տնտեսութիւնը : Վա՛յ այն ընտանեաց , վա՛յ այն ազգաց , որոց գործունէութեան միակ կամ զլիսաւոր աւարկայն է հարստանալու պէտքը՝ ոսկւոյ սէրը՝ նիւթական բարօրութեան փափաքը : Ժամանակներ կան , ուր բովանդակ ընկերութիւնը կարծես թէ նիւթական շահուց մէջ կընկղմի : Ամենէն հռչակաւոր դարերն իսկ երբեմն այս տխուր տեսարանը կը ներկայացնեն : Որտե՞տս իւր ժամանակի երիտասարդ Հռովմայեցիները , որ կը հաշուէին թէ բարձր տոկոսեօք տրուած դրամն ինչ կը շահի , կը բաղդատէր Յունաց հետ , որք ամեն բանէ յառաջ փառաց նախանձախնդիր էին . եւ Պուստոյ դառնակսկիծ հեգնութեամբ ցոյց կուտայ իւր ժամանակակիցներն որք իւրեանց որդւոց կուսուցանէին դրամին մեծ զօրութիւնը եւ առաքինութեան անօգուտ լինելը :

« Դրամ , դրամ , կըսեն . առանց նորա ամենայն ինչ ամուլ է : »

Ուրեմն միայն մեր ժամանակը չէ որ բարոյա-
խօսք կը մաքառին այն աղէտալի միտման դէմ որ
առաջնութիւն կուտայ հարստանալու փափաքին :
Շահասիրական դաստիարակութեան նոր և պիղծ
բառն է դրակաւութիւն , որ նշանաբանն եղած է
բազմաթիւ անձանց որք առաքինութիւնն ու գի-
տութիւնն առ ոչինչ կը համարին , և միայն շահու
կարեւորութիւն կուտան , ունեւորը կը մեծարեն
և չքաւորը սաստիկ կարհամարհեն : Այս սկզբանց
պատիւ տուող ընտանեաց զաւակունք անձուկ գա-
զափարներ միայն ունին . վեհ գգացմանց հիւթը
չուտ կը ցամաքի իւրեանց հոգւոյն մէջ . ինքնա-
սիրութիւնն ու անձնականութիւնը կը տիրէ անդ :
Երիտասարդութեան հասած ժամանակինն արդէն
ունին փառասիրութեան ամեն տենչանքն և ագա-
հութեան ամեն թերութիւնները : Երբ չափահաս
լինին՝ պիտի ստուարացնեն եռանդուն շահասիրաց
բազմութիւնը , որք արժեթղթոց ծովուն վրայ
նաւարկելով՝ պահ մը իւրեանց պերճութեան
ժպրհութեամբը կը գարմացնեն զամենքը , որպէս
զի յետոյ իւրեանց կործանման տեսարանն ընծա-
յեն : Ընդ հակառակն , այն ընտանեաց մէջ՝ ուր
դրամոյ խնդիրը մանաւանդ բարեկարգութեան
և վարուց խնդիր մ'է , ուր աշխատութիւնն ի
պատուի է , ուր դաստիարակութեան նպատակը
ոչ այնքան հարստանալն է որքան հարստութիւնն
օգտակար կերպիւ գործածելու միջոցը գտնել և

ի հարկին անկէ հրաժարիլ գիտնալ , չկայ աւելի
օրինաւոր բան՝ քան թէ ժառանգութեամբ կամ
պատուաւոր կերպիւ ստացուած հարստութեան
պահպանման կամ աճեցման շնամբ տանիլ :

Բ.

Բայց պէտք չէ հակառակ չափազանցութեան
մէջ յինալով դրամին յարգը և հարստութեան
առաւելութիւնը չճանաչել՝ վասն զի զայն չարա-
չար գործածողներ կան , և մանաւանդ անոր հա-
մար որ հարստութիւնը երջանկութեան էական
տարրը չէ : Դրամին յարգը , ինչպէս ամեն բանի որ
կարեւոր դեր մը կը խաղայ աշխարհի մէջ , գոր-
օրինակ գիտութիւնը՝ և այլն , միայն նորա գոր-
ծածութիւնը գիտնալուն վրայ կը կայանայ : Հա-
ճութեամբ կընդունուին փիլիսոփայութեան տուած
խրատներն հարստութիւնն արհամարհելու՝ երջան-
կութիւնը չափաւորութեան մէջ լինելուն՝ և կե-
նաց ամեն պիտոյքներէն ազատ գտնուող հոգւոյն
բարոյական մեծութեան նկատմամբ . և բազումք
կսքանչանան այս ստոյիկեան առածներուն վրայ ,
որ քիչ մը տարակուսելի են Սենեկայի գրչին տակ ,
այն պերճ մեծատան՝ որ աղքատութեան քաղ-
ցրութիւնը կը քարոզէր այլոց . և սակայն նոքա
կղզուշանան այս խնաստուն անմոխի համակարծիք

լինելէ . « Որ դիւրացուցիչ դրամին շփոթեալ գերին լինելով՝ ամեն բան ծովը նետեց , ազա՛s եւ , գոչելու համար :

Ընկերութիւնն ուրիշ պարտքեր ունի և ուրիշ պահանջումներ կը դնէ մեր վրայ : Երբ ի կարգին խօսիմ իմաստուն վերակացութեամբ պահպանուած հարստութեան գործածութեան նկատմամբ զոր կարէ ընել ընտանեաց պատուաւոր մայր մը , կը յուսամ ցոյց տալ թէ կարելի է դրամն հզօր օժանդակ՝ պատուական գործիք ընել երջանկութեան , բաւական է որ չմոռցուի թէ ճշմարիտ հարստութեան պայմանն է՝ հարստութեան տէր լինել առանց անոր գերի լինելու :

Որովհետեւ հարստութեան հետամուտ ընտանեաց թիւը շատ աւելի է քան թէ անոնցն որք միայն իւրեանց ժառանգածը պահպանելու պէտքն ունին , աշխատութիւնը որ կենաց օրէնքն է՝ առաջնոց համար կեցութեան գլխաւոր պայմանն է : Թող չարանջեն . աշխատութիւնն այնքան կարեւոր է հոգւոյն կատարելութեան՝ որքան մարմնոց առողջութեան : Երբ իւր առարկայն լինի մտաց մշակութիւն կամ ձեռագործական արուեստ մը , յայնժամ էապէս օգտակար է և բարոյաւորիչ : Անգործ երիտասարդութիւնը ախուր ապագայ կը պատրաստէ իւր անձին : Ոչ թէ նախանձելու չէ մեծատանց բազմին , որք ճոխ և փառաւոր կեանք մը վայելելու համար ծնանելու գոհարութիւնը

միայն կրած են , այլ գթալու է եթէ կը կարծեն որ այն բացառիկ հարստութեանց տիրանալնուն համար անգործ կենալու իրաւունք ունին : Վազուց արդէն ամեն բանէ յափրացած և զզուած , ուսման հայթայթած հաճոյից անձանօթ , և զուրկ աւելի ևս մեծ հաճութենէ որ կզգացուի իւր նմանեաց նկատմամբ գթութեան պարտքերը կատարելով , անյաղթելի ճանճրութեան ճարակ կը լինին և այն հարուստ անդղիացւոյ նման շատ անգամ սեւամաղձութիւն կոչուած հիւանդութենէ բռնուելով՝ անձամբ վերջ կուտան իւրեանց անտանելի կենաց : Ապա ուրեմն աշխատութիւնը հարստութեան մեծ արտադրիչը չէ միայն , այլ և կենաց հզօր պահպանիչն է : Նախնի իմաստասէր մը կըսէ թէ , « Մեր մարմինն հանգստութեամբ և անգործութեամբ կապականի , և կրթութեամբ ու շարժմամբ կը պահպանուի . հանգստութիւնը վնասակար է թէ՛ հոգւոյ և թէ՛ մարմնոյ : »

Գ.

Այն ազգին կը վերարերէր յորում աշխատութիւնն հրաջքներ գործած է՝ իմաստնագոյն և բազմարդիւն խրատներ հայթայթել առտնին արնտեսութեան որ ոչ այլ ինչ է՝ բայց արուեստ աշ-

խատութեան արդիւնքը լաւ գործածելու : Բենիամին Ֆրանքլին , Ամերիկայի Միացեալ-Նահանգաց ամենէն երեւելի քաղաքացւոց մին , ճշգրտելով և նոր իմն օրինակաւ խօսեցաւ այն առածներն որ իբր հիմն են նոյն գիտութեան՝ ի գործ դրուելով այժմեան ընկերութեան պիտոյից համար : Ուրեմն թող զարմանալի չթուի անկէ փոխ առնուլ և համակրական մեծարանքս որով յաճախ պիտի կոչեմ իւր վկայութիւնը :

Ըստ իւր դատման , աշխատութեան առարկայն է ձեռք բերել բարօրութիւն , որ կարեւոր պայմանն է յառաջադիմութեան : Բայց , ինչպէս որ դիտել կուտայ իւր երկոց վերջին հրատարակիչն Պ . Լապուլէյ , կուզէ որ մարդիկ աշխատութեամբ՝ բարեկարգութեամբ և խնայութեամբ հարստանան : Եւ ինքն հարստութիւն ստանալէ յետոյ՝ զայն կը գործածէ հոգին մշակելու և եղբայրները կըրթելու : Ազքատ գործաւոր էր երբ ինքզինքը զրկելով հաւաքած դրամովը ժողովրդական առաջին մատենադարանն հիմնեց : Ֆիլատելֆիա նմա կը պարտի իւր գիտական առաջին ընկերութիւնը , դպրոցը և հիւանդանոցը : Եօթանասուն տարեկան հասակին՝ երբ նաւ կը մտնէր Քաղզիա երթալու որ Ամերիկայի համար օգնութիւն խնդրէ , Ֆրանքլին ունեցած դրամը կը հաւաքէ և հարիւր հազար Քրանքի մօտ գումար մը ազգային ժողովոյն արամադրութեան ներքեւ կը դնէ : Ինքն հարստու-

թիւնը գործելու միջոց կը համարէր . ամեն մարդէ աւելի լաւ տեսաւ թէ դրամագլուխն այժմեան քաղաքակրթութեան մեծ գործիքն է . ուստի այդ գործիքը կը յարգէ և ստանալ կուզէ թէ՛ իրեն և թէ՛ այլոց օգնելու համար . հարուստ լինելու վառատիրութիւնն ունի , բայց արծաթասէր չէ :

Իրեն նման կը պնդեմք աշխատութեան և մանաւանդ արտադրիչ աշխատութեան կարեւորութեան վրայ : Քաղաքական հաշուագէտք ունեք հաշիւ ըրած են որ , եթէ ամեն ոք , այր թէ կին , օրը չորս ժամ օգտակար բանի մը աշխատիլ ուզէ , այդ աշխատութիւնը կը բաւէ իւրաքանչիւրին մատակարարել կենաց բոլոր պիտոյքները և հաճոյքները . կարօտութիւնը և թշուառութիւնն աշխարհէն կը հալածուին , ու քսանեւջորս ժամուց մնացորդը կընայ հանդուստութեան և զուարճութեան տրուիլ :

Դ .

Մարդը նմանցնելով « գործիք շինող կենդանւոց , » Ֆրանքլին կը ցուցնէր թէ որքան կարեւորութիւն կուտար աշխատութեան , և աշխատողները կը յարգէր . ամեն առթիւ կը յիշեցնէր իւր հարստացեալ հայրենակցաց թէ , ինքը գործաւոր

անունէն աւելի պատուաւոր տիտղոս էջր ճանաչեր :
 Յիլատելֆիոյ վաճառականք բաժանորդութեամբ պարահանդէս մը ծանուցած էին, ուրկէ արտաքսել կուզէին գործաւորներն՝ անոնց կիները և աղջիկները : « Բարեբաղդաբար, կըսէ անոնց Ֆրանքլին, Ամենակարողը չներկայանար այս պարահանդէսին՝ ուր չպիտի ընդունուէր, վասն զի արդարեւ ինքը տիեզերաց ամենամեծ գործաւորն է : » Այս հանճարեղ խորհրդածութեան վրայ ամենքն ընդունուեցան, և այս խօսքն Ամերիկացւոց մէջ առակ եղաւ թէ, « Աստուած տիեզերաց առաջին գործաւորն է : » Նորա գործոց բազմազանութիւնը՝ կատարելութիւնը և օգտակարութիւնը կը յարգեն և կը հիանան անոնց վրայ : Երկրագործը և գործաւորը կը պատուեն, և կախորժին յիշել սեւամորթի մը դիտողութիւնը, որ ըսած է. « Ճերմակ մարդն զսեւը կաշխատցնէ, ձին կաշխատցնէ, եզը կաշխատցնէ, վերջապէս ամենքը կաշխատցնէ բաց ի խողէն : Խողը չաշխատիր, կուտէ՝ կը խմէ՝ կը պտըտի՝ կը քնանայ, կապրի իբր անկրկեկ (ազնուական) : »

Ե.

Ուրեմն լու ճանչցուած է թէ աշխատութեան այս օրէնքն հարստանալու ճշմարիտ միջոցն է :

« Ի՞նչ խորհելու է, կըսէ Սոկրատ, Աթենացւոց Ֆրանքլինը, երբ մեր աշաց առջեւ ունիմք անձեր որք իւրեանց տաղանդներով ու միջոցներով կրնային տուներնին մեծցնել աշխատութեամբ, բայց կը տեսնեմք որ կը յամառին անգործ կենալու, և տաղանդնին ապարդիւն ընելու : »

Խնայելէ առաջ պէտք է շահիլ :

Երբ մէկն իր ժամանակն ուսման գործածած և հանճարը մշակած է, իմաստութիւն է հետեւիլ իւր յարմարութեան և ճաշակին : Տեսանք թէ բարձր դաստիարակութիւնը կառաջնորդէ զմարդ ընդհանուր ծանօթութեանց և լուրջ ուսմանց, որք յիշողութիւնը կը զարդարեն՝ երեւակայութիւնը կըբազմացնեն և դատողութիւնը կը յօրինեն : Մտածութեանց բարձրութիւնը որ խնամք տրուած մշակութենէ կը ծնանի, անգործութենէ կազատէ՝ բարոյական արիութիւնը կաճեցնէ, մանաւանդ անձնասիրութեան հոգիէն կը հեռացնէ :

Այս պայմանաց մէջ կրթուած աղջիկը պիտի գգայ թէ ինքն ինչ կարժէ, և մատաղ հասակին մէջ ստացած գիտութեան դրամագլուխն ապարդիւն չպիտի թողու : Ամուսնացած ատեն պիտի ունենայ տան խնամոց՝ զաւակաց դաստիարակութեան և ամուսնոյն պահպանութեան համար պէտք եղած գործունէութիւնը : Հմտութիւնն ալ դրամ է : Մատամբ և մտօք յաջողակ լինելով՝ շուտ պիտի ըմբռնէ իրաց օգտակար կողմը, և շահ տեսած

ժամանակ պիտի փութայ ձեռք բերել զայն իւր գիտութեամբ :

Իւր հատուծիւնք միջոց կը լինին ընտանեաց բարեկեցութիւնն ու հարստութիւնն աճեցնելու :

Իւր ներքին պարտականութիւնները թողլով՝ դուրսը գործ մը ընտրելէ յառաջ՝ կինը մարդէն աւելի պէտք ունի խորհելու և հաշուելու : Արդարեւ իրեն կարեւոր է քաջ կշռել թէ արդեօք շահաւոր է տան գործերուն անձամբ զբաղել՝ ասեղը ձեռք առնուլ, թէ կարող ծառաներ ընտրել՝ որոց վրայ հսկելը բաւական է :

Շահիլ և խնայել կրկին օգուտ են : Խնայութիւնն աշխատութեան և խորհրդածութեան արդիւնք լինելով՝ պէտք է հատուն կերպիւ քննել թէ շահը ո՞ր կողմն է :

2.

Մեծ հաճութեամբ ընդունեցինք Սոկրատայ խրատները, և Ֆսենոփոն ա՛յնքան հաճոյական գաղափար մը տուաւ իւր բանակցութեանց վրայ՝ որ պիտի շարունակեմ իւր յանկուցիչ հատուածը :

Այս անգամ խօսքն Իսոմաքոսի չուղղեր, այլ Գրիթոպիւլի, որ հարուստ է, բայց կը գանգատի իւր հարստութեան անբաւականութեան վրայ՝

կարծելով թէ անհնար է ապրիլ առանց ուզած ծախքն ընելու :

Հաս իւր սկզբանց, Սոկրատ հարցապնդելով ճշմարտութիւնը գտնել կուտայ նմա :

« Ուրեմն, Գրիթոպիւլ, կրտէ Սոկրատ, եթէ ցոյց տամ քեզ այնպիսի մարդիկ որ շատ դրամ ծախսելով անհանգիստ տուներ կը կառուցանեն, մինչդեռ այլք աւելի փոքր գումարով բնակարաններ կը շինեն ուր կը գտնեն իրենց բոլոր պէտք եղածը. միթէ այս չե՞րեւիր քեզ անտեսութեան դաս մը :

— Այո՛ :

— Եւ եթէ ցոյց տամ այնպիսի անձեր որ ամեն տեսակ անօթ ունին՝ առանց գիտնալու թէ ինչ վիճակի մէջ են անոնք, և այս պատճառաւ՝ թէ՛ իրենք անհանգիստ կը լինին և թէ՛ ծառաներն անհանգիստ կընեն. և եթէ ուրիշներ ցուցնեմ որ առաջնոց չափ և մինչեւ իսկ նուազ անօթ ունենալով՝ միշտ ձեռքերնուն տակ կը գտնեն զայնա՛ երբ գործածել ուզեն :

— Պատճառն այն չէ՞, Սոկրատ, որ սմանք ամեն բան խառնիխուռն ձգած են, մինչդեռ այլք իւրաքանչիւրն իր տեղը կը դնեն :

— Այո՛, պատասխանեց Սոկրատ, բայց ոչ անորոշ տեղ մը, այլ իւրաքանչիւրին պատշաճապէս սահմանեալ տեղը :

— Այդ ըսածներդ բոլորովին անտեսական գի-

տութիւնն կը թուին ինձ , կը պատասխանէ Գրիթո-
պիււր :

— Եւ եթէ քեզ ցուցնեմ աստ գերի ծառաներ
որ կը միախչին , իսկ անդ ազատ ծառաներ որք կը
հաւանին աշխատել և մնալ , տնտեսութեան հետա-
քրքրական դէպք մը ցոյց տուած չե՞մ լինիր :

— Այո՛ , անշուշտ :

— Եթէ քեզ ցուցնեմ մշակներ որ միւսնոյն կեր-
պիւր կը մշակեն իրենց հողը , և սակայն ոմանք կը-
սեն թէ մշակութեամբ կործանեցանք և ապրելու
միջոցէ գուրկ մնացինք , մինչդեռ այլք մշակու-
թեան կը պարտին իւրեանց բարգաւաճութիւնը և
պիտանի իրաց առատութիւնը :

— Արդարեւ , կըսէ Գրիթոպիււր , պիտի կարծէի
թէ գուցէ առաջինք անհրաժեշտ ծախքերէ զատ
իւրեանց տանց համար կործանիչ ծախքեր կընեն ,
և կնոջ նկատմամբ , եթէ իւր ամուսնոյն բարի
վարչութեամբն հանդերձ՝ ինքը գէշ կը վարուի ,
կարելի է թէ բոլոր յանցաւորն ինքն եղած ըլլայ :

— Բայց եթէ այրն անգէտ թողու զնա բար-
ւոյն և գեղեցկին , և տգիտութեամբն հանդերձ
գործածէ զնա , արդարութիւն չէ՞ այրը պատաս-
խանատու կացուցանել : Օ՛ն , Գրիթոպիււր , մեք
բարեկամ եմք , անկեղծարար ըսէ ինձ . միթէ կայ
ոք որ կնոջմէդ աւելի մտերմութեամբ մտնէ գոր-
ծերուդ մէջ :

— Ոչ ոք :

— Սակայն կա՞ն անձինք որոց հետ նուազ
խօսակցիս քան թէ կնոջդ հետ :

— Գրեթէ չկան :

— Ամուսնացած ժամանակդ ինքն անգէտ տղու
նման չէ՞ր :

— Յշուպէս էր :

— Ուրեմն աւելի զարմանալի պիտի լինէր ե-
թէ չգիտնար ինչ որ ըսել կամ ընել պէտք է՝ քան
թէ գէշ վարուէր : Բայց լաւ կին ունեցող արք
իրենք անձամբ կրթած են զնոսա : »

Է .

Կարծեմ թէ լաւ տանտիկին մը տանը օգտին
նկատմամբ բոլորովին ընկեր է ամուսնոյն : Այրն է
ընդհանրապէս որ իւր գործունէութեամբ տունը
գրամ կը բերէ , և գրեթէ միշտ կնոջ կը յանձնուի
ծախուց գործածել զայն : Եթէ գործածութիւնն
աղէկ լինի , տունը կը բարգաւաճի . եթէ յուսի լի-
նի , կը կործանի : Դրամին բոլոր առաւելութիւնն
անոր գործածութեան վրայ կը կայանայ :

Առտնին տնտեսութիւնը կանուխ սորվելու գի-
տութիւն մի է : Այսօր , ինչպէս արդէն առիթ ու-
նեցայ ըսելու , այլևս արք իւրեանց կանանց եր-
կրորդ դաստիարակութիւն մը չեն տար . ամուս-

նացած ժամանակներն նոցա դաստիարակութիւնը կատարեալ է արդէն: Մայրն ու դաստիարակուհին պարտին երկու գործն ևս կատարել: Սովորատ կը ցուցնէ մեզ անհոգ Գրիթօպիււլը որ կնոջն անկատարութեան վրայ կը գանգատի. նորա թերութիւնը լաւ ճանչցեր է՝ բայց նեղութիւն կրել չուզեր նորա պարտականութիւնները ցոյց տալու, և նորա անգիտութեան վրայ կը զարմանայ:

Արդ՝ երբ մեք զնա կը թողումք՝ Սովորատ Իսմաքոսի կը տանի, և գիտեմք թէ ինչ խմաստուն խրատներ պիտի ընդունի այն ընտիր ամուսինէն:

Ը.

Ֆէնըլոն ըսած է. « Մարդ կը վարժուի խնայութեան ինչպէս շաշլութեան: Չմոռնաք, կըսէ մարց և դաստիարակուհեաց, ցուցնել այն կանանց խոշոր սխալն որք մանր խնայութեանց կգրազին, մինչ անդին վերակացուէ մը կը խաբուին իւրեանց գործոց մեծ մասին վրայ: »

Եւ դարձեալ կը յաւելու ուրիշ տեղ. « Պէտք է կիները մանկութենէ վարժեցնել հաշիւ ընելու, տեսնելու թէ ինչ կերպիւ սակարկութիւն կընեն ամեն գնուելիք իրաց, և գիտնալու թէ ինչպէս լինելու է մէն մի առարկայ՝ որ լաւ լինի: »

Կատարեալ խնայութեան հիմն է՝ բարեկարգութիւնը, ոչ թէ իրերը շարելու բարեկարգութիւնը, այլ այն՝ որ ստացումը կը կանոնաւորէ և պիտանի իրաց թուոյն չափ կը դնէ:

Թ.

Մատաղատի աղջիկը տնարարուհի չեղած պարտի մօրմէն տեղեկանալ, ինչպէս տեղի կունենայ բարեկարգ ընտանեաց մէջ, ոչ միայն տան կահաւորման պահանջած ընդհանուր ծախուց, այլ և պէտք եղած ամեն տեսակ ծախուց: Թուաբանական ընդարձակ ծանօթութեանց պէտք չունի հաշիւներն ընելու համար՝ որոց բոլոր յօրինուածութիւնը կը կայանայ մտից գումարն ընելու և ծախքը զեղչելու վրայ: Անօգուտ չեն նմա այն դասերն ևս որ կը վերաբերին տոմարակալութեան և հաշուակալութեան: Բայց այս կէտին վրայ կատարեալ հմտութիւն տուողն է գործադրութիւնը և ուշադիր գիտողութիւն իւր ծնողաց ըրածներուն վրայ:

Կարէ պատահիլ որ ամուսնոյն յանձնարարութեամբը տան տիկնոջ վրայ մնայ իւր ստացուածոց բոլոր խնամակալութիւնը. կարէ նաև զբաղիլ այդ վարչութեան միայն մէկ մասին՝ որոյ կարեւորու-

Թիւնը կը փոփոխի այն ընկերական պայմանաց համեմատ՝ յորս ինք կը գտնուի: Այն ընտանիք որ մէկ քսակ ունին և այրն ու կինը իւրեանց կամ ընտանեաց պիտոյից համար անխտիր կը գործածեն, անհրաժեշտ է որ փոխադարձաբար հաշիւ տան իրերաց: Այս կերպը, որ լուսագոյնն է և կատարեալ միաբանութեամբ ասորոյ ամուսինք կենթադրէ, միշտ կարելի չէ: Անգործադրելի է՝ եթէ այրը վաճառական է կամ շահեցնելու կալուած ունի և կամ եթէ մեծ վարչութեան մը շահակցութիւն ունի: Այդ պարագային մէջ կարէ տանը ծախուց կամ կնոջն անձնական ծախուց համար որոշ գումար մը յատկացնել՝ որոյ հաշիւը բռնելու պարտաւոր է կինն: Լաւ է որ այրն ևս իւր ծախուց և շահուց ճիշտ հաշիւը բռնելով՝ կնոջն հարդրէ, որոյ խորհուրդք, ինչպէս տեսանք, կարեն երբեմն մեծ ծառայութիւն մատուցանել: Վերջապէս ինչ և իցէ կնոջ մասնակցութիւնը տան դրամական վարչութեան մէջ, իւր առաջին պարտականութիւնն է ամեն օր ճշգիւ խելամուտ լինել իւր մատակարարութեան: Տան մը հաշուակալութիւնը չկրնար միևնոյն լինել քաղաքը բնակող ընտանեաց և գիւղը բնակողներու համար, պաշտօնակալաց և հասարուաց և երկրագործական կամ արուեստական շահագործութեան տերանց համար:

Ժ.

Ենթադրելով թէ կինն ունի իւր սան բոլոր վտահուութիւնը, կը կատարէ տնարարի պաշտօնը բոլոր ընդարձակութեամբ, և իւր տան ելլմոյց հաշիւը կը բռնէ կանոնաւորապէս, անհրաժեշտ է որ կանխաւ կարգադրէ մոտից հաշուեցոյցը, քաջ գիտնայ թէ իւր տրամադրութեան ներքեւ դրուած եկամուտք ինչ են: Իւր մոտից իրական կամ հաւանական քանակութիւնն անաշառապէս ճշգրիտ յետոյ միայն պարտի խորհիլ իւր ծախուց հաշուեցոյցը շինել: Եթէ այս խնամքը զանց առնուի, լուսագոյն կերպով մատակարարուած տուներն իսկ կործանման կենթարկին: Հարկ է խոստովանիլ թէ աղէտալի աննախատեսութիւն մը կը տիրէ գոթադարար բազմաթիւ ընտանեաց կառավարութեան մէջ. այնպէս որ նախ կոխին ծախք ընել և ապա կը խորհին ձեռք բերել ծախքերը դոցելու համար հարկ եղած գումարը: Հանճարը և խոհեմութիւնը միանգամայն կը պահանջեն լուրջ քննութեան ենթարկել մոտից այս գլուխը: Ո՛րքան կանայք իրենց առնէն չտեղեկանալով այն գումարին որ ապահովեալ է իրենց, առերեւութէն խարուելով կամ հաւանականը և յուսալին իրական համարելով կը հաշուեն թէ արկղը պիտի մտնէ այն գումարը՝ որոյ գործածութիւնը կանխաւ որոշած են: Կար-

ծեմ աշխարհի մէջ չկայ աւելի պարզ բան քան զայս թուաբանական հաշիւ թէ . « Տարւոյս շրջանին մէջ պիտի ընդունիմ այս ինչ գումարը , կը մնայ միայն ըստ այնմ որոշել վարձու՝ սննդեան՝ հագուստի և մանր ծախուց քանակը . խնամք պիտի տանիմ ծախքս եկամուտէս միշտ նուազ ընելու՝ թէև տարբերութիւնը փոքր լինի , և այսու կը կանոնաւորի անտեսութիւնս : » Սակայն կարելի է հաստատել թէ ընդհանրապէս ընտանեաց հաշուեցոյցներու մէջ , պետական հաշուեցոյցներու մէջ եղածին նման , սայլը եզէն յառաջ կը դրուի , այսինքն թէ ծախքը մտից վրայ չեն կարգադրեր , սյլ նախ ծախքը կորոշեն՝ և ապա անոր դիմադրելու միջոց կը փնտռեն :

ԺԱ .

Մտացի կին մը այսպիսի անխոհեմութիւն չընեներ : Ոչ միայն խոյս կուտայ կործանման այս պատճառէն , այլ որպէս զի ապահով լինի որ գործադրութիւնն իւր նախատեսութիւնները չխանդարէ , խնամք կը տանի ծախք մը որքան և փոքր լինի՝ առանց արձանագրելու չթողուլ , և ոչ օր մը անցնել առանց քննելու մուտքն և ըրած ծախքը : Եթէ օր մը զանց առնէ այդ քննութիւնը , իւր

հաշուոյն թելը կը կորսնցնէ , խառնակութիւն կը մտնէ , ճանճրոյթը վրայ կը հասնի , յետոյ անփութութիւնը , ապա յոռի հաշուակալութիւն , եւ հուսկ ուրեմն կատարեալ լքումն հաշուակալութեան : Յոյժ կարեւոր է այս , ուստի չեմ կարող գոհ լինել զիրենք մասնաւոր մատենից խրկելով՝ ինչպէս կընէի ուրիշ նիւթոց համար : Վաճառականական հաշուակալութեան և կրկնատումարի վրայ չէ խնդիրը , որ կուտուցուի գործոց սահմանեալ երիտասարդաց կամ վաճառականի աղջկանց : Առանին հաշուակալութեան համար նուազ բազմամասն դրութիւնը յարմարագոյնն է : Շատ տուներու համար բաւական է քանի մը տախտակ սահմանել , որ զիրար կը հակակշռեն և թոյլ կուտան ամսոյն և տարւոյն վերջը մէկ նայուածքով տեսնել իւրաքանչիւրոյն մասնաւորութեանց բովանդակութիւնը որոյ վրայ ծախքերը գրուած են :

ԺԲ .

Կը կրկնեմ թէ նախ հարկ է գրադիր խնամք ձգելու այն զանազան հատոյթները՝ որոց վրայ կարելի է վստահիլ : Մտից ցուցակը շինելէ յետոյ , պէտք է պարզ եւ դիւրին եղանակաւ ստուգել թուած իւրաքանչիւր գլխոյն հասեալ ծախքերը : Հարկ է ունենալ նախ նմուշիկ մը , յուշատետր

կամ ձեռնատետր՝ որոյ վրայ տանտիկինը կը գրէ ամեն օր, ո՛ր ժամուն որ ըլլայ, ամեն ինչ որ պատահի իւր տան մէջ, գնում՝ մուտք՝ այցելութիւնք և այլն: Այս կերպիւ կուենեայ օրական ծախուց հաշիւը: Կանխաւ պատրաստուած ցուցակ մը իրեն թոյլ կուտայ բաշխել իւրաքանչիւր ծախք զանազան էջերու մէջ որք սահմանեալ են զայնս իրենց տեսակին համեմատ որոշելու: Վերջապէս կը մնայ միայն ամեն ամսոյ վերջը գրել իւրաքանչիւր ծախուց գումարն ընդհանուր ցուցակին էջին մէջ:

Տարւոյն վերջը բոլոր մասնաւոր ծախուց գումարն ընելով՝ կարելի է տեսնել թէ ո՛րքան է ամբողջութիւնը, և տանտիկնոջ իմաստուն տնտեսութեան կամ աննախատեսութեան չափը ցուցնող կշիռ մը ունենալ:

Յայտնի է թէ դաշտային շահագործութեան, առեւտրական տան և արուեստական հաստատութեան հաշուակալութիւնն աւելի բազմամասն կը լինի, և աւելի տուժար՝ հաշուատետր և ցուցակ կը պահանջէ: Բայց ամեն հաշուակալութիւն ո՛րքան և կարեւոր լինի, կարէ ամբողջիլ հետեւեալ սահմանին մէջ:

Ամեն մուտք և ամեն ծախք անմիջապէս նշանակել մասնաւոր տետրակի մը մէջ: Երեկոյին հաւաքել բոլոր նոյնատեսակ իրերն՝ և մայր տուժարն անցնել իւրաքանչիւրն իր տեղը: ամեն օր արկղը ճշգրտել, ամեն ամիս հաշուեկշիռն ընել, ամեն

տարի ընդհանուր կշիռն հանել և վերջապէս ցուցակով մը յայտնել տան պահանջքն ու պարտքը: Լաւ հաշուակալութիւն մը ընելու համար հարկ եղած գործողութիւնք այսոքիկ են, զոր ամեն հանճարեղ տնարարուհի կարէ դիւրաւ գործադրել իւր տնական գործոց մէջ:

Գ Ա Ս Ժ .

Դրանոյ գործածութիւն : — Պիստնի ծախք : — Աւելորդ ծախք : — Կարասիք : — Հագուստ : — Տեւեղանք : — Տեւեղանքի ստանդարտ : — Խնայութեան տեսակներ : — Բուն տնտեսական :

Ա .

Այն կինն որ յանձն առած է իւր տան գրամական վարչութիւնը , որ քաջ գիտէ իւր տրամադրութեան ներքեւ գտնուած հասոյթը , և որոշած է ծախուց իւրաքանչիւր գլխոյն սահմանեալ գումարը չանցնել , ուրիշ հոգ ունենալու չէ՝ բայց եթէ ինքզինքը զսպել : Ամենքս ալ ընական միտումն ունիմք մեզ հաճոյ եղած առարկաներն ստանալու , երբոր կարող եմք : Արդ՝ նոյն փափաքին յայտնուած ժամանակը դիմադրելով՝ և զայն լուսնակալու մտքառելով՝ կարող եմք խնայութիւնն ունակութիւն ընել մեզ :

Ինչ ծախք որ չընեմք և ինչ բան որ չգնեմք՝ նորա գրամը մեր քսակը կը մնայ . և պիտանի ու

անհրաժեշտ ծախուց թիւն ա՛յնքան մեծ է , որ , հարստութեան զանազան պայմանաց նկատմամբ ամեն համեմատութիւն պահելով , միշտ իմաստութիւն է աւելորդ ծախքէ զգուշանալ : Մինչդեռ առաջինք , եթէ իմաստութեամբ չկառավարուին , ընդ հուպ կանցնին այն սահմանները յորս պարտին մնալ : Աղէկ՝ գնելու արուեստը կարծուածին չափ դիւրին չէ . տան տիրուհիք քաջ գիտեն թէ միևնոյն գնով կարեն գնել կամ գնել տալ այնպիսի առարկաներ որոց որպիսութիւնն յոյժ կը տարբերի : Հարկ չէ նոցա բացատրել թէ Վիլիէն փողոցը կամ պուլվար տէզ Իթալիէն գնուած հագուստ կամ գլխարկ մը կրնայ ուրիշ թաղի մէջ աւելի աժան գնուիլ՝ տեսակը նոյն լինելով . և համբաւուոր դերձակի մը կը բաժն զգեստը՝ նուազ համբաւունեցող դերձակի մը միևնոյն կտուէ կարածէն տասն անգամ աւելի սուղ կը լինի : Մեծատունք կան որ փառք կը համարին լաւագոյն զգեստ հագնիլ , այսինքն ամենէն սուղը , և սուղ գնածնին ընտիր կը համարին : Այդ մեծատունք բաւական ոսկի ունին իւրեանց սոյն կարծեսց հետեւելու . բայց դժբաղդաբար նոցա նմանիլ ուզողներ կան՝ որ անմտաբար կը կործանին՝ զո՛հ լինելով իւրեանց անախառութեան և յիմարութեան :

Բ.

Ուրիշ գաղափարներով և ուրիշ սկզբունքներով կընթանան միջակ աստիճանի վերաբերող ճարտար տնարարութիւնք, որոց համար տնտեսագիտութիւնը բազմաթիւ օգտակար դասեր պահած է, որք ժամանակի և փորձաութեան պտուղ են. և եթէ միշտ չհարստացնեն, գոնէ աղքատութեան առաջը կառնուն:

Յրանքին կըսէ իւր բարի Ռիգարտոսի բերնով, որ ժողովրդական ողջմտութեան հանձարեղ և պերճ թարգմանն էր. « Եթէ հարուստ լինել կուզես, հոգ տար խնայելու՝ որքան հոգ կը տանիս շահելու:

« Ծոխ խոհանոցէն աղքատ կտակ կելնէ:

« Շահուած դրամն արագ կսպառի յորմէհետէ կանայք մանեւն ու հիւսելը թողուցին որ թէյի սեղանին շուրջը բոլորուին, և արք տապարն ու կռանը ձգեցին որ ջերմօղի խմեն ու ծխեն:

« Յիմարական ծախքերէ ետ կեցէք, և յայնժամ նուազ կը գանգատիք ժամանակին նեղութեան, տրոց ծանրութեան և ծախուց սղութեան վրայ: Բաւական չէ աշխատիլ, հարկ է նաև յարտեւութիւն՝ հաստատամտութիւն և մտադրութիւն. մարդ իւր շահուց պարտի անձամբ հսկել և շատ չվստահիլ այլոց:

« Առաւօտեան արեգակն ամբողջ օրը չտեսեր. մինչդեռ կարող էք՝ դրամ պահեցէք ծերութեան և կարօտութեան աւուրց համար:

« Զարդարանքի սէրն անէծք մի է. փափաքներուդ հետեւելէ առաջ՝ քսակիդ խորհուրդ հարցուր:

« Մետաքսը՝ սնդուսը՝ թաւիչը և կնգմենին՝ խոհանոցին կրակը կը մարեն:

« Ո՛րք կուզէ արօրով հարստանալ՝ պարտի զայն անձամբ վարել:

« Տիրոջ աչքն իւր երկու ձեռքէն աւելի կը գործէ:

« Անհողութիւնը տգիտութենէ աւելի կը վնասէ:

« Բեւեռի մը պակասութեամբ պայտը կը կորսուի, պայտի մը պակասութեամբ ձին կը կորսուի, ձիոյն կորստեամբ հեծեալը կը կորսուի, թշնամին կը բռնէ զնա և կսպաննէ, և այս ամենուն պատճառն ոչ այլ ինչ է՝ բայց եթէ բեւեռ մը զարնելու զանցաութիւնը:

« Ով որ արհեստ ունի՝ կալուած ունի, ով որ տաղանդ ունի՝ պատիւ ու շահ բերեղ հարստութիւն ունի:

« Գործունէութիւնը հարստութեան մայրն է, և Աստուած աշխատողին հատուցում չմերժեր: Երեկոյնի կանուխ պառկելը և առաւօտուն կանուխ ելնելը՝ մարդն առողջ՝ հարուստ և իմաստուն կընէ:

« Աշխատասէրն աւելի գործ կը կատարէ և նուազ դժուարութեամբ:

տէրը դրամը կը պահանջէ ձեր անպատրաստ ժամանակին . կամ եթէ պարտքերնիդ չմոռնաք , պայմանաժամը որ ի սկզբան շատ հեռի կը թուէր ձեզ , չափազանց կարճ պիտի թուի երբ մօտենայ : Կարծես թէ ժամանակը ոտից վրայ ևս թեւեր առած թուեր է : « Մեծ պահքը կարճ կը թուի նմա՝ որ Զատիկին վճարելու պարտք ունի : »

Դ .

Դրամոյ գործածութեան վրայ այս ընդհանուր խորհրդածութիւնները բովանդակելու համար՝ Ֆրանքլինի գործերէն դարձեալ պիտի առնուի նամակի մը հատուածը զոր 1779 ին դրած է առաջիկին Պրիյօն : Խնդիրն անօգուտ և անխորհուրդ ծախսուց վրայ է , յորոց պարտի սաստիկպէս խորշիլ ամեն խոհեմ տնարար :

« Երբ հինգ վեց տարեկան էի , տօնի օր մը բարեկամներս մանր դրամով լեցուցին փոքր դրօպանս : Անմիջապէս դուրս ելայ խաղալիկ գնելու համար , և ճանբան տղու մը սուլիչին ձայնէն հրապուրուելով՝ զայն ստանալու համար հաճութեամբ տուի բոլոր դրամս : Երբ տուն դարձայ՝ սկսայ սուլելով շրջիլ ամենայն գոհունակութեամբ , բայց ամենուն ահանջը խլացնելով : Եղբարքս՝ քոյրերս և հօրեղ-

բօրորդիքս խմանալով թէ շատ սուղ գներ եմ այդ ձանձրացուցիչ աղմուկը , ինձ ըսին թէ արժէքէն տասն անգամ աւելի տուեր եմ : և յիշեցուցին թէ մնացեալ դրամով տակաւին շատ լաւ բաներ կարէի գնել՝ եթէ խոհեմ եղած լինէի : Յիմարութեանս վրայ ա՛յնքան խնդացին որ բարկութենէս լացի , և խորհրդածութիւնը սուլիչին պատճառած ուրախութենէն շատ աւելի վիշտ պատճառեց ինձ :

« Այս դէպքն յետոյ օգտակար եղաւ , որովհետեւ անոր տպաւորութիւնն հոգւոյս մէջ անջինջ մնաց :

« Երբ անպէտ բան մը գնել ցանկայի՝ ինքնիրենս կըսէի . սուղիչին շոս դրամ չսալի , և այսպէս դրամս կը խնայէի :

« Ընկերութեան մէջ մտնելով և մարդոց գործերը դիտելով՝ տեսայ շատեր որ սուլիչին համար շատ ծախք կընէին :

« Երբ փառասէր մէկը տեսայ որ ժամանակը դեգերանօք կանցնէր , հանգստութիւնը՝ ազատութիւնը և ճշմարիտ բարեկամները կը զոհէր փոքր զուարճութեանց համար , ինքնիրենս կըսէի : այս մարդը սուլիչին շատ կը վճարէ :

« Երբ ուրիշ մը տեսայ որ ժողովրդական լինելու կը ցանկար , հասարակաց վէճերուն կըբազէր միշտ՝ իւր անձնական գործերը զանց առնելով և այդ զանցառութեամբ զանոնք աւրելով , ըսի՝ սուլիչին համար շատ կը վճարէ :

« Երբ ագահ մը ծանեայ որ ամենեւին փոյթ չէր ընէր հանգիստ ապրելու և այլոց բարիք ընելու՝ որպէս զի ոսկւոյ ովկիանոս մ'ունենայ խեղճ մարդ, կըսէի, ձեր սուլիչին համար շատ կը վճարէք :

« Եթէ իւր կարողութենէն վեր զգեստ հագնող, գեղեցիկ տուն եւ կառք ու կարասիք ունեցող մը տեսնէի, աւա՛ղ, կըսէի, շատ վճարեր է սուլիչին համար :

« Վերջապէս հասկցայ թէ մարդկային ազգին թշուառութեանց մեծագոյն մասն իրաց արժէքին սխալ գնահատութենէ եւ սուլիչին համար շատ վճարուելէ յառաջ կուգայ : »

Մարդիկը խաբող բոլոր այլանդակութեանց վրայ այս հանճարեղ ակնարկը կրնայ գաղափար մը տալ տնտեսագիտութեան վրայ, որոյ ամբողջ տարածութիւնը դժբաղդարար սակաւք հասկցած են :

Ե.

Այս գլխոյն վրայ Ֆրանքլին անսպառ է, ուստի և մին ի նոցանէ՝ որք Ամերիկայի մէջ սաստիկ աճեցուցին մեծութեան եւ փառասիրութեան այն զգացումն որ է պատուաւոր կերպիւ և աշխատութեամբ հարստանալ և արդի ժողովրդեան ըրած

արուեստական աշխարհակալութիւններէն օգուտ քաղել : Ամերիկացիք, ստիպուելով ամեն բան արագ յօրինել իւրեանց ազգու ճգանց առջեւ բացուած ընդարձակ երկրին մէջ՝ ուր աշխարհիս ամեն կողմէն գաղթականք կը դիմէին հետզհետէ, իւրեանց հանճարը և ազգու գործունէութիւնը հարստութիւն արտադրող ամեն իրաց վրայ տարածեցին, և զարմանալի չէ որ մեք իբր վարպետ նկատեմք զնոսա այն արուեստին մէջ զոր երկար ժամանակ իւրեանց ուսման միակ աւարկայն ըրին : Ֆրանքլին, այն գերազանց Ամերիկացին, իւր երկայն և պատուաւոր ասպարիզին մէջ անտեսական արուեստին նուիրեց բնութեան իրեն պարգեւած հիանալի կորովամտութիւնը :

Նման այն մարդոց՝ որք միակ գաղափարով մը պաշարեալ՝ բոլոր մտածութիւննին անոր վրայ կը կեդրոնացնեն, ամեն ուրեք դասեր և նմանութիւններ կը գտնէր : Զորօրինակ ճատրակի պարզ խաղին մէջ կը տեսնէր օրինակներ զանազան առաքինութեանց՝ զոր պիտանի կը համարէր կենաց երջանկութեան : Ճատրակի շարժմունք կը ցուցնէին նմա՝ նախաստորիւն ապագայի համար, ակնարկ՝ զանազան մասանց իրարու հետ ունեցած յարաբերութիւններն ըմբռնելու, և խոհեմութիւն՝ շութափութենէ զգուշանալու : Անտի կուսանիմք չվճատիլ գործոց երբեմն յոսի վիճակի մէջ իյնալէն, նախատառտի փոփոխման յուսալու վարժուիլ

և նորանոր միջոցներ փնտուելու յարատեւել : Այսպէս՝ Յրանքլին յիշեալ խաղին փոփոխականութիւնը մարդկային փոփոխականութեան նմանցընելով և միշտ զբաղելով մարդուն կատարելութեան աշխատելու միջոցներուն , իւր նմանեաց տալու դասեր և իմաստուն խրատներ կը գտնէր անդ :

Նաբոլէոն Ա. կայսրը բոլորովին ուրիշ բան կը տեսնէր նոյն խաղին մէջ : Ճատրակի տախտակն իրեն համար պատերազմի դաշտ էր : Երբ Մոսքուայի ճակատամարտին մէջ օգտակար երեցած հնարք մը ցոյց կուտային նմա , « Կեցէք , պատասխանեց , դեռ յստակ չեմ տեսներ ճատրակիս վրայ : » Մարդասէր Յրանքլինի համար ճատրակը կենաց պատկերն էր , Մարէնկոյի և Արկոլի յաղթականին համար՝ պատերազմի պատկերն . ա՛յնքան կընկզմիմք մեր զբաղմանց և սովորութեանց մէջ : Բայց Յրանքլինը դարձեալ պիտի գտնեմ երբ խօսիմ պերճութեան վրայ : Առայժմ կը բաւականանամ իւր դպրոցէն առնուլ խոհեմութեան և գործնական տնտեսութեան մի քանի խրատներ :

2.

Հողային կալուածը պէտք է առաջին համարիլ այն իրաց՝ որոց ստացումն ամենէն փափաքելի

նկատուած է միշտ : Անհամեմատ հրատոյրք ունին մեր նախնեաց մշակած դաշտը և այն տունն ուր մեր մանկութեան զուարթ օրերն անցած են՝ եւ զոր խնամօք կը պահպանեմք մեր զուակաց թողելու համար : Մեծ ընտանեաց ինչպէս և փոքրկանց ժառանգական տունը կեդրոն մի էր ուր կը գումարուէին բոլոր անդամք , ինքզինքնին երջանիկ համարելով որ տոհմային բնակարանին ծոցը կը գտնեն յարգանաց և սիրոյ այն աւանդութիւններն՝ յարակայութեան և իմաստութեան այն սովորութիւններն որոց վրայ կը հիմնուին ընկերութեանց երջանկութիւնը :

Կալուածոց բաժանումը որ խորապէս խանգարեց ընկերական հին դրութիւնները , անընդհատ փոփոխութիւնք որ հետզհետէ այլոց ձեռքը կանցընեն հողը և բնակարանը՝ կարասեաց հարստութեան յորինումը՝ և արուեստական աշխատութեանց ու առևտրական սովորութեանց յօրինած աղբիւրները՝ մեծ մասամբ անհետացուցին հայրական ժառանգութեան ստացման և պահպանման կապուած առաքինութիւնները : Ընտանեկան ոգւոյն թուլնալն և առանձնակեցութեան ու անձնասիրութեան այս միտումը , որ յառաջ կուգայ իւրաքանչիւր անդամոց համար անկասկեցութիւն մը յօրինելու հարկէն , կը վերագրուի սոյն մեծ յեղափոխութեան որոյ ազդեցութիւնն օր ըստ օրէ աւելի զգալի կը լինի : Պիտի զգուշանամ մտնել

այնպիսի խնդրոյ մը մէջ՝ յորոյ վրայ երևելի մարդոց կարծիքը բաժանեալ են. ուստի կը նկատեմ միայն տան մը ստացումը կամ գնումն անոր կցորդ նիւթական առաւելութեանց կամ անպատեհութեանց տեսակէտով:

Աշխատող անձ մը երբ իւր զաւակաց կատարեալ դաստիարակութիւն տուած է և իւր աշխատութեան արդիւնքէն հանած է բոլոր պիտանի ծախքերը, յայնժամ իւր առաջին մտածութիւնը կը լինի կալուած մի ստանալ մեծ խնայողութեամբ:

Իւր երազն եղած էր քաղաքը կամ գիւղը տուն մի, ունենալ. բայց երբ իւր այդ փափաքին հասնի, միշտ գոհ չմնար իւր դրամն անոր յատկացուցած լինելէն:

Ուրեմն այսպիսի գնում չըրած՝ հարկ է լաւ խորհիլ. վասն զի տունն յաճախ ծանր բեռ մի է արոց՝ նորոգութեանց և դրամն ազարդիւն մտալուն պատճառաւ: Եթէ չհարեանայ անձամբ բնակիլ և հսկիլ իւր տան, գրեթէ ստոյգ կորուստ կայ. տան հասոյթը դիւրաւ կը փճանայ՝ կամ հողին մշակութիւնը զանց կառնուի եթէ տէրը տարւոյն միայն մի մասն հոն անցնէ: Քաղաքը, տուրքերը նոյն են, և վարձողաց ընտրութիւնն արտերու եւ հօտերու չափ հսկողութիւն կը պահանջէ: Եւ եթէ կալուած մը մի քանի եղբարց մէջ բաժանել հարկ լինի՝ որքան կորուստ և դժուարութիւնք ժառանգորդաց համար:

Ահա այս է որ կալուած ստանալու փափաքը կը նուազցնէ:

Եթէ այրն իւր գործոց պատճառաւ ստիպեալ է քաղաքը բնակիլ, ընտանեաց մայրը չկրնար երկու բնակութիւն ընել որ շատ ծախք կը պահանջեն և գուցէ երկուքն ալ հաճելի չլինին: Բաժանեալ ընտանիք մը կարող չէ բարգաւաճիլ: Նոյն հոգերը պիտի ծագին եթէ քաղաքի տունը չպարունակէ բոլոր փափաքելի հանգստութիւնը տարւոյն մի մասն անդ անցնելու համար:

է.

Ինչպէս որ Յրանքին իրաւամբ կրտէ. «Փոխանկեալ ծառը և տուն փոխող ընտանիքն անխախտ կեցողներէն նուազ կը զարգանան»: » Խոհեմութիւն է այնպիսի տեղ բնակիլ որ համապատասխան է մարդուն վիճակին պիտոյից՝ և յարմարի ստույգութեան և ընտանեկան պահանջմանց: Երբ կարելի լինի բնակութիւն մը հաստատել ուր բարօրութիւնը բան մը չթողուր ցանկալու՝ յայնժամ դիւրագոյն կը լինի ձանրորդելու հրապուրանաց ևս դիմակալել:

Երկաթուղիք, որ արագութեամբ կը տանին

ամեն կողմ, գրգռեցին այն ակորփակն որ աւելի
կը վերաբերի ուրիշ ազգաց քան Գաղղիացւոց : Կոր-
ծանման պատճառաց կարգը դասուած է այն եռ-
ամսեայ արտասովոր կեանքը, որոյ համար տարւոյն
մնացորդին հանգստութիւնը և բարօրութիւնը կը
զսհուի :

Եթէ բնակարանն այնքան հաշուարարութիւն
կը պահանջէ՝ այն է թէ զայն պատշաճապէս կազ-
մաւորելու համար սպասահարկութիւն և կարասիք
ևս պիտոյ են :

Բարեկարգութիւնը տան մէջ կը տիրէ և զայն
կառավարող տնտեսութեան գաղափար մը կուտայ
երբ առաջին նայուածքով կը գուշակուի անդ բնա-
կողաց աշխատասիրութիւնն ու հաստատ մնալնին,
և դիւրաւ կորոշուի կարասեաց և այլ առարկայից
կէրտութիւնը :

Ընդհակառակն, խառնակութիւն և շռայլու-
թիւն կայ, երբ ամեն տեսակ անպէտ առարկայք
լեցուած են սեղաններուն՝ դարաններուն՝ դաշնա-
կին ու վառարաններուն վրայ :

Ամեն ինչ որ յիշատակ կամ զարդ չէ, հիւրթ-
ճաշակի հակառակ է . և ամեն ինչ որ առանց չա-
փակցութեան և առանց հարկի աստ անդ կը դրուի՝
անվայել է :

Ը .

Սեղանն իւր բազմաթիւ մանրամասնութեամբը
նուազ կարեւոր չէ ներքին բոլոր մասերէն ուր բա-
րեկարգութիւնը և խնայութիւնը պարտին երևիլ :
Խնայութիւնը պէտք չէ շիտթել գծձութեան հետ :
Քաջայարմար ճերմակեղինաց մաքրութիւնը հարկ է
որ հաճոյապէս ներկայանայ աչաց : Կերակրոց
թուոյն և տեսակին մէջ ևս կարեւոր է նոյն ըն-
տրողութիւնը . մանր ուտելիք և պտուղք պէտք չէ
որ առատ լինին՝ եթէ սնուցիչ կերակուրք նուազ
են կամ բացակայ :

Պուալոյ իւր երգիծարանութեանց միոյն մէջ
խօսած է մեղ՝ յուի կարգադրեալ ընթրիքի մը
վրայ, ուր ամեն ինչ այնքան անհաճոյ էր աչաց՝
որքան զզուելի՝ քմաց, Պէտք չէ շիտթել հազուա-
գիւտ և անբնական կերակուրներէ բաղկացեալ ճոխ
սեղանը պարզ և առանց յօրինուածութեան համեղ
կերակրոց հետ, որոց համեղութեան պատճառքն
են տեսակին լաւութիւնը և խնամօք խոհագոր-
ծուիլը :

Չափակցութեան նոյն ոգին պարտի երեւիլ ճեր-
մակեղինաց պահարանը, ուր հարկ է միայն խոհա-
նոցի՝ մառանի՝ սեղանատան և սենեկաց անհրա-
ժեշտ իրերը գտնուիլ :

Խանութպանք նոյն իրերն արդէն իւրեանց դարակներուն մէջ դասաւորած լինելուն համար՝ շատ դիւրին է գնելու ատեն չափաւոր սահմանը չանցնիլ :

Ճերմակեղինաց գինն այսօր ա՛յնչափ ատանցած է, որ այլ ևս հարկ չկայ կարկտուք ընելու, որոց համար օրերով կղբաղէին պատուհանաց առջեւ նստած :

Թ .

Ձգեսաւորութեան պէտք եղած ծախքը մեծ է, և բոլոր տան կարասեաց համար եղածը նշանակութիւն չունի բաղդատմամբ այն գումարին՝ զոր կարեն սպառել շրջագրեստք՝ ցփփք՝ կօշիկք՝ ձեռնոցք և ձերմակեղէնք :

Այս աւարկայից միոյն գնումը գրեթէ միշտ պատճառ կը լինի ուրիշ բաղմամբիւ իրեր ևս գնելու, որոց արժէքը խիստ շատ կանցնի առաջնոյն համար տրուածէն : Ուրեմն կանայք, որոց պաշտաման կը վերաբերի նաև տան պիտոյքն հոգալ, պարտին արխաբար դիմադրել գնելու այս յօժարութեան, որպէս զի մի՛ գուցէ կիրք կամ մոլութիւն դառնալով կործանումն սպառնայ :

Մեծագոյն փորձութեանց մին է այս՝ որոց ենթարկեալ են անգործ մտքերն յորոց օգուտ կը

քաղեն վաճառականք՝ որ մեծ տուրք կը վճարեն խանութի առջեւին համար : Գեղեցկագոյն առարկայք խանութին ճակատը կը դրուին միշտ, և այս ճակատը թէ՛ վաճառողը և թէ՛ գնողը կը կործանէ :

Լսած եմք թէ ծաղկանց ներքեւ օձեր կը թաքչին, ըստ այնմ՝ կարծես թէ փորձիչ սատանայ մը կայ այն ապակիներուն ետեւը և պայծառ գոյներով թեթեւ ու փայլուն կտաւոց ներքեւ, որք հրապուրիչ ձեւերով շարուած են :

Երբեմն ձերմակեղէնն ու հագուստները մաքրելով՝ մաշած տեղերն անյայտ կերպիւ կարկտելով ու նորոգելով ընդերկար կը գործածէին . խի այժմ նորերն աւելի յաճախ կը շինուին, վասն զի կտաւք ու կարողչէք ատանցած են :

Ծառայք մասնաւոր զգեստ ունէին . զարդիս իւրեանց տերանց թողածները կղբեհուն, և այս՝ պերճութեան ճաշակ տուաւ նոցա :

Կարասիքն իսկ ատանցած լինելով՝ միևնոյն կերպիւ չեն պահպանուիր : Բանիբուն տանտիկինն այլևս մոմով ու մոմախառն երանգօք շիւել չտար զայնս, որոյ համար յատուկ մարդ մը պէտք էր : Այժմ դիւրացած է այս դործն որուն շատ ժամանակ կապառուէր : Բնակարանք արդէն նուազ ընդարձակ լինելով՝ նուազ աշխատութիւն կը պահանջեն :

Բարեկարգութիւնը և խնայութիւնը մասնաւորապէս կը կայանայ կոտրած կամ հինցած կարասի-

ները ժամանակին նորոգելու վրայ . պէտք է միշտ
զգուշանալ նորը գնելէ :

Այսպէս՝ խնայող կիներ կանխաւ հաշուելով ու-
նեցած հասոյթը՝ չպիտի պարտաւորէ իւր այրն որ
կարողութենէն աւելի աշխատի չափազանց ծախուց
բաւելու համար : Բուն տնտեսութիւնն է՝ հոգ տա-
նիլ աշխատողին առողջութիւնը պահելու և կեանքն
երկարելու : Վասն զի եթէ նա հիւանդանայ , ոչ
միայն բժշկի և դեղի ծախք մը կաւելնայ , այլ և
նորա աշխատութենէն դոյանալու շահը կը կոր-
սուի :

Ժ .

Մեծատանց համար ևս տնտեսութիւնը նուազ
դժուարին չէ : Տաղանդ և աշխատութիւն պիտոյ է
կարեւոր կալուածներ մատակարարելու և մեծ
դրամագլուխ մը շահեցնելու՝ որ եկամուտը միւսնոյն
չափու մէջ մնայ կամ աճի :

Առատութեան մէջ սնած աղջիկը՝ սովորած լի-
նելով ամենօրեայ ծախքեր ընելու առանց հաշիւ
պահանջող ունենալու , յարատեւ բարօրութիւն
վայելելով և ամեն փափաքները կատարուելով ,
աւելի դժուարութիւն պիտի կրէ եթէ չափով և
խորհրդածութեամբ գնելու ստիպուի . աննախա-

տես և շուսյլ կը լինի եթէ երբէք իրեն խօսուած
չէ ծախսելէ յառաջ հաշիւ ընելու վրայ :

Շուսյլը կրտէ , դրամը կըր շինած են որ գլորի-
և ագահը կրտէ . դրամը տափակ շինած են՝ որպէս
զի՛ դիզուի : Այս երկու առածք հաւատարապէս
սխալ են : Ուրեմն ագահութեան և շուսյլութեան
դէմ պաշտպանուելու համար՝ աշխատութեան
սիրով զինուիմք և մեր միտքը վարժեցնեմք նա-
խատեսութեան ու գործունէութեան :

Գ Ա Ս Ժ .

Պերնուքիւն : — Այդ բառով ինչ պէտք է իմանալ : — Անուսն պերնուքեան : — Յուցանուքեան ծախեր : — Արագ հարցսնուքիւն : — Եւր հարսացողք : — Բազմաձախ մուրքիւնք : — Մարց եւ սանտիկանց համար խրատք :

Ա .

Աղջկունք ստէպ կը լսեն և պիտի լսեն պերճու-
թեան վրայ խօսուիլն . իւրեանց սուջեւ հակասա-
կան դատողութիւնք պիտի լինին . պերճութեան
թշնամեաց և պաշտպանաց վիճելը պիտի տեսնեն .
յաճախ պիտի յանդիմանուին՝ այս կամ այն զար-
դարանքն անօգուտ և մինչեւ խոկ մեղապարտ պեր-
ճութիւն համարելով : Ուրեմն կարեւոր է խնամօք
քննել թէ ինչ կայ ստոյգ կամ անստոյգ այս գա-
նազան երեւոյթներով եղած գիտողութեանց մէջ :
Խնդրոց ոմանց վրայ բացուած վիճարանութիւնք
սովորաբար ցոյց կուտան թէ խնամք տարուած չէ
կէտերը ճշգիւ որոշելու , և թէ իւր կուսակցաց
և հակառակորդաց մէջ թիւրիմացութիւն կայ զոր
նախ և յառաջ հարկ է բառնալ : Պերճութեան
աճու մը կամ նուազումը միայն ընտանեաց բարօրու-

թեան չներգործեր , այլ և մեծ ազդեցութիւն կրնէ
ազգի մը ընդհանուր բարգաւաճման : Եթէ պեր-
ճութիւն ըսելով կիմանամք ստանալ այն իրերն որ
անհրաժեշտ չեն տան՝ կարասեաց՝ հանդերձից և
սննդեան համար , ուրեմն հարկ է խոստովանիլ թէ
պերճութեան պատմութիւն ըսուածն ոչ այլ ինչ է ,
բայց եթէ քաղաքակրթութեան պատմութիւն . նա
կը կայանայ արդարեւ նախնական կամ վայրենի վի-
ճակի մէջ սալրող ազգաց գործածած խոշոր առար-
կայից տեղ հետզհետէ շքեղագոյն՝ յարմարագոյն և
նիւթով կամ ձեւով ճոխագոյն առարկաներ գնելու
վրայ : Յորմէ կը հետեւի թէ անհնար է ասել ուր
կսկսի պերճութիւնը և ուր կը վերջանայ :

Ամենէն պարզ անօթքի սկզբան ապերաստան պեր-
ճութեան առարկայ նկատուեցան : Հողէ պնակք՝
վառարանք և պատառաքազք իբր աւելորդ գիւ-
տեր համարուեցան . հացը պերճութիւն էր նոցա
համար որ միայն վայրի կազինով կապրէին , և նա-
հապետը որո՞ւմ պարտիմք որթը՝ պերճութեան ըմ-
պելի մը նուիրեց մարդոց որ միայն ջուր կը խմէին :
Պերճութիւնն ուրեմն բոլորովին յարընչական գա-
ղափար մի է որ ժողովրդոց համար ժամանակին՝
և անհատից համար իւրեանց ընկերական վիճակին
համեմատ կը փոփոխի : Պարզ ժապաւինի մը գնումն
ազքատ աղջկան համար տեսակ մը պերճութիւն է ,
ինչպէս ադամանդէ գետակ մը հարուստ կնոջ հա-
մար : Անուրանալի է թէ բոլոր արուեստք՝ գիտու-

Թիւնք՝ ճարտարութեան և վաճառականութեան ամենայն ճգունք անդադար կօզնեն աւելցնելու այս հարստութեանց, լաւ ևս ըսեմք այս հրաշալի գիւտից Թիւր զոր գժուարաբարոյ խմատասէրք կը գատապարտեն՝ նոցա վերադրելով ծիծաղելի գործերը՝ մոլութիւնները և անբարոյականութիւնը, որոց յառաջադիմութիւնք, իրենց կարծեօք, քաղաքակրթութեան յառաջացման ուղղակի համեմատ են մշտ:

Բ.

Եւսկ մեր ժամանակին վերաբերեալ իրաց վրայ խօսելու և առտնին վարչութեան կարեւոր եզրղ խնդրոց մէջ ամփոփուելու համար, պիտի ցուցնեմ թէ միջակ վիճակի անձանց կարասիքն անհրաժեշտ առարկայից սահմանաւոր թուով կը բաղկանար երբեմն, յորմէ անդին բանի մը չէին փափաքէր ամենեւին:

Կահենիէն յոյժ պատշաճ կարասիք կը շինուէր, յորմէ շատ տուներ զուրկ կը մնային: Այսօր հեռաւոր ճանբորդութիւնք Չինաստանի և Ճաբոնի լայքաները՝ եղեւինի ու ճանդանի և այլ զանազան փայտեր բերին: Ամեն երկրէ օտար ճարտարութեան պատուական գործեր կուգան, ինչպէս ապիկած խեցեղէնք, ընտրելագոյն ճենապակիք

բազմազան և անտոյր նկարներով, ճափոնական երենագործութիւն իւր ճոխ յօրինուածութեամբ, Հնդկաստանի գունաւոր կողովք եւ թանձր ու թաւարծի օթոցք՝ որոց փառաւոր նկարք եւ փայլուն գոյներն յատուկ են Արեւելից: արաբական ճարտարութիւնք և բիւզանդեան տեսակաւ յօրինուածութիւնք որ բեհեզները և նուրբ կտաւները կը զարդարեն սակով և արծաթով: Առատօրէն կուգան նաև Աւստրիոյ փափկապէս գործուած փայտերը, Պոհեմիոյ մանրակրկիտ խնամով փորագրուած բիւրեղները, զարդարանքի համար հազար տեսակ ազակեայ մանր վաճառք, Վենետիոյ հայելիք, ձենուլայի հիւսկէնք յորոց կը շինուին գեղեցիկ կողովք և ամեն տեսակ զարդք: Հազուագիւտ չեն այս հրապուրիչ առարկայք որ աչքերն հաճոյապէս կը խտտղեն:

Սակայն իրօք պերճութիւն են այսօքիկ՝ որոց վրայ գաղափար չունէինք համալսարհական ցուցահանդէսներէն առաջ, որք շտեղծաւ աչտոց առջև դրին այս բոլոր շքեղութիւնները և միանգամայն զարթուցին բոլոր տենչանքները:

Գ.

Երբ անկողինը՝ դարանը (որ առանց հայելոյ էր՝) պահարանը՝ գրասեղանը՝ ձեռագործի սեղանը

քանի մը արթուի հետ սենեկին մէջ դրուէին, այլ ևս ուրիշ բան աւելցնելու հարկ չէր տեսնուէր, թէև սենեակները մեծ ու գեղեցիկ էին և կրնային շատ իր պարունակել:

Ընտանեաց մայրն ունէր անդ իւր յարգելի թիկնաթուղ, միակ թիկնաթուղ՝ յորոյ վրայ ոչ ոք կը համարձակէր նստիլ: Մի քանի հարուստ տանց մէջ պօսեօր Տիւ ժուր կը գտնուէր, որ է պերճութեան կարասի, կէս գրասեղան կէս դարան, ուր պշրող նայուածքն ամբողջ անձը ցոլացնող հայելին կրնար գտնել: Սրահ չէին ունենար միշտ, և եթէ հատ մը ունենային, վառարանին ճակատը դրուած միակ հայելին կը դարդարէր զայն:

Յետոյ նկատուեցաւ թէ ուրիշ հայելի մը միւսին դէմ դրուելով լաւ ազդեցութիւն կընէ, և չորս հայելի լաւ ևս կը լինի ջահերն ու աշտանակները ցոլացնելու համար:

Ահա որպիսի յառաջադիմութեամբ պիտանիէն աւելորդին կը հասնուի:

Սեղանատունը սովորական ընդունելութեանց կը ծառայէր. որով սրահը, եթէ ունէին, մաքուր կը մնար և մեծ առիթներու կը պահուէր: Սեղանի անօթք խեցեղէն էին, եւ արծաթեղէնք դրամագլուխ մը կը կազմէին:

Այսօր տուները բազմաթիւ անարժէք կարասեօք կը զարդարեն: Ընդունուած է թէ ոսկերչական առարկայք պէտք է արծաթազօծ մետաղէ

լինին: Այս տարբերութիւնը մեր ժամանակին յատուկ նշանն է, և առաւել հետաքրքրական է թէ՛ սեղանի անաղէ կազմածք կը ծառայէին ամեն անոնց որ արծաթեայն չէին կրնար ունենալ, և ո՛րքան ալ խնամօք պահպանէին՝ դարձեալ աչքը չէր խաբուէր: Բայց այսօր խիստ մօտէն նայելու է, վասն զի ճշմարիտ և կեղծ արծաթեղէնք միևնոյն կերպիւ կը շինուին. կատարելագոյն քանդակագործութիւն կը լինի արծաթազօծ և արծաթեայ նիւթոց, և նոյն քանդակք երկու մետաղաց վրայ ևս կը բանուին՝ թէ՛ կեղծին և թէ՛ ճշմարտին:

Գաղղիական ճարտարութիւնն այս տեսակ պերճութիւնն իւր բարձրագոյն աստիճանին հասցնելով՝ թոյլ կուտայ աչաց առջեւ դնել բազմաթիւ առարկաներ՝ որ սակայն ճշմարիտ հարստութիւն չեն:

Այս տեսակ ստացուածոց համեմատական ավանութիւնը չափազանց ծախուց կը տանի այն անձը որ ինքզինքը կուտայ շքեղութեան անընդդիմակ հրապուրանաց: Այլ ևս հարստութիւն պէտք չէ հարուստ երեւելու համար. ուստի և բազումք ինքզինքնին կը կործանեն հարուստ երեւիլ ուզելով, և յաճախ կը զրկուին պիտանիէն՝ աւելորդով ողորուելու համար:

Դ.

Առաջ դռներն յատկացած էին ազատօրէն բացուելու և օդոյն ու մարդոց անցուդարձին համար . յետոյ խորհեցան ամեն կողմ՝ դռներ շինել՝ Գաղղիոյ և Արեւելից ծանրագին վիժակներ գործածելու համար : Այժմ չգիտցուիր թէ՛ ո՛ւրիշ մտնելու է արդի սենեակները կամ ելլելու է : Թուի իմն թէ՛ հարկ համարուեր է թաքուցանել ինչ որ պիտանի է , որպէս զի գարմացեալ աչաց ցոյց արուի ինչ որ պիտանի չէ :

Խոհանոցը կը գտնուին հազար ոչինչ բաներ՝ որ թէ՛ ժամանակը և թէ՛ դրամը կը վատնեն . ամեն տեսակ կաղապար ա՛յնպիսի կերակուրներ շինելու՝ որոց բոլոր արժէքը երեւութին վրայ է . մինչդեռ պարզ կերակուրքն են միայն որ թէ՛ հարստութիւնը և թէ՛ առողջութիւնը կը պահպանեն :

Ուրեմն տուն մը կահաւորելու ժամանակ պէտք է զգուշանալ ունայն բաներէ՝ որոց համար յաճախ կը գոհուի իրական բարօրութիւնը : Աստանօր կարելի է նկատելու սկսիլ ինչ որ հարկ է ընդունիլ կամ դատաւարտել պերճութիւն անուանեալ բաներէն , և ինչ որ կայ օրինաւոր ոմանց համար ու եպերելի այլոց համար : Թանկագին՝ չքեղ՝ ճոխ՝ ընտիր առարկայից գործածութիւնը ներելի և յա-

ճախ իսկ գովելի է երբ ընտանիքն ընչաւէտ է և բոլոր այս ծախքերը նորա հարստութիւնը չեն սպառեր . բայց բոլորովին յիմարութիւն և անխահեմութիւն է այն ընտանեաց համար՝ որ նոյն վիճակին մէջ չեն :

Չկայ հարստութիւն որ տոկայ այս անգագար գնելու հարկին : Հարուստն աղքատ է՝ երբ չգիտեր իւր ծախուց չափ դնել . և աղքատն հարուստ է՝ եթէ գիտէ ունեցածովը գոհ լինել : Ընմարիտ հարստութիւնը կը կայանայ միշտ իւր ծախքերն իմաստութեամբ և ընտրողութեամբ կառավարելու արուեստին մէջ : Զգուշանալու է ապագայն վտանգի դնելէ՝ ներկային յօժարութիւնները գոհացնելու համար : Բաց աստի՝ առատութիւնը տաղտկութիւն և ճանձրոյթ կը բերէ :

Ստացիչներուն թշուառագոյնքն են հազուագիւտ իրաց հաւաքիչք : Հաւաքածոյն եթէ պատկեր է՝ երբէք աչաց առջեւ չեն ունենար . եթէ գիրք է՝ գանձք բանալու ժամանակ չեն գտներ . եթէ ճենապակի կամ խեցեղէն է՝ չեն համարձակիր գործածել . եթէ մանր անօթներ են՝ երբէք չեն կարողանար նոցա տեսակն ամբողջացնել . եթէ չորցուցած անասուն կամ թռչուն է՝ դժուարաւ կարեն ամբողջացնել և դասաւորել : Չկայ սուղ բան քան զայս տեսակ մոլութիւն որ կը կայանայ միշտ նոր իրեր գնելու վրայ՝ զի հազուագիւտ են :

Լա Պրիւյէր իրաւունքն հատուցած է նորաձե-

ուութեան վրայ գրածին մէջ. ուր կը տեսնուի թէ հետաքրքրական բայց կործանիչ իրաց տարփածութիւնը ժամանակին մէջ մեր ժամանակէն աւելի խելացի չէին:

Դրամն իմաստութեամբ գործածող գրեթէ երբէք չեն եղած նոքա՝ որ յանկարծ հարստացած են կամ իւրեանց ծնողաց զիզած հարստութիւնը կը վայելեն:

Աշխատողը ժամանակի և դրամի յարգը կը ճանաչէ. գիտէ թէ ինչպէս հնար է երջանիկ լինել, և շուային երազները զինքը չեն մոլորցներ:

Ե.

Նոյնպէս չէ այն անձանց համար զոր բաղդին մէկ բերմունքը կարէ յանկարծ անակնկալ վիճակի բարձրացնել, այնպէս որ երեկոյեան աղքատն առաւօտուն միլիոնատէր զարթնու:

Ըսվի հաստատութեան ժամանակ ամեն կողմ գայթակղեցուցիչ հարստութիւնք և սոսկալի սնանկութիւնք տեսնուեցան: Ծառայք իւրեանց տէրերէն աւելի հարուստ կը լինէին:

Բազում երիկեանք փողոցէն անցած ժամանակներն իւրեանց նախորդ աւուր բարեկամներէն, զոր այլ ևս չէին ճանաչեր, իրենց ծառայական անուամբ

կոչուիլը կը լսէին: Բոլոր այս երիկեանք անթիւ այլանդակութեանց կուտային անձերնին, և թուէր իմն թէ հաճոյք կգգային ծաղրելի լինելէ: Կարծես թէ հնոյն Հռովմայ զեղխութիւնք վերատին երեցան: Սրբոյն Գերմանոսի տօնավաճառին մէջ թուղթ կը խաղային տասն հազար սփեոյ գումարով: Երբեմն կէս ժամու մէջ մէկ միլիոնէ աւելի կը կորուսանէին: Ամեն ոք կուզէր կառք ունենալ, այնպէս որ Բէնգանիօայի փողոցն և իւր շրջակայքն անբաւական էին կառաց բազմութեան, և վտանգաւոր՝ հետիտտ գնացողներուն:

Պրոնեան անուն հացագործը, չգիտելով իւր դրամն ինչ բանի գործածել, սփերչի մը խանութը գնեց. և խնջոյք մը տուաւ, ուր իւր կիներ յիմար փառասիրութեամբ դարաններուն վրայ խառնիխուռն կը դիզէր սեղանի անօթոց տեղ եկեղեցական անօթներ՝ սիլիհներ և զգեստաւորութեան վերաբերեալ իրեր: Այս տարօրինակ շեղջակոյտն անըւր էր: Ծաքարամանի տեղ խնկանոց կը տեսնուէր, աղամանի տեղ նուիրաց աւազան՝ փոքր սիլիհ՝ անուշահոտ իւղոյ շիշեր, և այլն:

Զ.

Այս անհէթեթ պերճութեան միջոցին՝ մարդ մը դղեակներ և կղզի մը գնեց՝ անդ գայթականութիւն հաստատելու նպատակաւ՝ որոյ պաշտպանը

լինել կուզէր : Ահագին գումարներ ծախսեց ազա-
մանդի և թանկագին ախանց : Չորս հազար մարգի
արծաթեզէն սեղանի անոթներ գնելէ յետոյ՝ Փոր-
թուկալի թագաւորին սահմանեալն ևս գնեց : Իւր
տան մէջ ամեն ինչ արծաթէ էր , ջահակալ՝ հայելի՝
կրակարան իւր պարագայիւք՝ վանդակ՝ կրակի և
վառարանի պիտոյք՝ թեւով աշտանակք՝ ջահք՝
թիթղունք՝ խնկանոցք՝ կողովք՝ սակաւք՝ նարն-
ջենւոյ և ծաղկի թաղարք՝ սափորք՝ դոյլք՝ կոնք՝
փոքր սրուակք՝ կաթսայք՝ կրակակալք՝ սանք և
մինչեւ խի խոհանոցի անոթք : Ախտոներուն մէջ
ու թտուն ճիւն աւելի ունէր . երեսուն ծառայք ամեն
հասակէ՝ ամեն մեծութեամբ՝ չքեղ համազգեառանե-
րով՝ իւր տան բակերն ու սրահները կը լեցնէին :

Տան ծախքը տարին հինգ հարիւր հազար ֆրան-
քի կը հասնէր : Ազանդերի համար արուեստական
պտուղներ և հոտաւէտ ջրոյ ազրիւրներ ունէր :
Ուքը գետին զարնելով մարդամեքենայ մը կը հա-
նէր՝ որ սեղանին բոլորաիքը շրջելով՝ գլխի կը
մատուտակէր տիկնանց :

Յանկարծ հարստացողներուն այս այլանդակ
չուայլութեանց պատկերին ուրիշ բան չաւելցնե-
լով՝ բաւական ըսի ցուցանելու համար թէ պեր-
ճութեան սէրն ինչ անպատեհութեանց կրնայ
տանիլ զմարդ : Բարեբաղդաբար ամեն դարու մէջ
չպատահիր այսպիսի չափազանցութեանց մէջ իյնա-
լու դիւրութիւն :

է .

Հագուստը կարասեաց չափ առիթ կուտայ անո-
գուտ իրերով ծանրաբեռնելու : Զարդարանք չուայ-
լորէն սիւսեցան ամենապարզ հանդերձից վրայ :
Ողջամիտ կանայք՝ հաշուոյ պակասութեամբ մուր-
րեցան խարուսիկ երեւութից ետեւէ :

Գնելու չափազանցութիւնը տւենր կը կործանէ :
Յաճախ գտնուեցան դարաններ որ պահարան եղած
էին անգործածելի կտաւոց և կապերտից՝ որոց
դրանն այս կերպիւ կորսուած էր : Սխալ անտե-
սութիւն ինն պատճառ եղած էր նոցա գնման : Աս-
տանօր ևս կարելի է տեսնել առաջին դաստիա-
րակութեան ազգեցութիւնը՝ որ առաջնորդն է
հանճարոյ ինչպէս և զգացման : Երբ աղջիկ մը
կըթուած է իւր միտքն զբաղեցնելու և ընելիքին
վրայ խորհրդածելու վարժութեան մէջ , գիտէ յիւր-
մէ սպասել ամեն ինչ և իւր փափաքները գոհա-
ցնելէ առաջ այլոց վրայ մտածել : Մնտի գործե-
րով չանցներ իւր ժամանակը : Եւ եթէ հագուստն
ինք կարէ՝ չաշխատիր զայն մեծածախ ընելու : Նոր
բանի մը փափաքելէ առաջ՝ իւր եզրարց և քերց
վրայ կը խորհի . կը ջանայ ճարտար լինել ոչ թէ
ծախսելու՝ այլ խնայելու . մեծերուն զգեստները
փոքրկանց յարմարցնելու համար մօրն ըրած խնամ-

քը չարհամարհեր : Յիրաւի սրտաշարժ տեսարան է այս ներքին պաշտօնը որ ամեն ինչ ընդհանուրին գոհունակութեան կը ծառայեցնէ , մօր հանդերձները մեծ տղայոց յարմարցնելով և մեծերունը փոքրրկանց : Բարեկարգութեան և տնտեսութեան այս աշխատութիւնը տեղի կուտայ բազմաթիւ կարգադրութեանց՝ որոց աւելի պիտոյ է միտք զբաղեցնել քան թէ կուրօրէն եղած ունայն ծախուց :

Դիտելի է թէ , բարձր և խոնարհ աստիճանի մարց մէջ տարբերութիւնն անդգալի է : Ամենուն ալ կեանքը հաւասարապէս կանոնաւորեալ է ճաշակաց պարզութեամբ , տենչանաց չափաւորութեամբ , սկզբանց անաչառութեամբ : Մայրական պարտականութեանց կատարումը կը պահանջէ առաքինութիւններ անյեզլի՝ ինչպէս է Աստուած որ զայնս կը ներշնչէ : Իրենց համար պահուած են տան քաղցրութիւնք և բերկրութիւնք : Աշխատութեամբ ստացեալ անդորր և իմաստուն կեցութիւնն իւրեանց գործողութիւնը կուղղէ դէպ ի միւնոյն մասածութիւն : Զգեստի ունայն ազդեցութիւնը չեն փնտռեր : Կնոջ արժանիքը դիւրաւ կը գուշակուի իւր հագուստին տարած իմաստուն ինամքէն : Ողջամիտ մօր կամ լուրջ աղջկան զգեստին վրայ զանց առնուած կամ աւելորդ բան չերեւիր . ոչ մին և ոչ միւսը կը բեռնաւորի անհանգիստ ընող մանեակներով՝ շղթաներով՝ ապարանջաններով՝ շարժման ազատութիւնը բարձու երկայն

քղանցքներով՝ որք քաջ ենթադրել կուտան թէ աշխատասէր չեն :

Ը.

Հարսանեաց օժիտն համեստ կերպիւ կը յօրինուի այն ընտանեաց մէջ՝ ուր հանճարը կառաջնորդէ բարուց : Հարստութեան կէսը չգործածուիր ծանրադին ցիսիներ՝ գոհարեղէն՝ ասղնեգործեր՝ մետաքսեայ զգեստներ՝ մուշտակներ գնելու : Ամեն ոք գիտէ թէ իմաստութիւն է ըստ կարելոյն սակաւ ծախսել այն իրաց համար զոր նորութիւնը պիտի պարտաւորէ փոխոխել : Հարսանեաց կողմին արժէքը պէտք չէ որ օժիտին մէկ քսաներորդն անցնի : Երբ ամուսնութիւնը միջակ վիճակաց մէջ է , գրեթէ առանց օժ.ոի , խոհանութիւն է կողմի մը յօրինուածութենէն հրաժարիլ՝ որոյ մէջ կը դրուին միայն անարժէք իրեր : Սովորութիւն եղածը՝ վայելուչը չէ միշտ :

Օգտակար է գիտել թէ մարդ ինչպէս կաշխատի և ինչպէս դրամ կուեցնէ . բայց նուազ օգտակար չէ անցելոյն դասերէն խրատուիլ՝ փորձառութեան դասերն ընդունելէ յառաջ , որք ամենէն խիստ են եւ շատ անգամ կը դնեմք զայնս մեր զղձումներով : Կարծուածին չափ դժուարին չէ

տաղանդով և արժանեօք հարստանալ. բայց շատ
աւելի դժուարին է շահածը չվատնել:

Թ .

Ֆրանքլինի յիշատակարանաց մէջ հետեւեալը
կը կարդամ .

« Անգղիական առած մը կայ որ կըսէ . « Եթէ
կուզես յաջողիլ՝ կնոջդ խորհուրդ հարցուր: » Եր-
ջանիկ էի այսպիսի կին մ'ունենալով՝ որ ինծի չափ
աշխատատէր էր: Առեւտրոյս մէջ բոլոր սրտով
կօզնէր ինձ . թերթերը կը ծալէր ու կը կարէր,
խանութք կը շահէր, ցնցոտիք կը գնէր թղթի գոր-
ծարանաց վաճառելու համար, և այլն: Գործատեաց
սպասուորներ չունէինք. մեր սեղանը պարզ և
թեթեւախորտիկ էր, և մեր կարասիքն ըստ կա-
րելոյն աժան:

« Օրինակ իմն, երկար ժամանակ նախաճաշ էր
հաց և կաթն զոր քսան փարանոց հողէ սկաւառա-
կի մը մէջ դնել կուտայի և անագէ դգալով կուտէի: »

« Բայց տեսէք թէ պերճութիւնն ինչպէս կը
մտնէ ընտանեաց մէջ և յառաջադիմութիւն կընէ
սկզբանց հակառակ: Առաւօտ մը նախաճաշ ճենա-
պակեայ դաւաթով և արծաթի դգալով բերին:
Կինս գնած էր զայնս ինծի համար՝ առանց իմ գի-

տութեանս՝ և 23 շիլինի ահագին գումարով:

« Այս ծախքը կրցաւ արդարացնել միայն ըսե-
լով թէ՛ կը խորհէր որ իւր այրը դրացիներէն
աւելի արժանի էր արծաթեայ դգալի և ճեն-
ապակեայ դաւաթի: »

« Այսպէս արծաթն ու ճենապակին առաջին
անգամ երեւցան մեր տան մէջ, բայց հետզհետէ
քանի որ հարստացանք՝ մինչեւ քանի մը հարիւր
ոսկի ծախսեցինք անոնց համար: »

Ճ .

Նոյն հեղինակը զոր ստէպ սաւիթ ունեցայ յի-
շատակել և որ կը պարսաւէր յիմար փառասիրու-
թեամբ եղած պերճութիւնը, մեծ ճարտարութեամբ
արտայայտեց պերճութեանց ոմանց գործածու-
թեան օգուտներն որ կարեն պատճառել ժողովրդ-
դական դատուց՝ երբ յաջողին ստանալ զայնս աշ-
խատութեամբ և խնայողութեամբ: Հետեւեալ
պատմութիւնն իւր շահաւէտ յիշատակարանէն կը
քաղեմ .

« Նաւավար ոմն, որ Մայ հրուանդանին և Ֆի-
լատելֆիոյ մէջտեղ կը նաւարկէր, փոքր ծառա-
յութիւններ մատոյց մեզ, որոց փոխարէն դրամ
չառաւ: Կինս գիտնալով թէ նա աղջիկ մը ունի,

նորածեւ գլխարկ մը նուիրեց նմա : Երեք տարի յետոյ այս մարդը տունս եկաւ Մայ հրուանդանի յաճախորդաց միոյն հետ որ ծեր ագարակապետ մի էր : Գլխարկին համար խօսեցաւ և ըսաւ թէ աղջիկն որքան գոհ եղած էր : Բայց , յաւելցուց թէ , այն գլխարկը շատ սուղի նստաւ մեր գաւառակին :

« — Ինչո՞ւ համար :

« — Վասն զի երբ աղջիկս այն գլխարկով երեւցաւ բազմութեան մէջ , ամենեքին սքանչացան և ամեն աղջկունք որոշեցին նմանը բերել տալ Ֆիլատելֆիայէն . և դուստրս ու ես հաշուեցինք թէ հարիւր լիւայէն պակաս ծախք եղած չէ այն գլխարկներուն համար :

« — Ճշմարիտ է այս , ըսաւ ագարակապետը . բայց պատմութիւնն ամբողջ չպատմեցիք : Ես կը խորհիմ թէ այսու հանդերձ գլխարկը շահաւոր եղաւ մեզի համար . վասն զի մեր աղջկունք յայնժամ սկսան բուրդէ թաթպաններ հիւսել ի Ֆիլատելֆիա վաճառելու համար , որպէս զի կարենան գլխարկ և ժապաւէն գնել . և գիտէք թէ ճարտարութեան այդ ճիւղը կը շարունակի և կը խոստանայ մեծագոյն կարեւորութիւն առնուլ : Ի մի բան , պերճութեան այդ օրինակն անհաճօյ չեղեւ ինձ . զի վերջապէս նոյն գաւառակին աղջկունք գոհ եղեն գեղեցիկ գլխարկ գնելով , և Ֆիլատելֆիայիք լաւ թաթպան գործածելով : »

ԺԱ .

Վաճառականը կը սխալի կարծելով թէ հարկ է չբեղ խանութ և մաքուր հագուած պաշտօնեաներ ունենալ՝ որք արհամարհանօք կը նային համեստ գնողին վրայ որ վաճառողէն շատ աւելի լուրջ է : Եթէ ամեն ոք միայն պիտանին գնէր , այն ցոյցերուն տեղի չպիտի մնար : Բայց իրենք գիտեն թէ անգործ և ունայնամիտ կանայք կան որ մոռնալ կուզեն գործել չգիտնալնին , և հարկ է այն թշուառ յիմարները որսալ կարելի եղած ամեն պատրանօք :

Զարդարեալ և գուռզացեալ այցելուաց՝ անկարգ գործունէութեամբ կը բանան թանկագին կերպաններն ու գեղեցկագոյն զարդերը : Ո՛րքան նուաստութիւն կը ծածկուի յաճախ այս ունայն և սուտ հարստութեանց ներքեւ :

Ատիճանաւ՝ հանճարով և հարստութեամբ նշանաւոր կիներ կը հաշուէ իւր ընելու ծախքը : Խանութ մտնելէ յառաջ զինեալ է փորձութեանց դէմ . մաքառելու պէտք չունի . հաստատ որոշած է իրեն պիտանի եղածը միայն գնել :

Վաճառողք նոյնքան դրամ պիտի շահէին՝ եթէ գոհ լինէին միայն ճշմարիտ գնողներով , առանց իրենց քաշելու այն հետաքրքիր բազմութիւնը , որոց նպատիւք կը մտնեն կսակած ելի անձինք ևս ,

որք բան մը չվճարած, ձեռքերնին կամ գրպաննին
լեցուն դուրս ելլելու միջոց կը գտնեն:

ԺԲ.

Կը յուսում թէ այս նկատողութիւնք փոքր ինչ
լուսաւորեցին պերճութեան այն խնդիրներն, որ
ամեն ժամանակի մէջ նիւթ եղած են վիճարանու-
թեան: Անօգուտ չէր նորա զանազան երեւոյթ-
ները ներկայացնել աղջկանց՝ որոց համար յօրի-
նուած են այս դասերն: Նոքա պիտի գիտնան թէ
պերճութիւնն հասարակաց օգտակար է միայն բա-
րոյականութեան և չափաւորութեան այն պայման-
ներով զոր ցոյց տուի: Վասն զի յառաջագիմութիւնք
և քաղաքակիրթութիւնն արծարծելով և դիւրա-
կեցութեան ընդհանուր աստիճանը բարձրացնելով՝
չա՛հ կը բերէ հասարակաց բազմութեան, քանի որ
վարձուց և աշխատութեան առատ աղբիւր մի է:
Յայտ է թէ պերճութեան առարկայից համար միայն
ի Փարիզ իբր երկու հարիւր հազար այր և կին
գործաւորք կաշխատին:

Արուեստից՝ դարբութեանց և գիտութեանց մշա-
կութիւնը, որ քաղաքակիրթ ազգաց պերճութիւնն
է, մեծ ընդարձակութիւն կուտայ ձեռագործական
աշխատութեանց, և խոնարհագոյն աստիճանի ըն-

տանիքներն իսկ մասնակից կընէ ազնիւ վայելմանց
և բազմաթիւ օգտակար ու հաճոյական առարկա-
յի գործածութեան:

Հազար միջոց կայ նորաձեւութեան այլանդա-
կութիւններէն կամ տենչանաց հրապուրանքէն
խոյս տալու: Նախ պէտք չէ կարծել թէ նա ան-
հրաժեշտ պայման մի է ընկերութեան մէջ լաւ ըն-
դունելութիւն գտնելու: Պէտք չէ նաև երեւակա-
յել թէ թանկագին առարկայք վայելչագոյն են:
Մշակեալ և դիտող միտքը դիւրաւ կը նշմարէ թէ
բարձրագոյն աստիճանի կանայք պարզ հագուած
են: Կերպասին ընտիր տեսակը կրնայ հարստու-
թեան գաղափար տալ, բայց անօգուտ է հարուստ
երեւիլ երբ մէկն հարուստ չէ:

ԺԳ.

Իւր ընտանեաց և ամուսնոյն վիճակին պատճա-
ռաւ պարտաւոր չէ կրնն ընկերութեան մէջ փայ-
լիլ ու նշմարուիլ: Բաւական է աննշմարելի մնալ,
եթէ ապահով է ծիծաղելի չլինելուն:

Այն աղջիկն որոյ մանկութեան ժամանակն ան-
ցած է հանճարեղ և անձնանուէր մօր մը աչաց առ-
ջեւ, և բարոյականի ու կրօնի դասերն ընդունած
է, ինքնին քրիստոնեայ կին մը կը լինի՝ իւր բոլոր

պարտականութիւնները սիրող և անոնց վրայ ան-
դադար խորհող :

Պիտի գիտնայ թէ՛ իւր ժամանակէն և հանձա-
րէն ընտանեաց բաժին մը տալէ և բոլոր ծախքերն
հաշուել սորվելէ յետոյ , հաճոյք աւելցնելու հա-
մար խնայողութիւնը բաւական չէ , այլ պէտք է
նաև սուստաճեան և ողորմած լինել :

ԺԴ.

Պետութեանց պերճութիւնը կանանց պերճու-
թեան կը վերագրուի միշտ . բայց անտեսագէտք կը
կարծեն որ , եթէ պերճութիւնը խափանի՝ ճարտա-
րութեան բարգաւաճումը կը դադրի . և որպէս զի
գործաւորին գործ տրուի , հարկ է որ պերճասէրք
իրենց դրամը շրջաբերութեան հանեն : Արդարև երբ
կը նշմարուի թէ ճարտարութեան մէկ ձիւղն ան-
յաջող վիճակի մէջ է , վեհապետաց և մանաւանդ
թագուհեաց կը դիմեն՝ ազաչելով որ նոյն ձիւղին
վերաբերեալ նիւթէն խնդրեն : Քանզի գիտեն թէ
պալատականք ևս նոցա հետեւելով՝ այս ինչ ժա-
պաւէնը պիտի վաճառուի , այն ինչ զարդը պիտի
գործածուի , և այն ինչ կերպասը պիտի փնտուուի :

Ուրեմն պերճութեան աւելնալը չէ որ ընտա-
նիքի և ազգի մը բարգաւաճութիւնը կը խափանէ ,

այլ կարողութիւն չունեցողներուն ըրած չափա-
զանց ծախքը : Այս վտանգն երկիւղալի է մանա-
ւանդ՝ երբ աշխարհային գրօսանաց անձնատուր
կիսն աւելի տնէն դուրս կապրի քան թէ ներսը ,
երբ զանց կընէ իւր զաւակաց դաստիարակու-
թիւնը , լրջութիւնը զինքը կը հոգնեցնէ , խորհր-
դածութիւնը կը ձանձրացնէ , մտային աշխատու-
թիւն մը՝ գործունեաց նախատեսութիւն մը զինքը
կը շփոթէ և անհանգիստ կընէ :

Բայց եթէ յանդիման կացուցանեմք սմա այն
կիսն որոյ յատկութիւնը զարգացեալ են մեծ խնա-
մով տրուած դաստիարակութեան ներշնչմամբ ,
որում ուսուցուած է ամեն պարտականութիւն ,
պիտի տեսնեմք զնա կատարեալ երջանկութեան
մէջ . աշխատասիրութիւնը՝ բարեկարգութիւնը և
անտեսութիւնը գթութեան գործոց պիտի ծառա-
յեցնէ : Չպիտի հարստանայ ընկերութեան մէջ
փայլելու՝ ուրիշներէն լաւ հագուելու և ամեն տե-
սակ պերճութիւն իւր շուրջն հաւաքելու համար :

ԺԵ.

Աստանօր դարձեալ կը գտնեմք աշխարհասէր և
ընկերական կանանց մէջ եղած տարբերութիւնը :
Առաջինը սիրուն լինելու համար սաստիկ ունայնա-

սէր՝ միայն զուարճութիւն և զբօսանք կը փնտռէ :
 Երկրորդն իւր պարտականութեանց կատարման մէջ
 կը գտնէ իւր երջանկութիւնը : Ուսած է վեհանձ-
 նաբար գործածել իւր հարստութիւնը : Իւր գա-
 ւաղունք հմտութիւն կատանան աշխարհի համար՝
 ինչպէս և առաքինութիւն՝ ընտանեաց համար .
 անձնասիրութեամբ պաշարեալ հոգւոյ տկարու-
 թեան անգէտ կը մնան . ծառաներն անժառանգեալ
 դաս մը համարելու սովորած չեն լինիր . արհամար-
 հանօք չեն ընդունիր այն ծառայութիւններն որոց
 փոխարէնը կը վճարեն . կը գիտնան թէ գործաւո-
 րին հոգին անմահ է իրենցին նման . գործաւորին
 աշխատութիւնն արժէքէն նուազ հատուցանելու
 ջանքեր չեն ըներ . ազգասն անիծեալ մը չեն հա-
 մարիր՝ որում դրամ մը նետելով երեսնին միւս
 կողմ դարձնեն . գիտութեամբ և Աստուծոյ սիրով
 սնեալ նյս սրտից մէջ հպարտութեան և արհամար-
 հանաց ոչ մէկ զգացում տեղի կը գտնէ :

ԺԶ .

Եզրակացնեմք թէ պերճութիւնն ըստ ինքեան
 ոչ բարիք է և ոչ չարիք : Եթէ զայն նկատեմք իբր
 արդիւնք յառաջագիմութեան արուեստից՝ ճար-
 տարութեան և գիտութեանց , բարգաւաճեալ քա-

ղաքակրթութեան անհրաժեշտ պայմանն է՝ միան-
 գամայն գործաւորաց բազմութիւ դասուն համար
 բարեկեցութեան և բարոյականութեան աղբիւր մը :
 Եթէ աւելորդին գործածութիւնը կործանման
 պատճառ է այն ընտանեաց համար որ չեն գիտեր
 ծախքերնին իւրեանց կարողութեան յարմարցնել ,
 մեծատանց համար թերեւս հարկ և պարտաւորու-
 թիւն է : Անգութք միայն ալէտալի ներշնչումներ
 կը գտնեն իւրեանց անձնասիրութեան մէջ՝ որ
 գիրենք կը մղեն անպատշաճ կերպիւ գործածելու
 այն դրամը՝ զոր նախախնամութիւնն յանձնած է
 նոցա աւելի օգտակար կերպիւ գործածելու :

Կը մնայ ինձ ներկայացնել մի քանի համառօտ
 նկատողութիւններ մեծ կամ փոքր հարստութեան
 կիրառութեան վրայ՝ զոր պարտի ընել այն կինը՝
 որոյ հոգին մտառ չհասակէն ի վեր բացուած է
 կրօնի և գթութեան սուրբ ներշնչութեանց :

Գ Ա Ս Ժ Բ .

Հարսութեան կիրաւութիւն : — Պարսկամութիւն : — Ողբ-
մածութիւն : — Քարեգործական ընկերութիւնք : — Հանգսա-
րան ծերաց : — Գարոց : — Բովանդակութիւն եւ եզրակացու-
թիւն առհին սնեարտեան դասուց :

Ա .

Հետզհետէ ցոյց տուի այն պարտականութիւն-
ները զոր տան մը վարչութիւնը եւ ընտանեաց
կառավարութիւնը կը սրահանջեն , որպէս զի տիրէ
անդ բարեկարգութիւն՝ կանոնաւորութիւն՝ բարե-
կեցութիւն եւ հետեւաբար անդորրութիւն՝ արժա-
նապատուութիւն եւ երջանկութիւն : Այսպիսի ար-
դիւնք մը ձեռք բերելու համար՝ հարկ է թէ՛ այն
կիներն որ յանձն առած է զայն կատարել , եւ կամ
աղջիկն որ կը պատրաստուի այնմ , իմաստութեամբ
ուղղուած դաստիարակութիւն մը առած լինի , որ
գործադրութեամբ կը հաստատուի եւ կը զարգա-
նայ : Բայց եթէ այսպէս ըմբռնուած առանին տնտե-
սութեան հայթայթած նիւթական շահուց ակնկա-

լութիւնն յարմար է եռանդը գրգռելու եւ ճիգերը
վարձատրելու , ազնուագոյն եւ հզօրագոյն շարժա-
ւիթ մը եւս կայ՝ որ առանձին ընտանեաց՝ ինչպէս
նաև մարդկային ընտանեաց մէջ կենաց գործերուն
աւելի բարձր նպատակ մը կուտայ՝ պարտականու-
թեան սկզբանց կապելով զայնս :

Պարտականութեան զգացումն է որ մեր բոլոր
գործոց բարոյական յատկութիւն մը կը տպաւորէ
եւ մեր պարտականութեանց կատարումը դիւրին՝
յանկուցիչ եւ վարձուց արժանի կընէ : Ամենէն փայ-
լուն դաստիարակութիւնն իսկ անկատար կը լինէր ,
եթէ յառաջ բերէր միայն յաջող արդիւնքներն
զոր անպատճառ կարտադրեն ճարտար հսկողու-
թիւնը՝ քաջ գործունէութիւնը եւ կանոնաւոր աշ-
խատութեան վարժութիւնը : Այլ հարկ է թէ ամեն
գործ՝ ամեն մտածութիւն բարձրագոյն եւ միակ
սկզբունքի մը կցուի : Այս սկզբունքն է ողորմա-
ծութիւնը :

Բ .

Իմաստասիրական խորին ուսմանց հարկ չկայ
գիտնալու համար թէ ամենքս ալ հոգւոյ մէջ
քանդակեալ օրէնքներ կը կրեմք՝ որք ճանաչել
կուտան մեզ թէ գործ մը արդար կամ անիրաւ ,
այսինքն համաձայն կամ հակառակ է բարւոյն

գաղափարին , որոյ լոյսը մեր դատողութիւնը կը լուսաւորէ : Գիտեմք նաև թէ կատարելագոյն ազատ եմք և կրնամք պարտականութեան այդ օրէնքը կատարել կամ լուծանել, որ թէպէտ կը ներկայանայ մեզ պարտաւորիչ յատկութեամբ :

Աստուած այդ ազատութիւնը մեզ տուած լինելուն համար է ճիշդ՝ որ մեք բարոյական էակներ եմք , այսինքն առաքինի լինելու կարող : Աքանջելի՛ մենաշնորհ մեր բնութեան : Մեր կենաց տէրն եմք և պատասխանատու այն կերպին որով կը վարեմք զայն : Այսու կունենամք այն ներքին հաճութիւնն՝ այն անպատու՛մ գոհունակութիւնը զոր ոչ մէկ իշխանութիւն կարող է բառնալ ի մէջ : Երբ կեանքերնիս ի մեզ գտնուած աստուածային օրինաց վրայ կանոնաւորեմք՝ խիղճերնիս կըսէ մեզ թէ լաւ ըրինք , մեր բնութեան օրէնքը կատարեցինք , եւ այդ օրինաց համեմատ եղած գործն առաքինական է և արժանի վարձուց :

Երանելի են նոքա որ կանուխ սովորած են անսալ այդ ներքին ձայնին , որ է միանգամայն խրատիչ և հատուցիչ բարեաց : Ինչ վիճակի մէջ որ դնէ Նախախնամութիւնն զնոսա , երջանկութիւն պիտի գտնեն մինչեւ իսկ դժուարագոյն պարտականութեանց կատարման մէջ . գոհ խղճմտանաց ասուած անգորրութիւնը և խողալութիւնն իւրեանց քաղցրագոյն վարձքը պիտի լինին : Բարւոյ և պարտականութեան դիտմամբ գործող հոգւոյն

այդ գոհունակութիւնը չչփոթեմք անոր հետ զոր կուտայ ո՛ր և իցէ գործոյ մը կատարումը՝ որոյ նպատակն է իւր հայթայթած յաջողութիւնը կամ նիւթական շահը : Աւելի բարձր վարձք մը փրնտուեմք , և մեր գործոց աւելի վսեմ ու արհեստագոյն շարժառիթ մը տամք :

Գ .

Եթէ այս դասերը կարեն փոքր ի չատէ օգտակար լինել , պատճառն՝ ինչպէս կը տեսնուի՝ այն է թէ ջանացի նկատել աւտնին տնտեսութիւնն իբր մի ճիւղ բարոյական դաստիարակութեան : Մի քանի խրատ տան յարգարման՝ կարասեաց պահպանութեան՝ սննդեան և առողջապահութեան վրայ , ահա այս է այն առարկայից շրջանակն յորում սովորաբար կը պարզակին այսպիսի նիւթոց վրայ ճառող հեղինակք : Եթէ այսպէս ըմբռնեմք այս ուսումն՝ աղջկանց համար նուազ օգտակար , և պիտանութիւնն յոյժ երկբայելի կը լինի : Իւր սահմանն ընդլայնելով՝ կարող եղայ տալ նմա այն տեղն որ կը պատշաճի մեր պարտականութեանց կարգին մէջ : Արդարև յոյժ կարևոր պարտականութիւններ ունին՝ կատարելու աղջկունք՝ որոց հետեւեցայ իւրեանց ընտանեկան ներքին գործոց

մէջ և կենաց ու ընկերութեան հետ իրենց ունեցած յարաբերութեանց մէջ :

Նուազ կարևորութիւն տուի այն ծառայութեանց զոր կարեն մատուցանել, իւրեանց ժամանակը կանոնաւորելու համար հետեւելու խրատուց, կենաց գործերու մէջ իւրեանց հանճարը գործադրելու և մուտքն ու ծախքը կարգադրելու, քան թէ մտաց և սրտի յատկութեանց զարգացման, որք կարեւոր են այս երեքկիւն պարտականութեանց կատարման : Եթէ արթնութիւնը՝ գործունէութիւնը և բարեկարգութիւնը լաւ ազդեցութիւն ունին տան վարչութեան վրայ, պատճառն այն է թէ՛ նոքա աւաքինութիւնք են, և աւաքինութիւնք ոչ այլ ինչ են՝ բայց եթէ բարւոյն գաղափարին գործադրութիւնը, որում մեր բոլոր գործերը վերագրել կարեւոր է :

Այդ գաղափարէն կը ծագին մեր ամեն պարտականութիւնք առ ինքն՝ առ այլը և առ Աստուած : Զգայուն՝ հանճարեղ և ազատ լինելով՝ մեր առաջին պարտականութիւնն է զարգացնել մեր բնութիւնը կազմող կարողութիւնները : Ուրեմն մեր մարմնոյն և հոգւոյն նկատմամբ պարտականութիւններ ունիմք կատարելու :

Բնութիւնն ընտանեաց այլևայլ անդամոց՝ մէջ ևս յարաբերութիւններ հաստատած է, և նոյն իսկ իւր գոյութեանն համար ստեղծած է զաւակաց պարտականութիւններն առ ծնողս, ծնողաց պար-

տականութիւններն առ որդիս, և եղբարց ու քերց պարտականութիւններն առ միմեանս : Միայն յերեւան հանելու համար չէ միաբանութեան՝ համախոհութեան և սիրոյ զգացմանց առաւելութիւնները որ ընտանիքը կը բարգաւաճեն՝ որ իմաստութիւնը կը ջանայ նոյն կապերը ևս քան զևս սեղմել : այլ վասն զի դոքա նոյնքան ստիպիչ պարտականութիւնք են որ կը պահանջուին մեր բանավարութենէն, և յորոց կարելի չէ խոյս տալ առանց բարոյական օրինաց հակառակելու : Նոյնպէս են այն կասկածութիւնք զոր ընկերութիւնը կը հաստատէ մարդկային մեծ ընտանիքին անդամոց մէջ : Որոց արդիւնքն են աներկբայական շահք. բայց իբր սկզբունք ունին անձնական շահէն գերազոյն գաղափար մը, որ է պարտականութեան օրէնքը :

Ամեն տեղ և միշտ կը պատահիմք պարտականութեան այդ մեծ օրինաց : կը դանեմք նաև ողորմածութեան վսեմ զգացման մէջ որ զմեզ կը տանի մեր նմանները սիրելու և նոցա օգնելու : Ընկերին սէրը՝ համակրութիւնը որ թշուառաց վրայ գութ կը շարժէ, միայն զգայականութեան թեւազրուութիւն չէ և պէտք չէ որ այնպէս լինի : Ողորմածութիւնն ազգու լինելու և բարոյական զգացման բարձրութեան հասնելու համար՝ հարկ է որ նորա ազբիւրը և սկզբունքը բանավարութիւնը լինի, որ ամենէն սրտաշարժ ներշնչումներէ մղուելով՝ գիտէ թէ պարտականութիւն մը կը կատարէ :

Դ .

Կը յուսամ թէ այժմ կը տեսնուի ուր կուզէի գալ այս նկատողութիւններէն յետոյ՝ որք կրնային կարծեցնել թէ նիւթէս կը հեռանամ: Եթէ ատանին տնտեսութեան սահման տուի ժառանգակր, հաւնաւոր և դրամն ըստ կարի լաւ գործածելու արուեստ, և ցուցի այն բոլոր օգուտներն զոր մարդ կարէ քաղել իւր անձին և այլոց համար, երբէք զանց չըրի բարոյական պայմաններն՝ առանց որոց այսպիսի դաս մը փորձառութեամբ ստացեալ խրատուց հաւաքածոյ մը միայն պիտի լինէր, եւ գիտական հանգամանք չպիտի ունենար ամենեւին՝ քանի որ բարձրագոյն սկզբանց հետ կապակցութիւն չպիտի ունենար:

Ուրեմն կրնամ այս դասուց եզրակացութիւն մը տալ՝ ցուցանելով որ՝ եթէ նախատեսութիւնը և խնայողութիւնը, աւտանին տնտեսութեան այս երկու մեծ օրէնքներն, ընտանեաց երջանկութեան և հարստութեան բուն տարերքն են, պատուականագոյն են նաեւ ուրիշ նկատմամբ ևս, որովհետեւ բարիք ընելու միջոցներ կը հայթայթեն: Հարստանալու ճանքան գիտնալէն նուազ շահաւոր չէ ուսանիլ թէ հարստութիւնն ինչպէս գործածելու է:

Աստանօր կը բացուի ընդարձակ ասպարէզ մը

գործօն և բանաւոր բարեգործութեան: Մարդկային ընկերութիւնն ուրիշ ժամանակի մէջ երբէք աւելի իրական համակրութիւն յայտնած չէ թշուառաց համար, և ողորմածութիւնը թշուառութեան ու վշտաց դէմ մարանչելու համար աւելի ճարտար միջոցներ գտած չէ երբէք: Կանայք բնականաբար մեծ տեղ բռնեցին այս քրիստոնէավայել նպատակաւ եղած ընկերութեանց և գործոց մէջ: Նոքա խորհեցան թէ տխուր տեսարանէ մը խոյս տալու համար՝ միայն իրենց ոսկին տալու վրայ չկայանար ճշմարիտ ողորմածութիւնը:

Ե .

Հասարակային ողորմութիւնը միայն դրամով չլինիր. գործունէութիւն՝ անձնանուիրութիւն և տառապելոց բազմութիւն այցելութիւններ կը պահանջէ: Կալուածական նուէրք կը պահպանեն բարեգործական հաստատութիւնները, որոց որպիսի դրութեամբ կարգադրուած լինելն ըստ բաւականին ծանուցեալ չէ, և զոր հարկ է միշտ հրապարակել:

Ողորմածութիւնն հիանալի կերպիւ կը գործադրուի: Հարուստ կինն որ յաճախ կը բամբասուի իբր շուայլ, կարծուածին պէս չէ միշտ, յիմար մը

որ ամեն նորածեւութեան առթիւ հազուստ փոխէ, և շատ գեղեցիկ զգեստներ թողու իւր սպասուհւոյն, և այսպէս առանց խորհրդածելու տարածէ ծախուց և պերճութեան ճաշակը: Ընդ հակառակն մեծագին կերպասէ հազուստներն օգտակարապէս կը գործածէ՝ վրանին ասղնեգործելով և ազքատ գիւղերու եկեղեցեաց զարդու վերածելով: Եւ այս է Գործ եկեղեցասիրութեան:

Նորածինք Մսուրը կընդունուին. հարուստին լքած ճերմակեղէնք և զգեստք որ դեռ կրնան գործածուիլ. Մայրական անկեղանոցը կը տարուին: Մսուրեկն ելնելով Ապարեկը կուգան երկու տարեկանէն մինչեւ վեց տարեկան ազքատիկ մանկուներն ուր կը կրթուին և կը հազուին. որոց համար պահարաններէն ու հանդերձաններէն կեղնեն հին հազուստներն որ ճարտար եւ անխոնջ աշխատութեամբ փոխուած և նորոգուած են:

Տիկնայք բաւական չեն համարիր բարեգործական հաստատութիւններն այցելել և հսկել, այլ և ամեն տեսակ նուէր կուտայնեն. իւրեանց հանգանակութեամբքն աւելի խնամօք կը հազուին աշխատելու կարող մանկուներ և աշխատութեան գործիներն իսկ կտտանան: Նոցա առաջին հազորդութեան ժամանակ արժանաւորագոյնք նոր հանդերձ կուտենան: Այսպէս է Բերքեհեւեան ընկերութեան կատարած գործը:

Միայն չքաւոր մանկուներ չեն որոց կօզնէ հան-

ճարեղ և նախատես ողորմածութիւնը. վասն զի իւրաքանչիւր մայր բան մը կուտայ զաւելին գտած ասպնջականութեան համար, և իւրաքանչիւր գործաւոր իւր աշխատութեամբն հատուցում կընէ գործանոցին մէջ ըրած աշակերտութեան փոխարէն: Ծերն ևս մեծ հոգատարութեան առարկայ է: Զանց չառնուիր օգուտ քաղել տակաւին ունեցած ոյժէն. հասարակաց պարտիզին մէջ փոքր անկիւն մը ունի մշակելու, խոտերը խլելու, բանջարեղէն քաղելու: Այս գործունէութեան շնորհիւ միաբանութիւնը կը տիրէ անդ՝ ուր դժուարին է յուսալ:

Աղխասաւեր ֆոյրեհեկ և Նախախնամութեան կայսերական Ապարեհեկ ընդունուած այս ծերոց բնաւորութիւնը դառնացած է տառապանքէն. արժանապատուութիւնը կը տիրէ տակաւին ոմանց վրայ որք պարտին հասկնալ թէ իւրեանց թշուառութիւնը կը յարգուի, և պէտք չէ որ բարիք ընդունենին նուաստութիւն համարին իրենց:

2.

Ծերոց սպաստանքն ընդարձակ և օդաւէտ են. նոր առողջանալով աշխատութեան անկարող եղողներուն բնակարանքն դրատուն և ամեն տեսակ զրօսանք կը պարունակեն: Տառապելոյն միտքը կը

բարձրացնեն անդ այն թշուառութենէն վեր՝ որոյ վրայ կը հեծէ, եւ մարդկային բարերարութեամբ սիրելի կընեն նմա աստուածային նախախնամութիւնը:

Բոլոր այս գործոց ընկերացող կանայք լաւ փոխարինութիւն կը գտնեն իրենց կատարած պաշտաման մէջ. ողորմածութեան սուրբ զբաղմամբ իրենց գործունէութիւնն օգտակար ընելով՝ անգործութենէ ծագած ձանձրոյթէն ազատ կը մնան:

Այս բարերարութիւնք մեծատան վրայ նախանձելու և զնա առելու իրաւունքը կը բառնան թշուառէն. յոռի զգացմունք կարեն ծնանիլ միայն ծոյլին և աւազակին սրտին մէջ՝ որք պարկեշտ մարդը թշնամի կը համարին:

Եթէ սրտերն այլ ևս չեն տխրիր՝ գութ շարժելու համար իւրեանց սոսկալի վէրքերը և ահռելի խօթութիւնները ցուցնող մուրացկաններ տեսնելով, և եթէ զբօսավայրերը չեմք պատահիր աղքատի մը որ կուլայ՝ մինչ այլք զուարճութիւն փնտռել կերթան ուրախութեամբ, վեհանձն և նախատես ողորմածութեան և ընկերական կնոջ բարեպաշտ անձնանուիրութեան շնորհիւն է՝ որ իւր կեանքէն և հարստութենէն աղքատաց բաժին կը հանէ:

Գործն՝ որում կարեն կանայք օգտակար և արգիւնաւէտ կերպիւ մասնակցիլ՝ այն է, որ նպատակ ունի աղքատաց դասուն մէջ ծաւալել ուսումն

ու ողջամիտ վարդապետութիւնները: Տգիտութիւնը մայր է ամենայն մեղութեանց, և բարուց բրտութիւնը շատ անգամ հանձարոյ բրտութեան արդիւնքն է: Հաճութեամբ կը տեսնեմ գաղղիացի կանանց աւելի բազմութեամբ ընկերանալն այն շարժման՝ որ այսօր բոլոր վեհանձն և նախատես ոգիները դէպ ի հասարակաց կրթութեան կը մղէ: Ամեն ուր որ մանկանց և չափահասից համար դպրոց կը հիմնուի՝ գրատուն կը հաստատուի ընտիր գրքերն ամենուն դիւրամատչելի ընելու համար, նոքա կը ծառայեն յառաջադիմութեան և ընկերական բարեօրման սուրբ նպատակին: Կարելի չէ քան զայս լաւ գործածել իւրեանց զգուշուոր միանգամայն և խոհական հանձարը և անձնանուիրութիւնն ամեն աղնիւ և վեհանձնական գործոց համար:

է.

Չալիտի կարենամ թուել բարեգործական բոլոր հաստատութիւններն առանց անցնելու այն սահմանն ուր պարտիմ ամիոփիլ. ուստի բաւական կը համարիմ հարևանցի իմն ցոյց տալ ընկերական կանանց հովանաւորութեամբ հիմնեալ հաստատութեանց ոմանց ծագումն ու նպատակը: Միայն մեծ քաղաքաց մէջ չհիմնուեցան արուեստանոցք՝ գոր-

ծանոցք և արհեստական դպրոցք: Արդէն երկար ժամանակէ ի վեր կը գործեն երկրագործական վարժարանք՝ ուր տղայք գիւղ տարուելով կաշխատին մշակութեան բացումը ընդարձակ երկիրներու վրայ. գերազանցապէս քաղաքակրթիչ գործ՝ որ կարօտեալները դաշտային կենաց կը տանի: Այս բարերար ներշնչութեամբ հիմնուեցաւ Փալեզոյի մօտ Ինյիի Որբակոցը ձեռամբ Պ. Միւլուա արբայի, և երկրագործական Որբակոցաց Պաշտպանութիւնը նորոգ կարգադրուեցաւ ձեռամբ Պ. Տրուէն տը Լիւիսի: Տղայք այսպէս կորզուելով բազմամարդ քաղաքաց փոանդներէն՝ ուր կեանքը դժուարին և տաժանելի է, և մաքուր օդոյ մէջ կանոնաւոր աշխատութեամբ գտնելով այնպիսի բարօրութիւն որ անձանօթ է խոնեալ ժողովրդոց, ուժեղ և առողջ աշխատաւոր կը լինին ընկերութեան, և երջանիկ ու ազատ կեանք կը վարեն:

Մատաղատի գործաւորուհին՝ որոյ բարոյական կեանքը բազում վտանգօք չըջապատեալ է՝ բարեգութ անձանց ուշադրութեանն առարկայ եղաւ: Գործանոցին մէջ արուեստն ու աշխատելու վարժութիւնն ստանալէ յետոյ՝ հիւանդացած միջոցին ևս լքեալ չմնար: Իրեն պատասպարան կը բանայ վեհանձն կնոջ մը կտակաւ թողած մէկ դղեակը որ յատկացեալ է ապաքինեալ հիւանդաց: Եթէ աշխատութեամբ տկարացեալ մարմինն իւր զօրութիւնը և գործունէութիւնը կորուսած է, հան-

գըստութիւնը և դաշտային մաքուր օդն իրեն նոր ոյժ կուտան օրական աշխատութիւնը շարունակելու:

Նոքա հոգ տարին նաև աշխատութեանց արդիւնքն օգտակար ընելու և վաճառելու: Մեծ հոգատարութեամբ նկատելով գործաւոր աղջկան կենաց բոլոր դիպուածները և գտնուած ամեն վիճակները՝ գթասիրտ կինը նորա բոլոր պիտոյքը կը նախատեսէ՝ ուստի և վաճառատներ հաստատած է: Այս նպատակը ձեռք բերուեցաւ Մեղուաց միաբանութեան ընկերութեամբ. գեղեցիկ անուն, որ կը յիշեցնէ նախախնամութեան գործոց մին՝ ուր մարդկային գործք իւրեանց կատարելագոյն տիպարները կը գտնեն:

Ը.

Անհրաժեշտ է զուգընթաց ընել արուեստի մը ուսումն ու բարոյական դաստիարակութիւնը, այսինքն տալ նմա ձեռաց տաղանդ և հանձարոյ մշակութիւն միանգամայն: Արհեստական դպրոցք քանի տարիներէ ի վեր զանազան ազդեցութեամբ բազմացած են և մեծամեծ ծառայութիւններ կը մատուցանեն:

Մինչդեռ Ուլրիսերի երևելի հեղինակին ընկե-

րուհին, տիկին Յուլիոս Սիմոն, այս դպրոցաց մի քանիին պաշտպանութիւն կընէ, նոյն յատակագծին վրայ հաստատուած ուրիշ դպրոցք ևս կը կարգադրուին Պոլոյ իշխանուհւոյն խնամօք:

Այդ դպրոցաց մէջ տրուած ուսումը կատարելապէս կը պատրաստէ մատաղատի աղջիկն իւր գործերն հանձարով կատարելու: Սոյն գործոյն մասնակցող անուանի կանայք՝ դաստիարակութեան և ոչ մի մասը զանց ըրին. ուղեցին որ նա իւր պարապոյ ժամուց մէջ գտնէ մտաւորական զբօսանքներ՝ որ հանգիստ տան իւր արուեստին բազմալատակ զբաղմանց:

Նոյն սկզբունք կը ներշնչեն մեծ գործարանաց տերանց և մեծ ճարտարագիտաց. այն է խնայութեամբ գործածել աշխատողին ոյժը՝ աշխատութեան ժամերը նուազելով և թոյլ տալով որ իւր մտաւորական կարողութիւններն անճեցնէ ուսմամբ: Մեքենայից կիրառութիւնն իսկ փոխակերպեց զգործաւորն՝ որ այլ ևս կարող չէ իւր գործիք աշխատիլ, այլ պարտի գործօն և իմացական դեր մը կատարել:

Թ.

Բարեգործական ընկերութեանց մեծագոյն մասն յիշելէ յետոյ, իւրեանց խոնարհագոյն աստիճանէն

սկսեալ մինչեւ բարձրագոյն կարգի հաստատութեանց հասայ, ամենուն համար հաւասարապէս պահանջելով խնամակալ տիկնանց գործակցութիւնը: Սակայն ուրիշ կարգերու մէջ՝ և մասնաւորապէս քաղաքական և զինուորական պաշտօնակալաց՝ արուեստագիտաց և գրագիտաց դասերուն մէջ անձանօթ մնացած տարաբաղդութիւնք կան՝ որք պարտին մեծ հոգածութիւն առթել մեզ, որոց համար անձնանուէր և առատաձեռն անձինք մեծամեծ զոհողութիւններ յանձն առած են: Որով հիմուեցան մեծ տուներ՝ ուր ազքատ կամ որբ աղջկունք ազնուականի դաստիարակութիւն կընդունին՝ որ իւրեանց ընտանեաց ընկերական վիճակին բարձրութեան մէջ կը պահէ գնոսա, միանգամայն և զանազան գիտութեամբք կապահովէ նոցա անկախութիւնն ու արժանապատուութիւնը: Որդիք օգուտ կը քաղեն իւրեանց հօր ծառայութիւններէն զոր մատուցած են այնպիսի ասպարիզաց մէջ՝ ուր շատ անգամ կը գտնուի պատիւքան հարստութիւն: Նորոք Տառ սեզ Ար անուն վարժարանն այս յայտագրին մի մասն արդեամբ կատարեց՝ մատաղատի աղջիկներն արուեստական ասպարիզի պատրաստելով:

Ժ.

Դրամոյ կիրառութեան վրայ ըսածս չկարեմ աւելի յաջողութեամբ լրացնել՝ եթէ դարձեալ չյիշեմ զՓրանքլին, որոյ վարդապետութիւններն ու խրատներն ստէպ յառաջ բերի: Նա ևս կը նկատէր տնտեսագիտութիւնն իբր միջոց հարստանալու կամ գէթ ունեցածը պահպանելու: Բայց գիտէր թէ նիւթական շահուց խնամքը պէտք չէ որ բոլորովին գրաւէ մարդոց միտքն ու սիրտը. թէ հարստութեան աճումը միջոց է նաև իւրեանց բարոյական բարւոքման աշխատելու. թէ մարդ պարտի ունենալ երկու հաշիւ՝ յորոց մին իւր խնայող և նախատես մտաց արդիւնքներն հաստատէ, և միւսը ճշգրտելով արձանագրէ այն առաքինութիւններն որովք կարողացած է հոգին զարդարել, և թերութիւններն՝ յորոց յաջողած է ետ կենալ: Հետեւեալը կը գրէր բարի Ռիգարտտի 1756 տարւոյն օրացուցին մէջ.

« Ահա տարի մը ևս կը վերջանայ:

« Եթէ քաջ վաճառական և գործէ հասկցող մարդ ես՝ հաշիւդ պիտի փակես՝ տեսնելու համար թէ այս տարի շահած ես թէ կորուսած եւ թէ ո՛րքան: Եւ ըստ այնմ՝ պիտի կարգադրես առևտուրդ և տան ծախքերդ:

« Շատ լաւ, բայց բաւական չէ այս:

« Բարոյական հաշիւդ ևս չպիտի՞ քննես՝ տեսնելու համար թէ ի՞նչ շահած ես կենացդ ընթացքին մէջ. ո՛ր մոլութիւնը զանց ըրած և ո՛ր առաքինութիւնն ստացած ես:

« Հարստութեանդ վրայ դու մար մը ևս աւելցուցիր, բայց ո՛րչափ զգաստութիւն և ո՛րքան լաւութիւն շահեցար:

« Ի՞նչ օգուտ է մարդուն աշխարհը շահիլ, եթէ հոգին կորսնցնէ: »

« Եթէ ուշադրութիւն չընես այսմ, ո՛րքան և միլիոններ ունենաս արկղիդ մէջ՝ դարձեալ նոյն իսկ այս աշխարհիս մէջ ազքատ պիտի երևիս խնատանոց առջեւ, և յաւիտենականութեան մէջ իրօք ազքատ պիտի լինիս:

« Ուրեմն այս նիւթական ու բարոյական հաշիւը բռնեմք և մեր հոգին հարստացնելու զրազիմք սրքան որ կըբաղիմք մեր հարստութիւնը մեծցնելու: »

Կաւարտեմ, թողլով զընթերցողն այս փրկարար տպաւորութեան ներքեւ:

ժԱ.

Սիրելի աշակերտուհիներս թողելէ և ընթերցողուհեացս ներկայանալէ յառաջ՝ պարտք կը հա-

մտքիմ երկրացուն ևս զեկուցանել թէ ինչ պայմանաց մէջ հաւանեցայ դասաւորութիւնն յանձն առնուլ և նոր ուսում մը վարդապետել:

Անշուշտ ընտիր ծանօթութիւններ գտայ նշանաւոր կանանց և երեւելի արանց այս նիւթիս վրայ շարագրած գրոց մէջ՝ որք կանանց մտաւորական և բարոյական աստիճանը բարձրացնել խորհեր են, բայց իմ ներշնչումներս անձնական յիշումներէս քաղեցի:

Նկատելով այն ազգեցութիւնն որ առաջին դաստիարակութիւնը կը ներգործէ մեր կենաց վրայ, մանկութեան տարիներս յիշեցի, ուր վարժուհւոց մը կառավարութեան ներքեւ, որ տիկին Գանժանի աւանդութիւնները պահած էր և հազուադիւր հանճարով կը գործադրէր, դաստիարակութիւնս աւարտեցի, և բազմ ունեցայ լսել սրբազան պերճախօսութեան դասատուաց առաջին խօսքերը, որք են Հարք Ռափինեան և Լագորան, և արբայք տը կիւէրի, Օլիվիէ և Տիւփանլու:

Իւրեանց սքանչելի ատենախօսութիւնք աւետարանական ճշմարտութեանց կը ծանօթացնէին մեր մտտաղ հոգիներն, և կը ջանային ցուցանել թէ լուրջ ուսմամբ լուսաւորեալ և հաւատոյ ու գթութեան ոգւով վառեալ կանանց ազգեցութիւնն ի՛նչ պիտի լինի մեր ընկերութեան մէջ:

Այս ատենարանութիւնք, որ սովորաբար կարտասանուէին եկեղեցական մեծ տօնից առթիւ,

խորին տպաւորութիւններ թողած են մեր մտաց և սրտից մէջ: Ոչ նուազ խնամով քաղեցի անոնցմէ առածներ զոր պիտի գործադրէի նոյն իսկ այն դպրոցին մէջ՝ ուր մատաղ ընկերքս ինձ աշակերտեցան:

Եթէ լռութեամբ անցնիմ գաղթականութեանց մէջ անցուցած օրերս, կենացս բանաստեղծական և միանգամայն լուրջ երեաները ջնջած պիտի լինիմ: Այն ճանապարհորդութիւնը նպաստաւորապէս ազգեցութիւն ունեցաւ գաղափարացս և զգացմանցս վրայ: Նախածեռն լինելու ստիպուելով՝ յաղթեցի բնական երկչոտութեանս որ մինչեւ ցայն վայր սլացքս խախտած էր: Մեծախառ և շքեղ բնութեան տեսարանէն ներգործեալ տպաւորութիւնքս զարթուցին այն եռանդն ու համակրութիւնը զոր միշտ սնուցած էի ամենակատար արարչագործութեան նկատմամբ:

Եթէ փայլուն գոյերով ծաղկունք՝ համեզ պտուղք՝ շքեղափետուր թռչունք որ բնակարանին ընտանեցած հիւրքն են, կապուտակ երկինքն ու լայնատարած ծովն անհուն հիացում պատճառեցին ինձ, որքան առաւել երջանիկ եղայ երբ շնորհալից և հիւրասէր ընկերութեան մը հետ յարարերութեան մտնելով՝ յաջողեցայ ուսումնասիրել գաղթածին ազգիկան հանճարն ու սիրտը:

Իւր շարժմանց վայելչութիւնն ու դիւրադարձութիւնը ոչինչ են բազդատմամբ իւր մտաց ար-

թնութեան և իւր ուշը գրաւող ամեն իրաց իմաստն ըմբռնելու արագութեան հետ: Պէտք է խաբուել այն տեսակ մը անհոգութեան վրայ որ մտաց ծուլութիւն և մտաւորական իրաց համար անփութութիւն կը կարծուի. կլիմային ազդեցութիւնն ուշադրութեան առնելէ յետոյ՝ հարկ է գիտել թէ գաղթածինք անյարմար չեն դաստիարակութեան և ուսման: Յեւրոպա ի կիր արկեսլ դրութիւնք չկարեն պատշաճիլ տօթագին երկիրներու ազդեցութեանց ներքեւ: Ո՛րքան հաճոյք զգացի խորհրդածելով այս տարրերութեանց վրայ և խոկալով ուսուցչական ծանր խնդրոց վրայ:

Քաղաքական հաստատութիւնք՝ երկրագործական կեանքն ու գաղթականաց ընկերական վիճակը սաստիկ կը գրաւէին ուշադրութիւնս:

Մարթինիք գացեր էի տանելու համար այն սկզբունքներն ու դրութիւններն որք կը գործադրուին մայրաքաղաքին բարգաւաճեալ վարժարանաց մէջ, և գերահանձար կնոջ մը գործակից լինելով շուտ հասկցայ թէ չսխալի կարենայի նորոգիչ լինել, վասն զի վարչութիւնն ամեն մասամբ գերազանց էր:

Գաղթածին կը դառնայի, կը նախանձէի կանանց այն բնական շնորհաց որ բոլոր հագածնին կը վայլեցնեն, կերպերու այն պարզութեան որ համակրութիւն կը գրաւէ և հաղորդակցութիւնն արագ ու զիւրին կընէ: Հեշտեալ վարժեցայ կա-

տարելութիւն նկատել ինչ որ դժուարաբարոյ ճանապարհորդք թերութիւն նկատած են յաճախ: Քաջ խելամուտ եղէ թէ ինչ կը կորուսանեն տունկը և մարդիկ իրենց միջովայրէն հեռանալով: Փորձառութիւնն անդամ մի ևս կապացուցանէր ինձ թէ բացարձակ դրութիւնք վնասակար են դաստիարակութեան: Փարիզ վերադարձայ աւելի հաստատուն կարծիքներով՝ զոր կը համարձակէի յայտնել և պնդել:

Պ. Լէվի Ալվարէզ մի քանի տարիներէ հետեւ աղջկանց համար դասեր սահմանած էր, որք բազմաթիւ և ճարտար նմանողներ ունեցան: Այս հրահանգութիւնը որ մարց ներկայութեան կը տրուէր, կարգարացնէր Շրջան մաշրակաւ դասխարակութեան անունը, որ Փարիզի և Գաղլիոյ ուրիշ քանի մը քաղաքաց մէջ՝ նոր հաստատուած երկրորդական հրահանգութեան բուն սկզբնատիպն եղած է:

Նոցա ընկերացոյ այնու համոզմամբ թէ ընտիր վարժապետիս և պատուական բարեկամիս ձեռամբ իբր քառասուն տարիէ ի վեր յարատուած այն գործը պիտի շարունակեն:

Մատաղատի աղջկանց բարձր հրահանգութեան խնդիրը դեռ չլուծուեցաւ ի Գաղլիա ա՛յնպէս՝ ինչպէս մեք կը մրռնեմք: Յանկուցիչ գործ մի է այդ՝ որում կանայք կսկսին մասնակցիլ գործունէութեամբ: Իւրեանց անձնանուիրութիւնն հրաւիրեալ է մարտնչիլ ընտանեաց անտարրերութեան՝

նախապաշարմանց եւ բնակարձեաց դէմ: Մոքա բաւական խելամուտ եղած չեն թէ ո՛րքան կարեւոր է բարձր ուսմամբ պատրաստել աղջիկներն՝ ընկերութեան վրայ լաւ ազդեցութիւն ներգործելու համար. այս բնաբանն է զոր, ինչպէս կը տեսնուի, դասերուս ամեն մասանց մէջ ընդլայնեցի:

Պէտք չունիմք Միացեալ Նահանգներէն փոխ առնուլ այս մտածութիւնն որ Գաղղիոյ մէջ նոր չէ: Այլ զմեզ հիացնողն է գործադրելու այն զօրութիւնը որ կը պակսի ի մեզ դժբաղդարար, եւ որով կը հիմնուին և կը կարգադրուին անդ ամեն ուրեք ընդարձակագոյն հաստատութիւնք:

Առանձին նախաձեռնութիւնը չքեղապէս կը կատարէ անդ այն բանը՝ որում Եւրոպայի կառավարութիւնք իւրեանց բոլոր բաւականութեամբ դեռ չկարացին հաւասարիլ: Յառաջաբանին մէջ յիշեցի Վաւաւ դպրոցը. միայն մէկ վաճառական կարող եղաւ երեք միլիոնի գումար մը տալ աղջկանց այս բարձր դպրոցն հիմնելու: Շէնքն հոյակապ է՝ Թիւրքիոյի պաշտօնին օրինակին վրայ շինուած: Դասարանաց գիտնական բաժանումը, բնական պատմութեան՝ նկարչութեան թանգարանին՝ բնագիտութեան սենեկաց՝ տարրագիտութեան գործարանաց՝ գիտութեան և միանգամայն արուեստական գրոց գրատան հաւաքմանց ճոխութիւնն այցելուները կըքանչացնէ: Ջեռուցման՝

լուսաւորման և օդափոխութեան ու ամեն կողմ պաղ և տաք ջուր բաշխող խողովակաց դրութիւնը կը մատակարարեն ի ներքս ամեն հանգստութիւն զոր այժմեան գիտութիւնը կրցած է երեւակայել: Դուրսն ունի ընդարձակ տեղի մարմնամարզութեան ամեն տեսակ հրահանգաց յատկացեալ, 160 ձիոց հեծելարան մը և աստեղաբաշխական գեղեցիկ դիտարան մը որ կատարելագոյն գործիներն ունի:

Ուսումնարանն հաստատուած է լեռնադաշտակի մը վրայ բարեբեր վայրերով չըջապատեալ. շքեղապէս և լայնարձակ կերպով բաժնուած մեծ սարտէզն ամենասիրուն գիրքեր ունի. անտառներ՝ թաւուտներ՝ ձիավարելու ուղիներ՝ յատակ և ականակիտ վտակներէ բաղկացեալ լճակներ. միով բանին՝ աշակերտաց համար թէ՛ ուսանելու՝ թէ՛ առողջութիւնը տածելու և թէ՛ գրօսանաց տեղի է: Յուսամք թէ օր մը մեր երկրին մէջ ևս պիտի տեսնեմք այսպիսի հաստատութիւններ:

Այս զանազան ազդեցութեանց ներքեւ պատրաստած տասներկու դասերս տապագրութեան տալու համար դարձեալ աչքէ անցնելու միջոցիս՝ կուզէի բարձր հովանաւորութեան մը ներքեւ դնել՝ որոյ ազդեցութիւնը բաւէր զայնս յաջողութեամբ ներմուծել հասարակութեան մէջ. բայց ներկային կամ անցելոյն մէջ ընտրութիւն մի ընելու տարակուսեալ որոշեցի դնել այն յիշատակաց ընդհանուր պաշտպանութեան ներքեւ զոր յիշեցի: Սա-

կայն հատ մը կայ զոր կուղեմ մասնաւորապէս յիշատակել, վասն զի առիթ կընծայէ ինձ երախտագիտութեան պարտք մը հատուցանել յարգելի յիշատակի մը, այն է վերջին տուայրաւոր Թ.Ս.Պ.Պ.Ն.Ր. դ. քսուհւոյն, որ մեռաւ 1867ին՝ այրի մնալով եւ գինէս Թ.Ս.Պ.Պ.Ն.Ր. դ. քսուհւոյն, որ էր վաղեմի գեասպան Մատրիտի և Հոովմայ: Բաւական տարիներ մտերմութեամբ անցունելով դ. քսուհւոյն հետ որ չըջապատեալ էր իւր զաւակներէն ու թոռներէն, անձամբ տեսայ թէ ինչ կարող է կատարել գերազանց կին մը:

Կը տեսնէի զնա անդադար զբաղեալ փոքրերն ու մեծերը կրթելու, եւ կառավարելու մեծ դղեակ մը և մեծ ապարանք մը իւրեանց ամենափոքր մանրամասնութեամբ:

Հանդարտ՝ միանգամայն և ազդու բնաւորութեամբ զարդարեալ, անկեղծ բարեպաշտութեան զգացումներէ կը քաղէր արիւթիւն որ արգելքներու յաղթելով կը գիմէ դէպ ի իւր նպատակը, և ի հարկին համբերատար համակերպութիւն որ անտրտունջ կընդունի կենաց տխուր փորձութիւնները:

Իւր անխոնջ գործունէութիւնն աշխատութիւն կը փնտռէր միշտ ընթերցման և հաշուոյ գրութիւններ կը հնարէր. ամեն գրքի վրայ ծանօթութիւններ կը գրէր՝ նշանակելով զայն որ կը յարմարէին ազլկանց տրուիլ աւանց վարանքի: Ճարտար

էր հրահանգիչ զբոսանքներ հնարելու, և սատարի հակառակութիւն ունէր անգործութեան և անորոշ նպատակաւ եղած զբաղմանց:

Մեծ խնամօք կընտրէր իւր բարեկամները գումարելու առիթներն և հասակաց ու ճաշակաց համեմատ խմբելու այն անձերն որ առանձնութեան միտում ունէին: Մտաց և կենցաղազրիտութեան սքանչելիք էր այն արուեստը որով իւր ուշադրութիւնը կուզէր բոլորին միանգամայն և իւրաքանչիւրին առանձինն. նոքա իւր անյազ հոգածութեան աւարկայ լինելով՝ միշտ ազատ լինելու երեւոյթ ունէին:

Ո՛րքան բան ուսայ իրմէ այն հասակիս մէջ՝ ուր կը կարծուի թէ այլ ևս ուսանելու բան մնացած չէ:

Կը վայելէի այն քաղցր տեսարանն զոր կը ներկայացնէ իմաստութեամբ կարգադրեալ մեծ ընտանիք մը, և զայն այլոց օրինակ ներկայացնելէ յառաջ՝ ես ինքս օգուտ կը քաղէի անտի:

Նոյն միջոցին էր որ Պ. Հիփիօ պատմական երկասիրութիւն մը կը պատրաստէր դղեակին վաղեմի յիշատակարաններէն զոր դ. քսուհւոյն անձամբ և մանրախոյզ խնամօք ժողոված՝ դասաւորած և ցանկը շինած էր:

Ահա այս յաջող պարագայից նպատաւը ժողովեցի այն տարրերն որով դասերս կը բաղկանան: Ուրեմն կը հասկցուի թէ ինչպէս ինքզինքս բաւական պատրաստ համարեցի օժանդակ լինելու այն

դասատուաց՝ որք հաճեցան գործակցութիւնս
խնդրել, և թէ ինչպէս ընականաբար խորհեցայ
գիրքս ձօնել դասատուացս և պատուական գըք-
սուհւոյն՝ առ որում հիացմամբ կը տեսնէի ընկերա-
կան կնոջ և ընտանեաց մօր բոլոր առաքինու-
թիւնները :



Յ Ա Ն Կ Ն Ի Ի Թ Ո Յ

Յտուաչաբան 1

Դ Ա Ս Ա .

Սահման Առնին Տնտեսութեան : — Սկզբունք դասխարա-
կութեան՝ սան եւ ընտանեաց կառավարութեան հա-
մար : — Ֆէներլոն : — Տիկին Գանկիան : — Տիկին
Տ'Ակուլ : — Տիկին սր Մէնքընոն : — Ճշմարիտ գիտուն
եւ քերուս կանայք 13

Դ Ա Յ Բ .

Ժամանակի գործածութիւն եւ բաժանումն : — կանոնա-
ւորութիւն : — Բարոյական կատարելութիւն : — Կենաց
ճրագիր Ֆրանկլինի : — Սոկրատ եւ Բսենոփոն : . . . 34

Դ Ա Ս Գ .

Պայմանք բարեկարգութեան եւ կանոնաւորութեան : —
Ժամանակին իմաստուն գործածութեան անհրաժեշտ
հետեւանքները : — Աւստրիոյ Մարի Թերեզ կայսրու-
հայն մէկ նամակը : — Արեւական սնարարութիւն : —
Ամեն բան իւր տեղը դնել : — Ամեն բան ժամանակին
ընել 54

ԴԱՍ Դ .

Նախաստուրիւն : — Դաստիարակութիւնն ազգայի
նախաստուրեամբ ուղղելու պէտք : — Բնական եւ
բարոյական զարգացումն : — Դիտողութեան եւ խոր-
հրդածութեան վարժութիւն : — Բնութեան մէջ նախա-
ստուրիւն 69

ԴԱՍ Ե .

Հաննար սան մէջ : — Բնակարանի ընտրութիւն եւ յօրի-
նուածութիւն : — Առողջապահութիւն : — Կարասիք : —
Պաշարք : — Ծառաներն ընտրել եւ վարել 90

ԴԱՍ Զ .

Հաննար ընտանեաց մէջ : — Հարկ եւ որդիք : — Մասա-
ղաթի աղջիկն ընտանեաց այլեայլ անդամոց յարա-
բերութեան մէջ : — Կինն ամուսնութեան մէջ : —
Դաստիարակուհի մայր 115

ԴԱՍ Է .

Հաննար գործոց մէջ : — Երկրագործական շահագործու-
թեանց, գործարանաց, վաճառականութեան, գեղա-
րուեստից եւ ուսուցչութեան մէջ կնոջ դերն ի գիւղօրէս 145

ԴԱՍ Ը .

Հաննար ընկերութեան մէջ : — Ընկերական պարտակա-
նութիւնք : — Մրանք : — Խօսակցութիւն : — Երաժշ-
տութիւն եւ արուեստ զուարճութեան : — Խնջոյք : —
Պարահանդէպ : — Բուն ընկերական կին 173

ԴԱՍ Թ .

Դրամական խնդիր : — Շահասիրական դաստիարակութիւն :
— Աշխատութիւն եւ հարսութիւն : — Տան կառա-
վարութիւն խնայութեան տեսակէտով : — Գրիքոպիլի
տնտեսութիւն : — Հաստիքից եւ ծախուց հաշուեցոյց :
— Հաշուակարութիւն : 206

ԴԱՍ Ճ .

Դրամոյ գործածութիւն : — Պիտանի ծախք : — Աւելորդ
ծախք : — Կարասիք : — Հազուտ : — Տննչանք : —
Տնտեսական առածք : — Խնայութեան տեսակար : —
Բուն տնտեսութիւնք : 228

ԴԱՍ ԺԱ .

Պերնութիւն : — Այլ բանով ինչ պէտք է իմանալ : —
Անումն պերնութեան : — Յուցանութեան ծախքեր :
— Արագ հարսութիւնք : — Եւր հարսացողք : — Բազ-
մաձախ մուրութիւնք : — Մարց եւ սօն տիկնանց հա-
մար խրատք 248

ԴԱՍ ԺԲ .

Հարսութեան կիրառութիւն : — Պարտականութիւն : —
Ողորմածութիւն : — Բարեգործական ընկերութիւնք :
— Հանգստեան ծերոց : — Կարոցք : — Բովանդակութիւն
եւ եզրակացութիւն առնին տնտեսութեան դասուց : 272



Ղ Ր Ի Պ Ա Կ Ք

Երես	տող	Սխալ	Ուղիղ
Ժ.	6	գործարանաց	գործարանաց
22	16	Համեմատ	Համեմատ
27	7	ուսման	ուսման
33	6	ձուլուիլ	ձուլուիլ
33	16	ինամաց	ինամաց
35	11	յաջորդ	յաջորդ
35	20	քննութենէ	քննութենէ
35	21	ներուն	ներուն
37	11	գիպուածոց	գիպուածոց
53	15	երթարկել	երթարկել
73	16	ու-	ու-
74	15	կայանայ	կայանայ
135	1	կանանց	կանանց
182	25	Մենեհեն	Մենեքեն
194	22	երբ	երբ
197	7	որ	որ
197	18	երեց	երենց
197	20	Հասակէն	Հասակէն
199	6	ընդունէ	ընդունէ
201	15	ունի	ունի
248	1	ԳԱՍ Ժ.	ԳԱՍ ԺԱ.
256	17	Լավի	Լավի

ԵԱՆՕԹՈՒԹԻՒՆ ԹԱՐԳՄԱՆՁԻՆ

Լավօ, հաշակաւոր ելեւնագէտ ի Գաղղիա, Խնամապե-
տու թեան ժամանակ զբուծիւն մը հաստատեց՝ որոյ հետեւու-
թիւնն եղաւ սոսկալի⁴ սնանկութիւն:



ՀՀ Ազգային գրադարան



NL0686816

